Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

84.4Սրբ
Ջ-55

ՋԵՐՈՄ
Բ.
ՋԵՐՈՄ

ԵՐԵՔԸ ՄԻ ՆԱՎԱԿՈՒՄ

ՋԵՐՈՄ Բ. ՋԵՐՈՄ

ԵՐԵՔԸ ՄԻ ՆԱՎԱԿՈՒՄ

ՀՀԱՇՎԱՌ ՇՈՒՆԸ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ — 1982

ԳՄԴ 84. 4 Մb
Ջ 551

Jerome K. Jerome
THREE MEN IN A BOAT
(to say nothing of the dog)
Translated into Armenian by Juliet Hovhannesian

Անգլերենից թարգմանեց
Ջուլիետ Հովհաննիսյանը

ДГМЭ М. Горки адына
ТЕЛАЛЭТ КІТАБ ХАНАСЫ
НКАО
ОБЛАСТНАЯ БИБЛИОТЕКА
им. М. Горького

70639

Ջերոմ Ջ. Ջ.
Երեքը մի նավակում (չհաշված շունը)։ Վիպակ /Անգլ.
Ջ 551 *թարգմ. Ջ. Հովհաննիսյան.—Եր.։ Սովետ. գրող, 1982.*
224 էջ։
«Երեքը մի նավակում (չհաշված շունը)» անգլիացի ականավոր գրողի ամենահանրածանոթ վիպակն է, ուր գրանցվել է անթիվ կոմիկական վիճակներ ստեղծելու նրա կարողությունը։
4703000000 (664)
Ջ ———————— 82 «S» ԳՄԴ 84. 4 Մb
705 (01) 82 Ի (Անգլ)

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1982 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Այս գրքի հրապույրը ոչ թե նրա գրական ոճի, բովանդակության կամ էջերում ամփոփված շատ և օգտակար տեղեկությունների մեջ է, այլ պարզ ճշմարտացիության մեջ։ Գրքի էջերում նկարագրված են դեպքեր, որոնք իրականում տեղի են ունեցել։ Ես պարզապես մի թեթև զուգավորում եմ տվել, որից, սակայն, առանձին փոփոխություն չի կատարվել։ Ջորջը, Հարրիսը և Մոնթմորենսին ամենևին էլ բանաստեղծական իդեալներ չեն, այլ միս ու արյունից սովորական մահկանացուներ, հատկապես Ջորջը, որը տասներկու ստոն[1] քաշ ունի։ Սրոշ ստեղծագործություններ թերևս աչքի են ընկնում մտքի ավելի խորությամբ, մարդկային բնության ավելի մեծ իմացությամբ, այլ գրքերը գուցե իմ գրքին չեն զիջում իրենց ինքնատիպությամբ և ընդգրկումով, բայց իր հուսահատական, անուղղելի վավերականությամբ, մինչև այժմ գրված ոչ մի ստեղծագործություն չի կարող մրցել այս գրքի հետ։ Կարծում եմ, վերջինը ավելի շատ, քան գրքի մյուս բոլոր հմայքները, վիպակը արժեքավոր կդարձնեն լրջախոհ ընթերցողի համար և լրացուցիչ կշիռ կհաղորդեն այն ամենին, ինչ կարելի է քաղել գրքի էջերից։

Լոնդոն, 1889. օգոստոս։

1 Ստոնը հավասար է 6,35 կգ։

Գլուխ առաջին

Երեք հաշմանդամներ։ Ջորջի և Հարրիսի տառապանքները։ Հարյուր և յոթ ճակատագրական հիվանդությունների դոհը։ Օգտակար գեղատոմսեր։ Երեխաների լյարդի հիվանդության բուժումը։ Մենք որոշում ենք, որ գերհոգնած ենք և հանգստի կարիք ունենք։ Մեկ շաբաթ ծովում։ Ջորջն առաջարկում է ճանապարհորդել գետով։ Մոնմորընսին դեմ է թվեարկում։ Սկզբնական առաջարկությունն ընդունվում է ձայների մեծամասնությամբ՝ երեքը՝մեկի դեմ։

Մենք չորսով էինք՝ Ջորջը, Վիլյամ Սեմուել Հարրիսը, ես և Մոնմորընսին։ Նստած էինք իմ սենյակում, ծխում էինք ու խոսում, թե ոլքան վատ է մեր վիճակը, վատ, իհարկե, նկատի ունեմ բժշկական տեսանկյունից։

Մեր առողջական վիճակը վատ էր և դրա համար խիստ անհանգստանում էինք։ Հարրիսն ասաց, որ ժամանակ առ ժամանակ գլխապտույտի այնպիսի տարօրինակ նոպաներ է ունենում, որ չի հասկանում, թե ինչ է անում։ Ջորջն ասաց, որ ինքն էլ է գլխապտույտի նոպաներ ունենում և այդ ժամանակ ինքն էլ չի հասկանում, թե ինչ է անում։ Ինչ վերաբերում էր ինձ, իմ լյարդն էր շարքից դուրս եկել։ Ես համոզված էի, որ լյարդս կարգին չէր, որովհետև հենց այդ ժամանակ կարդում էի լյարդի հիվանդությունների դեմ դեղամիջոցներ ռեկլամող տեղեկագիրը, որտեղ մանրամասն նկարագրված էին տարբեր ախտանիշներ, որոնց օգնությամբ մարդ կարող էր իմանալ, թե արդյո՞ք իր լյարդը հիվանդ է։ Ես այդ բոլոր ախտանիշներն ունեի։

Շատ արտասովոր երևույթ է, բայց ամեն անգամ, երբ որևէ պատենտավորած դեղորայքի մասին հայտարարություն եմ կարդում, միշտ այն եզրակացության եմ հանգում, որ տառապում եմ հենց այդ հիվանդությամբ և այն էլ դրա ամենավտանգավոր ձևով։ Թվում է, թե ախտորոշումը միշտ համընկնում է իմ զգացումների հետ։

Հիշում եմ, մի անգամ գնացի Բրիտանական թանգարան՝ կարդալու մի ինչ-որ թեթև հիվանդության մասին, որով հիվանդացել էի, կարծեմ խոտատենդն էր։ Վերցրեցի գիրքն ու կարդացի այն ամենը, ինչ անհրաժեշտ էր, և հետո, մտազբաղ, մեքենայաբար շրջեցի էջերն ու սկսեցի աչքի անցկացնել հիվանդություններն ընդհանրապես։ Մոռացել եմ, թե որն էր առաջին հիվանդությունը, որ ինձ անակնկալի բերեց,—մի ինչ-որ սարսափելի պատուհաս էր, որքան հիշում եմ,— սակայն մինչև հիվանդության «նախնական ախտանիշների» մասին մի կես էջ աչքի անցկացնելը արդեն համոզված էի, որ վարակված եմ դրանով։

Մի պահ մարմնովս սարսուռ անցավ, և հուսահատ անտարբերությամբ կրկին շրջեցի էջերը։ Հասա որովայնային տիֆին, կարդացի ախտանիշները, պարզեցի, որ տիֆով հիվանդ եմ արդեն մի քանի ամիս՝ ինքս էլ չիմանալով այդ։ Փորձեցի պարզել, թե է՛լ ինչով եմ հիվանդ։ Կարդացի Սուրբ Վիտասի պարի մասին և, ինչպես սպասում էի, պարզեցի, որ հիվանդ եմ նաև դրանով։ Անհանգստացած իմ առողջական վիճակով, որոշեցի հիմնավորապես ուսումնասիրել այն։

Սկսեցի կարդալ այբբենական կարգով։ Կարդացի մալարիայի մասին և իմացա, որ հիվանդ եմ դրանով և, որ սուր շրջանը կսկսվի երկու շաբաթից։ Բրայթի հիվանդությունը, բարեբախտաբար, թույլ էր արտահայտված և, հետևաբար, կարող էի ապրել շատ տարիներ, իսկ խոլերան, ուղեկցվում էր բարդություններով, և թվում էր, ի ծնե հիվանդ եմ դիֆտերիայով։ Ջանասիրաբար աչքի անցկացնելով այբուբենի բոլոր տառերը, պարզեցի՝ միակ հիվանդությունը, որ չունեի, ծնկոսկրի բորբոքումն էր։

Սկզբում նույնիսկ մի քիչ վիրավորվեցի դրանից։ Ես արժանի չէի նման անպատվության։ Ինչու՞ չունեի ծնկոսկրի բորբոքում։ Ինչի՞ համար է այս անարդարությունը։ Բայց շուտով այդ եսասիրական զգացումները տեղի տվեցին։ Մտածեցի, որ ունեմ բժշկությանը հայտնի մնացած բոլոր հիվանդությունները, դարձա պակաս եսասեր և որոշեցի յոլա գնալ առանց ծնկոսկրի բորբոքման։ Հոդատապը, իր ամենավտանգավոր ձևով, ինչպես երևում է տանջում էր ինձ առանց իմ գիտության, իսկ վարակիչ հիվանդություններով ես ակն-

Հայտորեն տառապել եմ դեռևս պատանի հասակիցս։ Քանի որ դա գրքում եղած վերջին հիվանդությունն էր, այն եզրակացության հանգեցի, որ մնացած ամեն ինչ ինձ մոտ կարգին է։

Նստեցի ու սկսեցի մտորել։ Մտածում էի, թե որքան հետաքրքիր դեպք պետք է լինեմ բժշկական տեսանկյունից, ինչպիսի գյուտ՝ լսարանի համար։ Ուսանողները կարիք չեն ունենա շրջել հիվանդանոցները, քանի որ ես կամ։ Ես ինքս մի հիվանդանոց էի։ Նրանց համար բավական կլինի միայն պտտվել իմ շուրջը և հետո ստանալ իրենց դիպլոմները։

Այնուհետև ցանկացա իմանալ, թե որքան ժամանակ է ինձ մնում ապրելու։ Սկսեցի ինքս ինձ քննել։ Փորձեցի շոշափել զարկերակս, սկզբում ոչ մի՞կերպ չկարողացա. հետո հանկարծ զգացի թույլ խփոցը։ Հանեցի ժամացույցս ու սկսեցի հաշվել։ Մեկ րոպեում հաշվեցի հարյուր քառասունյոթ զարկ։ Փորձեցի լսել սիրտս։ Դարձյալ՝ անհաջող։ Սիրտս դադարել էր բաբախել։ Հիմա ես այն կարծիքին եմ, որ սիրտս միշտ էլ իր տեղում է եղել և միշտ բաբախել է։ Բայց և այնպես չեմ կարողանում բացատրել, թե բանն ինչ էր։ Շոշափեցի մաքմախս այն մասը, որն իմ գոտկատեղն եմ համարում, մինչև գլուխս, նաև կողերս ու մեջքիս մի մասը, բայց չկարողացա լսել կամ զգալ որևէ բան։ Փորձեցի զննել լեզուս և հնարավորին չափ դուրս հանեցի։ Փակեցի մի աչքս ու փորձեցի զննել մյուսով։ Կարողացա տեսնել միայն լեզվիս ծայրը, սակայն դրանից ավելի ու ավելի համոզվեցի, որ հիվանդ եմ քաղցկեղով։

Ես ընթերցասրահ էի մտել առողջ ու երջանիկ և դուրս էի գալիս այնտեղից որպես մի խեղճ հաշմանդամ։

Քայլերս ուղղեցի իմ բժշկի մոտ։ Նա վաղեմի ընկերս է, և երբ երևակայում եմ, թե հիվանդ եմ, նա շոշափում է զարկերակս, զննում է լեզուս, զրուցում է եղանակի մասին, և այդ ամենը՝ անվճար։ Մտածեցի, որ բարի գործ կատարած կլինեմ, եթե անմիջապես գնամ նրա մոտ։ «Այն ամենը, ինչ անհրաժեշտ է բժշկին՝ փորձն է, — մտածեցի ես, — նա կունենա ինձ։ Միայն ինձնից նա ավելի շատ փորձ ձեռք կբերի, քան հազար յոթ հարյուր սովորական, մեկ կամ երկու հիվանդություն ունեցող շարքային հիվանդներից։

Այսպիսով, ես ուղիղ գնացի նրա մոտ։ Նա հարցրեց.

— Դե, ի՞նչ է պատահել։

Ես ասացի.

— Սիրելի բարեկամ, քեզնից ժամանակ չեմ խլի պատմելով, թե ինչ է պատահել ինձ հետ։ Կյանքը կարճ է և այն կարող է ավելի վաղ ավարտվել, քան իմ պատմությունը։ Բայց ես կպատմեմ, թե ինչ չի՛ պատահել ինձ հետ։ Ես չունեմ ծնկոսկրի բորբոքում։ Թե ինչու, չեմ կարող ասել, բայց փաստը մնում է փաստ՝ այդ հիվանդությամբ ես չեմ տառապում։ Փոխարենը , ունեմ մնացած բոլոր հիվանդությունները։

Եվ ես պատմեցի, թե ինչպես եմ հայտնաբերել դա։

Հետո նա արձակեց հագուստիս կոճակները և սկսեց քննել ինձ, բռնեց դաստակս ու անսպասելիորեն հարվածեց կրծքավանդակիս, որն, իմ կարծիքով, անշնորհք վարմունք է։ Դրանից անմիջապես հետո էլ հարվածեց գլխով։ Հետո նստեց, դեղատոմս գրեց, ծալեց ու մեկնեց ինձ։ Դեղատոմսը գրպանս դրեցի ու դուրս եկա։ Առանց բաց անելու, դեղատոմսը տարա ամենամոտ դեղատունն ու մեկնեցի դեղագործին։ Դեղագործը կարդաց ու վերադարձրեց, ասելով, որ իր մոտ նման բաներ չեն լինում։

Ես հարցրեցի.

— Դուք դեղագործ չե՞ք։

Նա պատասխանեց.

— Ես դեղագործ եմ։ Եթե հանրախանութի և ընտանեկան հյուրանոցի տնօրեն լինեի, ի վիճակի կլինեի բավարարել Ձեր խնդիրը։ Սակայն ընդամենը մի հասարակ դեղագործ լինելը ինձ դժվարին կացության մեջ է գնում։

Ես կարդացի դեղատոմսը։ Այնտեղ գրված էր.

«1 ֆունտ բիֆշտեքս

1 պինտ գարեջրի հետ՝

ամեն վեց ժամը մեկ։

1 տասը մղոն զբոսանք՝

ամեն առավոտյան։

1 Քուն— երեկոյան ուղիղ ժամը 11-ին։

Եվ մի լցրու գլուխդ այնպիսի բաներով, որոնցից ոչինչ չես հասկանում»։

Ես հետևեցի այդ բոլոր ցուցումներին և դա այն երջանիկ վախճանն ունեցավ, որ կյանքս պահպանվեց և դեռ շարունակվում է։

Այժմ, անդրադառնալով լյարդի դեղահաբեր ռեկլամող տեղեկագրին, ես, անկասկած, ունեի բոլոր ախտանիշները, որոնցից գլխավորն էր՝ «ընդհանուր չկամությունը աշխատանքի նկատմամբ ընդհանրապես»։

Թե որքան եմ տառապել դրա պատճառով, հնարավոր չէ պատմել։ Դեռ վաղ մանկությունից։ Պատանի հասակում այդ հիվանդությունը ոչ մի օր հանգիստ չէր տալիս ինձ։ Այն ժամանակ չէին հասկանում, որ պատճառը լյարդն է։ Բժշկությունը շատ ավելի քիչ էր զարգացած, քան այժմ և սովորաբար դա վերագրում էին ծուլությանը։

«Էյ, դու, փոքրիկ սատանա, ասում էին ինձ, — վեր կաց և որևէ զբաղմունք գտիր քեզ համար։ Չե՞ս կարող, ի՞նչ է,— չիմանալով, իհարկե, որ ես հիվանդ էի։

Նրանք ինձ դեղ չէին տալիս, դրա փոխարեն հացնում էին վզակոթիս։ Եվ որքան էլ տարօրինակ թվա, այդպիսի վերաբերմունքը հաճախ բարերար ներգործություն էր ունենում իմ առողջական վիճակի վրա։ Ես գիտեի, վզակոթիս հասցված մի հարվածը ավելի մեծ ազդեցություն էր ունենում լյարդիս վրա և ստիպում էր առանց ժամանակ վատնելու վեր կենալ ու գնալ ուր որ պետք է և անել ինչ որ պահանջվում էր, քան հիմա՝ մի ամբողջ տուփ դեղորայքը։

Կիտե՞ք, այդպես հաճախ է լինում. այդ պարզունակ, հնաոճ բուժման միջոցները երբեմն ավելի լավ են ներգործում, քան դեղատան ողջ պաշարը։

Մենք նստած էինք կես ժամի չափ՝ միմյանց նկարագրելով մեր հիվանդությունները։ Ես բացատրում էի Ջորջին և Վիլյամ Հարրիսին, թե ինչ էի զգում առավոտյան արթնանալիս, իսկ Վիլյամ Հարրիսը պատմում էր, թե ինքն ինչ է զգում, երբ պառկում է քնելու։ Ջորջը, կանգնած բուխարու առջև փռած գորգին, հմտորեն ու պատկերավոր մեզ ներկայացրեց, թե ինչպես է իրեն զգում գիշերը։

Ջորջը միայն ձևացնում էր, թե հիվանդ է։ Իրականում ոչ մի լուրջ հիվանդություն չուներ։

Այդ բոպեին միտիս Փոփեթը թակեց դուռը՝ իմանալու, արդյոք պատրաստ ենք ընթրելու։ Մենք տխուր ժպտացինք միմյանց և ասացինք, որ երևի ավելի լավ կանեինք, եթե փորձեինք որևէ բան կուլ տալ։ Հարրիսն ասաց, որ ստամոքսում եղած որոշ քանակությամբ ուտելիքը արգելակում է հիվանդության առաջընթացը։ Եվ այսպես, միտիս Փոփեթը մատուցարանը ներս բերեց, մենք մոտեցանք սեղանին, իմիջիայլոց մի-մի կտոր սոխով բիֆշտեքս ու խաշնդեղով կարկանդակ ճաշակեցինք։

Ես պետք է որ շատ թույլ լինեի այդ ժամանակ, որովհետև մի կես ժամից կարծես կորցրեցի հետաքրքրությունս ուտելիքի հանդեպ, որ շատ անսովոր բան է ինձ համար, և հրաժարվեցի պանրից։

Այս պարտականությունը կատարելով, կրկին լցրեցինք մեր բաժակները, վառեցինք ծխամորճերը և վերսկսեցինք մեր առողջական վիճակի քննարկումը։ Թե ինչ էր մեզ հետ իսկապես պատահել, հաստատ չգիտենք, բայց մեր ընդհանուր կարծիքն այն էր, որ դա, ինչ էլ որ լիներ, առաջ էր եկել չափից շատ ծանրաբեռնվածությունից։

— Մենք հանգստի կարիք ենք զգում, — ասաց Հարրիսը։

— Հանգիստ և շրջապատի լիակատար փոփոխություն, — ավելացրեց Ջորջը։ — Մեր ուղեղների ծանրաբեռնվածությունը առաջ է բերել ընդհանուր աշխատունակության անկում։ Շրջապատի փոփոխությունը և մտածելու անհրաժեշտության բացակայությունը կվերականգնեն մեր հոգեկան հավասարակշռությունը։

Ջորջը մի հորեղբորորդի ունի, որի անվան դիմաց ոստիկանական մատյաններում նշվում է բժշկություն ուսանող, և նա է պատճառը, որ Ջորջը հաճախ ընտանեկան բժշկի պես է արտահայտվում։

Ես համաձայնեցի Ջորջի հետ և առաջարկեցի փնտրել մի որևէ խուլ, հնաշխարհիկ անկյուն՝ հեռու խելացնոր ամբոխից, և մի ամբողջ շաբաթ երազել քնաթաթախ արահետներում։ Մոռացված, փերիների կողմից թաքցված մի որևէ անկյուն, մի արծվաբույն՝ ծվարած ժամանակի գահավեժ դարափին, ուր հազիվ է հասնում տասնիններորդ դարի ահեղ ալիքների արձագանքը։

Հարրիսն ասաց, որ դա շատ տաղտկալի կլինի։ Նա ասաց, որ լավ է ճանաչում այդ վայրերը, որտեղ ժամը ութին պառկում են քնելու և ուր ոչ մի գնով չես կարող լրագիր ճարել,

իսկ ծխախոտ ձեռք բերելու համար ստիպված պետք է լինեիր ոտքով տասը մղոն ճանապարհ անցնել։

— Ոչ, — ասաց Հարրիսը, — եթե դուք հանգիստ և շրջապատի փոփոխություն եք ուզում, ապա, ոչինչ չի կարող համեմատվել ծովային ճանապարհորդության հետ։

Ես խիստ գեմ էի։ Ծովային ճանապարհորդությունը օգտակար է, եթե տևում է մի երկու ամիս, իսկ միայն մեկ շաբաթը ոչ մի լավ բան չի խոստանում։

Դուք ճանապարհ եք ընկնում երկուշաբթի օրը, հաճելի ժամանակ անցկացնելու հաստատ մտադրությամբ։ Ձեռքով ուրախ մնաք բարով եք անում ցամաքում մնացած ձեր ընկերներին, վառում եք ամենաերկար ծխամորճը և տախտակամածը չափչփում այնպիսի տեսքով, ասես նավապետ Քուքն եք, որը Ֆրենսիս Դրեյքը և Քրիստափոր Կոլոմբոսը՝ միավորված մեկ անձնավորության մեջ։ Երեքշաբթի օրը սկսում եք զղջալ, որ ձեռնարկել եք այդ ճանապարհորդությունը։ Չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ օրերին զղջում եք, որ ընդհանրապես լույս աշխարհ եք նկել։ Շաբաթ օրը, արդեն ի վիճակի եք մի քիչ մսաջուր կուլ տալ, նստել տախտակամածին և թույլ ժպիտով պատասխանել, երբ բարեհոգի մարդիկ տեղեկանում են ձեր առողջական վիճակի մասին։ Կիրակի օրը նորից սկսում եք զբոսնել տախտակամածի վրա և սնվել, ինչպես հարկն է։ Եվ երկուշաբթի առավոտյան, երբ հովանոցը և ճամպրուկը ձեռքին կանգնում եք նավեզրին՝ սպասելով ցամաք դուրս գալու, ճանապարհորդությունը սկսում է ձեզ իսկապես դուր գալ։

Հիշում եմ, ինչպես մի անգամ կնոջս եղբայրը առողջությունը բարելավելու նպատակով ուղևորվել էր կարճատև ծովային ճանապարհորդության։ Նա տոմս էր վերցրել մինչև Լիվերպուլ և ետ, բայց երբ հասել էր Լիվերպուլ, նրա միակ հոգսը եղել էր այդ տոմսը վաճառելը։

Ինձ պատմել են, թե ինչպես էր նա պտտվում քաղաքում՝ առաջարկելով իր տոմսը էժան գնով, և վերջիվերջո տասնութ պենսով վաճառել էր դեղնախտավոր տեսքով մի երիտասարդի, որին բժիշկները խորհուրդ էին տվել գնալ ծովափ և կոփել մարմինը։

—Ծովա՜փ, — ասել էր կնոջս եղբայրը, բարեկամաբար տոմսը նրա ձեռքը խոթելով, — այն լիուլի կբավարարի, որպեսզի երկարացնեք ձեր կյանքը, իսկ ինչ վերաբերում է մարմինը կոփելուն, ապա դուք ավելի շատ կկոփվեք պարզապես նստած նստելով, քան եթե ցամաքում թավալգլոր տաք։

Իսկ ինքը՝ կնոջս եղբայրը, վերադարձել էր գնացքով։ Նա ասում էր, որ հյուսիս-արևմտյան երկաթուղին բավականաչափ առողջարար է իր համար։

Մանոթներիցս մեկը մեկ շաբաթով ծովային ճանապարհորդության էր մեկնել. մինչև նավը կշարժվեր, մատուցողը մոտեցել էր նրան ու հարցրել՝ արդյոք նա ցանկանում է ուտելիքի համար վճարել ամեն օ՞ր, թե դերադասում է վճարել ամբողջ շաբաթվա համար միանգամից։

Մատուցողն առաջարկել էր երկրորդ միջոցը, քանի որ այդպես ավելի էժան կնստեր։ Նա հայտնել էր, որ սնունդը մեկ շաբաթվա համար կարժենա երկու ֆունտ և հինգ շիլլինգ։ Ասել էր նաև, որ նախաճաշին մատուցվելու էր ձուկ և տապակած միս։ Երկրորդ նախաճաշը ժամը մեկին էր՝ կազմված չորս ճաշատեսակից։ Ճաշը՝ վեցին. սուպ, ձուկ, միս, սալաթ, քաղցրավենիք, պանիր և աղանդեր։ Եվ ժամը տասին թեթև ընթրիք՝ կազմված մսեղենից։

Իմ ընկերը որոշեց սննդի հարցը լուծել երկու ֆունտ հինգ շիլլինգով (նա ուտելիքի մեծ սիրահար է), և այդպես էլ արեց։ Երկրորդ նախաճաշը մատուցեցին, երբ նրանք անցնում էին Շերնեսսի մոտով։ Նա այնքան քաղցած չէր, որքան կարծում էր և բավարարվեց մի կտոր ոչխարի խաշած մսով, մի քիչ հատապտուղ կերավ և քաղցր խյուս։ Օրվա ընթացքում նա երկար մտորում էր և երբեմն նրան թվում էր, որ շաբաթներով ոչինչ չի կերել, խաշած մսից բացի, իսկ երբեմն էլ նրան թվում էր, որ տարիներ շարունակ իր գոյությունը պահպանել է հատապտուղներով և քաղցր խյուսով։

Ժամը վեցին տեղեկացրին, որ ճաշը մատուցված է։ Այդ լուրը նրա մոտ ոգևորություն չառաջացրեց, բայց նա մտածեց՝ պետք է չէ՞ վերջապես ծախսել այն երկու ֆունտ հինգ շիլլինգը, և, կառչելով պարաններից ու մյուս առարկաներից, իջավ ներքև։ Սոխի և տապակած ազդրամսի հաճելի հոտը՝ խառնված ձկան և կանաչեղենի բուրմունքին, դիմավորեցին

նրան աստիճանների ներքևում, որից հետո մատուցողը մոտեցավ և շողում ժպիտով հարցրեց.

— Ի՞նչ եք կամենում, սըր։

— Դուրս տարեք ինձ այստեղից, — պատասխանեց նա հազիվ լսելի ձայնով։ Եվ նրան արագորեն վերև բարձրացրեցին, պառկեցրին մաքուր օդում ու թողեցին մենակ։

Հաջորդ շորս օրերի ընթացքում նա ապրում էր պարզ ու անմեղ կյանքով՝ սնվելով միայն պաքսիմատով և սոդայաջրով։ Բայց մինչև շաբաթ օրը նա կազդուրվեց և սկսեց խմել թույլ թեյ շոր հացի կտորի հետ։ Երկուշաբթի արդեն հավի արգանակ էր խմում։ Իսկ երեքշաբթի օրը, երբ նավը ետ էր լողում նավամատույցից՝ թողնելով նրան ափին, նա տխուր հայացքով նայում էր նավի ետևից։

— Ահա այն,— մտածում էր նա,— հեռանում է՝ իր հետ տանելով երկու ֆունտ ստերլինգի ուտելիքը, որն ինձ էր պատկանում և որը ես չհասցրեցի ուտել։

Նա համոզված էր, որ եթե մեկ օր էլ մնար նավում, ապա անպայման կկարգավորեր այդ գործը։

Դրա համար էլ, ես դեմ էի ծովային ճանապարհորդությանը։ Ոչ ինձ համար, իհարկե, ինչպես բացատրեցի, ես երբեք գլխապտույտ չեմ ունենում։ Ես Ջորջի համար էի անհանգստանում։ Ջորջն ասաց, որ շարժե անհանգստանալ իր համար, որ ծովային ճանապարհորդությունը իրեն նույնիսկ դուր է գալիս, սակայն նա էլ իր հերթին խորհուրդ էր տալիս Հարրիսին և ինձ հրաժարվել այդ մտքից, քանի որ մենք երկուսս էլ կհիվանդանայինք։ Հարրիսն ասաց, ինչ վերաբերում է իրեն, ապա իր համար գաղտնիք է մնում, թե այդ ինչպես է մարդկանց հաջողվում հիվանդանալ ծովային հիվանդությամբ։ Նա ասաց, որ իր կարծիքով, մարդիկ դիտմամբ են այդպես անում, պարզապես ձևացնում են և վերջ, և որ ինքը հաճախ է ցանկացել հիվանդանալ, բայց երբեք իրեն չի հաջողվել։

Հետո իր կյանքից մեղ դեպքեր պատմեց, թե ինչպես Լա-Մանշով անցնելիս, երբ այնպիսի ալեկոծություն էր, որ ուղևորներին կապում էին մահճակալներին, ինքն ու նավապետը միակն էին նավում, որ հիվանդ չէին։ Երբեմն էլ ինքը և նավապետի օգնականը չէին հիվանդանում։ Մի խոսքով, եթե

նավի վրա նույնիսկ բոլորն էլ հիվանդ էին, ապա ինքը դարձյալ առողջ էր մնում։

Տարօրինակ է, բայց երբեք ցամաքում չեմ հանդիպել մեկին, որ ծովային հիվանդությամբ տառապի։ Ծովում հանդիպում ենք շատ հիվանդ մարդկանց, ամբողջ նավեր լիքն են դրանցով։ Բայց ես երբեք ցամաքում չեմ հանդիպել որևէ մեկին, որը գոնե իմանար, թե ինչ բան է ծովային հիվանդությունը։ Ինձ համար գաղտնիք է մնում, թե ցամաք դուրս գալուն պես ուր են կորչում այն հազարավոր մարդիկ, որոնք չեն դիմանում ծովաճոճումին։

Եթե բոլոր մարդիկ նման լինեին այն երիտասարդին, որին ես մի անգամ հանդիպեցի Ցարմութ գնացող շոգենավի վրա, այդ հանելուկը հեշտությամբ կարելի է բացատրել։ Հիշում եմ, շոգենավը նոր էր հեռացել Սաութէնդյան ծովապատնեշից, և նա շատ վտանգավոր դիրքով կախվել էր լուսանցույցներից մեկից։ Ես մոտեցա, փորձելով փրկել նրան։

— Էյ, այդպես չի կարելի, — ասացի ես, թափահարելով նրա ուսը, — տախտակամածից ցած կընկնեք։

— Օ՜, ես հենց դա եմ ուզում, — պատասխանեց նա, և ես ստիպված հանգիստ թողեցի նրան։

Երեք շաբաթ անց, ես նրան հանդիպեցի Բաթի հյուրանոցներից մեկի սրճարանում, երբ նա պատմում էր իր ծովային ճանապարհորդությունների մասին և ոգևորությամբ բացատրում էր, թե որքան է սիրում ծովը։

— Ինձ վրա չի ազդում ծովաճոճանքը,— պատասխանեց նա, մի երիտասարդի նախանձով լի հարցին, — պետք է խոստովանել, որ մի անգամ եմ միայն վատ զգացել։ Հորն հրավանդանն անցնելիս։ Հաջորդ օրը նավը խորտակվեց։

— Այդ դու՞ք չէիք, որ վատ էիք զգում Սաութէնդյան ծովապատնեշի մոտ, — հարցրեցի ես, — նույնիսկ ուզում էիք տախտակամածից ցած ընկնել։

— Սաութէնդյան ծովապատնե՞շ, — կրկնեց նա զարմացած։

— Այո, Ցարմութի ճանապարհին, երեք շաբաթ առաջ, ուրբաթ օրը։

— Օ՜... ը՜... այո,— պատասխանեց նա, և դեմքը պայծառացավ,— հիմա հիշեցի։

— Ես գլխացավ ունեի այդ օրը։ Գիտե՞ք, մանրաթթվից էր։ Դա ամենաանորակ մանրաթթուն էր, որ երբևէ ճաշակել եմ։ Քիչ թե շատ կարգին շոգենավում։ Ի դեպ, դուք փորձեցի՞ք։

Ինչ վերաբերում է ինձ, ծովային հիվանդությունից խուսափելու հիանալի միջոց եմ գտել։ Կանգնում եք տախտակամածի կենտրոնում և հենց որ նավը սկսում է օրորվել, դուք նույնպես օրորվում եք, որպեսզի հավասարակշռությունը պահպանեք։ Երբ բարձրանում է նավաքիթը, առաջ եք թեքվում, այնքան, մինչև նավաքիթը կպչում է ձեր սեփական քթին։ Իսկ երբ նավախելն է բարձրանում, ետ եք թեքվում։ Իհարկե, այս ամենը լավ է մեկ կամ երկու ժամվա համար, բայց հնարավոր չէ ետ ու առաջ օրորվել մի ամբողջ շաբաթ։

— Եկեք գետով վեր բարձրանանք, — առաջարկեց Ջորջը։

Նա ասաց, որ մենք կունենանք և՛ մաքուր օդ, և՛ հանգիստ, և՛ կմարզվենք։ Բնապատկերների փոփոխությունը կզբաղեցնի մեր միտքը (ներառյալ և այն մտքերը, որոնք կգտնվեն Հարրիսի գլխում), իսկ ծանր ֆիզիկական աշխատանքը ախորժակ կգրգռի և կստիպի ավելի լավ քնել։

Հարրիսն ասաց, որ իր կարծիքով, կարիք չկա, որ Ջորջն այնպիսի բան անի, որը ստիպի նրան քնել ավելի երկար, քանի որ դա կարող է վտանգավոր լինել նրա համար։ Նա ասաց, որ այնքան էլ լավ չի հասկանում, թե այդ ինչպես պետք է Ջորջը քնի ավելի երկար, քան հիմա, քանի որ ամառ թե ձմեռ օրը բաղկացած է ընդամենը քսաներեք ժամից։ Եթե Ջորջը, համենայն դեպս, հաջողացներ քնել ավելի երկար, նա նույն հաջողությամբ կարող է և մահանալ, այսպիսով խնայելով սննդի և բնակարանի ծախսերը։

Հարրիսն ասաց, որ այնուամենայնիվ գետով նավարկելը նրան հարյուր տոկոսով դուր է գալիս։ Ես չգիտեմ, թե դրանք ինչ տոկոսներ են, սակայն երևի դրանք բավարարում են բոլորին, ինչը և խոսում է նրանց օգտին։

Գետը, ինձ նույնպես հարյուր տոկոսով բավարարում էր և Հարրիսն ու ես, ասացինք, որ Ջորջը լավ միտք է հղացել։ Եվ դա ասվեց այնպիսի տոնով, կարծես մենք զարմացել էինք, որ Ջորջը կարող է այդքան խելացի լինել։

Միակը, որ հիացած չէր նրա առաջարկությամբ, Մոնթ-

մորենսին էր։ Նրա համար գետը եղած-չեղածն միևնույն էր։ Այդպիսին է մեր Մոնթմորենսին։

— Այդ ամենը լավ է ձե՛զ համար, բարեկամներս, — կարծես ասում էր նա, — դա ձեզ դուր է գալիս, իսկ ինձ՝ ոչ։ Ես այնտեղ մնելիք չունեմ։ Բնապատկերները իմ խելքի բանը չեն և ես չեմ ծխում։ Եթե ես առնեմ տեսնեմ, դրա համար միևնույն է դուք կանգ չեք առնի, իսկ եթե մրափեմ, կսկսեք հիմար կատակներ անել և ինձ ցած կգցեք տախտակամածից։ Եթե ինձ հարցնեք, կասեմ, որ այդ ամենը հիմարություն է։

Սակայն, մենք երեքով էինք մեկի դեմ, և առաջարկությունն ընդունվեց։

Գլուխ երկրորդ

Սրագրերի քննարկում։ Լավ եղանակին դրսում գիշերելու հաճույքը։ Նույնը՝ անձրևոտ եղանակին։ Համաձայնություն փոխզիջումով։ Մոնթմորենսի. առաջին տպավորությունները։ Երկյուղ կա, որ նա չափազանց լավն է այս աշխարհի համար։ Երկյուղը անհիմն է։ Նիստը հետաձգվում է։

Մենք մեջտեղ բերեցինք քարտեզները և քննարկեցինք մեր ուղերթը։ Որոշեցինք ճանապարհ ընկնել հաջորդ շաբաթ օրը Քինգսթոնից։ Հարրիսը և ես պետք է այնտեղ գնայինք առավոտյան և նավակը տանեինք հոսանքն ի վեր մինչև Ջրբոսի։ Իսկ Ջորջը, որ միայն կեսօրից հետո կարող էր դուրս գալ Սիթիից (նա ամեն օր գնում էր քնելու մի ինչ-որ բանկում՝ ժամը տասից չորսը, բացի շաբաթ օրերից, երբ նրան արթնացնում և ազատ են արձակում ժամը երկուսին), պետք է հանդիպեր մեզ այնտեղ։

Որտե՞ղ պետք է գիշերենք. դրսո՞ւմ թե հյուրանոցում։

Ջորջը և ես կողմ էինք դրսում գիշերելուն։ Մենք պատճառաբանում էինք, որ դա կլինի շատ բնական, ազատ, անկաշկանդ կյանք, այնքան նման նահապետական ապրելաձևին...

Մեկյալ արևի մասին երջանիկ հիշողությունը դանդաղորեն ազդանանում է ցուրտ, տխուր ամպերի սրտում։ Լաու, ինչպես խոսված երեխանին, [illegible] իրենց ճրագվողությունը և միայն [illegible] ճիչը և

ЗИПКОГ
НКАО
ОБЛАСТНАЯ БИБЛИОТЕКА
им. М. Горького

մարգալորի ականջ ծակող կոնչյունն են խախտում ջրերի վրա շղարշված երկյուղած լռությունը, ուր մեռնող օրը իր վերջին շունչն է փչում։ Երկու կողմի ափերի մթին անտառներից անձայն դուրս են սողում գիշերվա տեսիլային հրոսակների գորշ ստվերները՝ հալածելու լույսի անշտապ պաշտպաններին և անձայն, անտեսանելի քայլերով անցնելու ալեկոծվող սեզի և հառաչող եղեգնուտի վրայով։ Իսկ գիշերը՝ բազմած մռայլ գահին, իր թևերն է տարածում մթնող աշխարհի վրա և կախարդական պալատից վառելով գունատ աստղերը՝ տիրում է լռության մեջ։

Այնուհետև թիավարում ենք նավակը դեպի մի լուռ ծովախորշ, խփում ենք վրանն ու պատրաստում համեղ ընթրիքը, որն ուտում ենք մեծ ախորժակով։ Հետո լցնում ենք երկար ծխամորճերը, կպցնում ու սկսում հաճելի զրույցը։ Մինչդեռ մեր խոսակցության ընդմիջումներին գետը, խաղ անելով նավակի շուրջը, զարմանալի գաղտնիքներ ու մոռացված հեքիաթներ է պատմում, մեղմ ձայնով հին մանկական երգեր է երգում, որ երգել է շատ հազարամյակներ և դեռ կերգի այնքան դալիք հազարամյակներ, մինչև նրա ձայնը կդառնա խրոպոտ ու զառամ։ Մենք, որ սովորել ենք սիրել նրա փոփոխուն դեմքը, որ այնքան հաճախ ծվարել ենք նրա ալեկոծվող գրկում, հասկանում ենք այդ երգը, թեև չենք կարող հասարակ բառերի միջոցով հաղորդել այն, ինչին ունկնդիր ենք։

Եվ ահա մենք նստած ենք գետափին, իսկ լուսինը, որը նույնպես նրան սիրում է, ցած է խոնարհվում, քրոջ պես գրգռվում գետի ջրերին և իր արծաթե թևերը սփռում է նրա շուրջը։ Մենք հետևում ենք, թե ինչպես է գետը հոսում, մերթ երգելով, մերթ շշնջալով, շտապելով հանդիպել իր տիրակալին՝ ծովին։ Մեր ձայները մարում են լռության մեջ, ծխամորճերը հանգչում են, և մենք՝ սովորական, բավականին բիրտ երիտասարդ տղամարդիկս, տարօրինակ կերպով կարծես լցվում ենք խոհերով, տխուր և թանկագին հուշերով և այլևս խոսելու ցանկություն չի մնում։ Վերջապես վեր ենք կենում, թափ ենք տալիս մոխիրը հանգած ծխամորճերի միջից և իրար բարի գիշեր մաղթում։ Մենք քուն ենք մտնում ջրի ծփանքի և ծառերի սոսափյունի ներքո, հսկայական, լուռ աստղերի տակ և մեզ թվում է, թե աշխարհը նորից ջահել է, ջահել ու գեղեցիկ, ինչպիսին եղել է, մինչև հոգսի ու տագնապի դարերը ակոսել են նրա գեղեցիկ դեմքը, մինչև նրա դավակների մեղքերը և խենթությունները ծերացրել են նրա սիրող սիրտը, գեղեցիկ, ինչպես այն անցած-գնացած օրերին, երբ նա ջահել մոր նման իր լայն կրծքին օրոր էր ասում մեզ՝ իր զավակներին, մինչև պճնված քաղաքակրթությունը, գայթակղելով իր հնարքներով, մեզ դուրս կորզեց նրա սիրող թևերից և արհեստականության թունավոր ծաղրը ստիպեց ամաչել այն պարզ ու հասարակ կյանքի համար, որ վարում էինք նրա հետ և հեռանալ այն անպաճույճ ու վեհասքանչ տնից, որտեղ ծնվել է մարդկությունը այնքան շատ հազարամյակներ առաջ։

— Իսկ եթե անձրև՞ գա, — ասաց Հարրիսը։

Անհնարին է ոգեշնչել Հարրիսին։ Նա բանաստեղծական խառնվածք չունի, չկա այն անդուսպ ձգտումը դեպի անհասանելին։ Նա երբեք չի լալիս «ինքն էլ չիմանալով ինչու»։ Եթե Հարրիսի աչքերը արցունքով են լցվում, կարող եք գրազ դալ, որ նա հում սոխ է կերել կամ չափից ավելի մանանեխ է բռնել կոտլետին։

Եթե Հարրիսի հետ կանգնած լինեք գիշերը ծովափին և ասեք.

— Լսո՞ւմ ես, հավանաբար ջրահարսերն են երգում ալեկոծվող ջրերի խորքում, կամ տխուր ոգիները սաղմոս են ասում գունատ ջրահեղձների վրա, որ խճճվել են ջրիմուռների միջև,— Հարրիսը կբռնի ձեր ձեռքից և կասի.

— Պարզ է, թե ինչ է կատարվում քեզ հետ, ծերուկ։ Դու մրսել ես։ Արի ինձ հետ։ Ես մի լավ տեղ գիտեմ մոտակայքում, որտեղ կարելի է հիանալի շոտլանդական վիսկի խմել, այնպիսին, որ մինչև հիմա փորձած չես լինի։ Դա քեզ անմիջապես ուշքի կբերի։

Հարրիսը միշտ մոտակայքում մի տեղ գիտի, որտեղ կարող եք մի որևէ հիանալի խմիչք փորձել։ Հավատացած եմ, որ եթե Հարրիսին հանդիպեք դրախտում (ենթադրենք, նման բանը հնարավոր է), նա կբարևի ձեզ ասելով.

— Այնքան ուրախ եմ ձեզ տեսնելու, ծերուկ, ես մոտակայքում մի հիանալի տեղ գիտեմ, որտեղ կարելի է առաջնակարգ նեկտար խմել։

— Տվյալ դեպքում, սակայն, ինչ վերաբերում էր դրսում

գիշերելուն, նրա գործնական հայացքը շատ տեղին էր։ Պարզ է, անձրևոտ եղանակին դրսում գիշերելը այնքան էլ հաճելի բան չէ։

Երեկո է։ Դուք ոտից գլուխ թրջված եք, նավակում երկու մատնաչափ ջուր է լցված, և բոլոր իրերը թաց են։ Ափին մի տեղ եք գտնում, որտեղ համեմատաբար ավելի քիչ է ցեխոտ, վրանը քարշ եք տալիս այնտեղ և երկուսով սկսում եք այն խփել։

Վրանը ամբողջապես ներծծված է ջրով և խիստ ծանրացել է։ Նրա ծայրերը կպչում են ձեզ, ընկնում կամ փաթաթվում գլխի շուրջը՝ ձեզ հասցնելով կատաղություն։ Անձրևը այդ ամբողջ ժամանակ ուժգնորեն թափվում է։ Բավական դժվար գործ է վրան խփելը, իսկ եթե դրան ավելացնենք նաև անձրևը, ապա դա միայն Հերկուլեսի ուժի գործ է դառնում։ Համոզված եք, որ ձեր ընկերը օգնելու փոխարեն միայն հիմարություններ է անում։ Հենց որ դուք ձեր կողմում գեղեցիկ կերպով ամրացնում եք վրանը, նա սկսում է ձգել իր կողմը և ամեն ինչ փչացնում է։

— Էյ, այդ ինչ՞ ես անում, — գոռում եք դուք։

— Իսկ դու՞ ինչ ես անում, — պատասխանում է նա, — դի՛ բաց թող։

— Մի ձգիր, ամեն ինչ փչացրիր։ Հիմար ավանակ։— Գոռում եք դուք։

— Ես չեմ ձգում, — գոռում է նա ի պատասխան, — բաց թող քո ծայրը։

— Ասում եմ չէ՞, դու ամեն ինչ խճճել ես, — գոռում եք դուք, ղղջալով, որ չեք կարող նրա մոտ հասնել և այնպես եք ձգում պարանները, որ տեղահան եք անում նրա խփած բոլոր ցցերը։

— Ահ, իսկական ապուշ, — մոթմոթում է նա քթի տակ։ Հետո մի հուսահատ շարժումով ձգում է վրանը և հիմա էլ ձեր կողմն է փլվում։ Դուք մի կողմ եք նետում մուրճը և փորձում եք շրջանցել վրանը, որպեսզի ասեք թե ինչ եք մտածում նրա մասին, բայց միևնույն ժամանակ, նա էլ է փորձում շրջանցել վրանը նույն ուղղությամբ և բացատրել ձեզ, թե ի՛նքն ինչ է մտածում մեր մասին։ Եվ դուք, իրար անպատվելով, մեկդ մյուսի ետևից պտտվում եք վրանի շուրջը, մինչև որ վրանը

փլվում է՝ ձեզ թողնելով ավերակների վրայով իրար նայելիս։ Եվ երկուսդ էլ զայրացած միաժամանակ բացականչում եք.

— Դե, ի՞նչ էի քեզ ասում։

Մինչ այդ, ձեր երրորդ ընկերը, որը նավակի ջուրն էր դատարկում և թրջել էր թևքը, արդեն տասը բոպե շարունակ առանց շունչ առնելու անեծք է թափում, փորձելով հասկանալ, թե այդ ի՞նչ պատմություն եք սարքել և ինչու՞ այդ դրոշի տարած վրանը մինչև հիմա խփված չէ։

Վերջապես, մի կերպ վրանը կանգնեցնում եք և իրերը ցամաք եք տեղափոխում. իմաստ չունի փորձել խարույկ պատրաստել։ Դուք վառում եք սպիրտայրոցը և խմբվում շուրջը։

Անձրևաջուրը ընթրիքի հիմնական բաղկացուցիչ մասն է։ Հացը երկու երրորդով բաղկացած է ջրից, մսով կարկանդակը նույնպես չափազանց հարուստ է ջրով, մուրաբան, կարագը, աղը և սուրճը միացել են անձրևաջրի հետ՝ կազմելով մի յուրատեսակ ջրային միացություն։

Ընթրիքից հետո, պարզվում է, որ ծխախոտը թաց է և ծխել չեք կարող։ Բարեբախտաբար, ձեզ մոտ մի շիշ կա, որի մեջ պարունակվող հեղուկը, եթե ընդունեք անհրաժեշտ քանակությամբ, զվարթացնում է ու արբեցնում և կյանքի նկատմամբ բավականաչափ հետաքրքրություն է առաջացնում, որպեսզի պառկեք քնելու։

Եվ ահա երազում տեսնում եք, որ մի փիղ հանկարծ նստեց ձեզ վրա և, որ հրաբուխ է ժայթքել ու շպրտել ձեզ ծովի հատակը, իսկ փիղը դեռ հանգիստ նստած է ձեր կրծքին։ Դուք արթնանում եք և համոզվում, որ իսկապես ինչ-որ սարսափելի բան է կատարվում։ Առաջին տպավորությունն այն է, որ աշխարհի վերջն է եկել, իսկ հետո մտածում եք՝ քանի որ դա անհնար է, ուրեմն գողեր ու ավազակներ են հարձակվել, կամ դուցե հրդեհ է սկսվել և ձեր կարծիքն արտահայտում եք սովորական եղանակով։ Սակայն ոչ ոք օգնության չի հասնում և թվում է, թե հազարավոր մարդիկ ձեզ ոտքերով տրորում են ու խեղդում։

Կարծես մեկ ուրիշին էլ է դժբախտություն պատահել։ Դուք լսում եք նրա աղիողորմ կանչերը ձեր անկողնու տակից։ Որոշելով, ինչ էլ լինի, կովել մինչև վերջին շունչը, դուք պայքարում եք խելագարի պես, աջ ու ձախ հարվածելով ոտքերով

ու ձեռքերով և միաժամանակ վայնասուն բարձրացնելով։ Վերջապես ինչ-որ բան տեղի է տալիս, և դուք հայտնվում եք մաքուր օդում։ Երկու ոտնաչափ այն կողմ ադոտ նշմարում եք մի կիսահագնված սրիկայի, որը ուր որ է կսպանի ձեզ, և պատրաստվում եք կենաց մահու կռիվ մղել նրա հետ, երբ հանկարծ պարզվում է, որ դա Ջիմն է։

— Ախ, այդ դու՞ ես, — ասում է նա, նույն պահին ճանաչելով ձեզ։

— Այո, — պատասխանում եք դուք, տրորելով ձեր աչքերը։ — Ի՞նչ է պատահել։

— Կարծես քամին ցած է գցել այդ անիծյալ վրանը, — ասում է նա։ — Որտե՞ղ է Բիլլը։

Հետո երկուսով բարձրաձայն սկսում եք կանչել Բիլլին, իսկ ձեր ոտքերի տակ գետինը տարուբերվում է, և մի խեղդված ձայն, որը դուք արդեն լսել եք, պատասխանում է փլատակների տակից։

— Ցած իջեք գլխիս վրայից, գրողի տարածներ։

Եվ Բիլլը մի կերպ դուրս է գալիս ցեխոտ, տրորված, տանջահար տեսքով ու խիստ մարտականորեն տրամադրված։ Նա, ակներևաբար, համոզված է, որ այդ ամբողջ պատմությունը սարքված է։

Առավոտյան երեքիդ ձայնն էլ խզված է, որովհետև գիշերը սաստիկ մրսել եք։ Դուք նաև վիճելու տրամադրություն ունեք և նախաճաշի ընթացքում խոպոտ շշնջոցով շարունակ կշտամբում եք միմյանց։

Այսպիսով, մենք համաձայնեցինք, որ կգիշերենք դրսում միայն լավ եղանակին, իսկ անձրևոտ օրերին, կամ երբ պարզապես հակված կլինենք փոփոխության, կգիշերենք պանդոկներում, ինչպես շատ հարգարժան մարդիկ։

Մոնթմորընսին ողջունեց այս հաշտությունը՝ ուրախ հավանություն տալով։ Նրան չի հրապուրում միայնության ռոմանտիկան։ Տարեք նրան մի որևէ աղմկոտ վայր և որքան աղմկոտ, այնքան ավելի ուրախ։ Նայեցեք Մոնթմորընսիին և ձեզ կթվա, որ դա երկիր ուղարկված մի հրեշտակ է, որը ինչ-ինչ պատճառներով մարդկանցից քողարկված է փորրիկ ֆոքսթերիերի տեսքով։ Նրա տեսքը կարծես ասում է՝ Օ-ինչվատ-աշխարհ է սա-և-ինչպես կուզենայի-դարձնել-այն-ա-

վելի-լավ ու աղնիվ, և արցունքով լցնում ասուպածավախ լեզիների ու ջենտլմենների աչքերը։

Երբ Մոնթմորընսին անցավ իմ խնամակալության տակ, մտքովս չէր անցնում, որ ինձ կհաջողվի նրան երկար պահել։ Մինչ նա, նստած բուխարու առջև փռած գորգին, ինձ էր ուսումնասիրում, ես նայում էի նրան ու մտածում.

— Օ՛, այս շունը երկար չի ապրի։ Նրա հոգին դեպի պայծառ երկինքը կհամբառնի։ Այ թե ինչ կկատարվի նրա հետ։

Բայց երբ ես ստիպված վճարեցի մոտ մեկ դյուժին ճաների համար, որոնց Մոնթմորընսին պատառ-պատառ էր արել, երբ նրան վզից բռնած դուրս քաշեցի հարյուր տասնչորսերորդ փողոցային քաշքշուկից (և դեռ նա գոռոում էր ու աքացի տալիս), երբ մի խիստ զայրացած տիկին ինձ դահիճ անվանեց՝ ցույց տալով իր բզկտված կատվին և երբ իմ հարևանը ինձ դատի տվեց այն բանի համար, որ կատաղած շանն ազատեմ արձակում, որի պատճառով գիշերվա ցրտին երկու ժամ շարունակ փակված է մնացել իր սեփական մառանում, վախենալով անգամ քիթը դռնից դուրս հանել, երբ վերջապես իմացա, որ այդպիսին ինձնից գաղտնի երեսուն շիլլինգ է շահել՝ գրազ գալով, թե Մոնթմորընսին որոշակի ժամանակամիջոցում քանի առնետ կբռնի, այդ ժամանակ ես սկսեցի մտածել, որ գուցե վերջիվերջո նրան կթողնեն մի քիչ ավելի երկար ապրել այս աշխարհում։

Թրև գալ ախոռի շուրջը, հավաքելով ամբողջ քաղաքի ամենավատ համբավի տեր շների մի ողջ ոհմակ և գլխավորել նրանց երթը դեպի քաղաքի ետնախորշերը՝ կռվելու ուրիշ կարիճ շների հետ — Մոնթմորընսիի համար սա է կյանքի իմաստը։ Դրա համար էլ, ինչպես ասացի, նա այդպիսի բուռն հավանություն տվեց հյուրանոցներում, պանդոկներում և իջևանատներում գիշերելու առաջարկությանը։

Այսպես կարգավորելով գիշերելու հարցը, որը գոհացնում էր չորսիս էլ, մնաց քննարկելու միայն մի հարց. ինչ՞ պետք է վերցնեինք մեզ հետ, և մենք սկսել էինք քննարկել դա, երբ Հարրիսն ասաց, որ մի երեկոյի համար արդեն բավական ճաշել ենք և առաջարկեց դուրս գալ ու մի բան խմել։ Նա ասաց, որ մի լավ տեղ գիտի մոտակայքում, որտեղ կարելի է հիանալի հոլանդական վիսկի խմել։

Ջորջն ասաց, որ խմելու կարիք է զգում (չեմ հիշում մի դեպք, որ Ջորջը խմելու կարիք չզգա) և, քանի որ ես այնպիսի նախազգացում ունեի, որ մի քիչ վիսկին մի կտոր լիմոնի հետ օգտակար կլիներ ինձ համար, մտքերի փոխանակությունը, ընդհանուր համաձայնությամբ, հետաձգվեց մինչև հաջորդ երեկո։ Համաժողովի մասնակիցները դրեցին իրենց գլխարկները և դուրս եկան։

Գլուխ երրորդ

Ճանապարհի պատրաստություններ։ Հարրիսի աշխատելու մեթոդը։ Ինչպես է ընտանիքի տարեց տղամարդը նկար կախում։ Ջորջը խելացի առաջարկություն է անում։ Վաղ առավոտյան լոգի հմայքը։ Վթարի դեպքում անհրաժեշտ իրեր։

Այսպիսով, հաջորդ երեկոյան մենք կրկին հավաքվեցինք, որպեսզի քննարկենք և համաձայնեցնենք մեր պլանները։ Հարրիսն ասաց.

— Այժմ առաջին հերթին պետք է որոշենք, թե ինչ ենք վերցնելու մեզ հետ։ Դու, Ջեյ, վերցրու մի կտոր թուղթ և գրի առ, իսկ դու, Ջորջ, գտիր մթերային խանութի գնացուցակը։ Մեկնումեկդ ինձ մի մատիտ տվեք և ես կկազմեմ ցուցակը։

Այսպիսին է Հարրիսը. միշտ պատրաստ՝ իր վրա վերցնելու աշխատանքի ողջ ծանրությունը և դնելու ուրիշների ուսերին։

Նա միշտ հիշեցնում է իմ խեղճ քեռի Փոջերին։ Դժվար թե երբևէ տանը այնպիսի իրարանցում տեսած լինեք, ինչպիսին ստեղծում էր քեռի Փոջերը, երբ մի որևէ գործ էր ձեռնարկում։ Ասենք թե շրջանակագործի մոտից նկարը բերել են, դրել ճաշասենյակում՝ ու մորաքույր Փոջերը հարցնում է՝ ինչ են անելու դրա հետ։ Քեռի Փոջերը ասում է.

— Օ՜, դա թողեք ինձ։ Ոչ մեկը թող չխառնվի։ Ես ամեն ինչ կանեմ։

Այնուհետև նա հանում է պիջակն ու գործի անցնում։ Աղախնին ուղարկում է վեց պենսի մեխ գնելու, նրա ետևից ուղարկում է տղաներից մեկին, ասելու, թե ինչ չափսի մեխ գնի, և այդ պահից սկսած ընտանիքի բոլոր անդամներին հերթով ներգրավում է աշխատանքի մեջ։

— Ուիլլ, գնա և բեր մուրճը, — կանչում է նա, — իսկ դու, Թոմ, տուր ինձ քանոնը։ Ինձ պետք է գալու նաև աստիճանը։ Լավ կլինի, որ խոհանոցից էլ մի աթոռակ բերեք։ Ջիմ, վազիր միսսիս Գոգլի մոտ և ասա. «Հայրիկը բարևում է և հուսով է, որ ձեր ոտքը ավելի լավ է ու խնդրում է ժամանակավորապես տալ ձեր հարթաշափը»։ Իսկ դու, Մարիա, մի գնա, քանի որ մեկնումեկը պետք է պահի մոմը, և երբ աղախինը վերադառնա, նա պետք է նորից խանութ գնա նկարի համար առասանակ գնելու։ Դու, Թոմ, ո՞ւր է Թոմը, Թո՜մ, արի այստեղ։ Դու պետք է ինձ տաս նկարը։

Հետո, այն բարձրացնելիս ցած է գցում, և նկարը գուրս է գալիս շրջանակից, նա փորձում է փրկել ապակին և կտրում է մատը։ Հետո վազվզում է սենյակում, փնտրելով իր թաշկինակը։ Նա չի կարողանում գտնել թաշկինակը, որովհետև այն պիջակի գրպանում է, որը հանել է ու չգիտի, թե ուր է դրել։ Եվ տան բոլոր անդամները ստիպված թողնում են գործիքները փնտրելը ու սկսում են փնտրել նրա պիջակը, մինչ նա վազվզում է սենյակում՝ խանգարելով բոլորին։

— Մի՞թե ամբողջ տանը մեկը չկա, որն իմանա, թե որտեղ է իմ պիջակը։ Ազնիվ խոսք, կյանքումս չեմ հանդիպել ձեզ նման մարդկանց։ Վեց հոգով չեք կարողանում գտնել մի պիջակ, որը ես հինգ րոպե առաջ եմ հանել։ Էհ, բոլորդ էլ...

Հետո նա վեր է կենում, և պարզվում է, որ ամբողջ ժամանակ նստած է եղել իր պիջակի վրա։

— Կարող եք վերջ տալ ձեր որոնումներին,— գոռում է նա։ — Ես ինքս գտա այն։ Անմիտ բան է սպասել, որ ձեզ նման մարդիկ որևէ բան գտնեն։ Նույն հաջողությամբ կարող էի կատվին խնդրել։

Եվ երբ կես ժամ վատնեցին, կապելով նրա մատը, նոր ապակի բերեցին, գործիքները, աստիճանը, աթոռը, մոմը մոտեցրին, և նա նորից գործի անցավ, ողջ ընտանիքը՝ ներառյալ նաև աղախինը և օրավարձու հավաքարարուհին, կանգնած էր շրջանաձև՝ պատրաստ օգնության հասնելու։ Երկուսը պետք է պահեին աթոռակը, երրորդը պետք է օգներ նրան բարձրանալ աթոռի վրա և բռներ նրան, չորրորդը պետք է փոխանցեր մեխը, հինգերորդը՝ մուրճը։ Իսկ նա վերցնում է մեխը և անդադրեն ցած գցում։

— Ահա, — ասում է նա վիրավորված տոնով, — հիմա էլ մեխն ընկավ։

Այս անգամ էլ սկսում ենք փնտրել մեխը, մինչ նա կանգնած աթոռակի վրա փնթփնթում է, թե ողջ երեկոն իրեն պետք է պահեն այդտեղ։

Վերջապես մեխը գտնում ենք, բայց այդ ընթացքում նա հասցնում է կորցնել մուրճը։

— Որտե՞ղ է մուրճը։ Ի՞նչ արեցի։ Աստված իմ։ Յոթ հոգով կանգնել զարմացած ինձ եք նայում և չգիտեք, թե ինչ եղավ մուրճը։

Մենք գտնում և նրան ենք տալիս մուրճը, բայց հիմա էլ նա կորցրել է պատի վրա նշած տեղը, որտեղ պետք է մեխը խփեր։ Մեղմից յուրաքանչյուրը ստիպված բարձրանում է աթոռակի վրա, նրա կողքին, և փնտրում։ Ամեն մեկս այն հայտնաբերում ենք տարբեր տեղերում, իսկ նա մեզ հերթով հիմար է անվանում և պատվիրում է ցած իջնել։ Իսկ ինքը վերցնում է քանոնը ու նորից չափում։ Պարզվում է, որ իրեն պետք է անկյունից չափել 31 և 3/8 դյույմի[1] կեսի չափ, փորձում է մոքով բաժանել և ղայրույթից քիչ է մնում խենթանա։

Մենք նույնպես փորձում ենք մոքով բաժանել, և ամեն մեկս տարբեր արդյունքի ենք հանգում, սկսում ենք ծաղրել մեկս մյուսին և ընդհանուր ժխորի մեջ մոռանում ենք սկզբնական թիվը։ Քեռի Փոչերը ստիպված նորից է չափում։

Այս անգամ նա պարանի մի կտոր է վերցնում և վճռական պահին, երբ ծեր խենթուկը քառասունհինգ աստիճանով թեքվում է աթոռակի վրա, փորձելով հասնել մի կետի, որը երեք դյույմ այն կողմ է իր հասանելիության սահմանից, պարանը ձեռքից սահում է, և նա գլորվում է ուղիղ դաշնամուրի վրա։ Անսպասելիորեն նրա մարմինը և գլուխը հարվածում են բոլոր ստեղներին միաժամանակ, և իսկապես հիանալի երաժշտական տպավորություն է ստեղծվում։ Իսկ մորաքույր Մարիան ասում է, որ չի կարող թույլ տալ, որպեսզի երեխաները նման արտահայտություններ լսեն։

Վերջապես քեռի Փոչերը նորից է տեղը նշում, ձախ ձեռքով մեխի ծայրը դնում է դրա վրա, իսկ աջով վերցնում է մուրճը։ Եվ հենց առաջին հարվածը հասցնում է բթամատին ու վայնասունով մուրճը գցում մեկն ու մեկի ոտքի վրա։

Մորաքույր Մարիան հեգաբար հույս է հայտնում, որ հաջորդ անգամ, երբ քեռի Փոչերը կցանկանա մեխ խփել, ժամանակին իրեն կզգուշացնի այդ մասին, որպեսզի կարողանա պատրաստվել մեկ շաբաթով մեկնելու իր մայրիկի մոտ, մինչև այդ ընթացքում գործը կավարտվի։

— Օ, դուք, կանայք, սիրում եք ամեն ինչ բարդացնել, — պատասխանում է քեռի Փոչերը բարձրանալով, — իսկ ինձ դուր են գալիս նման գործերը։

Այնուհետև նոր փորձ է անում և երկրորդ հարվածից մեխը՝ ամբողջությամբ և մուրճի կեսը խրվում են պատի մեջ։ Ինքը՝ քեռի Փոչերը, այնպիսի ուժով է նետվում դեպի պատը, որ քիչ է մնում ճղմի սեփական քիթը։

Հետո մենք ստիպված նորից ենք գտնում քանոնը և պարանը, մի նոր անցք ենք բացում. կեսգիշերին մոտ, նկարը՝ ծուռ և անհուսալի մի կերպ կախում ենք իր տեղում, իսկ պատի շուրջը մի քանի յարդ այնպիսի տեսք ունի, կարծես փոցխել են, և բոլորս մահու չափ հոգնած ու խրոխտ տեսք ունենք, բացի քեռի Փոչերից։

— Ահա, — ասում է նա, աթոռակից ծանրորեն վայրէջք կատարելով ուղիղ հավաքարարուհու կոշտուկների վրա և ակնհայտ հպարտությամբ դիտելով իր ստեղծած խառնաշփոթը։ — Որոշ մարդիկ հատուկ մարդ կհրավիրեին այսպիսի մանրուքի համար։

Համոզված եմ, որ Հարրիսն էլ այսպիսին կդառնա, երբ տարիքն առնի։ Ես ասացի, որ չեմ կարող թույլ տալ, որ նա այդքան գործը իր վրա վերցնի։

— Ոչ, դու վերցրու թուղթը, մատիտը և գնացուցակը, — առաջարկեցի ես, — Ջորջը թող գրի առնի, իսկ ես կանեմ մնացածը։

[1] 1 Դյույմը հավասար է 2,54 սմ։

Մեր կազմած առաջին ցուցակը չեղյալ համարվեց։ Պարզ էր, որ Թեմզայի վերին հոսանքներում հնարավոր չէ լողալ այնպիսի մեծ նավակով, որպիսին մեզ պետք էր անհրաժեշտ բոլոր իրերը տեղավորելու համար։ Մենք պատռեցինք ցուցակը և հայացքներ փոխանակեցինք։

Ջորջն ասաց։

— Մենք սխալ ճանապարհի վրա ենք կանգնած։ Չպետք է մտածենք այնպիսի իրերի մասին, որոնք մեզ պետք կգան, այլ միայն այն իրերի մասին, առանց, որոնց չենք կարող յոլա գնալ։

Պարզվում է, որ Ջորջը երբեմն իսկապես խելացի կարող է լինել։ Զարմանալի է։ Ես դա արդարև իմաստություն եմ համարում, ոչ թե միայն տվյալ դեպքի համար, այլև մեր ողջ ճանապարհորդության և կյանքի համար ընդհանրապես։ Որքան մարդիկ կան, որ ճամփորդելիս, վտանգի ենթարկելով նավակը, այն բեռնավորում են ավելորդ իրերով, որոնք իրենց կարևոր են թվում ճանապարհորդությունը հարմարավետ և հաճելի դարձնելու համար, բայց որոնք իրականում միայն ավելորդ բեռ են։

Ինչպե՞ս են նրանք իրենց խղճուկ նավակը մինչև կայմը բեռնավորում թանկարժեք զգեստներով, մեծ տներով, անօգուտ ծառաներով և բազմաթիվ պճնամոլ ընկերներով, որոնք իրենց համար երկու պենս էլ չարժեն և իրենք էլ նրանց համար արժեք չունեն, թանկարժեք զվարճություններով, որոնք ոչ ոքի չեն ուրախացնում, ձևականություններով և նորաձևություններով, երկերեսանությամբ և սնապարծությամբ և օ՜, ամենածանր և ամենաանմիտ բեռը, որ կա՝ վախով, թե ինչ կմտածի հարևանը. շքեղությամբ՝ որ միայն հոգեցնում է, հաճույքներով՝ որ տաղտկացնում են, անիմաստ ցուցամոլությամբ, որը, ինչպես հանցագործի երկաթե պսակը, արյունոտում է ցավող գլուխը և ուշագնացության հասցնում այն կրողին։

Անպետքություն է, մարդ արարած, անպետքություն է այդ ամենը։ Դեն նետեք տախտակամածից։ Դա այնքան է դժվարեցնում նավակը թիավարելը, որ համարյա ընկնում եք թիակների վրա։ Դա է նավակը դարձնում այդքան ծանրաշարժ և վտանգավոր, որ դուք մի բոպե անգամ ազատ չեք

լինում հոգսից և տագնապից, երբեք չեք կարողանում մի բոպե ազատ ժամանակ գտնել երազկոտ ալարկոտությամբ տարվելու։ Դուք ժամանակ չունեք հիանալու գետի մակերևույթին սահող ստվերների խաղով կամ արևի ճառագայթների փայլով, որ առկայծում և անհետանում են ալիքների հետ, ափի բարձր ծառերով, որոնք նայում են իրենց արտացոլմանը, ոսկով և կանաչով ծածկված անտառներով, դեղին և սպիտակ շուշաններով ստվերախիտ ծփացող եղեգնուտով, սիզախոտերով կամ խոլորձով և կամ անմոռուկներով։

Այդ անպետքությունը դե՛ն գցեք, մարդի՛կ։ Թող ձեր կյանքի նավը սահի թեթև և տանի այն, ինչի կարիքը դուք իսկապես զգում եք. հարմարավետ տուն, պարզ զվարճություններ, մեկ-երկու ընկեր, որոնք արժանի են այդպիսին կոչվելու, ինչ-որ մեկին՝ որին սիրում եք, և որը ձեզ է սիրում, մի կատու, մի շուն, մեկ-երկու ծիծաղրաֆ, բավարար քանակով ուտելիք ու հագուստ և մի քիչ ավելի, քան անհրաժեշտ է, խմիչք, քանի որ ծարավը վտանգավոր բան է։

Դուք կհամոզվեք, որ այդ դեպքում ավելի հեշտությամբ կվարեք նավակը և այնքան էլ հեշտ չի լինի այն շրջել, իսկ եթե շրջվի էլ, հասարակ ապրանքի համար ջուրը սարսափելի չէ։ Դուք ժամանակ կունենաք մտածելու և աշխատելու։ Ժամանակ՝ արբենալու կյանքի արևով, ժամանակ՝ լսելու էոլյան[1] երաժշտությունը, որը աստվածային քամին դուրս է կորզում մեր սրտի լարերից, ժամանակ...

Ներեցեք, խնդրում եմ։ Ես լրիվ մոռացել էի։

Եվ այսպես, մենք ցուցակը կազմելը թողեցինք Ջորջին, ու նա գործի անցավ։

— Մենք վրան չենք վերցնի, — առաջարկեց նա, — այլ ծածկով նավակ։ Այդպես շատ ավելի պարզ է և հարմարավետ։

Դա լավ միտք էր, և մենք այն ընդունեցինք։ Ես չգիտեմ, թե երբևէ տեսե՞լ եք այն, ինչը նկատի ունեմ։ Դուք երկաթյա օղակներ եք ամրացնում նավակի ողջ երկարությամբ՝ նավախելից մինչև նավաքիթը, դրանց վրա ձգում և ամրաց-

[1] Էոլյան — քամիների աստվածը (հուն. դից)։

նում եք բրեզենտը այնպես, որ նավակը վեր է ածվում փոքրիկ տնակի։ Այնտեղ հարմարավետ է, թեև մի քիչ հեղձուցիչ, բայց ամեն ինչ ունի նաև իր բացասական կողմը, ինչպես ասում էր մի մարդ, որին ստիպել էին վճարել զոբանչի թաղման ծախսերը։

Ջորջն ասաց, որ այդ դեպքում մենք պետք է ծածկոցներ վերցնենք՝ յուրաքանչյուրի համար առանձին, մեկ յամպ, օճառ, խոզանակ, սանր (ընդհանուր գործածության համար), ատամի խոզանակ (յուրաքանչյուրի համար առանձին), լվացվելու թաս, ատամնափոշի, սափրվելու պարագաներ (Ֆրանսերենի քիրականական վարժությունների նման է հնչում, այնպես չէ՞) և մի զույգ մեծ սրբիչ՝ մարմինը չորացնելու համար։ Ես նկատել եմ, որ մարդիկ հսկայական պատրաստություններ են տեսնում լողալու համար, երբ մեկնում են ջրին մոտ մի որևէ տեղ, սակայն, երբ արդեն այնտեղ են, այնքան էլ շատ չեն լողում։

Նույն բանն է, երբ ծովափ եք մեկնում։ Երբ Լոնդոնում եմ այդ ամենի մասին մտորում, միշտ որոշում եմ, որ առավոտյան վաղ եմ արթնանալու, մինչև նախաճաշ ընկղմվելու եմ ջրի մեջ և ակնածանքով ճամպրուկում տեղավորում եմ սրբիչն ու լողազգեստը։ Ես միշտ կարմիր լողազգեստ եմ գնում։ Ավելի շատ ինձ կարմիր լողազգեստով եմ պատկերացնում։ Կարմիրը այնպես սազում է ինձ։ Բայց երբ արդեն ծովափին եմ, այդ առավոտյան լողի կարիքը ինչ-որ այնքան էլ ուժգին չեմ զգում, ինչպես քաղաքում։

Ընդհակառակը, ես ձգտում եմ, որքան հնարավոր է, երկար մնալ անկողնում և հետո գնալ նախաճաշելու։ Մի երկու անգամ ողջախոհությունը, սակայն, հաղթանակ տարավ։ Ես արթնացա առավոտյան ժամը վեցին և կիսահագնված ու վհատ տրամադրությամբ դուրս եկա, ինձ հետ վերցնելով լողազգեստս ու սրբիչը։ Բայց լողը ինձ հաճույք չպատճառեց։ Թվում է, թե վաղ առավոտյան, երբ ես լողալու եմ գնում ինձ է սպասում առանձնապես ուժգին արևելյան քամին, կարծես դիտմամբ ընտրել են բոլոր եռանկյունաձև քարերը և շարել գետնի երեսին, սրել են բոլոր ժայռերը և սուր ծայրերը թաքցրել ավազի տակ, որ ես լտեսնեմ, իսկ ծովն էլ կարծես երկու մղոն այն կողմ են տարել,

որ ստիպված լինեմ փաթաթվել թևերովս և դողալով թռչկոտել վեց մատնաչափ խորության ջրում։ Եվ երբ ես վերջապես ջուրն եմ մտնում, ծովն իրեն կոպիտ և խիստ վիրավորական է պահում։

Մի ուժեղ ալիք վերցնում է ինձ և հնարավորին չափ ուժգնորեն տանում է ու գցում մի քարի վրա, որը կարծես հատուկ ինձ համար են դրել։ Եվ մինչ ես օհ, ուհ, կանեմ և գլխի կընկնեմ, թե ինչ է կատարվել, ալիքը ետ է գալիս և քշում ինձ մինչև օվկիանոսի մեջտեղը։ Ես հուսահատորեն ճեղքում եմ ջուրը՝ ձգտելով ափ հասնել, և մտածում եմ՝ արդյոք նորից կտեսնեմ իմ տունն ու ընկերներին, զղջում եմ, որ երեխա ժամանակ այդքան կոպիտ եմ վարվել կրթասեր քրոջս հետ։ Հենց որ հույսս լրիվ կտրում եմ, ալիքը ընկրկում է և ինձ թողնում է մեդուզայի նման բերանքսիվայր գետնին փռված։ Ես վեր եմ կենում, ետ նայում և գլխի եմ ընկնում, որ պայքարել եմ կյանքիս համար երկու սանտիմետրանոց խորության ջրում։ Կաղալով ետ եմ գալիս, հագնվում և մի կերպ տուն եմ հասնում, որտեղ ստիպված եմ ձեացնել, իբր ամեն ինչ կարգին է։

Տվյալ դեպքում, մենք այնպես էինք արտահայտվում, կարծես պատրաստվում էինք ամեն առավոտ երկար լող տալ։ Ջորջն ասաց, որ շատ հաճելի է վաղ առավոտյան արթնանալ նավակում և խորասուզվել թափանցիկ գետում։ Հարրիսն ասաց, որ ոչինչ ախորժակը այնպես լավ չի բացում, որքան նախաճաշից առաջ լողալը, և որ դա միշտ իր մոտ գայլի ախորժակ է առաջացրել։ Ջորջն ասաց, որ եթե դա պետք է ստիպի Հարրիսին ուտել ավելի շատ, քան սովորաբար ուտում է, ապա ինքը դեմ է, որ Հարրիսը ընդհանրապես ջրին մոտենա։

Նա ասաց, որ առանց այն էլ բավական ծանր աշխատանք է Հարրիսի համար անհրաժեշտ քանակով սնունդ քարշ տալը և այն էլ հոսանքին հակառակ ուղղությամբ։

Սակայն, ես համոզված Ջորջին, որ շատ ավելի հաճելի կլինի Հարրիսին տեսնել նավակում՝ մաքուր և թարմացած, թեկուզ ստիպված լինենք մի քանի ցենտներ ավելի սննդամթերք քարշ տալ։ Ջորջը համաձայնեց ինձ հետ և որոշեց հանգիստ թողնել Հարրիսին։

Մենք վերջնականապես որոշեցինք վերցնել երեք սրբիչ, որպեսզի մեկս մյուսին չսոփպենք սպասել։

Ինչ վերաբերում է հագուստներին, Ջորջն ասաց, որ երկու ֆլանելե կոստյումը բավական է, քանի որ անհրաժեշտության դեպքում դրանք կարող ենք լվանալ Թեմզայի ջրերում։ Մենք հարցրեցինք, թե արդյոք նա երբևէ փորձե՞լ է ֆլանելե կոստյում լվանալ դետում, իսկ նա պատասխանեց. ոչ, ինքը՝ ոչ, բայց ճանաչում է մարդկանց, որոնք լվացել են։ Դա շատ հեշտ է։ Հարրիսը և ես չափազանց անտրամադիր էինք, որպեսզի պատկերացնենք, արդյոք նա հասկանում էր, թե ինչ էր ասում և արդյոք առանց դիրքի և ազդեցության, երեք հարգարժան երիտասարդներ, որոնք բացարձակապես անփորձ են լվացք անելու գործում, իսկապե՞ս կարող էին օճառի կտորով իրենց վերնաշապիկներն ու անդրավարտիքները լվանալ Թեմզայի մեջ։

Հաջորդ օրերին, երբ արդեն շափազանց ուշ էր, մենք համոզվեցինք, որ Ջորջը մի խղճուկ ինքնակոչ է, որը գաղափար անգամ չունի նման գործերից։ Եթե դուք տեսնեիք այդ հագուստները, երբ... բայց էժանագին դետեկտիվների լեզվով ասած, անցնենք առաջ։

Ջորջը մեզ համոզեց վերցնել ներքնահագուստի մեկ փոխնորդ և բավական քանակությամբ գուլպաներ, որպեսզի նավակը շրջվելու դեպքում կարողանայինք փոխել դրանք, նաև մեծ քանակությամբ թաշկինակներ, քանի որ դրանք կարելի էր օգտագործել տարբեր իրեր սրբելու համար, մի զույգ կաշվե սապոգ, ինչպես նաև ռետինե կոշիկներ, քանի որ վթարի դեպքում, դրանք մեզ պետք կգային։

Գլուխ չորրորդ

Սննդամթերքի հարցը։ Նավթի բացասական հատկությունները։ Պանրի ուղեկցությամբ ճանապարհորդելու առավելությունները։ Ամուսնացած կինը լքում է իր տունը։ Վթարի դեպքում հետագա միջոցառումներ։ Ես իրեն եմ կապում։ Ատամի խողանակների կամակորությունը։ Ջորջը և Հարրիսը մնացած իրերն են տեղավորում։ Մոնթմորենսիի սարսափելի վարքը։ Պառկում ենք քնելու։

Մենք քննարկեցինք նաև սննդամթերքի հարցը։ Ջորջն ասաց.

— Սկսենք առավոտյան նախաճաշից։ (Ջորջն այնքան գործնական է)։ Նախաճաշի համար մեզ պետք կգա թավա, (Հարրիսն ասաց, որ դա դժվարամարս է, բայց մենք ասացինք, որ հիմարություններ դուրս չտա, և Ջորջը շարունակեց), թեյաման և սպիրտայրոց։

— Նավթ՝ ոչ մի դեպքում, — ասաց Ջորջը բազմանշանակալից հայացքով նայելով մեզ, և Հարրիսն ու ես համաձայնեցինք։

Մի անգամ արդեն մեզ հետ վերցրել էինք նավթավառ, բայց այլևս այդ սխալը չենք կրկնի։ Այդ ամբողջ շաբաթը կարծես ապրում էինք նավթի կրպակում։ Ամեն ինչ նավթով էր ներծծված։ Երբեք չեմ տեսել, որ որևէ բան այնպես սարսափելի տարածվի, ինչպես նավթը։ Նավթավառը պահում էինք նավաթթում, այնտեղից նավթը տարածվել էր մինչև ղեկը, ներծծելով նավակը և այն ամենը, ինչ պատահել էր ճանապարհին։ Այն տարածվել էր դետով մեկ, իրենով լցրել բնապատկերը, թունավորել մթնոլորտը։ Երբեմն արևմտյան նավթային քամի էր փչում, երբեմն՝ արևելյան նավթային քամի, երբեմն էլ փչում էր հյուսիսային նավթային քամի, իսկ գուցեև հարավային նավթային քամի։ Սակայն այն Արկտիկայի ձյուներից փչեր, թե ավազոտ անապատներից, միևնույն է, մեզ էր հասնում նավթի բույրով հագեցած։

Այդ նավթ կոչեցյալն ավելի ու ավելի էր տարածվում և փչացրել էր մեր արևամուտը, իսկ լուսնի ճառագայթներից ուղղակի նավթի հոտ էր փչում։

Փորձեցինք ազատվել դրանից Մարլոյում։ Նավակը թողեցինք կամրջի մոտ և շրջում էինք քաղաքում, որպեսզի ազատվենք դրանից, բայց ամենուրեք այն հետևում էր մեզ։ Ողջ քաղաքը լի էր նավթով։ Մենք անցանք գերեզմանատան մոտով, և, թվում էր, թե հանգուցյալները թաղված են նավթի մեջ։ Կենտրոնական փողոցից նավթի գարշահոտություն էր փչում, և մենք զարմանում էինք, թե ինչպես են կարողանում այդտեղ մարդիկ ապրել։ Մղոն մղոնի ետևից քայլում էինք Բիրմինգհեմյան ճանապարհով, բայց՝ անօգուտ, ոչ տեղանքը ներծծված էր նավթով։

Այդ ճանապարհորդության վերջում մենք հանդիպեցինք կեսդիշերին մի մենավոր պաշտում, կայծակնահար եղած կաղնու տակ, և սարսափելի երդում տվեցինք (մենք առանց այդ էլ ամբողջ շաբաթը նստում էինք նավթը սովորական, քաղքենական եղանակով, բայց սա ուրիշ էր), մի սարսափելի երդում՝ այլևս երբեք նավակով ճանապարհորդելիս նավթ չվերցնել, բացի՝ իհարկե, հիվանդության դեպքում։

Եվ այսպես, այս անգամ մենք բավարարվեցինք սպիրտով։ Սակայն դա էլ մի բան չէ։ Ստիպված եք ուտել սպիրտով կարկանդակ կամ սպիրտով տորթ։ Բայց սպիրտը, երբ մեծ քանակությամբ եք ընդունում, ավելի անվնաս է, քան նավթը։

Ջորջն առաջարկեց առավոտյան նախաճաշի համար վերցնել նաև ձու և խոզապուխտ, որոնց պատրաստելը հեշտ է, սառը միս, թեյ, հաց ու կարագ և մուրաբա։ Երկրորդ նախաճաշի համար առաջարկեց վերցնել թխվածքաբլիթ, սառը միս, հաց ու կարագ և մուրաբա, միայն թե ոչ մի դեպքում՝ պանիր։ Պանիրը, ինչպես և նավթը, շատ արագ է տարածվում։ Այն սպառնում է ղավթել ողջ նավակը։ Թափանցում է զամբյուղի մեջ և այնտեղ եղած ամենինչին պանրի բույր է տալիս։ Հնարավոր չէ ջոկել՝ խնձորով կարկանդա՞կ եք ուտում թե նրբերշիկ, ելա՞կ թե սերուցք։ Ամեն ինչ ձեղ պանիր է թվում։ Այնչափ ուժեղ է պանրի հոտը։

Հիշում եմ, մի անգամ ընկերս Լիվերպուլում մի քանի տեսակի պանիր էր գնել։ Պանրի հիանալի տեսակներ էին. հնորակ, յուղալի և երկու հարյուր ձիաուժ հզորության հոտով, որը կարող էր տարածվել երեք մղոն հեռավորության վրա և երկու հարյուր յարդի վրա մարդուն շարքից հանել։ Այդ ժամանակ ես Լիվերպուլում էի, և իմ ընկերը խնդրեց, եթե դեմ չեմ, պանրի փաթեթը տանեմ Լոնդոն, քանի որ, իր կարծիքով, չի կարելի պանիրը շատ երկար պահել։

— Օ՜, հաճույքով, բարեկամս, հաճույքով,— պատասխանեցի ես։

Մեկնելիս դնացի ընկերոջս մոտ, վերցնելու պանրի փաթեթը և այն կառքով կայարան տարա։ Դա մի կիսաբանդ կառք էր, որը քաշում էր մի ծուռոտ և ուժասպառ լուսնոտ, որին տերը խոսակցության ժամանակ, ոգեշնչման պահին, ձի անվանեց։ Ես պանիրը դրեցի վերևում և մենք շարժվեցինք մի արագությամբ, որը պատիվ կբերեր երբևէ կառուցված ամենաարագընթաց շոգեզլանվակին, և ամեն ինչ շատ ուրախ էր, ինչպես թաղման ժամանակ, քանի դեռ մենք անկյունից չէինք թեքվել։ Այդտեղ քամին պանրի բուրմունքով հարվածեց ուղիղ մեր երիվարի ռունգներին։ Դա կարծես սթափեցրեց նրան։ Նա սարսափով փնչացրեց և առաջ նետվեց ժամում երեք մղոն արագությամբ։ Քամին դեռ փչում էր նախկին ուղղությամբ, և մինչ մենք կհասնեինք փողոցի ծայրը, մեր երիվարն արդեն առաջ էր սլանում ժամում մոտ չորս մղոն արագությամբ՝ տեղ չթողնելով հաշմանդամների կամ հասակավոր գեր լեդիների համար։

Կայարանի մոտ նրան կանգնեցնելու համար երկու բեռնակիրների և կառապանի օգնության կարիքը զգացվեց։ Չեմ կարծում, որ նույնիսկ նրանք կարողանային գլուխ հանել, եթե ներկաներից մեկը թաշկինակով շծածկեր ձիու ռունգները և չվառեր մի կտոր թուղթ։

Ես տոմս վերցրի և իմ պանրի փաթեթի հետ միասին հպարտորեն քայլեցի կառամատույցով։ Ժողովուրդը երկու կողմից հարգանքով ճանապարհ էր տալիս ինձ։ Գնացքը մարդաշատ էր, և ես ստիպված մտա մի կուպե, որտեղ արդեն յոթ ուղևոր էին նստած։ Մի կովասեր ծեր ջենտլմեն բողոքեց, բայց ես այնուամենայնիվ ներս մտա, փաթեթը դրեցի ցանցի վրա, մի կերպ խցկվեցի նստարանին և հաճելի ժպիտով ասացի, որ տաք օր է։ Մի քանի բոպե անց, ծեր ջենտլմենը սկսեց անհամբեր շարժվել տեղում։

— Այստեղ շատ տոթ է, — ասաց նա։

— Օդ չկա շնչելու, — ավելացրեց նրա հարևանը։

Հետո սկսեցին հոտոտել շուրջը և երրորդ փորձից նրանց շունչը կտրվեց։ Անխոս վեր կացան ու դուրս եկան։ Նրանցից հետո մի ծեր կին վեր կացավ և ասաց, որ անքաղաքավարություն է այդպիսի եղանակով համբերությունից հանել իր նման հարգարժան տիկնոջը, հավաքեց իրերն ու դուրս եկավ՝ ետևից քարշ տալով անհամար փաթեթները։ Մնացած չորս ուղևորները մի որոշ ժամանակ նստած մնացին, մինչև անկյունի մոայլ տեսքով ջենտլմենը, որի արտաքինից և հագուստից երևում էր, որ պատկանում է դաղաղագործների դասին, ասաց, որ ակամա մահացած երեխաներ միտքը եկան, այդ ժամանակ մյուս երեք ուղևորները փորձեցին դուրս գալ դռնից միաժամանակ ու ցավեցրին իրենց կողերը։

Ես ժպտացի մոայլ ջենտլմենին և ասացի որ մենք, հավանաբար, մենակ կմնանք կուպեում։ Նա բարեհոգաբար ժպտաց և ասաց, որ որոշ մարդիկ սիրում են շնչին բանեբից աղմուկ բարձրացնել։ Բայց երբ գնացքը շարժվեց, նույնիսկ նա տարօրինակ կերպով իրեն ճնշված էր զգում և երբ հասանք Քրու, առաջարկեցի նրան գնալ և մի բաժակ բան խմել։ Նա ընդունեց հրավերը, և մենք մի կերպ ճանապարհ բացեցինք դեպի բուֆետ, որտեղ քառորդ ժամի չափ գոռում էինք, թխկթխկացնում և թափահարում հովանոցները, մինչև մի երիտասարդ կին մոտեցավ և հարցրեց, թե ինչ ենք ցանկանում։

— Դուք ի՞նչ եք խմելու, — դիմեցի իմ սեղանակցին։

— Եթե կարելի է, միսս, կես կրոնի մաքուր բրենդի, — ասաց նա։

Եվ խմելով իր բրենդին, նա դուրս եկավ ու մտավ ուրիշ կուպե, որը ես սոորություն եմ համարում։

Քրուից ես մենակ էի կուպեում, թեև գնացքը լիքն էր ուղևորներով։ Հենց որ մենք հասնում էինք որևէ նոր կայարանի, մարդիկ, տեսնելով դատարկ կուպեն ներս էին խցկվում. «Ահա, Մարիա, արի այստեղ։ Ազատ է»։ «Հիանալի է, Թոմ, մենք այստեղ կնստենք»,— կանչում էին միմյանց ու վազում էին՝ քարշ տալով ծանր ճամպրուկները, իմբվելով դռան մոտ, փորձելով առաջինը ներս մտնել։ Ինչ-որ մեկը բաց էր անում դուռը, բարձրանում աստիճանին և օրորվելով ընկնում ետևում կանգնածի վրա։ Նրանք բոլորը հերթով ներս էին մտնում, հոտոտում, ետ էին թռչում և խցկվում մյուս կուպեները կամ էլ վճարում էին տարբերություններ և մեկնում առաջին կարգի վագոնով։

Լոնդոնի Յուսթոնյան կայարանից պաների փաթեթը ուղիղ ընկերոջս տուն տարա։ Երբ նրա կինը սենյակ մտավ, մի պահ հոտոտեց շուրջը և ասաց.

— Ի՞նչ է պատահել։ Ասացեք, ոչինչ մի թաքցրեք։

Ես պատասխանեցի.

— Դա պանիր է։ Թոմը լիվերպուլում է գնել և խնդրել է, որ հանձնեմ ձեզ։

Ես ավելացրի նաև, որ հուսով եմ, նա հասկանում է, որ անձամբ ես այդ ամենի հետ ոչ մի կապ չունեմ։ Նա պատասխանեց, որ համոզված է դրանում և որ ինքը կխոսի Թոմի հետ, երբ նա վերադառնա։

Իմ բարեկամը ավելի երկար մնաց Լիվերպուլում, քան կարծում էր։ Երեք օր անց, երբ նա դեռ տուն չէր վերադարձել, նրա կինն այցելեց ինձ։

— Ի՞նչ էր Թոմն ասում այդ պանրի մասին։

Ես ասացի, որ նա հանձնարարել է սառը տեղ պահել և խնդրել է ձեռք չտալ։

— Կասկածում եմ, որ որևէ մեկը ցանկանա նույնիսկ մոտենալ։ Նա դրանից հոտ քաշե՞լ է։

Ես ասացի՝ հավանաբար այո և ավելացրի, որ երևի նրա համար այդ պանիրը շատ կարևոր է։

— Կարծում եք նա շա՞տ կվշտանա, — հետաքրքրվեց նա, — եթե ես որևէ մեկին մի սովորական տամ և խնդրեմ, որ տանեն և թաղեն որևէ տեղում։

Ես ասացի՝ վախենում եմ, որ նա այլևս երբեք չժպտա։

Նա մի նոր միտք հղացավ և ասաց.

— Իսկ եթե ձեզ մոտ պահեք մինչև նրա վերադարձը։ Թույլ տվեք ուղարկեմ ձեզ։

— Տիկին, — պատասխանեցի ես, — անձամբ ինձ, դուր է գալիս պանրի հոտը և Լիվերպուլից կատարած ճանապարհորդությունը ես միշտ կհիշեմ, որպես հաճելի արձակուրդի երջա-

նիկ վախճան։ Բայց այս աշխարհում մենք պետք է հաշվի առնենք նաև մյուսներին։ Տիկինը, որի հարկի տակ պատիվ ունեմ բնակվելու, այրի է և, որքան գիտեմ, նաև որբ։ Նա ուժգնորեն ես կասեի պերճախոս կերպով, դեմ է, որ իրեն, ինչպես ինքն է արտահայտվում, անհոգացնենք։ Ձեր ամուսնու գնած պանրի առկայությունը նրա տանը, նա կհամարի, — ես դա բնազդորեն զգում եմ,— որ իրեն նեղացնում են։ Իսկ ես չեմ ուզում, որ իմ մասին խոսեն, իբր ես նեղացնում եմ այրիներին և որբերին։

— Հիանալի է, — ասաց ընկերոջս կինը վեր կենալով, — այդ դեպքում ինձ միայն մի բան է մնում. կվերցնեմ հրեխաներին և կգնամ հյուրանոց, մինչև այդ պանիրը ուտեն վերջացնեն։ Ես հրաժարվում եմ այդ գարշահոտության հետ միասին ապրել նույն հարկի տակ։

Նա իր խոսքի տերը եղավ, թողնելով տունը աղախնի խնամքին, որն այն հարցին, թե կարո՞ղ է դիմանալ այդ հոտին, պատասխանել էր՝ ի՞նչ հոտ, իսկ երբ մոտեցրել էին պանիրը և պատվիրել, որ մի լավ հոտ քաշի, ասել էր, որ սեխի թույլ բույր է զգում։ Դրանից հետևություն արեցին, որ այդպիսի մթնոլորտը աղախնուն առանձնապես չի վնասի և նրան թողեցին բնակարանում։ Հյուրանոցի հաշիվը կազմեց տասնհինգ գինեա, և իմ ընկերը, ծախսերը հանրագումարի բերելով, գտավ, որ պանրի մեկ ֆունտը իր վրա նստեց ութ շիլլինգ և վեց պենս։ Նա ասաց, որ ճիշտ է, շատ է սիրում երբեմն մի փոքրիկ կտոր պանիր համտեսել, սակայն դա իր հնարավորություններից վեր է և որոշեց ազատվել դրանից։ Նա պանիրը նետեց ջրանցքը, բայց ստիպված էր նորից կարթով ետ որսալ, քանի որ մակույկավարները բողոքեցին։ Նրանք ասում էին, որ վատ հոտ կգում այդ հոտից։ Իսկ դրանից հետո, մի մութ գիշեր, նա պանիրը տարավ և թողեց եկեղեցու մոտի գերեզմանատանը։ Բայց գատական քննիչը հայտնաբերեց այն և սարսափելի աղմուկ բարձրացրեց։

Նա ասում էր, դա դավադրություն է, որը սարքել են, որպեսզի իրեն զրկեն ապրուստի միջոցներից՝ կենդանացնելով ենթեցյալներին։

Իմ ընկերը վերջապես ազատվեց դրանից, այն տարավ

ծովափնյա մի քաղաք և թաղեց ծովափին։ Դա տեղանքին մեծ հմայք բերեց։ Այցելուներն ասում էին, որ նախկինում չեն նկատել, թե ինչ առողջարար է օդը և շատ տարիներ խմբերով այդտեղ բուժվելու էին գալիս թոքախտով հիվանդները։

Թեև ես պանրի մեծ սիրահար եմ, այնուամենայնիվ, գտնում եմ, որ Ջորջը ճիշտ վարվեց՝ խուսափելով պանրից։

— Թեյելու կարիք չի լինի, — ասաց Ջորջը (Հարրիսը դեմը տհաճությունից ծամածռեց), — բայց մենք կուշտ, արքայավայել կճաշենք ժամը յոթին. ճաշ, թեյ, ընթրիք՝ միաժամանակ։

Հարրիսը դվարթացավ։ Ջորջն առաջարկեց վերցնել մսով և մրգով կարկանդակներ, սառը միս, լոլիկ, մրգ և կանաչեղեն։ Ծարավը հագեցնելու համար որոշեցինք վերցնել Հարրիսի պատրաստած մի ինչ-որ զարմանալիորեն կպչուն կոնցենտրատ, որը խմելիս խառնում էին ջրի հետ և կոչվում էր լիմոնադ, մեծ քանակությամբ թեյ և վիսկի, որը, ինչպես Ջորջն ասաց, պետք կգար նավակը վթարի ենթարկվելու դեպքում։

Ինձ թվում է, որ Ջորջը շատ հաճախ էր մտածում վթարի մասին։ Կարծում եմ լավ չէ նման տրամադրությամբ ճամփա ընկնել։

Բայց ես ուրախ եմ, որ մեզ հետ վիսկի վերցրեցինք։

Գինի և գարեջուր չվերցրեցինք։ Դրանք այն խմիչքները չեն, որ կարելի է խմել գետի վրա նավարկելիս։ Դրանք մարդուն ծանրացնում և քնկոտ են դարձնում։ Մի բաժակ՝ երեկոյան, երբ թափառում ես քաղաքում, դիտելով աղջիկներին, դեռ ոչինչ, բայց երբ արևը խփում է գլխիդ և քեզ ծանր աշխատանք է սպասում, չարժե խմել։

Այդ երեկո, մինչև բաժանվելը, մենք կազմեցինք այն իրերի ցուցակը, որ պետք է վերցնեինք մեզ հետ։ Հաջորդ՝ ուրբաթ օրը, մենք ամեն ինչ կուտակեցինք մի տեղում և երեկոյան հանդիպեցինք, որ տեղավորենք դրանք։ Մի մեծ կաշվե ճամպրուկ գտանք հագուստեղենի համար և մի զույգ ծղոտե զամբյուղ՝ սննդամթերքի և ամանեղենի համար։ Սեղանը քաշեցինք պատուհանի մոտ, ամեն ինչ լցրեցինք սենյակի մեջտեղում, նստեցինք շուրջը և սկսեցինք նայել։

Ես ասացի, որ ինքս կկապեմ իրերը։

Ես հպարտանում եմ իրերը կապելու իմ հմտությամբ։ Դա մեկն է այն մեծաթիվ գործերից, որ, իմ համոզմամբ, աշխարհում ամենալավը միայն ես եմ անում։ (Ինքս էլ երբեմն զարմանում եմ, թե որքան շատ են նման գործերը)։ Ես ասացի Ջորջին և Հարրիսին, որ լավ կանեն ամեն ինչ թողնեն ինձ։ Նրանք զարմանալի պատրաստակամությամբ ընդունեցին իմ առաջարկը։ Ջորջը վառեց ծխամորճը և փռվեց բազկաթոռին, իսկ Հարրիսը ոտքերը մեկնեց սեղանին և մի սիգար կպցրեց։

Հաղիվ թե դա այն էր, ինչ ես նկատի ունեի։ Ես մտադրվել էի, իհարկե, որ կղեկավարեմ աշխատանքը, իսկ Ջորջը և Հարրիսը կգործեն իմ հրահանգներով. «Էյ, դուք, տվեք, ես ինքս կանեմ»։ «Տեսնում եք, ինչ հեշտ է», — կասեմ ես մի կողմ հրելով նրանց, այսպես ասած, սովորեցնելով, թե ինչպես պետք է աշխատել։ Այն հանգամանքը, որ նրանք ինձ ճիշտ չհասկացան, զայրացնում էր ինձ։ Ոչինչ ինձ այնքան շատ չի զայրացնում, որքան այն, որ մարդիկ անգործ նստած են շուրջս, երբ ես աշխատում եմ։

Մի ժամանակ ես ապրում էի մի մարդու հետ, որն այդ ձևով ինձ կատաղության էր հասցնում։ Նա ժամերով վեր էր ընկնում բազմոցին և աչքերով հետևում էր, թե ես ինչպես եմ աշխատում և ուր եմ գնում։ Նա ասում էր, որ իր համար օգտակար է ինձ նայելը, երբ ես աշխատում եմ։ Այդ ժամանակ նա հասկանում է, որ կյանքը միայն դատարկ երազ չէ, որն անցկացնում են ձանձրույթով և անվերջ հորանջելով, այլ վեհանձն գործ, որտեղ կարևորը պատասխանատվության զգացումն է և համբերատար աշխատանքը։ Նա ասում էր, որ երբեմն զարմանում է, թե ինչպես է յոլա գնացել մինչև ինձ հանդիպելը, երբեք չունենալով կողքին որևէ մեկը, որին նայի, երբ վերջինս աշխատում է։

Ես այդպիսին չեմ։ Ես չեմ սիրում նստել և նայել, թե մյուսներն ինչպես են աշխատում։ Ինձ մոտ ցանկություն է առաջանում վեր կենալ և հետևել աշխատանքի ընթացքին, քայլել սենյակում ձեռքերս գրպանս դրած և թելադրել, թե ինչ պետք է անել։ Մեղավորը իմ եռանդուն խառնվածքն է, ինչ կարող եմ անել։

Սակայն, ես ոչինչ չասացի, այլ սկսեցի տեղավորել իրերը։ Դա ավելի շատ ժամանակ խլեց, քան կարծում էի, բայց վերջապես ավարտեցի ճամպրուկը դասավորելը, նստեցի վրան և սկսեցի ամրացնել կապերը։

— Սապոգները չե՞ս ուզում վերցնել, — հարցրեց Հարրիսը։ Ես շուրջս նայեցի և տեսա, որ իսկապես մոռացել էի սապոգները տեղավորել։ Դա Հարրիսին նման է։ Կարծես մինչև ճամպրուկը փակելը չէր կարող ասել։ Իսկ Ջորջը սկսեց հռհռալ իր զայրացնող, անիմաստ ու ականջ ծակող ծիծաղով։ Ինչպե՞ս են նրանք ինձ կատաղեցնում։

Ես բաց արեցի ճամպրուկը, սապոգները տեղավորեցի այնտեղ և հետո, երբ պատրաստվում էի կրկին փակել, մի սարսափելի միտք անցավ գլխովս։ Արդյոք վերցրե՞լ եմ ատամի խոզանակս։ Չգիտեմ, թե ինչպես է ստացվում, բայց ես երբեք չեմ հիշում՝ վերցրե՞լ եմ ատամի խոզանակը թե ոչ։

Ատամի խոզանակը մի իր է, որը ճանապարհորդելիս ինձ հանգիստ չի տալիս և իմ կյանքը տանջանքի է վերածում։ Երազումս տեսնում եմ, որ այն չեմ վերցրել, արթնանում եմ սառը քրտինքով պատած, վեր եմ կենում անկողնուց և սկսում փնտրել։ Իսկ առավոտյան տեղավորում եմ ճամպրուկում մինչև օգտագործելը և հետո ստիպված նորից եմ քրքրում իրերը՝ խոզանակը գտնելու հույսով, իսկ այն միշտ հայտնվում է ամենախորքում։ Հետո կրկին դասավորում եմ ճամպրուկը և մոռանում խոզանակը, այնպես որ վերջին վայրկյանին ստիպված եմ լինում վազել աստիճաններով վեր և այն կայարան եմ տանում թաշկինակիս մեջ փաթաթած։

Հիմա էլ ստիպված էի ճամպրուկից դուրս թափել ամեն ինչ, և իհարկե, չկարողացա գտնել խոզանակը։ Իրերը այնպիսի քաոսային վիճակի մեջ գցեցի, ինչպիսին հավանաբար եղել են մինչև աշխարհի ստեղծումը։ Իհարկե, Ջորջի և Հարրիսի խոզանակները մոտ տասնութ անգամ գտա, բայց իմը այդպես էլ գտնել չկարողացա։ Ես մեկ առ մեկ իրերը կրկին տեղավորեցի ճամպրուկի մեջ՝ նախապես ամեն ինչը բարձրացնելով և թափ տալով։ Վերջապես այն գտա կոշիկի միջից։ Եվ մի անգամ ևս ճամպրուկը դասավորեցի։

Հենց որ ավարտեցի, Ջորջը հարցրեց, թե արդյոք օճառը վերցրե՞լ եմ։ Ես ասացի, որ ինձ համար միևնույն է՝ վերցրել եմ օճառը թե ոչ, և թափով փակեցի ճամպրուկն ու ձգեցի ամրակապերը։ Սակայն պարզվեց, որ ծխախոտատուփս նույնպես փակել եմ ճամպրուկում և ստիպված կրկին բացեցի։ Այն վերջնականապես փակվեց երեկոյան ժամը տասին։ Դեռ մնում էին զամբյուղները, որտեղ պետք է սննդամթերքը և ամանեղենը դասավորեինք։ Հարրիսն ասաց, որ մինչև ճանապարհվելը մեր տրամադրության տակ ընդամենը տասներկու ժամ կա, այնպես որ լավ կլինի, որ մնացածը ինքը և Ջորջը անեն։ Ես համաձայնեցի և նստեցի, իսկ նրանք գործի անցան։

Ջորջը և Հարրիսը ուրախ տրամադրությամբ սկսեցին հավանաբար ցանկանալով ցույց տալ, թե ինչպես պետք է իրերը կապկպել։ Ես ոչինչ չասացի, պարզապես նստել ու սպասում էի։ Երբ Ջորջին կախեն, Հարրիսը կդառնա աշխարհի ամենավատ իրեր կապողը։ Նայում էի ափսեների, բաժակների, թեյամանների, շշերի, բանկաների, տորթերի, սպիրտայրոցների, բիսկվիթների, լոլիկների և զանազան առարկաների կույտին և զգում էի, որ շուտով խիստ հուզիչ տեսարանի եմ ականատես լինելու։

Այդպես էլ եղավ։ Նախ և առաջ նրանք կոտրեցին բաժակը։ Կարծես դիտմամբ արեցին, որպեսզի ցույց տան, թե ինչի են ընդունակ, և հետաքրքրություն առաջացնեն իրենց նկատմամբ։

Հետո Հարրիսը նկակի մուրաբայի բանկան դրեց լոլիկի վրա և ճխլեց այն, ու հետո ստիպված լոլիկը հանեցին թեյի գդալով։

Հիմա էլ Ջորջի հերթն էր՝ նա ոտքով տրորեց կարագը։ Ես ոչինչ չասացի, միայն ավելի մոտեցա, և նստելով սեղանի ծայրին, սկսեցի հետևել նրանց։ Դա նրանց ավելի զայրացրեց, քան եթե ես որևէ բան ասեի։ Ես դա զգում էի։ Դա նրանց նյարդայնացնում և շփոթեցնում էր։ Նրանք տրորում էին իրերը, կամ էլ դնում էին իրենց ետևում և հետո, պետք եղած ժամանակ, չէին կարողանում գտնել։ Նրանք կարկանդակները տեղավորեցին զամբյուղի խորքում, իսկ

ծանր իրերը դրեցին դրանց վրա, այնպես որ լրիվ տրորեցին կարկանդակները։

Ամեն ինչի վրա նրանք աղ լցրեցին։ Հապա կարա՞գը։ Երբեք չեմ տեսել, որ մարդիկ այդքան շատ ժամանակ վատնեն մեկ շիլլինգ և երկու պենս արժեցող մի կտոր կարագի վրա, որքան նրանք։ Երբ Ջորջը պոկեց կարագը իր կոշիկի տակից, նրանք փորձեցին այն խցկել փոքրիկ կաթսայի մեջ։ Կարագը ներս չմտավ, իսկ ինչ էլ որ մտավ, այլևս հնարավոր չէր դուրս հանել։ Վերջապես նրանք դուրս հանեցին կարագը և դրեցին աթոռի վրա, հետո Հարրիսը նստեց աթոռին, ու կարագը կպավ շալվարին, և նրանք սկսեցին ողջ սենյակով մեկ փնտրել այն։

— Կարող եմ երդվել, որ կարագը դրեցի աթոռի վրա, — ասաց Ջորջը, աչքերը սևեռելով դատարկ աթոռին։

— Մի բոպե առաջ աչքովս տեսա, — ասաց Հարրիսը։

Նրանք նորից սկսեցին սենյակով մեկ փնտրել կարագը և հանդիպելով կենտրոնում, աչքերը սևեռեցին միմյանց։

— Ավելի տարօրինակ բան տեսած չկամ, — ասաց Ջորջը։

— Իսկական հանելուկ է, — ասաց Հարրիսը։

Այնուհետև Ջորջը շրջանցեց Հարրիսին և նկատեց կարագը։

— Ահա թե որտեղ է, — բարկացած բացականչեց նա։

— Որտե՞ղ, — ճչաց Հարրիսը պտտվելով տեղում։

— Հանգիստ կանգնիր, — գոռաց Ջորջը, սլանալով նրա ետևից։

Եվ նրանք պոկեցին կարագը շալվարի վրայից ու տեղավորեցին թեյնիկի մեջ։

Մոնթմորընսին, իհարկե, մասնակցում էր այդ բոլոր իրադարձություններին։ Մոնթմորընսիի կյանքի նպատակն է՝ ընկնել բոլորի ոտքի տակ և լսել իր հասցեին ուղղված հայհոյանքներ։ Եթե նրան հաջողվում է քիթը խոթել այնտեղ, որտեղ դրա կարիքը բոլորովին չի զգացվում, ձանձրացնել և բարկացնել շրջապատի մարդկանց, ստիպել նրանց պատահած իրը իր գլխին շպրտել — այդ ժամանակ նա հասկանում է, որ իր օրը իզուր չի անցել։

Նրա ամենամեծ նպատակը և երազանքն է՝ ընկնել մեկն

ու մեկի ոտքի տակ և ստիպել նրան մի ամբողջ ժամ հայհոյել իրեն, և եթե նրան հաջողվում է դա իրականացնել, նրա գոհունակությանը չափ ու սահման չի լինում։

Մոնթմորընսին գալիս էր և նստում իրերի վրա հենց այն ժամանակ, երբ դրանք պետք էին լինում։ Նա առաջնորդվում էր այն համոզմունքով, որ երբ Հարրիսը և Ջորջը իրենց ձեռքը մեկնեին որևէ բան վերցնելու, ապա դա պետք է լիներ իր սառը, թաց մռութը։ Նա թաթը մտցրեց մուրաբայի մեջ, ցրեց թելի գդալնելը և ձևացրեց, իբր կիտրոնները առնետներ են, ու մտնելով զամբյուղի մեջ, սպանեց նրանցից երեքին։ Հարրիսն էլ մի լավ դաս տվեց նրան թավալով։

Հարրիսն ասաց, որ ես էի հրահրում շանը։ Ես չէի հրահրում։ Նրա նման շունը հրահրման կարիք չի զգում։ Դա նրա մեջ եղած յուրահատուկ, բնածին մեղքն է, որը ստիպում է նման բաներ անել։

Ժամը 12,50-ին իրերը կապկպված պատրաստ էին։ Հարրիսը նստեց մեծ զամբյուղի վրա և հույս հայտնեց, որ ոչինչ չարդված չի լինի։ Ջորջն ասաց՝ ինչ որ չարդվելու էր, արդեն չարդված է, և այդ միտքը կարծես հանգստացրեց նրան։ Նա նաև ասաց, որ ժամանակն է քնելու։ Մենք բոլորս էլ համամիտ էինք։ Հարրիսը պետք է մեզ մոտ գիշերեր, և մենք երեքով բարձրացանք ննջասենյակ։

Մենք վիճակ հանեցինք, և պարզվեց, որ Հարրիսը պետք է ինձ մոտ քներ։ Նա հարցրեց։

— Ներսի՞ կողմն ես կերադասում թե դրսի, Ջեյ։

Ես ասացի, որ ընդհանրապես դերադասում եմ քնել անկողնի ներսում... Հարրիսն ասաց, որ դա հին կատակ է։

— Ժամը քանիսի՞ն արթնացնեմ ձեզ, տղաներ, — հարցրեց Ջորջը։

— Յոթին, — ասաց Հարրիսը։

— Ոչ, վեցին, — ասացի ես, որովհետև ուզում էի մի քանի նամակ գրել։

Հարրիսը և ես մի թեթև վիճեցինք դրա համար, բայց վերջապես տարբերությունը կրճատեցինք և համաձայնեցինք՝ վեց անց կեսին։

— Արթնացրու մեզ վեց անց կեսին, Ջորջ, — ասացինք մենք։

Ջորջը չպատասխանեց և մենք, մոռենալով նրան, պարզեցինք, որ նա արդեն քնած է։ Մենք լողարանը հարմարեցրինք այնպես, որ առավոտյան արթնանալիս Ջորջը անկողնուց ընկնի ուղիղ լողարանի մեջ, և պատկեցինք քնելու։

Գլուխ հինգերորդ

Միսիս Փ-ն արթնացնում է մեզ։ Ջորջը ծուլանում է։ Մոլորություն, որը «ժամանակի կանխագուշակում» է կոչվում։ Մեր ուղեբեռը։ Սարսափելի վարքի տեր տղան։ Մեր շուրջը ամբոխ է հավաքվում։ Մեր հանդիսավոր մեկնումը և ժամանումը Վաթերլոոյի կայարան։ Հարավ-արևմտյան երկաթուղու ծառայողների սուրբ անտեղյակությունը այնպիսի աշխարհիկ հարցում, ինչպիսին գնացքներն են։ Մենք լողում ենք ու լողում բաց նավակում։

Հաջորդ առավոտյան ինձ արթնացրեց միսիս Փոփեթսի ձայնը։

— Դուք գիտե՞ք, որ արդեն ժամը ինն է, սըր, — ասաց նա։

— Ի՞նչ ինները, — գոչեցի ես, վեր թռչելով։

— Ժամը ինները, — պատասխանեց նա բանալու անցքի միջով։ — Ես կարծում էի, թե ուզում եք մի կուշտ քնել։

Ես արթնացրի Հարրիսին և ամեն ինչ հայտնեցի։ Նա ասաց.

— Կարծեմ, դու ժամը վեցի՞ն էիր ուզում արթնանալ։

— Այո, — պատասխանեցի ես, — ինչու՞ ինձ չարթնացրիր։

— Ինչպես կարող էի քեզ արթնացնել, երբ դու ինձ չես արթնացրել — առարկեց Հարրիսը։ — Հիմա մենք գետ կհասնենք միայն ժամը 12-ից հետո։ Զարմանում եմ, որ դու ընդհանրապես քեզ նեղություն ես տվել արթնանալ։

— Հըմ, — պատասխանեցի ես, — պետք է շնորհակալ լինես։ Եթե ես քեզ չարթնացնեի, դու ամբողջ երկու շաբաթ այդպես էլ քնած կմնայիր։

Մենք դեռ երկու բոպե այսպես կշտամբում էինք միմյանց, երբ հանկարծ մեզ ընդհատեց Ջորջի վրդովեցուցիչ խոմփոցը։ Արթնանալուց հետո դա առաջին անգամ մեզ հիշեցրեց

նրա գոյության մասին։ Ահա նա պառկած է. նա, որը ուզում էր իմանալ, թե երբ արթնացնի մեզ, պառկած է մեջքի վրա, բերանը լայն բաց արած ու ծնկները վեր ցցած։

Զգիտեմ, թե ինչու, երբ ես արթուն եմ, քնած մարդու տեսքը ուղղակի կատաղեցնում է ինձ։ Ինձ ապշեցնում է այն միտքը, որ մարդու կյանքի թանկագին ժամերը, այն անգին րոպեները, որ միայն մեկ անգամ են տրվում մարդուն, անեպատակ վատնվում են այդ անասնական քնի վրա։

Այ, Ջորջը, գարշելի ծուլությանը հանձնված, վատնում է ժամանակի անգնահատելի պարգևը՝ իր թանկագին կյանքը, որի յուրաքանչյուր վայրկյանի համար վերջիվերջո նա պետք է պատասխանատվություն կրի, վատնում է իզուր։ Հիմա նա կարող էր ապխտած մսով ձվածեղ ուտել, չարացնել շանը կամ սիրահետել աղախնուն, իսկ այդ ամենի փոխարեն վեր է ընկել այստեղ՝ սպանիչ մոռացության մեջ ընկղմված։

Դա սարսափելի միտք էր։ Կարծես այս միտքը ինձ ու Հարրիսին միաժամանակ շանթահարեց։ Մենք որոշեցինք փրկել Ջորջին և այդ ազնիվ մտադրությամբ տարված, մոռացանք մեր վիճաբանության մասին։ Նետվեցինք դեպի Ջորջը և վրայից քաշեցինք վերմակը։ Հարրիսը կոշիկով մի լավ հարվածեց նրան, իսկ ես գոռացի ականջի մեջ, ու Ջորջը վեր թռավ։

— Ի...—ի՞նչ է պատահել, — հարցրեց նա նստելով տեղում։

— Արթնացիր, հաստագլուխ, — գոռաց Հարրիսը, — ժամը տասից քառորդ է պակաս։

— Ի՞նչ, — ճղճղաց Ջորջը, — անկողնուց թռչելով ուղիղ լողարանի մեջ։ — Գրողը տանի, ով է այդ դժոխքի ծնունդը այստեղ դրել։

Մենք ասացինք, որ մարդ պետք է հիմար լինի, լողարանը չնկատելու համար։

Երբ ավարտեցինք հագնվելը, անցանք հարդարանքի մյուս մանրամասներին, հիշեցինք, որ ատամի խոզանակները, հագուստի խոզանակը և սանրը (այդ ատամի խոզանակը, համոզված եմ, մի օր իմ մահվան պատճառն է դառնալու) փակել ենք ճամպրուկում և ստիպված իջանք առաջին հարկ ու հանեցինք դրանք։ Եվ երբ դա էլ ավարտեցինք, Ջորջին պետք եկան սափրվելու պարագաները։ Մենք ասացինք, որ այդ առավոտ նա ստիպված պիտի լինի յոլա գնալ առանց սափրվելու, քանի որ միտք չունեինք ոչ նրա, ոչ էլ նրա նման մեկ ուրիշի համար նորից քրքրել ճամպրուկը։

— Հիմարություններ դուրս մի տվեք, — ասաց նա, — ինչպե՞ս կարող եմ այսպիսի տեսքով երևալ Սիթիում։

Դա, իհարկե, խիստ դաժանություն կլիներ Սիթիի նկատմամբ, բայց մեզ ի՞նչ։ Ինչպես Հարրիսն ասաց իր սովորական, գանգիկ լեզվով, Սիթին ուզած-չուզած ստիպված կլինի կուլ տալ այդ վիրավորանքը։

Մենք իջանք նախաճաշելու։ Մոնթմորենսին իրեն ճանապարհելու համար մի երկու այլ շների էր հրավիրել, որոնք ժամանակը սպանում էին՝ կովելով շքամուտքի աստիճանների վրա։ Հովանոցի օգնությամբ մենք նրանց կարգի հրավիրեցինք և նստեցինք կոտլետ ու սառը միս ուտելու։

— Հրաշալի բան է լավ նախաճաշը, — ասաց Հարրիսը, — և սկսեց մի զույգ կոտլետից, ասելով, որ դրանց հետ իր հաշիվները կմաքրի, քանի դեռ տաք են, իսկ սառը միսը կարող է սպասել։

Ջորջը ձեռքը վերցրեց թերթը և սկսեց բարձրաձայն կարդալ նավարկության ժամանակ պատահած դժբախտ դեպքերի մասին և եղանակի տեսությունը, որն ասում էր՝ «ցուրտ, անձրև, աստիճանաբար պարզ եղանակ, (ամենատհաճ բանը, որ կարելի է սպասել եղանակից), տեղ-տեղ անձրև, ամպրոպ, քամին՝ արևելյան, մթնոլորտային ճնշման ցածրացում կենտրոնական կոմսություններում (ներառյալ Լոնդոնը և Լա Մանշի նեղուցը), սնդիկի սյան հետագա անկում»։

Իմ կարծիքով, բոլոր այն անհեթեթություններից, որոնք մեզ վրդովեցնում են, այդ «եղանակի կանխագուշակման տեսության պատրանքը» ամենավրդովեցուցիչն է։ Այն ճշտորեն կանխագուշակում է թե ինչ է տեղի ունեցել երեկ կամ երեկ չէ նախորդ օրը և ճիշտ հակառակը այն բանի, թե ինչ կլինի այսօր։

Հիշում եմ, թե անցյալ աշնան տեղական լրագրի եղանակի տեսությունը ինչպես փչացրեց իմ արձակուրդը։ «Այսօր սպասվում է տեղատարափ անձրև և ամպրոպ», — տեղեկացրեց լրագիրը երկուշաբթի օրը։ Մենք հրաժարվեցինք

քաղաքից դուրս գալու մտադրությունից և ամբողջ օրը մնացինք տանը, սպասելով անձրևին։ Իսկ տան մոտով մարդիկ կառքերով անցնում էին անչափ ուրախ ու զվարթ, արևը պայծառ փայլում էր և ոչ մի ամպ չէր երևում երկնակամարում։

— Այ թե կթրջվեն, հա՞, — ասացինք մենք, պատուհանից նայելով նրանց ետևից։

Մենք հրճվում էինք, պատկերացնելով, թե ինչպես են նրանք թրջվելու, և վերադառնալով բուխարու մոտ, խառնեցինք կրակը և վերցրեցինք ալբոմները ու կարգի բերեցինք ծովախոտերի և խեցիների մեր հավաքածուները։ Կեսօրին արևը ողողել էր սենյակը, շողը անտանելի էր դարձել, ու մենք հարցնում էինք միմյանց, թե երբ էր վերջապես այդ տեղատարափ անձրևը և ամպրոպը սկսվելու։

— Կտեսնեք, կեսօրից հետո կսկսվի, — հուսադրում էինք միմյանց, — օ՜, այ թե կթրջվեն այս մարդիկ։ Ի՜նչ զվարճալի է։

Ժամը մեկին տանտիրուհին եկավ հարցնելու, արդյոք մտադիր չենք դուրս գալու, չէ՞ որ այնքա՜ն հաճելի օր է։

— Ոչ, ոչ, — պատասխանեցինք մենք իմաստալից ժպիտով, — ոչ մի դեպքում։ Մենք թրջվելու մտադրություն չունենք, ոչ, ոչ։

Ու երբ օրն անցավ և դեռևս անձրևի ոչ մի նշույլ չկար, մենք փորձեցինք հուսադրել միմյանց՝ ասելով, որ ամպրոպը կսկսվի հանկարծակի, ճիշտ այն պահին, երբ հանդստացողները կճանապարհվեն տուն և հեռու կլինեն ամեն տեսակի ծածկից ու մինչև ոսկորները կթրջվեն։ Բայց անձրևի ոչ մի կաթիլ չընկավ, և հիանալի օրվան փոխարինեց նույնքան հիանալի երեկոն։

Հաջորդ առավոտյան կարդացինք, որ սպասվում է «տաք, արևոտ օր, շոգ», և մենք թեթև հագնված դուրս եկանք։ Կես ժամ անց սկսեց ուժգին քամի փչել, տեղատարափ անձրևել և այսպես շարունակվեց ամբողջ օրը։ Մենք տուն վերադարձանք մրսած, հոգացավով և անկողին ընկանք։

Եղանակը իմ հասկացողությունից վեր սավառնող մի բան է, որից ես երբեք չեմ կարողացել գլուխ հանել։ Ծանրաչափը ոչ մի բանի պետք չէ։ Դա, ինչպես լրագրի «եղանակի տեսությունը» միայն մոլորության մեջ է գցում միամիտ մարդկանց։

Մի ծանրաչափ էր կախված Օքսֆորդի հյուրանոցում, որտեղ ես ապրում էի անցյալ գարնանը։ Երբ այնտեղ հասա, ծանրաչափը ցույց էր տալիս «պարզ, անամպ եղանակ»։ Այնինչ դրսում անձրևը ասես դույլերով էր թափվում և այդպես շարունակվեց ամբողջ օրը։ Այդպես էլ չկարողացա գլուխ հանել դրանից։ Մատով թխկացրի ծանրաչափը, և ցուցիչը վեր թռավ՝ ցույց տալով «խիստ չորային եղանակ»։ Հյուրանոցի աշխատակիցը, որն անցնում էր այդտեղով, կանգ առավ և ասաց, որ իր կարծիքով, ծանրաչափը ցույց է տալիս հաջորդ օրվա եղանակը։ Ես ասացի գուցե այն կանխագուշակում է նախանցյալ շաբաթվա՞ եղանակը, սակայն հյուրանոցի աշխատողն ասաց՝ ոչ, հաղիվ թե։

Հաջորդ առավոտյան ես նորից թխկացրի ծանրաչափը, և սնդիկի սյունը ավելի վեր բարձրացավ, իսկ անձրևը թափվում էր ավելի առատորեն, քան երբեք։ Չորեքշաբթի օրը գնացի և կրկին թխկացրի ծանրաչափը։ Սլաքը պտտվեց «պարզ», «խիստ չորային» և «տոթ» բառերի շուրջը, մինչև կանգ առավ կեռիկի մոտ՝ այլևս ի վիճակի չլինելով շարժվել առաջ։ Սլաքը ձգտում էր վեր, սակայն գործիքը այնպես էր պատրաստված, որ չէր կարող կանխագուշակել եղանակի ավելի զորավոր վիճակներ, առանց շարքից դուրս գալու։ Սլաքն ակնհայտորեն ձգտում էր առաջ անցնել և կանխագուշակել երաշտ, արևահարություն, սամում և այլն, սակայն կեռիկը խանգարում էր և ստիպված էր բավարարվել կանխագուշակելով ավելի սովորական՝ «խիստ չորային» եղանակ։

Այդ նույն ժամանակ անձրևը թափվում էր հեղեղի պես։ Գետը ափերից դուրս էր եկել և հեղեղել քաղաքի ցածրադիր մասը։

Հյուրանոցի աշխատակիցն ասաց, որ երբևէ վրա կհասնի երկարատև լավ եղանակ և բարձրաձայն կարդաց նախագուշակի վերևում գրված բանաստեղծությունը։

Երկար ժամկետով կգուշակի՝ երկար կտևի,
Կարճ ժամկետով կգուշակի՝ շուտով կանցնի։

Այդ ամառ այդպես էլ լավ եղանակ չարկը։ Հովանաֆ բար, այդ սարքը հաջողդ գարունը նկատի ուներ։

Գոյություն ունեն նոր տիպի ծանրաչափեր՝ երկար և ուղիղ։ Ես երբեք չեմ կարողացել դրանց ոտ ու դլուխը չոկել։ Դրանց մի կողմը նախորդ օրվա ժամը ասսի համար է, իսկ մյուսը՝ տվյալ օրվա ժամը ցասի, բայց երբեք չի հաջողվում այդքան վաղ մոտենալ ծանրաչափին։ Նրա ցուցիչը բարձրանում և իջնում է պարզ կամ անձրևոտ եղանակին, ուժեղ կամ թույլ քամու հետ միասին։ Մի ծայրին գրված է «Արևելք», իսկ մյուս ծայրին՝ «Հյուսիս»։ Եթե մատով էլ թխկացնեք, միևնույն է, ոչնչի չեք հասնի։ Ստիպված կլինեք ճշտել այն ծովի մակերևույթին համեմատ ու փոխարկել ըստ Ֆարընհայթի սանդղակի, և նույնիսկ այդ ժամանակ գլխի չեք ընկնի, թե ինչպիսի եղանակ է սպասվում։

Բայց ու՞մ է պետք նախապես իմանալ եղանակը։ Առանց այն էլ վատ է, երբ եղանակը փչանում է, ուրեմն էլ ինչու՞ նախօրոք իզուր վատ զգանք։ Եղանակի ամենացանկալի գուշակը այն ծերուկն է, որը ամպամած առավոտյան, երբ մեզ առանձնապես ցանկալի է արևոտ եղանակը, հմուտ աչքով դիտում է հորիզոնը և ասում.

— Օ՜, ոչ, սըր։ Իմ կարծիքով երկինքը կպարզվի։ Հիանալի օր է սպասվում, սըր։

— Օ՜, նա գիտե ինչ է ասում, — ասում ենք մենք և նրան հաջողություն մաղթելով՝ հեռանում։ — Զարմանալի է, թե ինչպես են ծերերը կարողանում այդպես ճիշտ գուշակել եղանակը։

Եվ մենք հարգանք ենք տածում այդ մարդու հանդեպ, ու այդ հարգանքը ամենևին չի նվազում այն հանգամանքից, որ եղանակը չպարզվեց, և անձրևը շարունակում է հեղեղի պես թափվել։

— Նա արեց ինչ կարող էր, — մտածում ենք մենք։

Ընդհակառակը, այն մարդու հանդեպ, որը վատ եղանակ է կանխագուշակում, մենք միայն չար ու վրիժառու զգացմունքներ ենք տածում։

— Կարծես թե եղանակը բացվում է, այնպես չէ՞, — ուրախ բացականչում ենք մենք՝ անցնելով նրա մոտից։

— Դժվար թե, սըր։ Վախենում եմ, որ ամբողջ օրը այսպես էլ կմնա, — պատասխանում է նա գլուխը տարուբերելով։

— Հիմար ծերուկ, — փնթփնթում ենք մենք, — դա ի՞նչ նրա խելքի բանն է որ։

Եվ, եթե նրա գուշակությունը կատարվում է, դարձյալ մեր զայրույթը չի անցնում, կարծես այդ ամենի մեջ նրա մատն էլ ինչ-որ չափով խառն է։

Հենց մեր մեկնման օրը չափազանց արևոտ էր և անամպ, որպեսզի Ջորջին ահաբեկող տեղեկությունները եղանակի մասին (ծանրաչափի անկում, Եվրոպայի հարավով տեղաշարժվող ցիկլոններ, և ճնշման բարձրացում) կարողանային վշտացնել մեզ։ Տեսնելով, որ չի կարող մեզ խեղճացնել և միայն իզուր ժամանակ է վատնում, Ջորջը թողեց սիգարեթը, որ ես այնպիսի հոգատարությամբ փաթաթել էի ինձ համար, և դուրս եկավ։

Դրանից հետո, Հարրիսը և ես, մեր հաշիվները մաքրելով սեղանի վրայի ուտելիքի մնացորդների հետ, իրերը քարշ տվեցինք մուտքի մոտ և սկսեցինք սպասել կառքի։

Երբ մեր բոլոր կապոցները կուտակեցինք մի տեղում, ահագին ուղերեռ ստացվեց։ Այնտեղ էր մեծ կաշվե պայուսակը, երկու կողով, շալերի մի մեծ փաթեթ, չորս-հինգ անձրևանոց, նույնքան էլ թիկնոց, հովանոց, սեխ՝ առանձին պայուսակում, քանի որ չափազանց մեծ էր որևէ տեղ խցկելու համար, երկու ֆունտ խաղող՝ ուրիշ պայուսակում, մի ճապոնական թղթե հովանոց և թավա։ Վերջինս, որ չափից ավելի երկար էր որևէ տեղ խցկելու համար, պարզապես փաթաթել էինք շագանակագույն թղթով։

Մեր ուղերեռը իսկապես չափազանց մեծածավալ էր երևում, և Հարրիսն ու ես սկսեցինք ամաչել դրա համար, թեև ամաչելու ոչինչ չկար։ Հակառակի պես, մեր կողքով ոչ մի կառք չէր անցնում, բայց փողոցային տղաներ ինչքան ուզես, որոնք ակներևաբար հետաքրքրվելով իրենց առջև բացվող տեսարանով, կանգ էին առնում։

Բիգսի մոտ աշխատող տղան առաջինն էր, որ մոտեցավ մեզ։ Բիգսը կանաչեղեն վաճառողն է և նրա տղանդը կայանում է նրանում, որ փնտրում և իր մոտ աշխատանքի է վերցնում ամենաանառակ և անկարգ հանձնակատար տղա-

ների, որոնց երբեք ստեղծել է քաղաքակրթությունը։ Եթե հանկարծ մեր թաղամասում մի որևէ նողկալի արարք էր կատարվում, մենք համոզված էինք, որ դա Բիգսի մոտ աշխատող տղայի ձեռքի գործն է։ Պատմում են, որ Գրեյթ Քորամ փողոցում կատարված սպանությունից հետո մեր փողոցի բնակիչները եզրակացրեցին, որ այդ ժամանակ Բիգսի մոտ աշխատող տղայի մատը խառն է այս պատմության մեջ և եթե նա չկարողանար ապացուցել իր ալիբին այն խիստ հարցաքննության ժամանակ, որին նրան ենթարկեց № 19 տան բնակիչը, երբ ոճիրի հաջորդ առավոտյան տղան այնտեղ էր գնացել պատվերների ետևից (հարցաքննությանը մասնակցում էր նաև №21 տան բնակիչը, որն այդ պահին պատահաբար մուտքի մոտ էր), նրա բանը բուրդ կլիներ։ Այդ ժամանակ ես չէի ճանաչում Բիգսի հանձնակատար տղային, սակայն դատելով այն ամենից, ինչ պատմում էին նրա նախորդների մասին, ես ինքս այդ ալիբիին մեծ նշանակություն չէի տա։

Այսպիսով Բիգսի հանձնակատարը, ինչպես ասացի, շրջանցեց անկյունը։ Նա, ակնհայտորեն, խիստ շտապում էր, երբ առաջին անգամ երևաց մեր տեսադաշտում։ Սակայն, տեսնելով Հարրիսին, ինձ, Մոնթմորենսիին և մեր իրերը, դանդաղեցրեց քայլերը՝ աչքերը հառելով մեզ։ Հարրիսը և ես խոժոռված նրան նայեցինք։ Ամեն մի զգայուն արարած կվիրավորվեր դրանից, բայց Բիգսի մոտ աշխատող տղաները, որպես կանոն, նրբազգաց չեն։ Մեզանից մեկ յարդ հեռավորության վրա նա կանգ առավ, ծամելու համար ծղոտ ընտրեց և, հենվելով բազրիքին, աչքերը հառեց մեզ։ Նա, ակնհայտորեն, որոշել էր ոչ մի մանրամասն բաց չթողնել։

Հաջորդ բոպեին պարենավաճառի հանձնակատարն էր անցնում փողոցի դիմացի մայթով։ Բիգսի հանձնակատարը ձայն տվեց նրան։

— Էյ, № 42-ի առաջին հարկից մեկնում են։

Պարենավաճառի տղան կտրեց-անցավ փողոցը և դիրքավորվեց մուտքի ասոիճանների մյուս կողմում։ Այնուհետև Բիգսի տղային միացավ մեկ ուրիշ երիտասարդ՝ կոշկեղենի խանութից, իսկ «Երկնագույն կայմ» պանդոկի տա-

բանների հակիչ տղան անկախ դիրք գրավեց ճամփեզրի մոտ։

— Ինչ որ թե սովից չեն մեռնի, հը՞, — ասաց կոշկեղենի խանութի ծառայողը։

— Դե՛, դու էլ հետդ մի երկու բան կվերցնեիր, — առարկեց «Երկնագույն կայմ»-ի ներկայացուցիչը, — եթե մի փոքրիկ նավակով պատրաստվեիր կտրել անցնել Ատլանտիկը։

— Նրանք չեն պատրաստվում կտրել Ատլանտիկը, — միջամտեց Բիգսի տղան, — նրանք գնում են փնտրելու Սթենլիին[1]։

Մինչ այդ, բավականին ամբոխ հավաքվեց մեր շուրջը, և մարդիկ հարցնում էին միմյանց, թե ինչ է պատահել։ Նրանց մի մասը (երիտասարդ և թեթևամիտ մասը) կարծում էր, թե հարսանիք է և մատնացույց էին անում Հարրիսին, որպես փեսացուի, մինչդեռ ավելի տարիքով և լուրջ մարդիկ հակված էին այն մտքին, որ թաղման ծիսակատարություն է և ես, հավանաբար, ենթեցյալի եղբայրն եմ։

Վերջապես, մի դատարկ կառք երևաց (մեր փողոցում դատարկ կառքերը, երբ պետք չեն, որպես կանոն, հանդիպում են բոպեում՝ երեքը հաճախականությամբ, պտտվում են շուրջդ, խանգարում)։ Մեզ և մեր իրերը մի կերպ խցկելով կառքը և վոնդելով Մոնթմորենսիի մի քանի ընկերներին, որոնք ակնհայտորեն երդվել էին երբեք չլքել նրան, ամբոխի ուրախ բացականչությունների ներքո շարժվեցինք առաջ, իսկ Բիգսի տղան նույնիսկ դաշար շպրտեց մեր ետևից, որպես հաջողության նշան։

Ժամը 11-ին մենք ժամանեցինք Վաթերլոոյի կայարան և հարցրեցինք, թե որտեղից է մեկնում ժ 11. 05-ի գնացքը։ Ոչ ոք, իհարկե, այդ մասին ոչինչ չգիտեր։ Վաթերլոոյի կայարանում ոչ ոք երբեք չի իմանում, թե որտեղից է մեկնում այս կամ այն գնացքը կամ, եթե գնացքը արդեն շարժվում է, ապա դեպի ուր է ուղղություն վերցրել և նման այլ բաներ։ Մեր իրերը տանող բեռնակիրը ենթադրում էր, որ գնացքը կմեկնի երկրորդ կառամատույցից,

1 Սթենլի Հենրի Մորթեն (1841—1904) — ազգությամբ անգլիացի, Աֆրիկայի հետազոտող։ Անհետ կորել է Աֆրիկայում։

մինչդեռ մյուս բեռնակիրը, որին մենք դիմեցինք նույն հարցով, լսել էր, որ այն պետք է մեկնի առաջին կառամատույցից։ Կայարանապետը, մյուս կողմից, համոզված էր, որ մեր գնացքը կմեկնի քաղաքի ծայրամասային կայարանից։ Որպեսզի միանգամից վերջ տայինք այս ամենին, վերև բարձրացանք և հարցրեցինք երթևեկության հսկիչին։ Նա ասաց, որ հենց նոր պատահեց մի մարդու, որը գնացքը տեսել էր երրորդ կառամատույցի մոտ։ Մենք գնացինք դեպի երրորդ կառամատույցը, բայց այնտեղի հեղինակավոր անձնավորությունները հայտնեցին, որ իրենց կարծիքով, դա ավելի շուտ Սաութհեմփտոնյան ճեպընթացն էր, կամ էլ Վինձորի ճյուղը։ Համենայն դեպս, որ դա Քինգսթոնի գնացքը չէր, նրանք համոզված էին, թեև իրենք էլ չէին կարող ասել, թե ինչու։

Հետո մեր բեռնակիրն ասաց, որ այդ դեպքում մեր գնացքը պետք է գտնվի վերևի կառամատույցում և որ ինքը ճանաչում է այդ գնացքը։ Մենք գնացինք վերևի կառամատույցը և մեքենավարին հարցրեցինք, արդյոք նա մեկնո՞ւմ է Քինգսթոն։ Նա ասաց, որ հաստատ ոչինչ չի կարող ասել, սակայն կարծում է, որ կմեկնի։ Համենայն դեպս, եթե դա ժ. 11. 05-ին Քինգսթոն չմեկնի, ապա համոզված է, որ ժ. 9. 32-ին կմեկնի Վերջինիա-Ուոթեր, կամ առավոտյան ժ. 10-ին՝ Ուայթի կղզի, կամ նույն ուղղության վրա գտնվող մի այլ վայր, և որ մենք ամեն ինչ կիմանանք, երբ տեղ հասնենք։ Մենք կես կրոն խցկեցինք նրա ձեռքը և խնդրեցինք, որ ժ. 11. 05-ին Քինգսթոն մեկնի։

— Այս գծի վրա ոչ ոք երբեք չի իմանա, թե որ գնացքն է և ուր է ուղևորվում։ Դուք ճանապարհը գիտեք, կամաց դուրս սահեք և շարժվեք դեպի Քինգսթոն։

— Լավ, տեսնենք, ջենտլմեններ, — պատասխանեց աղնիվ երիտասարդը, — մի գնացք պետք է, չէ՞, մեկնի Քինգսթոն։ Ես համաձայն եմ։ Տվեք այստեղ կես կրոնը։

Այսպիսով, մենք Քինգսթոն հասանք Լոնդոնի Հարավարևմտյան երկաթուղով։

Հետո իմացանք, որ այդ գնացքը իրականում էկզեթերի քաղաքի փոստատարն էր և որ Վաթերլոոյի կայարանում

ժամերը շարունակ փնտրել են, և ոչ ոք չի իմացել, թե ինչ է եղել գնացքը։

Նավակը Քինգսթոնում սպասում էր կամրջից մի փոքր ներքև։ Գնացինք այնտեղ, ուղեբեռը տեղավորեցինք նավակում և դրավեցինք մեր տեղերը։

— Ամեն ինչ կարգի՞ն է, սըր, — հարցրեց նավակի տերը։

— Ամեն ինչ կարգին է, — պատասխանեցինք մենք, և, Հարրիսը՝ թիերի մոտ, ես՝ ղեկի, իսկ Մոնթմորընսիին՝ տխուր և ամենամռայլ կասկածներով լի՝ նավաթթին, սահեցինք գետի վրայով, որը երկու շաբաթ շարունակ պետք է ծառայեր մեզ որպես տուն։

Գլուխ վեցերորդ

Քինգսթոն։ Ռաանելի ակտարկ Անգլիայի վաղ պատմությունից։ Ռաանելի զբույցները՝ փորագրված կաղնեփայտի վրա, և կյանքի ժառին ընդհանրապես։ Կրտսեր Սթիվենգսի տխուր ճակատագիրը։ Մտորումներ հնությունների մասին։ Ես մոռանում եմ, որ ղեկակալ եմ։ Ուշագրավ հետևանք։ Հեմփթոն Քորթի լաբիրինթոսը։ Հարրիսը ուղեկցողի դերում։

Ուշ գարնանային կամ վաղ ամառային (ինչպես ձեզ դուր է գալիս) հիանալի առավոտ էր, երբ խոտի ու տերևների նուրբ կանաչը մուգ նրբերանգ է ստանում, իսկ բնությունը կարծես անհասկանալի հույզի թրթիռով բռնված մի գեղեցիկ ու չափազանց օրիորդ լինի, պատրաստ՝ կին դառնալու։

Քինգսթոնի հնաշխարհիկ նրբանցքները, որ իջնում են մինչև ջուրը, շատ գեղատեսիլ են երևում արևի պայծառ ճառագայթների ներքո։ Փայլփլուն դեսը՝ դրեյֆող նավակներով, անտառով շրջապատված հիանալի վիլլաները գետի մի կողմում, Հարրիսը կարմրանարնջագույն բաճկոնակը հագին՝ սեղմանքալով շարժելով թիերը, հեռվում առկայծող Թյուդորների[1] հին, գորշ պալատը, — այս ամենը մի վառ պատկեր էին կազմում՝ պայծառ, բայց հանգիստ կյանքով լեցուն և միաժամանակ այնքան խաղաղ, որ թեև օրը նոր էր

1. Թյուդորներ — Անգլիական թագավորական դինաստիա (1485—1603)։ Այդ դինաստիայի առաջին թագավորն էր Հենրի Յոթերորդը, որը Ռոզի հնատոհմիկ ազնվական ցեղի ներկայացուցիչն էր։

սկսվում, ես տարվեցի անուրջներով ու խորասուզվեցի մտքերի մեջ։

Մտորում էի Քինգսթոնի կամ Քինգսթունի մասին, ինչպես անվանում էին մի ժամանակ, երբ սաքսոնական թագավորները էին այստեղ թագադրվում։ Մեծ Կեսարն[1] այստեղ է անցել գետը, և հռոմեական լեգեոնները[2] ճամբար են դրել գետը հարող բլուրների վրա։ Կեսարը, իսկ ավելի ուշ նաև Էլիզաբեթ թագուհին[3], թվում է, թե կանգ է առել ամենուրեք, միայն թե Կեսարը ավելի շատ հարգանք է տածել իր անձի հանդեպ, քան բարի թագուհի Բեսսը։ Նա գոնե պանդոկներում չի իջևանել։

Անգլիայի այդ կույս թագուհին ուղղակի պաշտում էր պանդոկները։ Լոնդոնի շրջակայքում, տասը մղոն հեռավորության վրա, հազիվ թե գտնվի քիչ թե շատ դրավիչ մի պանդոկ, որտեղ ժամանակ առ ժամանակ նա իջևանած կամ գոնե պատված չլինի իր այցելությամբ։

Հետաքրքիր է, ենթադրենք Հարրիսը նոր կյանք է սկսում, ականավոր և հայտնի մարդ է դառնում, հասնում է մինչև պրեմիեր-մինիստրի աստիճանի, իսկ հետո մահանում է, արդյոք այն բոլոր պանդոկներին, որոնց նա պատվել է իր այցելությամբ, հուշատախտակներ կփակցվե՞ն հետևյալ բովանդակությամբ. «Հարրիսը մի գավաթ գարեջուր է խմել այստեղ», «Հարրիսը երկու բաժին շոտլանդական սառը վիսկի է խմել 88-ի ամռանը», «Հարրիսին դուրս են վռնդել այստեղից 1886-ի դեկտեմբերին»։

Ոչ, այսպիսի հուշատախտակներն անչափ շատ կլինեին։ Ավելի շուտ համբավ ձեռք կբերեին այն պանդոկները, ուր Հարրիսը ոտք չի դրել. «Հարավային Լոնդոնի միակ պանդոկը, որտեղ Հարրիսը ոչինչ չի խմել»։ Մարդիկ խմբերով ներս կթափվեին տեսնելու, թե առանձնահատուկ ինչ կա այնտեղ։

Ինչպես պետք է ասած լիներ Քինգսթոնը խեղճ,

1. Գայ Հուլիոս Կեսար (100—44թ. մ. թ. ա.) — Հին հռոմեական զորավար ու քաղաքական գործիչ։

2. Հռոմեացիները արշավել են Բրիտանիա 55—54թ. մ. թ. ա. և 43—69թթ.

3. Էլիզաբեթ թագուհի—Էլիզաբեթ Առաջին Թյուդոր (1533—1603) — Թյուդորների դինաստիայի վերջին թագուհին։ Թագավորել է (1558—1603)։

տկարամիտ թագավոր էդվին[1]։ Թագավորության ծիսակատարությունից հետո տրվող խնջույքը նրա ուժից վեր էր։ Գուցե քաղցրավենիքով լցոնած վարազի գլուխը նրան դուր չէր եկել (համոզված եմ, ինձ էլ դուր չէր դա), կամ գուցե սովորականից շատ մեղրախմիչը ու անապակ գինի՞ էր խմել, համենայն դեպս, նա կամացուկ դուրս է սահել աղմկոտ իրախնձանքից, որպեսզի լուսնի լույսի ներքո գողունի մի ժամ զբոսնի իր սիրեցյալ Էլջիվայի հետ։

Հավանաբար ձեռք ձեռքի տված նրանք պատուհանից հետևել են գետի վրա լուսնի շողերի խաղին, մինչ պալատի հեռավոր հարկաբաժիններից նրանց են հասել բուռն իրախնձանքի աղմուկն ու եռուզեռը։

Հետո դաժան Օդոն ու Սենտ-Դունստանը ներս են խուժել խաղաղ սենյակը և կոպտորեն վիրավորելով գեղեցկադեմ թագուհուն, խեղճ էդվիին քարշ են տվել դեպի հարբած ու ճղճղացող ամբոխը։

Տարիներ անց Սաքսոնական թագավորները և նրանց իրախնձանքները թաղվեցին միատեղ և Քինգսթոնի փառքը ժամանակավորապես խամրեց, որպեսզի մի անգամ ևս փայլի, երբ Հեմփթոն Քորթը դարձավ Թյուդորների և Սթյուարտների[2] նստավայրը և թագավորական նավակները օրորվում էին գետափի մոտ, ու վառ ղեկստավորված պալատական պճնամոլները աստիճաններով իջնում էին դեպի գետը՝ կանչելու նավավարներին։

Շրջակայքի հին տները շատ բան են պատմում այն օրերի մասին, երբ Քինգսթոնը թագավորական քաղաք էր, և ազնվականներն ու պալատականները ապրում էին այստեղ՝ իրենց արքային մոտ։ Դեպի պալատի դարպասները տանող ճանապարհին ամբողջ օրը եռուզեռ էր. զրնգում էր պողպատը, արշավում էին ձիերը, խշխշում էին մետաքսն

1. Էդվարդ Խոստովանահայր (1004—1066) — Անգլո-սաքսոնական վերջին թագավորը։ Թագավորել է 1042—1066 թ. թ։

2. Սթյուարտներ—Անգլիական թագավորական դինաստիա (1603.—1714)։ Այդ դինաստիայի առաջին թագավորը Հակոբ Առաջին Սթյուարտն էր (1566—1625), Շոտլանդիայի թագուհի Մարիա Սթյուարտի որդին, Շոտլանդիայի թագավորը։ Անգլիայի գահը ժառանգել է Էլիզաբեթ Թյուդորի կտակի համաձայն։ Անգլիան թագավորել է (1603—1625թթ.)։

ու թավիշը, առկայծում՝ գեղեցիկ գեմքերը։ Մեծ և ընդարձակ տները՝ իրենց ներս ընկած, վանդակավոր պատուհաններով, հսկայական բուխարիներով, գրածայր տանիքներով, հիշեցնում են երկար գուլպաների, կամզոլների, մարգարտաշար բաճկոնների և խրթին երդումների օրերը։ Այս պատերը կանգնեցվել են այն օրերին, երբ մարդիկ գիտեին կառուցել։ Ամուր, կարմիր աղյուսը ժամանակի ընթացքում միայն ավելի է ամրացել, իսկ կաղնեփայտե աստիճանները չեն ճռճռում ու տնքում, երբ փորձում եք անաղմուկ ցած իջնել։

Կաղնեփայտե աստիճանների մասին խոսելիս հիշեցի, որ Քինգսթոնի տներից մեկում փորագանգակներով մի հիանալի աստիճան կար։ Այժմ այդ տունը խանութի է վերածվել, շուկայի հրապարակում, բայց ակնհայտ է, որ ժամանակին մի հայտնի մեծահարուստի ապարանք է եղել։ Իմ մի ընկերը, որն ապրում է Քինգսթոնում, մի օր գնաց այնտեղ իր համար գլխարկ գնելու և մտքերով տարված, ձեռքը տարավ գրպանը և հենց տեղնուտեղը վճարեց գլխարկի արժեքը։

Խանութպանը (նա ճանաչում էր իմ ընկերոջը) սկզբում, բնական է, խիստ զարմացավ, բայց անմիջապես գլխի ընկավ, որ ինչ-որ բան պետք է անել նման երևույթները քաջալերելու համար և հարցրեց մեր հերոսին, արդյոք նա կցանկանա՞ր հիանալի փորագրված կաղնեփայտի մի հին աշխատանք տեսնել։ Իմ բարեկամը համաձայնեց, և խանութպանը առաջնորդեց նրան խանութի միջով, հետո աստիճաններով վեր բարձրացավ։ Թագրիքը առաղձագործական արհեստի մի հիանալի նմուշ էր, իսկ պատը աստիճանների երկարությամբ ամբողջովին պատված էր հիանալի փորագրված կաղնեփայտով, որը պատիվ կբերեր ցանկացած ապարանքին։

Աստիճաններից նրանք անցան հյուրասենյակ, որը մի ընդարձակ և լուսավոր սենյակ էր՝ պատված ինչ-որ արտասովոր, թեև ուրախ, երկնագույն պաստառով։ Այնուամենայնիվ, ուշադրության արժանի ոչ մի բան չկար սենյակում, և իմ ընկերը զարմացավ, թե ինչու են իրեն բերել այստեղ։ Տանտերը մոտեցավ պատին և թխկացրեց։ Փայտի ձայն լսվեց։

— Կաղնեփայտ է, — բացատրեց նա, — ամբողջովին փորագրված կաղնեփայտ՝ մինչև առաստաղը, ճիշտ նույնը, ինչ տեսաք աստիճանների մոտ։

— Բայց գրողը տանի, մարդ արարած, — բողոքեց ընկերս, — հո չե՞ք ուզում ասել, որ փորագրված կաղնեփայտը ծածկել եք երկնագույն պաստառով։

— Այո, պատասխանեց նա, — դա թանկ նստեց Սկրզբում, իհարկե, ստիպված եղա տախտակապատել։ Բայց հիմա արդեն սենյակը ուրախ տեսք ունի։ Առաջ այստեղ սարսափելի տխուր էր։

Չեմ կարող ասել, թե մեղադրում եմ այդ մարդուն։ Նրա կարծիքով, այսինքն՝ միջին խավի տանտիրոջ կարծիքով, — որը ձգտում է հնարավորին չափ հեշտ ապրել և ոչ թե հնության մոլուցքով է բռնված, — բանականությունը իր կողմն է։ Հաճելի է նայել կաղնեփայտի վրա արված փորագրություններին, նույնիսկ ունենալ դրանից մի փոքրիկ նմուշ, բայց ապրել՝ ամենուրեք շրջապատված դրանով, եկեք համաձայնեք, որ մի տեսակ ճնշող տպավորություն կթողնի նրանց վրա, ում երևակայությունը հեռու է դրանից։ Դա նույնն է, թե ապրես եկեղեցում։

Ոչ, այս ամբողջ պատմության մեջ ցավալին այն է, որ նա, ում ամենևին պետք չէր փորագրված կաղնեփայտը, ստիպված էր ունենալ դրանով պատված մի ամբողջ հյուրասենյակ, մինչդեռ ուրիշները հսկայական գումար են վատնում մի փոքրիկ նմուշ ձեռք բերելու համար։ Հավանաբար, այդպես է աշխարհի կարգը։ Ամեն մարդու տրված է այն, ինչ իրեն ամենևին պետք չէ։

Ամուսնացած տղամարդիկ կին ունեն, որ նրանց կարծես թե պետք չէ, իսկ երիտասարդ ամուրիներն էլ գոչում են, որ չեն կարողանում կին գտնել։ Աղքատ մարդիկ, որոնք մի կերպ են իրենց գլուխը պահում, ամենաքիչը ութ ամրակազմ երեխա ունեն։ Հարուստ զույգերն էլ մահանում են անժառանգ, չիմանալով՝ ում թողնել իրենց հարստությունը։

Կամ, ասենք, աղջիկներն ու նրանց երկրպագուները։ Պարզվում է, ովքեր երկրպագուներ ունեն, նրանց կարիքը ամենևին չեն զգում։ Նրանք համոզված են, որ առանց նրանց ավելի լավ կլինի, որ նրանք միայն ավելորդ անհանգստություն

են պատճառում իրենց։ Ինչու՞ նրանք չեն սիրահետում միս Սմիթին, կամ միս Բրաունին, որոնք տգեղ են և տարիքն առած ու ոչ մեկը չունեն, որ սիրի իրենց։ Իսկ ինչ վերաբերում է իրենց՝ ապա ոչ մեկի կարիքը չեն զգում և ամուսնանալու մտադրություն չունեն։

Մարդ ակամայից տխրում է, երբ սկսում է նման երևույթների մասին մտորել։

Մի տգա կար մեր դպրոցում, որին անվանում էինք Սանդֆորդ և Մերթոն՝։ Նրա իսկական ազգանունը Սթիվինգս էր։ Ավելի արտասովոր տղայի երբևէ հանդիպած չկամ։ Ես համոզված եմ, որ նա իսկապես սիրում էր ուսումը։ Նա միշտ սարսափելի տհաճություններ մեջ էր ընկնում, որովհետև անկողնում հունարեն էր կարդում, իսկ ինչ վերաբերում է ֆրանսերենի անկանոն բայերին, ապա աշխարհում ոչ մի ուժ չկար, որ նրան ետ պահեր դրանցից։ Նրա գլուխը լի էր տարօրինակ և անբնական մտքերով, այսպես, օրինակ՝ որ նա պետք է պատիվ բերի իր ծնողներին և դառնա դպրոցի պարծանքը։ Նա ելազում էր պարգևներ ստանալ, հասակ առնել, դառնալ հասարակության արժանավոր անդամ և նման այլ տխմարություններ։ Ես երբեք չեմ հանդիպել նման տարօրինակ արարածի, որը միաժամանակ անմեղ էր, ինչպես դևռևս լույս աշխարհ չեկած մանուկը։

Այդպես ուրեմն, այդ արարածը շաբաթը երկու անգամ հիվանդանում էր և չէր կարողանում դպրոց գնալ։ Ոչ ոք այնքան հաճախակի չէր հիվանդանում, որքան այդ Սանդֆորդ և Մերթոնը։ Եթե նրանցից տասը մղոն հեռավորության վրա մի որևէ հիվանդություն էր տարածվում՝ նա վարակվում էր դրանով և այն էլ ամենավտանգավոր ձևով։ Նա հիվանդանում էր բրոնխիտով ամառվա շոգին, և խոտատենդով՝ Ծննդյան տոներին։ Վեց շաբաթ շարունակվող երաշտի ժամանակ, նա անկողին էր ընկնում ռևմատիզմով, իսկ նոյեմբերյան մառախուղին դուրս էր գալիս տնից և վերադառնում՝ արևահարված։

1. «Սանդֆորդ և Մերթոն» — Թոմաս Դեյի մանկական գրքույկը հարուստ ու չար տղայի՝ Թոմմի Մերթոնի և աղքատ ու բարի Հարրի Սանդֆորդի մասին։

Մի տարի խեղճ տղային ցավազրկեցին, հանեցին բոլոր ատամները և արհեստական ատամնաշարեր դրեցին, ինչպե՞ս էր նա տառապում ատամնացավից։ Դրան փոխարինեց նևրալգիան և պկանջացավը։ Նա միշտ մրսած էր, բացի այն ինը շաբաթ տևող շրջանից, երբ հիվանդ էր քութեշով. միշտ նրա մարմնի որևէ մասը ցրտահարված էր։ 1871 թ. խոլերայի մեծ համաճարակի ժամանակ մեր շրջանը զերծ մնաց վարակից։ Միայն մի դեպք կար ողջ ծխական համայնքում և այդ դեպքը երիտասարդ Սթիվինգսն էր։

Երբ նա հիվանդանում էր, ստիպված էր լինում պառկել անկողնում և ուտել տապակած ճտեր, խնձոր ու խաղող, իսկ նա լաց էր լինում, որովհետև նրան թույլ չէին տալիս կատարելու լատիներենի վարժությունները և ձեռքից վերցրել էին գերմաներենի քերականության դասագիրքը։

Իսկ մենք՝ մյուս տղաներս, մեր դպրոցական կյանքի տասը տարին կզոհաբերեինք հանուն նրա, որ գոնե մի օր հիվանդանայինք և ոչ մի առիթ չէինք տալիս մեր ծնողներին՝ հպարտանալու մեղանով, բայց միևնույն է, չէինք հիվանդանում։ Մենք վազվզում էինք միջանցիկ քամու տակ, որը, ընդհակառակը, միայն թարմացնում էր մեզ։ Այնպիսի բաներ էինք ուտում, որ հիվանդանայինք, բայց գիրանում էինք և մեր ախորժակը ավելի էր գրգռվում։ Ինչ էլ որ հնարեինք, մինչև արձակուրդների սկսվելը մեզ չէր հաջողվում հիվանդանալ։ Բայց դասերի հենց վերջին օրը մրսում էինք, վարակվում կապույտ հազով կամ մի ուրիշ հիվանդությամբ, ու այդպես շարունակվում էր մինչև հաջորդ կիսամյակի սկիզբը, և այդ ժամանակ, ինչպիսի խորամանկություններ էլ որ բանեցնեինք, առողջանում էինք ու առույգանում, ինչպես երբեք։

Այսպիսին է կյանքը, և մենք բոլորս ընդամենը անցողիկ խոտ ենք, որը կտրում են և այրում։

Վերադառնալով փորաքանդակ կաղնեփայտին, կասեմ, որ մեր նախապապերը գեղեցիկի և վայելչագեղի մասին բավական լավ պատկերացում են ունեցել։ Այսօրվա մեր արվեստի բոլոր գանձերը երեք-չորս հարյուրամյակ առաջ սովորական, ամենօրյա գործածության իրեր են եղել։ Հաճախ ինձ հարց եմ տալիս. արդյո՞ք այնքան գեղեցիկ են հնագարյան կերակրամանները, գարեջրի բաժակները, մո-

մերի կայծառները, որքան մենք համարում ենք այժմ, թե՞ անցյալի լուսապսակն է նրանց նոր հրապույր հաղորդում մեր աչքերում։ Այդ հին «երկնագույն ափսեները», որոնք այժմ զարդարում են մեր պատերը, մի քանի դար առաջ եղել են սովորական, ամենօրյա օգտագործման ուտեստի պարագաներ, իսկ վարդագույն հովիվներն ու դեղնավուն հովվուհիները, որոնցով հիացնում ենք մեր հյուրերին, իսկ նրանք էլ ձգտցնում են, թե հասկանում են դրանց արժեքը, տասնութերորդ դարում ընդամենը հասարակ զարդարանքներ են եղել բուխարու համար, որ մայրը տալիս էր իր լացող երեխային։

Մի՞թե հետագայում էլ նույնն է լինելու։ Արդյոք մի՞շտ են անցյալի հասարակ, ընչին իրերը դառնալու ներկայի արժեքավոր գանձերը։ Արդյոք մեր չինական զարդանախշերով հախճապակե ափսեները կզարդարե՞ն քսանմեկերորդ դարի ականավոր մարդկանց բուխարիները։

Մի՞թե ոսկե երիզով և ներսում ոսկե ծաղիկով (անունն անհայտ է) սպիտակ գավաթները, որ մեր աղախինները այնքան անփութորեն կոտրում են, հետագայում հոգատարությամբ կվերականգնվեն և կդրվեն պատվանդանի վրա, այնպես, որ միայն տանտիրուհիները իրավունք կունենան սրբելու դրանց վրայի փոշին։

Վերցնենք թեկուզ՝ այն չինական սպիտակ հախճապակե շունը, որը զարդարում է իմ վարձու բնակարանի ննջարանը։ Աչքերը երկնագույն են, քիթը՝ նուրբ վարդագույն, սև կետերով։ Գլուխը ցավալիորեն ձիգ է, իսկ դեմքը հիմարության աստիճանի հասնող բարեհոգություն է արտահայտում։ Ես անձամբ չեմ հիանում դրանով։ Որպես արվեստի ստեղծագործություն, այդ արձանիկը ինձ խիստ զայրացնում է։ Թեթևամիտ ընկերներս ծաղրում են այն, և նույնիսկ տանտիրուհիս ինքը չի հիանում այդ արձանիկով և դրա ներկայությունը արդարացնում է նրանով, որ իր մորաքրոջ նվերն է։

Բայց, հավանական է, որ ավելի քան երկու հարյուր տարի անց այդ շնիկը, — առանց ոտքերի և կոտրված պոչով, — կպեղեն, կհանեն որևէ տեղից, կվաճառեն որպես հին չինական հախճապակի և կպահեն ապակե տուփի մեջ։

Իսկ մարդիկ կպատվեն դրա շուրջը՝ անկարող լինելով արտահայտել իրենց հիացմունքը։ Նրանք կհիացնի շնիկի բթի հիանալի գունավորումը, և կսկսեն գեղագիտական ուշադրություններ անել, թե որքան գեղեցիկ է եղել պոչի կոտրված մասը։

Մեր ժամանակներում մենք չենք հասկանում, թե որն է այդ շնիկի հմայքը։ Մեզ համար դա սովորական իր է, ինչպես արևամուտն ու աստղերը։ Մենք չենք խոնարհվում նրանց գեղեցկության առջև, որովհետև մեր աչքի համար նրանք սովորական են դարձել։ 2288 թվականին մարդիկ կսքանչանան դրանով։ Նման շնիկների պատրաստումը այդ ժամանակ մոռացված արվեստ կդառնա։ Մեր հետնորդները դյուխ կկոտրեն, փորձելով իմանալ, թե ինչպես ենք դա պատրաստել և կեղրակացնեն, թե որքան խելացի ենք եղել մենք։ Մեզ սիրով կանվանեն «մեծ վարպետներ, որոնք ստեղծագործել են տասնիններորդ դարում և ստեղծել են նման հախճապակե շնիկներ»։

Նախշը, որ մեր ավագ դուստրը ասեղնագործում է դպրոցում, կկոչվի «Վիկտորիանական[1] դարաշրջանի գորգելեն» և համարյա անգին կհամարվի։ Ճամփեզրի պանդոկների սպիտակ և երկնագույն գարեջրի գավաթները, ամբողջապես ճաքճքված և կոտրտված, կսկսեն փնտրել և վաճառել իրենց կշռի չափ ոսկով, և հարուստ մարդիկ դրանք կօգտագործեն կրյուշոնի բյուրեղապակյա բաժակների փոխարեն։ Իսկ ճապոնացի ճանապարհորդները կգնեն այդ բոլոր «նվերները Միամգելթից» և «Հուշանվերները Մարգելթից», որոնք այսպես թե այնպես պահպանվել են ոչնչացումից, և կտանեն Տոկիո, որպես հնագարյան անգլիական հազվագյուտ իրեր։

Հենց այդ ժամանակ Հարրիսը մի կողմ նետեց թիերը, վեր կացավ տեղից, մեջքի վրա մեկնվեց և ոտքերը վեր տնկեց։ Մոնթմորընսին ոռնոց բարձրացրեց ու գլուխկոնծի տվեց, իսկ վերևի կողովը շրջվեց և պարունակությունը դուրս թափվեց։

Ես մի քիչ զարմացա, բայց ինձ չկորցրեցի։ Բավական սիրալիր հարցրեցի.

— Էյ, ինչու՞ այսպես, միանգամից։

[1] Վիկտորիանական — վերաբերում է Անգլիական Վիկտորիա թագուհու թագավորության ժամանակաշրջանին (1837—1901)։

— Ինչու՞, դե...

Ոչ, ես չեմ կրկնի այն, ինչ ասաց Հարրիսը։ Ընդունում եմ, գուցե ես ինչ-որ չափով մեղավոր էի, բայց ոչինչ չի կարող արդարացնել վիրավորական ու կոպիտ արտահայտությունները, հատկապես, երբ մարդ այնպիսի լավ դասախարակություն է ստացել, ինչպես Հարրիսը։ Ես տարվել էի մտքերով, և, ինքնին հասկանալի է, մոռացել էի, որ նավակի ղեկն իմ ձեռքում է։ Դրա հետևանքը եղավ այն, որ մենք չափից ավելի մոտեցանք ափին։ Առաջին պահին դժվար էր որոշել, որն ենք մենք և որն է գետի Միջին Էսեքսյան ափը, բայց շուտով ամեն ինչ պարզեցինք և բաժանվեցինք միմյանցից։

Հարրիսը հայտարարեց, որ ինքը չափից շատ է աշխատել և առաջարկեց, որ ես փոխարինեմ իրեն։ Այսպիսով, քանի որ մենք ափի մոտ էինք, ես դուրս եկա նավակից, վերցրեցի ճոպանը և նավակը քարշ տվեցի Հեմփթոն Քորթի մոտով։ Ի՜նչ հիանալի հին պատ է ձգվում այդտեղ, գետի երկարությամբ։ Ես միշտ անցնում եմ այդտեղով և հենց միայն դրա տեսքից ինձ անչափ լավ եմ զգում։ Այդ փրխրուն, աչք շոյող, սիրելի ու խարխուլ պատը։ Ի՞նչ գեղեցիկ պատկեր կստացվի. մի մասում քարաքոսն է տարածվել, մյուս մասը մամուռով է ծածկվել, խաղողի վազը երկչոտությամբ ծիկրակում է վերևից, տեսնելու, թե այդ ինչ հուզելի է գետի վրա և հետևելու ծեր բաղեղին, որը մի քիչ ներքևում փաթաթվել է պատին։ Այդ հին պատի ամեն մի տասը յարդ հատվածում ավելի քան հիսուն գույներ ու նրբերանգներ կան։ Եթե ես կարողանայի նկատել և ճիշտ հաղորդել գույները, համոզված եմ, որ կստեղծեի այդ հին պատի հիանալի ուրվանկարը։ Ես հաճախ եմ մտածել, որ հաճույքով կապրեի Հեմփթոն Քորթում։ Այստեղ ամեն ինչ այնքան խաղաղ է ու հանգստավետ, այնքան հաճելի է վաղ առավոտյան միայնակ թափառել այս սիրելի վայրերում։

Բայց չեմ կարծում, որ եթե դա իրականություն դառնար, ինձ իսկապես կուրախացներ։ Հավանաբար երեկոներն այնքան մռայլ ու ձանձրալի կլինեին այնտեղ. լամպը գերբնական ստվերներ է զգում տախտակադրված պատերի վրա և քարե միջանցքներից հասնում է հեռավոր ոտնաձայնների

արձագանքը՝ մերթ մոտենալով, մերթ հալվելով հեռվում, և միայն մեր սրտի զարկերն են խախտում գերեզմանային լռությունը։

Մենք՝ այր թե կին, արևի զավակներն ենք։ Մենք սիրում ենք կյանքը և լույսը։ Ահա թե ինչու ենք խմբվում մեծ և փոքր քաղաքներում, իսկ գյուղերը տարեցտարի դառնում են ավելի ու ավելի լքված։ Ցերեկը, արևի ճառագայթների ներքո, երբ բնությունն արթուն է և շուրջն ամեն ինչ շարժման մեջ է, մեզ դուր են գալիս լայնարձակ լեռնալանջերն ու խիտ անտառները։ Բայց գիշերը, երբ մայր հողը քուն է մտնում և մեզ արթուն է թողնում, օ՜, աշխարհն այնքան ունայն է թվում, և մենք վախենում ենք՝ տանը մենակ մնացած երեխաների պես։ Ու մենք նստում, լալիս ենք, կարոտում լույսով ողողված փողոցները, մարդկային ձայնն ու կյանքի բաբախյունը։ Մեզ այնքան աննշան ու անօգնական ենք զգում վիթխարի լռության մեջ, երբ ծառերը սոսափում են գիշերային քամուց։ Շուրջն այնքան ուրվականներ կան և նրանց լուռ հոգոցները տխրություն են բերում։ Դե, ուրեմն եկեք խմբվենք մեծ քաղաքներում, միլիոնավոր գազալամպերից խարույկ վառենք, աղմկենք ու երգենք միասին և մեզ ուժեղ զգանք։

Հարրիսն ինձ հարցրեց, թե երբևէ եղե՞լ եմ Հեմփթոն Քորթի լաբիրինթոսում։ Նա պատմեց, թե ինչպես մի անգամ եղել է այնտեղ որպես ուղեկցորդ։ Սկզբում նա ուսումնասիրել է լաբիրինթոսի հատակագիծը, և դա այնքան հեշտ ու հասարակ է թվացել, որ նույնիսկ չարժեր ներս մտնելու համար երկու պենս վճարել։ Հարրիսն ասաց, որ այդ հատակագիծը ուղղակի ծաղրուծանակ էր, որովհետև այն ամենևին նման չէր լաբիրինթոսին և միայն մոլորության մեջ էր գցում մարդկանց։ Հարրիսն այնտեղ էր տարել գավառից եկած իր հորեղբորորդուն։

— Մենք պարզապես ներս կմտնենք, — ասաց Հարրիսը, — որպեսզի դու հետո կարողանաս ասել, որ եղել ես լաբիրինթոսում։ Նույնիսկ ծիծաղելի է սա լաբիրինթոս կոչել։ Ուղղակի պետք է անընդհատ դեպի աջ թեքվել։ Մենք մի տասը րոպեի չափ կզբոսնենք ու կգնանք նախաճաշելու։

Լաբիրինթոս մտնելով, նրանք շուտով հանդիպեցին

մարդկանց, որոնք ասացին, որ երեք քառորդ ժամ է, ինչ թափառում են այդտեղ և արդեն կուշտ են այդ ամենից։ Հարրիսն ասաց, որ եթե ցանկանում են, կարող են հետևել իրենց։ Նա հենց նոր է ներս մտել, ահա կշրջվի ու դուրս կգա։ Բոլորը միահամուռ շնորհակալություն հայտնեցին և հետևվեցին Հարրիսին։

Ճանապարհին նրանց միացան էլի շատերը, որոնք ցանկանում էին դուրս պրծնել այդտեղից և, վերջիվերջո, լաբիրինթոսում եղած բոլոր մարդիկ միացան նրանց խմբին։ Մարդիկ, որոնք հույսը կտրել էին, թե երբևէ դուրս կպրծնեն այդտեղից, որ կրկին կտեսնեն իրենց տունն ու ընկերներին, տեսնելով Հարրիսին ու նրան հետևող թափորը վերագտնում էին իրենց քաջությունն ու օրհնելով հետևում էին նրան։ Հարրիսի խոսքերով, մոտ քսան մարդ էր հետևում նրան, իսկ երեխայի հետ մի կին, որն ամբողջ առավոտն այդտեղ էր անցկացրել, պնդում էր, որ իրեն թույլ տան բռնել Հարրիսի ձեռքից, որպեսզի չկորցնի նրան։

Հարրիսը անընդհատ աջ էր թեքվում, բայց ճանապարհի վերջը չէր երևում, և Հարրիսի ազգականն ասաց, որ դա, պարզվում է, բավական ընդարձակ լաբիրինթոս է։

— Օ՜, ամենաընդարձակներից մեկը Եվրոպայում, — ասաց Հարրիսը։

— Այո, երևի հենց այդպես էլ կա, — պատասխանեց Հարրիսի ազգականը։ — Քանի որ մենք արդեն երկու մղոն ճանապարհ ենք անցել։

Հարրիսին այդ ամենը սկսեց տարօրինակ թվալ, բայց նա ոչինչ ցույց չտվեց, մինչև, վերջապես, նրանց թափորն անցավ գետնին ընկած կրծած բուկու մոտով, և Հարրիսի ազգականը երդվեց, որ դա մի անգամ արդեն տեսել է յոթ բոպե առաջ։

— Դա անհնար է, — առարկեց Հարրիսը, բայց երեխայի մայրն ասաց՝ «Ամենևին էլ անհնար չէ», քանի որ ինքն է երեխայի ձեռքից վերցրել բուկին և շպրտել այդտեղ, մինչև Հարրիսի հետ հանդիպելը, և նաև ավելացրեց, որ երանի երբեք հանդիպած չլիներ նրան և որ նա իսկական խաբեբա է։ Դա կատաղեցրեց Հարրիսին, նա դուրս հանեց հատակագիծը և բացատրեց իր տեսությունը։

— Հատակագիծը, գուցեև օգնի մեզ, — ասաց ինչ-որ մեկը, — եթե իմանանք, թե որտեղ ենք գտնվում այժմ։

Հարրիսը դա չդիտեր և առաջարկեց վերադառնալ մուտքի մոտ և ամեն ինչ սկսել նորից։ Նորից սկսելու առաջարկությունը մեծ ոգևորություն չառաջացրեց, բայց բոլորն էլ համերաշխ ետ դարձան և նորից հետևեցին, այս անգամ՝ հակառակ ուղղությամբ։ Եվս տասը բոպե անցավ, և նրանք հայտնվեցին լաբիրինթոսի կենտրոնում։

Հարրիսը սկզբում որոշեց ձևացնել, թե դա էր իր նպատակը, բայց ամբոխը սպառնալից էր երևում և նա որոշեց դա ներկայացնել որպես թյուրիմացություն։

Գոնե հիմա գիտեն որտեղից սկսել, գիտեն, թե որտեղ են գտնվում։ Հատակագիծը մի անգամ ևս քննարկվեց և ամեն բան թվաց ավելի պարզ, քան երբևէ, ու նրանք երրորդ անգամ ճանապարհ ընկան։

Երեք բոպե անց, նրանք կրկին հայտնվեցին կենտրոնում։

Դրանից հետո նրանք ուղղակի չէին կարողանում հեռանալ այդտեղից։ Որ կողմն էլ որ թեքվում էին, բոլոր ճանապարհները նրանց բերում էին կենտրոն։ Դա այնքան կանոնավոր դարձավ, որ մի քանիսը կանգնում էին այդտեղ և սպասում, թե երբ պետք է մյուսները պտույտ գործեն և վերադառնան իրենց մոտ։ Հարրիսը մի անգամ էլ մեջտեղ բերեց հատակագիծը, բայց միայն դրա տեսքը կատաղություն հասցրեց ամբոխին։ Հարրիսին խորհուրդ տվեցին գնալ և դրանով իր մազերը գանգրացնել։ Հարրիսը խոստովանեց, որ ինչ-որ չափով իր հեղինակությունն ընկել է ամբոխի աչքում։

Վերջապես բոլորի համբերության բաժակը լցվեց և սկսեցին միաձայն կանչել պահակին։ Սա եկավ, ձեռնասանդուղքով վեր մագլցեց և սկսեց բարձրաձայն նրանց ուղղություն ցույց տալ։ Բայց բոլորի ուղեղում այնպիսի խառնաշփոթ էր, որ անկարող էին որևէ բան ըմբռնել։ Այդ ժամանակ պահակը նրանց առաջարկեց կանգնած մնալ իրենց տեղում, և ասաց, որ ինքը կփորձի հասնել նրանց մոտ։ Բոլորը խմբվեցին և սկսեցին սպասել, իսկ պահակը իջավ և մտավ լաբիրինթոս։

Պահակը երիտասարդ էր և իր գործի մեջ սկսնակ, դրա

համար էլ ներս մտնելով, չկարողացավ նրանց մոտ հասնել և ինքը նույնպես մոլորվեց։ Ժամանակ առ ժամանակ նրանք նկատում էին պահակին դալար ցանկապատի մյուս կողմում դեսուդեն նետվելիս։ Պահակն էլ իր հերթին նրանց էր նկատում և այս ու այն կողմ էր ընկնում նրանց մոտ հասնելու համար, իսկ խումբը սպասում էր հինգ բոպեի չափ, որից հետո պահակը նորից էր հայտնվում նույն տեղում անընդհատ հարցնելով, թե ուր են կորել մարդիկ։

Վերջիվերջո, ստիպված էին սպասել, մինչև հին պահակներից մեկը, որը գնացել էր ճաշելու, վերադարձավ, և միայն այդ ժամանակ նրանք կարողացան դուրս պրծնել լաբիրինթոսից։

Հարրիսն ասաց, քանի որ իրենն դատելու իրավունք է տրված, ապա իր կարծիքով, դա հիանալի լաբիրինթոս է, և մենք որոշեցինք, որ նոդարձի ճանապարհին Ջորջին կհամոզենք պատվել այն իր այցելությամբ։

Գլուխ յոթերորդ

Գետը իր կիրակնօրյա հանդերձանքով։ Ինչպես հագնվել նավարկելիս։ Լավ հնարավորություն տղամարդկանց համար։ Ճաշակի բացակայությունը Հարրիսի մոտ։ Ջորջի բաճկոնակը։ Մեկ օր՝ մոդային երիտասարդ օրիորդի հետ։ Միսիս Թոմասի դամբարանը։ Մարդը, որը չի սիրում գերեզմաններ, տապանագրեր և գանգեր։ Հարրիսը զայրանում է։ Նրա կարծիքը Ջորջի, բանկերի և լիմոնադի մասին։ Հարրիսը ակրոբատիկ համար է ցուցադրում։

Երբ Հարրիսը պատմում էր լաբիրինթոսում ունեցած իր արկածների մասին, այդ ժամանակ մենք անցնում էինք Մաուլսյան շլյուզը։ Անցումը մեզանից բավական ժամանակ խլեց, քանի որ մեր նավակը միակն էր, իսկ շլյուզը՝ ընդարձակ։ Չեմ հիշում, որ երբևէ միայն մեկ նավակ տեսած լինեմ Մաուլսյան շլյուզում։ Դա, իմ կարծիքով, Թեմզայի ամենածանրաբեռնված շլյուզն է, նույնիսկ Բաուլտերյան շլյուզից էլ ծանրաբեռնված։ Երբեմն ես կանգնում ու դիտում էի շլյուզը այնպիսի ժամանակ, երբ ջուրն ամենևին

չկար երևում։ Այն կարծես քողարկված լիներ վառ գույնի սպորտային բաճկոնների, խայտաբղետ ու շքեղ գլխարկների, բազմագույն հովանոցների, մետաքսե գլխաշորերի ու թիկնոցների, ճերմակ զգեստների և փողփողացող ժապավենների ներքո։ Եթե շլյուզին նայեք նավահանգստից, ապա այն կարելի է սխալմամբ մի մեծ արկղի տեղ դնել, ուր, ինչպես պատահի, շաղ են տվել ամեն գույնի ու նրբերանգի ծաղիկներ, որոնք, ասես անթիվ-անհամար ծիածաններ, ծածկել են նրա ամեն մի անկյունը։ Արևոտ կիրակի օրերին այն այսպիսի տեսք է ունենում գրեթե ամբողջ օրը։ Իսկ դարպասներից այն կողմ, հոսանքով վեր ու վար կանգնած, իրենց հերթին են սպասում նավակների երկար շարքերը։ Նավակները մոտենում են և հեռանում, այնպես, կարծես արևով ողողված գետը, պալատից մինչև Հեմփթոնյան եկեղեցին, ծածկված է դեղին, երկնագույն, նարնջագույն, սպիտակ, կարմիր, վարդագույն կետերով։ Հեմփթոնի և Մաուլսիի բոլոր բնակիչները, թեթև սպորտային հագուստներով, իրենց շնիկների հետ գալիս են զբոսնելու շլյուզի շուրջը, կոտրատվում են, ծխում են, նավակներին են նայում և այդ ամենի հետ միասին տղամարդկանց գլխարկները, բաճկոնները, կանանց գեղեցիկ գույնզգույն զգեստները, անհանգիստ շները, սահող նավակները, ճերմակ առագաստները, հաճելի բնապատկերը և տեղ-տեղ փայլատակող ջուրը — իրենից ներկայացնում է ամենապայծառ տեսարաններից մեկը, ինչպիսին կարելի է տեսնել մեր հին, տաղտկալի Լոնդոնի մոտակայքում։

Գետը ճաշակով հագնվելու լայն հնարավորություններ է ընձեռում։ Գոնե այստեղ, մենք՝ տղամարդիկս, կարող ենք ցույց տալ մեր հմտությունը գույներ ընտրելիս, և եթե ինձ հարցնեք, կասեմ, որ այդ գործում կարող ենք շատ հմուտ լինել։ Ես շատ եմ սիրում կարմիր գույնը, կարմիրը և սևը։ Գիտե՞ք, իմ մազերը մի տեսակ ոսկեգույն-շագանակագույն են (բավականին հաճելի երանգ, ինչպես ասել են ինձ) և մուգ կարմիրը հիանալի սազում է մազերիս հետ։ Եվ հետո, իմ կարծիքով, այստեղ շատ ներդաշնակ զուգակցում կլինի բաց երկնագույն վզնոցը, յուֆտե կոշիկներն ու գոտ-

կատեղը գրկող մետաքսե կարմիր շարֆը — չէ՞ որ շարֆն ավելի լավ տեսք ունի, քան կաշեգոտին։

Հարրիսը միշտ գերադասում է նարնջագույնի և դեղինի տարբեր երանգները, բայց ես համաձայն չեմ նրա հետ։ Նրա մաշկի գույնը չափազանց մուգ է դեղինի համար։ Դեղինը չի սազում նրան, դրանում կասկած չկա։ Ավելի լավ կանի, եթե որպես ֆոն վերցնի կապույտը և նրա հետ սպիտակը կամ կաթնագույնը։ Բայց արի ու տես, որքան մարդ անճաշակ է հագուստի հարցում, այնքան համառ է։ Ափսոս, որովհետև նա երբեք հաջողության չի հասնի, այնինչ կան մեկ-երկու գույներ, որոնք նրա արտաքինը մի քիչ հաճելի կդարձնեին, եթե, իհարկե, չմոռանա գլխարկը նույնպես դնել։

Ջորջը այս ճանապարհորդության առիթով իր համար մի քանի նոր հագուստ է գնել, որոնք ինձ ուղղակի զայրացնում են։ Նրա բաճկոնակը «ճչում է»։ Ես, ինքնին հասկանալի է, չէի ուզենա, Ջորջն իմանար, որ ես այդպես եմ մտածում, բայց դրա համար ուրիշ բնորոշում չկա։ Բաճկոնակը նա տուն բերեց և ցույց տվեց մեզ հինգշաբթի երեկոյան։ Մենք հարցրեցինք, թե իր բնորոշմամբ, դա ինչ գույնի է։ Նա ասաց, որ չգիտի։ Չի կարծում, թե այդ գույնը անուն ունի։ Վաճառողն ասել էր, որ դա արևելյան գունավորում է։

Ջորջը հագավ բաճկոնակը և հարցրեց, թե ինչ կարծիքի ենք։ Հարրիսն ասաց, որ դա շատ հարմար կլինի վաղ գարնանը թռչուններին վախեցնելու նպատակով. կախել ծաղկաթմբերի վրա, սակայն այն միտքը, որ որևէ մարդ արարած կարող է դա կրել որպես հագուստի բաղկացուցիչ մաս, բացի իհարկե թափառական երգիչներից, ուղղակի սարսափեցնում է իրեն։ Ջորջը քիթը ցցեց, սակայն Հարրիսն ասաց, որ եթե չի ցանկանում լսել իր կարծիքը, ինչու՞ է հարցնում։

Հարրիսին և ինձ միայն մի բան է անհանգստացնում. մենք վախենում ենք, որ այդ բաճկոնակը բոլորի ուշադրությունը կբևեռի մեր նավակի վրա։

Թույլ սեռի ներկայացուցիչները նույնպես կարող են լավ տեսք ունենալ նավակում, եթե հագնված են ինչպես հարկն է։ Իմ կարծիքով ոչինչ այնքան հրապուրիչ չէ, որքան ճաշակով ընտրված «նավային կոստյումը»։ Սակայն լավ կլինի, եթե բոլոր կանայք հասկանան, որ դա պետք է լինի հագուստ, որը կրում են նավակում և ոչ թե ապակե կափարիչի տակ։ Էքսկուրսիան լրիվ ձախողվում է, եթե ձեզ հետ նավակում կան մարդիկ, որոնք ամբողջ ժամանակ ավելի շատ մտածում են իրենց հագուստների, քան ճանապարհորդության մասին։ Մի անգամ դժբախտություն եմ ունեցել այդպիսի երկու լեդիների հետ մասնակցելու գետային պիկնիկի։ Ա՜յ թե ուրախ ժամանակ անցկացրեցինք։

Նրանք երկուսն էլ դեղնցիկ հագնված էին՝, ամբողջովին ժանյակների ու մետաքսի մեջ. ծաղիկներ, ժապավեններ, պերճաշուք կոշիկներ, բաց գույնի ձեռնոցներ։ Նրանք հագնված էին նկարչական ստուդիայի և ոչ թե գետային պիկնիկի համար։ Նրանց զգեստները ֆրանսիական մոդայիկ ամսագրից ընդօրինակած «գետային կոստյումներ» էին։ Միծաղելի էր այդպիսի հագուստներով գտնվել իսկական հողին, օդին, ջրին մոտ։

Առաջին միտքը, որ անցավ նրանց գլխով, այն էր, որ նավակը մաքուր չէ։ Մենք մաքրեցինք նստարանները և սկսեցինք հավաստիացնել, որ այժմ ամեն ինչ կարգին է, բայց նրանք դարձյալ չհավատացին։ Նրանցից մեկը ձեռնոցով մաքրեց բարձը և արդյունքը ցույց տվեց մյուսին։ Աղջիկները խոր հոգոց հանեցին և նստեցին քրիստոնեության վաղ շրջանի տառապյալների պես, կարծես փորձելով հնարավորին չափ հարմար տեղավորվել խաչի վրա։ Թիավարելիս երբեմն պատահում է, որ թիերից ջուր է ցայտում։ Այդ օրը ինձ համար պարզ դարձավ, որ մի կաթիլ ջուրը կարող է հիմնովին փչացնել հագուստը։ Հետքը հնարավոր չէ մաքրել, և զգեստի վրա ընդմիշտ բիծ է մնում։

Ես առաջին թիավարն էի։ Կաշվիցս դուրս էի գալիս, թիակները մոտ երկու ֆուտ բարձրացնում էի, յուրաքանչյուր հարվածից հետո դադար էի տալիս, որպեսզի թիակների վրայից ջուրը ցած հոսեր և ամեն անգամ ջրի վրա հարթ տեղ էի փնտրում, թիակները նորից ջուրը մտցնելու համար։ (Նավաքթի թիավարը շուտով ասաց, որ ինքը բավականաչափ հմուտ չէ, որպեսզի ինձ հետ համաչափ թիավարի, եթե ես դեմ չեմ, լուռ կնստի և կուսումնասիրի թիավարման իմ

մեթոդը, քանի որ դա նրան շատ է հետաքրքրում)։ Բայց, չնայած իմ բոլոր ջանքերին, երբեմն ջրի կաթիլները ցայտում էին աղջիկների զգեստների վրա։

Աղջիկները չէին բողոքում, այլ կպչում էին միմյանց ու ամուր սեղմում շրթունքները։ Ամեն անգամ նրանց զգեստներին մի կաթիլ ջուր ցայտելիս, լուռ թոթվում էին ուսերը և ցնցվում։ Այդ լուռ տառապանքները ազնվացնում էին նրանց մեր աչքում, բայց աղղում էին իմ նյարդերի վրա։ Ես անչափ զգայուն եմ։ Սկսեցի կատաղի ու ջղաձգորեն թիավարել, և որքան էլ որ ձգտում էի չցայտեցնել, ավելի ու ավելի շատ ջուր էր ցայտում։

Վերջապես ես հանձնվեցի և ասացի, որ կթիավարեմ նավակի քթամասում։ Մյուս թիավարը նույնպես կարծում էր, որ այդպես ավելի լավ կլինի և մենք փոխեցինք տեղները։ Աղջիկները, տեսնելով որ գնում եմ, իրենցից անկախ, թեթևացած շունչ քաշեցին, և մի պահ նրանց աչքերը ուրախությունից փայլեցին։ Խե՜ղճ աղջիկներ։ Ավելի լավ կանեին, որ հաշտվեին ինձ հետ։ Թիավարը, որ այժմ բաժին ընկավ նրանց, մի ուրախ, անհոգ ու հաստագլուխ երիտասարդ էր, նույնքան զգայուն, որքան նյուֆաունդլենդյան շան քոթոթը։ Փորձեք մի ժամ շարունակ հայացքով ինչ-որ բան հասկացնել նրան, նա չի էլ նկատի և եթե նկատի էլ, դրանից ամենևին չի շփոթվի։ Նա աղմուկով ու թափով այնպես էր հարվածում թիերով, որ ջրի շիթերը շատրվանի պես թափվում էին նավակի մեջ, չթողնելով մեզ հանգիստ նստել տեղում։ Երբ նա զգեստների վրա մի պինտից ավելի ջուր էր ցայտեցնում, հաճելի ժպիտով ասում էր.

— Ներողություն եմ խնդրում,— և սրբելու համար առաջարկում էր իր թաշկինակը։

— Օ՜, ուշադրություն մի դարձրեք, — ի պատասխան մրմնջում էին խեղճ աղջիկները և ծածուկ իրենց վրա էին քաշում թիկնոցներն ու ծածկոցները կամ փորձում էին պաշտպանվել մետաքսե հովանոցներով։

Նախաճաշը նրանց համար շատ անհաջող անցավ։ Նրանց ստիպում էին նստել խոտին՝ որը փոշոտ էր, առաջարկում էին հենվել ծառաբնին՝ որը շաբաթներ շարունակ չէր մաքրվել։ Իսկ նրանք գետնին էին փռում թաշկինակները և սլաքի

պես ձիգ նստում դրանց վրա։ Ինչ-որ մեկը մսակարկանդակով ափսեն բերելիս կպչելով ծառի արմատին, սայթաքեց, և կարկանդակը մի կողմ թռավ։ Բարեբախտաբար, աղջիկների վրա չընկավ։ Սակայն այս վշտալի պատահարը նրանց ստիպեց աչալուրջ լինել նոր վտանգից խուսափելու համար։ Դա անչափ հուզեց նրանց և հենց որ մեկնումեկս որևէ բան էր բերում, որը կարող էր ընկնել ու կեղտոտել նրանց զգեստը, անհոգ անհանգստությամբ նրանք հետևում էին տվյալ անձնավորությանը, մինչև նա բարեհաջող տեղ էր հասնում։

— Դե, ձեզ տեսնենք, աղջիկներ, — ասաց մեր ծանոթ թիավարը նրանց, երբ նախաճաշն ավարտված էր, — հիմա պետք է լվանաք ամանեղենը։

Սկզբում նրանք չհասկացան, թե ինչի մասին է խոսքը։ Երբ գլխի ընկան, ասացին, որ ման լվանալ չգիտեն։

— Օ՜, ես ձեզ ցույց կտամ, — ասաց նա։ — Դա շատ զվարճալի է։ Դուք պառկում եք ձեր...ուզում եմ ասել կռանում եք ջրի վրա և ամանները ողողում ջրով։

Ավագ քույրն ասաց, վախենում է, որ իրենց հագուստները հարմար չեն այդպիսի աշխատանքի համար։

— Օ՜, ամեն ինչ լավ կլինի, — անհոգ պատասխանեց նա, — քշտեք ձեր փեշերը։

Եվ, այնուամենայնիվ, ստիպեց, որ նրանք ամանները լվանան։ Նա ասաց, որ հենց դրա մեջ է պիկնիկի ողջ հմայքը։ Աղջիկները համաձայնեցին, որ դա շատ հետաքրքիր էր։

Հիմա ես հանախ ինձ հարց եմ տալիս. այդ երիտասարդը իսկապե՞ս այնպիսի հաստագլխի մեկն էր, ինչպես կարծում էինք, կամ գուցե նա...ոչ, դա անհնար է։ Նա այնքան պարզ, մանկական դեմք ուներ։

Հարրիսը ցանկացավ ափ դուրս գալ Հեմփթոնյան եկեղեցու մոտ և գնալ նայելու միսիս Թոմասի դամբարանը։

— Ո՞վ է այդ միսիս Թոմասը, — հարցրեցի ես։

— Ի՞նչ իմանամ, — պատասխանեց Հարրիսը, — նա մի տիկին է, որն անսովոր դամբարան ունի և ես ուզում եմ տեսնել։

Ես համաձայն չէի։ Զգիտեմ, գուցե ես այնպես չեմ ստեղծված, ինչպես պետք է, բայց ինձ երբեք չեն գրավում

գերեզմանաքարերը։ Գիտեմ, առաջին բանը, որ պետք է անել որևէ գյուղ կամ քաղաք ժամանելիս, այն է, որ վազեք ուղիղ գերեզմանատուն և հիանաք տապանաքարերով, բայց դա մի զվարճություն է, որը ես ինձ միշտ մերժում եմ։ Ինձ համար հետաքրքիր չէ ինչ-որ ասֆմահար ծերունու ետևից թափառել խավար ու սառը եկեղեցիներում և կարդալ տապանագրերը։ Նույնիսկ քարի մեջ տեղադրված ճաքճքած բրոնզի կտորի տեսքը ինձ չի պատճառում այն, ինչ անվանում են իսկական երջանկություն։

Իմ անտարբերությամբ, որով կարդում եմ տապանագրերը, ես չփոթեցնում եմ եկեղեցու հարգարժան ծառաներին, և տեղական տոհմաբանության պատմության նկատմամբ աննշան հետաքրքրություն անգամ չեմ ցուցաբերում։ Իսկ իմ վատ թաքցրած ձգտումը՝ որքան հնարավոր է շուտ դուրս պրծնել այդտեղից, վիրավորում է նրանց նվիրական զգացմունքները։

Արևոտ ոսկեզօծ մի առավոտ հենվել էի գյուղական փոքրիկ եկեղեցին շրջափակող քարե ցանկապատին, ծխում էի և խոր հրճվանքով լուռ արբենում իմ առջև բացվող այք շոյող, անվրդով տեսարանով. հինավուրց գորշ եկեղեցին՝ անսովոր քանդականախշերով և բաղեղի թփերով ծածկված փայտյա սանդղամուտքով, սարալանջի երկշարք բարձր ծփիների միջև ձգվող ճերմակ արահետը, խնամքով խուզած դալար ցանկապատերի ետևից առկայծող ծղոտե տանիքներով տնակները, ձորակի արծաթե գետը, հեռվում առկայծող անտառածածկ լեռները։

Հիասքանչ տեսարան էր։ Այդ հովվերգական, բանաստեղծական տեսարանը ոգեշնչել էր ինձ։ Կարծես մեղքերս թոթափել ու վեհանձն էի դարձել։ Ես զգում էի, որ այլևս չեմ կարող մեղսագործ ու չար լինել։ Ես երազում էի գալ ու բնակություն հաստատել այդտեղ, այլևս երբեք ոչ մի սխալ քայլ չանել և ապրել անմեղ ու գեղեցիկ կյանքով, ծերության օրերին ճերմակափայլ մազեր ունենալ, և այլն։

Այդ պահին ես ներեցի իմ բոլոր ազգականներին ու ընկերներին իրենց չարակամության ու այլասերվածության համար և օրհնեցի նրանց։ Նրանք շարունակում էին իրենց չվայտ կյանքի ուղին՝ անտեղյակ, թե ես ինչ եմ անում

նրանց համար մի հեռավոր, խաղաղ գյուղակում։ Բայց ես դա արեցի և կուզենայի, որ նրանք իմանային այդ մասին, որովհետև ես նրանց բոլորին ուզում էի երջանկացնել։ Նման բարի ու վեհանձն մտքերով էի տարված, երբ մի սուր, սկանջ ծակող ձայն ընդհատեց իմ մտորումները։

— Ամեն ինչ կարգին է, սըր։ Գալիս եմ, գալիս։ Ամեն ինչ կարգին է, սըր, մի շտապեք։

Ես հայացքս բարձրացրի ու տեսա մի ծերունու, որը կաղալով դեպի ինձ էր շարժվում գերեզմանների միջով, ձեռքում բանալիների մի մեծ խուրձ բռնած, որ շարժվում և զնգզնգում էին ամեն քայլափոխին։ Ես լուռ արժանապատվությամբ ձեռքի շարժումով նրան խնդրեցի, որ հեռանա, բայց նա դարձյալ առաջանում էր, անընդհատ գոչելով.

— Գալիս եմ, սըր, գալիս եմ։ Ես մի թեթև կաղում եմ։ Հիմա ես առաջվա պես արագաշարժ չեմ։ Այս կողմը, սըր։

— Հեռացիր, խղճուկ ծերուկ, — ասացի ես։

— Ես չկարողացա ավելի շուտ գալ, — պատասխանեց նա։ Իմ տիրուհին հենց նոր նկատեց Ձեզ։ Հետևեք ինձ, սըր։

— Հեռացեք, — կրկնեցի ես, — հանգիստ թողեք ինձ, բանի դեռ չեմ անցել այս պատը և շանսատակ արել ձեզ։

Նա զարմացած տեսք ընդունեց։

— Մի՞թե դուք չեք ուզում նայել գերեզմանները, — ասաց նա։

— Ոչ, — պատասխանեցի ես, — չեմ ուզում։ Ես ուզում եմ կանգնել այստեղ, հենվել այս հին ու ամուր պատին։ Հեռացեք և մի խանգարեք։ Ես լի եմ գեղեցիկ ու ազնիվ մտքերով և ուզում եմ այդպես էլ մնալ, քանի որ այդպես բարի եմ ու լավը։ Հիմարություններ մի արեք, մի բարկացրեք ինձ և մի ցրեք իմ լավագույն զգացումներն այդ հիմար գերեզմանաքարերով։ Հեռացեք և գտեք մեկնումեկին, որը կհամաձայնի էժան գնով թաղել ձեզ, իսկ ես կվճարեմ ծախսի կեսը։

Մի պահ նա ապշեց, տրորեց աչքերն ու ուշադիր նայեց ինձ։ Արտաքինից ես բավական նման էի մարդ սրարածի։ Սերուկը ոչինչ չհասկացավ։

— Դուք նորե՞կ եք, — հարցրեց նա, — Դուք այստեղ չե՞ք ապրում։

— Ոչ, — ասացի ես, — այստեղ չեմ ապրում։ Եթե ես այստեղ ապրեի, այն ժամանակ դուք այստեղ չէիք լինի։

— Դե լավ, — ասաց նա, — ուրեմն դուք ուզում եք դիտել դամբարանները, գերեզմանները, դե որտեղ մարդիկ են թաղված — շիրիմները։

— Դուք խաբեբա եք, — ասացի ես բարկանալով, — ես չեմ ուզում տեսնել դամբարանները։ Ինչի՞ս են պետք։ Մենք ունենք մեր դամբարանները, մեր ընտանիքն ունի։ Քենսալ Գրին գերեզմանատանը գտնվում է իմ քեռի Փոշերի գերեզմանը, որը ողջ շրջանի հպարտությունն է։ Բառուում գտնվող իմ պապիկի գերեզմանը կարող է ութ այցելուի տեղավորել։ Իսկ Սյուզանը՝ տատիկիս քույրը, Ֆինչլիի գերեզմանատանը, աղյուսե գերեզման ունի, որի հուշաքարի գլխամասը աճյունասափորի տեսքով մի հարթաքանդակ է զարդարում։ Գերեզմանի շուրջը ձգվում է վեց դյույմ բարձրությամբ ամենալավ սպիտակ քարից պատրաստված եզրաքարդ, որը մի ամբողջ հարստություն արժե։ Երբ գերեզմաններ այցելելու ցանկություն եմ ունենում, ապա գնում և հիանում եմ նրանցով։ Ինչի՞ս են պետք օտար մարդկանց շիրիմները։ Երբ ձեզ թաղեն, ես կայցելեմ ձեր շիրիմին։ Դա այն ամենն է, որ ես կարող եմ անել ձեզ համար։

Նրա աչքերը արցունքով լցվեցին։ Նա ասաց, որ դամբարաններից մեկի վրա մի կտոր քար կա, որի մասին ասում են, որ դա այն ամենն է, ինչ մնացել է տղամարդու պատկերից, իսկ մի ուրիշ քարի վրա փորագրված են մի քանի բառեր, որոնք մինչև հիմա ոչ ոք չի կարողացել վերծանել։

Ես անհողդողդ մնացի, և նա հուսահատ ձայնով ասաց.

— Գոնե եկեք տեսնելու հուշարձան-պատուհանը։

Ես նույնիսկ դա չէի ուզում տեսնել, և նա կրակեց իր վերջին փամփուշտը։ Նա մոտ եկավ և խռպոտ ձայնով շշնջաց.

— Այնտեղ, ներքևի դամբարանում մի զույգ գանգ կա, — ասաց նա, — գնանք տեսեք։ Օ՜, անպայման եկեք և տեսեք գանգերը։ Դուք երիտասարդ եք, դուք հանգստանում եք և ցանկանում եք հաճելի ժամանակ անցկացնել։ Գնանք գանգերը տեսնելու։

Այդ պահին ես շրջվեցի և սկսեցի վազել, իսկ նա շարունակում էր կանչել.

— Օ՜, եկեք տեսնելու գանգերը, վերադարձեք և տեսեք գանգերը։

Հարրիսը, սակայն բավականություն է ստանում դիտելով դամբարանները, գերեզմանները, հուշարձանների վրայի տապանագրերն ու հուշագրերը, և այն միտքը, որ գուցե ինքը չտեսնի միսիս Թոմասի դամբարանը, մոլեգնության էր հասցնում նրան։ Նա ասաց, որ հենց առաջին պահից սկսած, երբ այս ճանապարհորդությունն սկսելու առաջարկությունն արվեց, նա փայփայել է այն իղձը, որ կտեսնի միսիս Թոմասի դամբարանը. և ավելացրեց, որ չէր միանա մեզ, եթե նպատակ չունենար տեսնելու այդ դամբարանը։

Ես հիշեցրի նրան Ջորջի մասին և այն, որ մենք պետք է նավակը ժամը հինգին հասցնենք Շեփերթոն՝ Ջորջին հանդիպելու համար, ու Հարրիսը սկսեց լուտանք թափել Ջորջի հասցեին։ Ինչու՞ պետք է Ջորջը ամբողջ օրը թրև գա, իսկ մենք՝ երկուսով քարշ տանք այս ծանրաշարժ, երերուն ու խարխուլ մակույկը հոսանքով վեր ու վար, ինչ է թե հանդիպենք նրան։ Ինչու՞ ինքը չէր կարող գալ և աշխատել մեզ հետ։ Ինչու՞ նա մի ազատ օր չկարողացավ վերցնել և գալ մեզ հետ։ Թող քարուքանդ լինի այդ բանկը։ Բանկի ինչի՞ն է պետք նա։

— Երբ էլ գնամ այնտեղ, երբեք չեմ տեսել, որ նա որևէ գործ անի, — շարունակեց Հարրիսը։ — Ամբողջ օրը նստում է, ապակու ետևում, ձևացնելով, իբր խիստ զբաղված է։ Ի՞նչ օգուտ ապակու ետևում, նստած մարդուց։ Ես իմ աշխատանքով ապրուստի միջոց եմ հայթայթում։ Նրանից բանկին ի՞նչ օգուտ, և ընդհանրապես, ի՞նչ օգուտ այդ բոլոր բանկերից։ Նրանք վերցնում են դրամդ, իսկ երբ չեկ ես դուրս գրում, այն վերադարձնում են ամբողջովին խզմզված. «Սպառված է», «Մոտեցեք այսինչ պատուհանին»։ Ի՞նչ օգուտ այս ամենից։ Անցյալ շաբաթ նրանք երկու անգամ նման օրին խաղացին իմ գլխին։ Ես մտադիր չեմ երկար համբերել, կփակեմ իմ հաշիվը բանկում և վերջ։ Եթե նա այստեղ լիներ, մենք կկարողանայինք գնալ և տեսնել այդ դամբարանը։ Չհավատաս, որ նա բանկում է։ Հիմա զվարճանում է ինչ-որ

տեղ, ահա թե ինչով է նա զբաղված, իսկ մենք աշխատում ենք նրա փոխարեն։ Ես գնում եմ մի բան խմելու։

Ես հիշեցրի թե պանդոկից քանի մղոն ենք հեռու ու հիմա էլ նա սկսեց նզովել գետը. Ի՞նչ օգուտ այս գետից։ Մի՞թե գետի վրա հանգստացողները պետք է ծարավից մեռնեն։

Երբ Հարրիսը այսպիսի տրամադրության մեջ է, ավելի լավ է նրան հանգիստ թողնեք։ Վերջիվերջո ուժասպառ է լինում և խաղաղվում է։

Ես նրան հիշեցրի, որ զամբյուղում խտացրած լիմոնադ ունենք ու մի ամբողջ գալլոն լիքը ջուր, պարզապես պետք է այդ երկուսը խառնել իրար և զովացուցիչ խմիչք կըստացվի։

Հիմա էլ Հարրիսը հարձակվեց լիմոնադի, իմբիրի գարեջրի, մորու հյութի վրա, դրանք անվանելով «կիրակնօրյա դպրոցի կեղտաջուր»։ Նրա կարծիքով, դրանք բոլորն էլ նյութափոխանակության խանգարում են առաջացնում, քայքայում են մարմինն ու հոգին և Անգլիայում կատարվող հանցագործությունների կեսի պատճառն են։

Նա ասաց, որ, այնուամենայնիվ, պետք է չէ՞ մի բան խմի, բարձրացավ նստարանին, որպեսզի շիշը վերցնի։ Շիշը զամբյուղի խորքում էր և հեշտ չէր հանելը։ Նա ավելի ու ավելի էր կռանում, փորձելով միաժամանակ ղեկավարել նավակը՝ ամեն ինչին նայելով վարից վեր։ Հարրիսը սխալվեց՝ ձգելով ոչ այն պարանը, և նավակը ուղղեց դեպի ափ։ Հարվածից նա գլխի վրա շուռ եկավ և ընկավ ուղիղ զամբյուղի մեջ՝ ջղաձգորեն երկու ձեռքերով ամուր կառչելով նավակի կողերից, ոտքերը օդում տնկած։ Հարրիսը չէր համարձակվում շարժվել, վախենալով, որ ջուրը կընկներ, և ստիպված էր մնալ այդպես այնքան ժամանակ, մինչև ես, բռնելով նրա ոտքերից, դուրս քաշեցի, որից նա ավելի կատաղեց։

Գլուխ ութերորդ

Շանսաած։ Դրա դեմ պայքարելու ճիշտ մեթոդը։ Առափնյա հողատերերի բուռ խասիրությունը։ «Հայտարարություն»-ները։ Հարրիսի ոչ քրիստոնեական զգացմունքները։ Ինչպես է Հարրիսը կատակերգ երգում։ Բարձրաշխարհիկ երեկույթ։ Երկու բարոյազուրկ երիտասարդների ամոթալի վարմունքը։ Անօգուտ տեղեկություններ։ Ջորջը բանտ է գնում։

Նախաճաշելու համար մենք կանգ առանք Քեմփթոն-պարկի ուռենիների տակ։ Դա մի հիանալի վայր է. ափի երկայնքով ձգվում է համատարած կանաչ մարգագետինը, որը տեղ-տեղ ծածկված է ուռենիներով։ Մենք հենց նոր էինք անցել երրորդ կիրակրատեսակին՝ հաց ու ջեմին, երբ առանց պիշակի ու կարճ ծիամորճով մի ջենտլմեն մոտեցավ մեզ և ցանկացավ իմանալ, թե արդյոք մեզ հայտնի՞ է, որ ուրիշի տիրույթն ենք ներխուժել։ Մենք պատասխանեցինք, որ այդ հարցին բավականաչափ ուշադրություն չենք հատկացրել, որպեսզի հնարավորություն ունենանք մի որոշակի եզրակացության հանգել, բայց, եթե նա մեզ ջենտլմենի խոսք տա, որ մենք իսկապես ներխուժել ենք ուրիշի տիրույթի սահմանները, ապա մենք, առանց հետագա տատանումների, պատրաստ ենք հավատալ նրան։

Նա հավաստիացրեց մեզ, և մենք շնորհակալություն հայտնեցինք։ Սակայն նա չէր հեռանում և դժգոհ տեսք ուներ, այնպես, որ մենք հարցրեցինք, թե էլ ինչով կարող ենք օգտակար լինել։ Իսկ Հարրիսը, որը բնավորությամբ շատ ընկերական է, մի կտոր հաց ու ջեմ առաջարկեց նրան։

Այդ ջենտլմենը, ամենայն հավանականությամբ, պատկանում էր մի ընկերության, որի անդամները երդվել էին ամեն գնով խուսափել հաց ու ջեմից։ Համենայն դեպս, նա հրաժարվեց խիստ կոպիտ, կարծես վիրավորված է այն բանից, որ իրեն փորձում են գայթակղել և ավելացրեց, որ իր պարտականությունն է մեզ այդտեղից դուրս վռնդել։

Հարրիսն ասաց, եթե դա պարտականություն է, ապա պետք է ի կատար ածվի և հարցրեց, թե նրա կարծիքով դա իրականացնելու համար ո՞ր միջոցն է ամենահարմարը։

Հարրիսը, պետք է ասել, բարձրահասակ է, ատլետիկ կազմվածք ունի և ամրակազմ ու ուժեղ տղամարդու տպավորություն է թողնում։ Մարդը ոտից գլուխ չափեց նրան և ասաց, որ գնում է խորհրդակցելու իր տիրոջ հետ, որից հետո կվերադառնա և մեզ երկուսիս էլ կնեռի գետը։

Իհարկե մենք նրան այլևս չտեսանք, և իհարկե, նրա ուղածը մեկ շիլլինգ էր։ Ամառվա ընթացքում ծովափին հաճախ են հանդիպում նման խուլիգաններ, որոնք բավական դրամ են կուտակում, թափառելով ափին և այս եղանակով շանտաժի ենթարկելով թուլամիտ տխմարներին։ Նրանք իրենց ներկայացնում են որպես հողատիրոջ վստահված անձինք։ Ամենաճիշտն այն կլինի, որ հայտնեք ձեր անունն ու հասցեն և հնարավորություն տաք սեփականատիրոջը, եթե նա իսկապես կապ ունի այս ամենի հետ, դատի տալ ձեզ և ապացուցել, որ դուք վնաս եք հասցրել նրան՝ նստելով նրան պատկանող հողակտորի վրա։ Բայց մարդկանց մեծամասնությունը այնքան ծույլ ու երկչոտ են, որ գերադասում են խրախուսել այդ խաբեությունը, տեղի տալով, քան թե վերջ տալ դրան՝ ցուցաբերելով վճռական բնավորություն։

Այն դեպքում, երբ իսկապես սեփականատերերն են մեղավոր, նրանց պետք է մերկացնել։ Առափնյա հողատերերի եսամոլությունը տարեցտարի աճում է։ Եթե թողնեն, նրանք կփակեն Թեմզան։ Նրանք փաստորեն այդպես էլ վարվում են փոքրիկ վտակների և ջրանցքների հետ։ Նրանք գետի մեջ այուներ են խփում, և շղթաներ են անցկացնում մի ափից մյուսը ու յուրաքանչյուր ծառին տախտակի կտորներ են մեխում՝ նախազգուշացումներով։ Հենց միայն այդ նախազգուշացումների տեսքը իմ մեջ արթնացնում է ամենավատ բնազդները։ Ինձ մոտ ցանկություն է առաջանում պոկել դրանք ու այնքան խփել հեղինակի գլխին, մինչև շունչը փչի, իսկ այդ տախտակի կտորը դնել նրա գերեզմանին, որպես տապանաքար։

Ես Հարրիսին հայտնեցի իմ այս մտքերը և նա ասաց, որ ինքը ավելին կանի։ Նա ասաց, որ ինքը ոչ միայն շանսատակ կանի այդ մարդուն, ում հրահանգով որ ամրացվել են այդ նախազգուշացումները, այլև կոտորել կտա նրա ընտանիքը՝ բոլոր մտերիմների և ազգականների հետ միասին, և կհրդեհի տունը։ Ինձ թվում է, Հարրիսը շատ հեռու գնաց։ Ես այդպես էլ ասացի նրան, իսկ նա պատասխանեց.

— Ամենևին, նրան այդպես էլ պետք է, իսկ ես կգնամ և ավերակների վրա կոմիկական քառյակներ կերգեմ։

Ինձ վշտացրեց Հարրիսի այդ արյունռուշտ տրամադրությունը։ Երբեք չպետք է թույլ տանք, որ արդարամտության բնազդը վերածի վրեժխնդրության։ Երկար ժամանակ պահանջվեց, մինչև ես կարողացա համոզել Հարրիսին ավելի քրիստոնեաբար մոտենալ հարցին, ի վերջո դա ինձ հաջողվեց, և նա ինձ խոստացավ, որ բոլոր դեպքերում կխնայի մտերիմներին ու ազգականներին և կոմիկական քառյակներ չի երգի տան ավերակների վրա։

Ափսոս, որ երբեք չեք լսել, ինչպես է Հարրիսը կոմիկական քառյակներ երգում, թե չէ կհասկանայիք, ինչ ծառայություն եմ մատուցել մարդկությանը։ Հարրիսը մոլորության մեջ է, կարծելով, թե ինքը կարող է երգել կոմիկական երգեր, իսկ Հարրիսի ընկերները, ում բախտ է վիճակվել լսել նրան, ընդհակառակը, համոզված են, որ նա չի կարող, երբեք ի վիճակի չի լինի, և որ նրան նույնիսկ չպետք է թույլ տալ երգելու փորձ անել։

Երբ Հարրիսը հյուր է գնում և նրան խնդրում են երգել նա պատասխանում է.

— Դե, լավ, գիտեք չէ՞, որ ես միայն կոմիկական երգեր եմ երգում, — և դա ասում է այնպիսի տոնով, կարծես այդ երգերը այնքան լավ է կատարում, որ գոնե մի անգամ լսելուց հետո կարելի է հանգիստ հոգին ավանդել։

— Օ՜, հիանալի է, — ասում է տանտիրուհին, — որևէ բան երգեք, միստր Հարրիս։ Եվ Հարրիսը վեր է կենում, ուրախության ճառագայթներ արձակելով ուղղվում է դեպի դաշնամուրը այնպես մեծահոգաբար, կարծես պատրաստվում է նվեր մատուցել մարդկությանը։

— Այժմ, խնդրում եմ լռություն պահպանել, — ասում է տանտիրուհին, դիմելով հյուրերին։ — Միստր Հարրիսը մեզ համար կոմիկական քառյակներ կերգի։

— Օ՜, ինչ զվարճալի է, — շշնջում են հյուրերը ու շտապում են ձմեռային այգուց, բարձրանում աստիճաններով,

տան բոլոր անկյուններից կանչում միմյանց և հավաքվում հյուրասենյակում։ Բոլորը նախապես ժպտալով շրջանաձև նստում են։

Եվ Հարրիսը սկսում է։

Դե, քառյակներ երգելու համար հատուկ ձայնային տրվյալներ չեն պահանջվում։ Դուք չեք ակնկալում ճիշտ ֆրազավորում կամ հնչյունի պարզություն։ Ոչինչ, եթե երգիչը նոտայի կեսից հանկարծ հայտնաբերում է, որ այն շատ բարձր է և միանգամից ցածր նոտա է վերցնում։ Տեմպը նույնպես նշանակություն չունի։ Ոչինչ, եթե երգիչը երկու տակտ առաջ է ընկել նվագակցումից և հանկարծ, տողի կեսին կանգ է առնում, որպեսզի դա քննարկի դաշնակահարի հետ և հետո նորից է սկսում նույն քառյակը։ Բայց դուք բառեր եք ակնկալում լսել։

Դուք չեք պատկերացնում, որ երգիչը ոչինչ չի հիշում առաջին քառյակի երեք տողերից բացի, և այդ տողերը կրկնում է այնքան, մինչև հասնում է երգչախմբի հերթը։ Ձեր մտքով անգամ չի անցնում, որ երգիչը կարող է կանգ առնել տողի կեսին և հոհոալով ասել, որ ծիծաղելի է, բայց թող անհիշված լինի թե հիշում է, ինչ բառեր են գալիս դրանից հետո։ Փորձում է ինքը որևէ բան հորինել և հետո, հանկարծ, երբ արդեն անցել են հաջորդ քառյակին, մտաբերում է և առանց նախազգուշացնելու կանգ է առնում, որպեսզի ամեն ինչ նորից սկսի։ Դուք չեք կարող պատկերացնել... Դե, լավ, ավելի լավ է ձեզ ներկայացնեմ, թե ինչպես է Հարրիսը կոմիկական երգ երգում և հետո ինքներդ դատեք։

— ՀԱՐՐԻՍ (կանգնելով դաշնամուրի մոտ և դիմելով ապասումով լի հաստատակությանը)։— Վախենում եմ, որ շատ հին երգ է։ Հավանաբար բոլորդ էլ լսած կլինեք։ Բայց դա միակ երգն է, որ ես երգում եմ։ Դա դատավորի երգն է «Գոգնոց»[1] օպերետից, ոչ, ուզում եմ ասել... ոչ թե «Գոգնոցից»։ Դուք հասկանում եք, ինչ եմ ուզում ասել, այսինքն, այն մյուս օպերետից։ Դուք բոլորդ, պարզ է, պետք է կատարեք կրկներգը։

1. «Գոգնոց» — լրիվ անվանումն է «Ձերդ մեծություն գոգնոցը» — Ու. Ս. Ջիլբերտի և Ա. Ս. Սուլիվանի կոմիկական օպերետը։

(Ուրախ շշնջոց, բոլորն ուզում են կատարել խմբերգը «Երդվյալների դատավարությունը»՝ օպերետից։ Դատավորի երգի նախերգանքի հիսարանչ կատարում հուզված դաշնակահարի կողմից։ Ժամանակն է, որ Հարրիսը սկսի։ Հարրիսը պահը բաց է թողնում։ Հուզված դաշնակահարը նորից է սկսում նախերգանքը և Հարրիսն էլ սկսում է նրա հետ միաժամանակ։ Նախերգանքի շնչով կատարում է Առաջին հարկի երգի առաջին երկու տողերը «Գոգնոցից»։ Նյարդայնացած դաշնակահարը փորձում է շարունակել նախանվագը, սակայն հրաժարվում է, փորձում է հետևել Հարրիսին «Երդվյալների դատավարություն» օպերետից դատավորի երգի նվագակցումով, տեսնում է, որ ոչինչ չի ստացվում, փորձում է գլխի ընկնել, թե ինչ պետք է անի և որտեղ է գտնվում, զգում է, որ հիշողությունն իրեն դավաճանում է և լռում)։

— ՀԱՐՐԻՍ (սիրալիր ֆաջալերելով)։ — Հրաշալի է։ Դուք հրաշալի եք նվագում, շարունակեցեք։

ՆՅԱՐԴԱՅԻՆ ԴԱՇՆԱԿԱՀԱՐ — Վախենում եմ, այստեղ սխալ կա։ Դուք ի՞նչ եք երգում։

ՀԱՐՐԻՍ (առանց հապաղելու)։ — Ինչպե՞ս թե, Դատավորի երգը «Երդվյալների դատավարությունից»։ Չգիտե՞ք, ինչ է։

ՀԱՐՐԻՍԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ (սենյակի խորքից)։ — Ոչ, հաստատապես, դու երգում ես Ադմիրալի երգը «Գոգնոցից»։

(Երկար բանավեճ Հարրիսի և նրա ընկերոջ միջև՝ թե իսկապես ինչ է երգում Հարրիսը։ Նրա ընկերը վերջապես ասում է, որ կարևոր չէ, թե ինչ է երգում, միայն թե որևէ բան երգի, և Հարրիսը, որին ակնհայտորեն տանջում է վիրավորված ինքնասիրության զգացումը, խնդրում է դաշնակահարին նորից սկսել։ Դաշնակահարը նվագում է Ադմիրալի երգի նախերգանքը, և Հարրիսը, իր կարծիքով հարմար պահն ընտրելով, սկսում է)։

ՀԱՐՐԻՍ — Երբ ջահել էի, դարձա փաստաբան...

(Համատարած ծիծաղի որոտ, որը Հարրիսն ընդունում է որպես քաջալերանք։ Դաշնակահարը հիշում է իր կնոջն ու երեխաներին, դադարեցնում է այդ անհավատար մրցությունն ու նահանջում։ Նրա տեղը գրավում է ավելի ուժեղ նյարդերի տեր մեկ ուրիշը)։

ՆՈՐ ԴԱՇՆԱԿԱՀԱՐ (զվարթ)։ — Դե, ծերուկ, սկսեք, իսկ ես կհետևեմ Ձեզ. նախանվագի կարիք չկա։

ՀԱՐՐԻՍ (որն իր համար պարզել էր այդ ամենը. ծիծաղելով)։

1. «Երդվյալների դատավարությունը»— Ջիլբերտի և Սուլիվանի մյուս կոմիկական օպերետը։

— Աստված իմ, ներողություն եմ խնդրում։ Իհարկե, ես խառնում էի երկու երգերը։ Ջենկինն էր ինձ շփոթեցնում։ Դե, սկսեցինք։

(Երգում է։ Նրա ձայնը կարծես գալիս է գինու մառանից և հիշեցնում է մոտեցող երկրաշարժի առաջին նախանշանները)։

— Երբ չահել էի, ծառայում էի,
Փաստաբանի մոտ, ցրիկ էի։

(Թեքվելով դաշնակահարի կողմը)։ — Շատ ցածր է, ծերուկ։ Մի անգամ էլ փորձենք, եթե դեմ չեք։

Նորից երգում է առաջին երկու տողերը, այս անգամ՝ ֆալցետոյով։ Զարմանքի նշաններ լսարանի կողմից։ Բուխարու մոտի նյարդային ծեր տիկինը սկսում է լալ և նրան դուրս են առաջնորդում)։

ՀԱՐՐԻՍ (շարունակելով)։ — Ես պատուհաններն էի մաքրում ու դուռն էի մաքրում, ես...

Ոչ, ոչ, «ես մուտքի դռան ապակիներն էի մաքրում և ես հատակն էի փայլեցնում», ոչ, գրողը տանի, ներողություն եմ խնդրում։ Ծիծաղելի է, բայց ոչ մի կերպ չեմ կարողանում հիշել այդ տողը։ Եվ ես... և ես... Դե լավ, անցնենք կրկներգին (նշան է անում)։

Եվ ես տրա-լա-լա, տրա-լա-լա, տրա-լա-լա,
Արքայական նավատորմի ադմիրալն եմ հիմա։

— Այժմ, երգչախումբը, ինչպես գիտեք, վերջին երկու տողերը կրկնվում են։

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ — Եվ նա տրա-լա-լա, տրա-լա-լա, տրա-լա-լա,
Արքայական նավատորմի ադմիրալն է հիմա։

Հարրիսը գլխի չի ընկնում, թե ինչպիսի աննախանձելի դրության մեջ է և ինչպես է զայրացնում մարդկանց, որոնք նրան ոչ մի վատություն չեն արել։ Նա ի սրտե համոզված է, որ մեծագույն հաճույք է պատճառել նրանց և խոստանում է մեկն էլ երգել ընթրիքից հետո։

Խոսելով կոմիկական քառյակների ու երեկույթների մասին, մի հետաքրքիր դեպք հիշեցի, որին ինքս եմ ներկա եղել և որը, քանի որ վառ լույս է սփռում մարդկային բանականության պրոցեսի վրա ընդհանրապես, իմ կարծիքով, պետք է հիշատակվի այս էջերում։

Երեկույթի մասնակիցները՝ բոլորս էլ ժամանակակից և բարձր կուլտուրայի տեր մարդիկ էինք։ Հագել էինք մեր լավագույն հագուստները, զրուցում էինք բարեհնչյուն լեզվով և շատ երջանիկ էինք, բոլորս, բացի երկու երիտասարդ ուսանողներից, որոնք վերջերս էին վերադարձել Գերմանիայից։ Նրանք ոչնչով աչքի չընկնող երիտասարդներ էին և իրենց անչափ անհանգիստ ու անհարմար էին զգում, կարծես ժամանակը նրանց համար դանդաղ էր անցնում։ Բանն այն է, որ մենք չափազանց խելացի էինք նրանց համար։ Մեր փայլուն ու միևնույն ժամանակ անհոգ զրույցը և մեր բարձրաշխարհիկ ճաշակները նրանցից հեռու էին։ Մեր կողքին նրանք իրենց անհարմար էին զգում։ Կարիք չկար, որ նրանք այդտեղ լինեին։ Հետո բոլորն էլ համաձայնեցին այդ մտքի հետ։

Մենք հատվածներ էինք նվագում գերմանացի հին վարպետների գործերից։ Դատողություններ էինք անում փիլիսոփայության ու էթիկայի հարցերի շուրջ, վայելուչ արժանապատվությամբ սիրախաղ էինք անում։ Մենք նույնիսկ կատակում էինք բարձրաշխարհիկ ոճով։

Ընթրիքից հետո ինչ-որ մեկը բանաստեղծություններ կարդաց ֆրանսերեն լեզվով, և մենք գտանք, որ դրանք սքանչելի են։ Հետո մի տիկին մի հուզիչ բալլադ երգեց իսպաներեն լեզվով, և ոմանք նույնիսկ լաց եղան, այնքան զգայացունց էր այն։

Դրանից հետո այդ երկու երիտասարդները վեր կացան և հարցրեցին, թե մենք երբևէ լսե՞լ ենք, թե ինչպես է հերը Շլոսսեն Բոշենը (որը հենց նոր է ժամանել և ճաշասենյակում է, իր հռչակավոր գերմանական կատակերգը կատարում։

Մեզնից ոչ ոք չէր լսել։

Երիտասարդներն ասացին, որ դա ամենազավեշտական երգն է, որ երբևէ գրվել է գերմաներեն լեզվով և, եթե մենք ցանկանում ենք լսել, նրանք կխնդրեն հերը Շլոսսեն Բոշենին, որին իրենք լավ էին ճանաչում, երգել մեզ համար։ Նրանք ասացին, որ երգն այնքան ծիծաղելի է, որ մի ան-

դամ, երբ նա երգել է գերմանական կայսեր ներկայությամբ, նրան (գերմանական կայսերը) ստիպված են եղել անկողին տեղափոխել։

Երիտասարդներն ասացին, որ ոչ ոք չի կարող այդ երգը այնպես լավ կատարել, ինչպես Շլոսսեն Բոշենը։ Երգը կատարելիս նա այնքան լուրջ է, կարծես ողբերգություն է կատարում, ինչը ավելի ծիծաղելի է դարձնում նրա կատարումը։ Նրանք ավելացրին նաև, որ հերր Շլոսսեն Բոշենը երբեք իր ձայնով կամ շարժուձևով ցույց չի տալիս, թե ինչ զվարճալի բան է երգում. դա կփչացնի ամեն ինչ։ Հենց նրա լրջությունը, համարյա պաթոսով լի տոնն է, որ այդքան անդիմադրելիորեն զվարճալի է դարձնում նրա կատարումը։

Մենք ասացինք, որ ուղղակի փափագում ենք լսել նրան ու մի լավ ուրախանալ։ Նրանք դուրս եկան և վերադարձան հերր Շլոսսեն Բոշենի հետ։

Նա, հավանաբար, ուրախ էր, որ երգելու հնարավորություն է ստեղծվել, որովհետև անմիջապես եկավ և առանց որևէ խոսքի նստեց դաշնամուրի մոտ։

— Օ՜, այ թե կզվարճանաք։ Մի կուշտ կծիծաղեք, — շշնջացին երիտասարդները սենյակով անցնելիս և համեստորեն տեղավորվեցին պրոֆեսորի թիկունքում։

Հերր Շլոսսեն Բոշենը ինքն էր իրեն նվագակցում։ Նախերգանքը ուրախ երգ չէր խոստանում։ Դա դանդաղ, հոգեցունց եղանակ էր, որից մարդ փշաքաղվում էր, բայց մենք ասացինք, որ դա զվարճացնելու գերմանական մեթոդ է և պատրաստվեցինք ուրախանալ։

Անձամբ ես, գերմաներեն չեմ հասկանում։ Ճիշտ է, դպրոցում ուսումնասիրել եմ այդ լեզուն, բայց ավարտելուց երկու տարի անց մոռացել եմ մինչև վերջին բառը, և այդ ժամանակվանից, ավելի լավ եմ զգում ինձ։ Սակայն ես չէի ուզում, որ ներկաներն իմանային իմ տգիտության մասին ու այդ պատճառով որոշեցի խորամանկել։ Ես աչքս չէի հեռացնում այդ երկու ուսանողներից և հետևում էի նրանց օրինակին։ Երբ նրանք քմծիծաղում էին, ես էլ էի քմծիծաղում, երբ նրանք ամբողջ կոկորդով մեկ հռհռում էին, ես շտապում էի ետ չմնալ։ Բացի դրանից, երբեմն էլ իմ իսկ

նախաձեռնությամբ թեթևաբար ժպտում էի, կարծես ծիծաղելի որևէ բան էի նկատել, որ ուրիշների ուշադրությունից վրիպել էր։ Իմ կողմից սա բավական խորամանկ քայլ էր։

Երգի ընթացքում ես նկատեցի, որ ներկաներից շատերը, ինչպես և ես, աչքերը չէին հեռացնում այդ երկու երիտասարդներից։ Նրանք նույնպես քմծիծաղում էին, երբ երիտասարդներն էին քմծիծաղում և հռհռում էին, երբ նրանք էին հռհռում։ Իսկ քանի որ այդ երիտասարդները քմծիծաղում, ժպտում, քրքջում էին ամբողջ երգի ընթացքում, ամեն ինչ հիանալի էր ընթանում։

Սակայն այդ գերմանացի պրոֆեսորը ամենևին ուրախ տեսք չուներ։ Սկզբում երբ մենք սկսեցինք ծիծաղել, նրա դեմքը խոր զարմանք արտահայտեց, կարծես բոլորովին չէր սպասում, որ իր երգը կդիմավորեն ծիծաղով։ Մեզ դա շատ ծիծաղելի թվաց և ասացինք, որ նրա հաջողության կեսը իր լրջության մեջ է։ Մի թեթև ակնարկն իր կողմից, որ նա գիտե, թե այդ ամենը որքան ծիծաղելի է, ամբողջապես կփչացներ ամեն ինչ։ Քանի որ մենք շարունակում էինք ծիծաղել, նրա զարմանքը փոխվեց վրդովմունքի և հետո՝ զայրույթի։ Նա զայրացած խոժոռում էր աչքերը մեզ վրա (բացի այն երկու երիտասարդներից, որոնց նա չէր կարող տեսնել, քանի որ նստած էին իր թիկունքում)։ Նրա այդ շանթահարող հայացքները միայն բավական էին, որ ծիծաղից թուլանայինք։ Մենք միմյանց ասում էինք, որ այդ երգը մեր մահվան պատճառն է դառնալու։ Միայն բառերը, ասում էինք, բավական են, որ մեզ նոպայի հասցնեն, իսկ նրա ձևական լրջությունը. օ՜, դա արդեն չափազանց էր։

Վերջին քառյակում պրոֆեսորն ինքն իրեն գերազանցեց։ Նա այնպիսի կատաղի հայացքներով էր շամփրում մեզ, որ եթե նախազգուշացված չլինեինք կոմիկական քառյակներ կատարելու գերմանական մեթոդի մասին, խիստ կվիրավորվեինք։ Միևնույն ժամանակ, նրա անսովոր եղանակի մեջ տառապանքի այնպիսի հնչյուններ էին լսվում, որ եթե նախօրոք տեղեկացված չլինեինք, որ դա ուրախ երգ է, անպայման կարտասվեինք։

Երբ նա ավարտեց, բոլորը կարծես վարակվել էին հիս-

տերիկ քրքիջով։ Մենք ասացինք, որ դա ամենածիծաղելի երգն է, որ երբևէ լսել էինք մեր կյանքում։ Ասացինք նաև, շատ տարօրինակ է, որ նման երգերի առկայության դեպքում, գերմանացիների մասին այն կարծիքն է տարածված, իբր նրանք զուրկ են հումորի զգացումից։ Եվ հարցրեցինք պրոֆեսորին, ինչու նա երգը չի թարգմանում անգլերեն, որպեսզի հասարակ մարդիկ կարողանային հասկանալ այն և իմանային, թե ինչպիսին է լինում իսկական կատակերգը։

Այդ պահին հերը Շլոսսեն Բոշենը վեր կացավ սպառնալից տեսքով։ Նա հայհոյանքներ տեղաց մեր գլխին գերմաներեն լեզվով (որն իմ կարծիքով այդ նպատակի համար բացառապես հարմար լեզու է), պտտվեց տեղում, թափահարեց բռունցքները և հայհոյեց մեզ անգլերենի իր իմացած բառապաշարով։ Նա ասաց, որ իր կյանքում դեռևս երբեք այդքան խոր վիրավորված չի զգացել իրեն։

Պարզվեց, որ այդ երգը ամենևին էլ կատակերգ չէր։ Դա մի ջահել աղջկա մասին էր, որն ապրում էր Հարցի լեռներում և որը զոհաբերել էր կյանքը իր սիրելիի հոգու փրկության համար։ Նրա սիրելին նույնպես մահացել էր, և նրանց ոգիները հանդիպել էին երկնքում, իսկ հետո, վերջին քառյակում, տղան դավաճանել էր աղջկա ոգուն և հեռացել մեկ ուրիշ ոգու հետ։ Մանրամասների մեջ համոզված չեմ, բայց գիտեմ, որ դա անչափ տխուր երգ էր։ Հերը Բոշենն ասաց, որ մի անգամ երգել է այդ երգը գերմանական կայսեր համար և նա (գերմանական կայսրը) մանկան պես հեկեկացել է։ Նա (հերը Բոշենը) ասաց, որ դա համարվում է գերմաներենով գրված ամենաողբերգական և հուզումնալից երգերից մեկը։

Մեզ համար տանջալից իրադրություն էր ստեղծվել, անչափ տանջալից։ Թվում էր, թե ոչ մի պատասխան լինել չէր կարող։ Մենք փնտրեցինք երկու երիտասարդներին, որոնք մեզ այս վիճակին հասցրին, բայց երգի ավարտից հետո նրանք աննկատելիորեն հեռացել էին։

Այսպես ավարտվեց այդ երեկոն։ Ինձ երբեք չի վիճակվել տեսնել, որ երեկույթն ավարտվի այդպիսի քար լռության մեջ, և հյուրերն այդքան անձայն հեռանան։ Մենք միմյանց նույնիսկ բարի գիշեր չմաղթեցինք։ Մենք մեկ-մեկ,

անաղմուկ ցած էինք իջնում, աշխատելով թաքնվել ստվերոտ կողմում։ Ցածրաձայն խնդրում էինք սպասավորից մեր գլխարկներն ու վերարկուները, ինքներս բաց էինք անում դուռը, մենակատ դուրս էինք սահում և արագ թեքվում անկյունից՝ հնարավորին չափ խուսափելով միմյանցից։

Այդ ժամանակվանից ես առանձնապես հետաքրքրություն չեմ ցուցաբերում գերմաներեն երգերի նկատմամբ։

Ժամը երեքն անց կեսին հասանք Սանբերյան շլյուզին։ Գետը շատ գեղեցիկ է այստեղ, մինչև դարպասներին հասնելը, իսկ գետախորշը ուղղակի հիասքանչ է, բայց անօգուտ է այդ մասում հոսանքին հակառակ թիավարելը։

Մի անգամ, սակայն, ես փորձել եմ։ Թիավարում էի դույզ թիերով և հարցրեցի ղեկի մոտ նստած ընկերներիս, թե նրանց կարծիքով, դա հնարավո՞ր է, իսկ նրանք ասացին, իհարկե, եթե ուժգին թիավարեմ։ Երբ այս խոսակցությունը տեղի ունեցավ, մենք գտնվում էինք երկու ափերի միջև ձգված հետիոտնի կամրջի տակ։ Ես ամբողջ մարմնով ընկա թիերի վրա ու սկսեցի թիավարել։

Հիանալի էի թիավարում։ Ինձ մոտ ստեղծվեց անընդհատ, ռիթմիկ զարկ, որին մասնակցում էին ձեռքերս, ոտքերս ու մեջքս։ Ես թիավարում էի փայլուն ոճով, արագ ու համաչափ։ Ուղեկիցներս ասում էին, որ ուղղակի հաճույք են ստանում ինձ նայելով։ Հինգ րոպե անց, երբ իմ կարծիքով պետք է բավական մոտ գտնվեինք ամբարտակին, շուրջս նայեցի։ Մենք գտնվում էինք նույն կամրջի տակ ճիշտ այնտեղ, որտեղից սկսել էի, իսկ այդ երկու հիմարները քիչ էր մնում ծիծաղից ուշաթափվեին։ Ես, հիմարի պես կաշվիցս դուրս էի գալիս, որպեսզի նավակը մեխված պահեմ կամրջի տակ։ Ոչ, թող հիմա էլ ուրիշները թիավարեն ուժեղ հոսանքին հակառակ։

Մենք թիավարեցինք մինչև Ուոլթոն, որը համեմատաբար մեծ գետափնյա քաղաք է։ Ինչպես մյուս գետափնյա քաղաքների, այնպես էլ Ուոլթոնի միայն մի աննշան մասն է հարում գետին, այնպես, որ նավակից դիտողին թվում է, թե դա ընդամենը կես դյուժին տնակներից կազմված մի գյուղակ է։

Վինձորից և Էդինգթոնից բացի, Լոնդոնի և Օքսֆորդի

միշև չկա մի այլ քաղաք, որը հնարավոր լինի տեսնել գետից։ Մյուսները կարծես թաքնվում են ոլորանի հետևում և գետին են նայում միայն մի փողոցով։ Իմ խորին երախտագիտությունը նրանց, որ այդքան խելամիտ են վարվում և գետափը տրամադրում են անտառներին, դաշտերին ու ջրային կայաններին։

Նույնիսկ Ռեդինգը, թեև ամեն կերպ ձգտում է փչացնել, աղտոտել ու ապականել հնարավորին չափ մեծ տարածություն, բավական բարեհոգի է, որպեսզի աչքից հեռու պահի իր տգեղ դեմքի նշանակալի մասը։

Կեսարը, իհարկե, կանգ է առել նաև Ուոլթոնի մոտ. ճամբար է դրել, ամրություններ է կառուցել և այլն։ Կեսարը գետի մեծ սիրահար էր։ Էլիզաբեթ թագուհին նույնպես եղել է այստեղ։ Ուր էլ գնաք, չեք ազատվի այդ կնոջից։ Կրոմվելը[1] և Բրեդշոուն (ուղեցույց գրքի հեղինակը չէ, այլ դատավոր Բրեդշոուն, որը Չարլզ արքային մահվան դատապարտեց), նույնպես եղել է այստեղ։ Նրանք բոլորը միասին պետք է որ բավական հաճելի ընկերախումբ կազմեին։

Ուոլթոնյան եկեղեցում կովարար կանանց սանձահարելու համար պահվում է երկաթե սանձ։ Հին ժամանակներում դա օգտագործում էին կանանց լեզուները սանձելու համար։ Ներկայումս նման փորձերից հրաժարվել են։ Իմ կարծիքով, դրա պատճառը երկաթի պակասությունն է, իսկ երկաթից բացի, ուրիշ ոչինչ չի կարող բավականաչափ դիմացկուն լինել։

Եկեղեցում կան նաև ուշադրության արժանի մի քանի գերեզմաններ, և ես վախենում էի, որ Հարրիսին դրանցից կտրել չի լինի, սակայն Հարրիսը դրանց մասին չէր էլ մտածում, և մենք շարունակեցինք մեր ճանապարհը։ Կամրջից վեր գետը զարմանալիորեն ոլորուն է դառնում։ Դա գետը գեղատեսիլ է դարձնում, բայց զայրացնում է նրանց, ովքեր թիավարում կամ պարանով քարշում են նավակը, և անվերջ վեճեր են ծագում թիավարի և ղեկակալի միջև։

1. Օլիվեր Կրոմվել (1599—1658) 17-րդ դ. անգլիական բուրժուական հեղափոխության ակտիվ գործիչ, ավելի ուշ հռչակվեց որպես լորդ-պրոտեկտոր և հաստատեց իր միանձնյա դիկտատուրան։

Գետի աջ ափին է գտնվում Օուքլանդս-պարկը։ Դա հայտնի պատմական վայր է։ Հենրի VIII-ը այն խլել է ինչ-ոչ մեկի ձեռքից, — մոռացել եմ թե ում, — և բնակություն հաստատել այնտեղ։ Այդում մի քարայր կա, որի մուտքը վճարովի է և որը իրենից մեծ հետաքրքրություն է ներկայացնում, բայց ես այնտեղ ոչ մի հետաքրքրություն չեմ գտնում։ Ցորքի հանգուցյալ դքսուհին, որն ապրում էր Օուքլանդսում, շներ շատ էր սիրում և մի մեծ ոհմակ էր պահում։ Նա հատուկ գերեզմանոց էր սարքել ովել, որտեղ թաղում էր իր շներին, հիմա այդտեղ մի հիսուն շուն է թաղված և ամեն մեկի վրա գերեզմանաքար է դրված տապանագրով։

Դե ինչ, համարձակվում եմ ասել, որ նրանք արժանի են նման վերաբերմունքի նույնքան, որքան ամեն մի շարքային քրիստոնյա։

Քորուեյ-Սթեյքսի մոտ, Ուոլթոնյան կամրջից հետո առաջին ոլորանը, ճակատամարտ է տեղի ունեցել Կեսարի և Կասսիվելաունուսի[1] միջև։ Կասսիվելաունուսը, սպասելով Կեսարի արշավանքին, գետի մեջ գերաններ էր խփել (և, անկասկած, նախազգուշացումներ էր ամրացրել դրանց վրա)։ Սակայն Կեսարը, չնայած այդ ամենին, անցավ գետը։ Անհնար էր Կեսարին քշել այդ գետից։

Ահա թե հիմա ով էր մեզ պետք առափնյա հողատերերի դեմ պայքարում։

Հալլիֆորդը և Շեփերթոնը գեղեցիկ են գետին հարող հատվածում, սակայն այդ երկու վայրում էլ ոչ մի արտակարգ բան չկա։ Շեփերթոնի գերեզմանատունը մի տապանաքար կա՝ վրան բանաստեղծություն փորագրած, և ես վախենում էի, որ Հարրիսը կցանկանա ափ դուրս գալ և պտտվել դրա շուրջը։ Ես տեսա, թե ինչպիսի տենչանքով էր նա նայում նավամատույցին, երբ մոտենում էինք, և ես հաջողացրի մի ճարպիկ շարժումով նրա գլխարկը ջուրը գցել։ Խառնաշփոթը, որն ստեղծվեց գլխարկը ջրից հանելիս, և Հարրիսի

1. Բրիտոնների ցեղային առաջնորդը։ Նրա գլխավորությամբ Բրիտոնները դիմադրություն ցույց տվեցին Հռոմեացի նվաճողներին (մ. թ. ա. 54թ.)։

զայրույթը իմ անշնորհքության համար, ստիպեցին նրան մոռանալ իր սիրելի տապանաքարերի մասին։

Ուեյբրիջի մոտ, Ուեյը (մի զմայլելի գետակ, որը մինչև Գիլֆորդ նավարկելի է փոքրիկ նավակների համար։ Ես միշտ ցանկացել եմ հետազոտել այդ գետակը, բայց երբեք չի հաջողվել), Բուրնը և Բազինգսթոքյան ջրանցքը միասին են թափվում Թեմզայի մեջ։ Շլյուզը գտնվում է քաղաքի դիմաց, և առաջին բանը, որ մենք տեսանք այնտեղ, Ջորջի բաճկոնակն էր շլյուզի դարպասներից մեկի մոտ։ Ավելի մանրամասն զննումը ցույց տվեց, որ բաճկոնակի միջինը՝ ինքը Ջորջն էր։

Մոնթմորընսին ոռնոց բարձրացրեց։ Ես աղաղակեցի, Հարրիսը գոռաց, Ջորջը թափահարեց գլխարկը և գոռաց ի պատասխան։ Շլյուզի պահակը դուրս վազեց դրագան ձեռքին՝ համոզված, որ մեկն ու մեկը ջուրն է ընկել և զայրացավ, տեսնելով, որ ոչինչ չի պատահել։

Ջորջը ձեռքին մոմլաթի մեջ փաթաթած մի անսովոր իր ուներ։ Այն շրջանաձև էր, մի ծայրը՝ տափակ, ու երկար բռնակ ուներ։

— Դա ի՞նչ է, թավա՞, — հարցրեց Հարրիսը։

— Ոչ, — պատասխանեց Ջորջը աչքերի տարօրինակ փայլով նայելով մեզ, — այս ամառ սա շատ մոդայիկ է։ Բոլորը վերցնում են իրենց հետ գետով ճանապարհորդելիս։ Սա բանջո է։

— Չգիտեի, որ դու բանջո ես նվագում, — մի շնչով վրա տվեցինք Հարրիսը և ես։

— Իսկ ես չեմ նվագում, — պատասխանեց Ջորջը, —բայց ասում են, դա շատ հեշտ է։ Եվ հետո, ես ինքնուսույց եմ գնել։

Գլուխ ինն երրորդ.

Ջորջը աշխատանքի մեջ է ներդրավվում։ Ճոպանի բարբարոսական բնազդները։ Քառաթի նավակի անշնորհակալ վերաբերմունքը։ Նավակը քարշողներ և քարշվողներ։ Նոր զբաղմունք սիրահարների համար։ Տարեց կնոջ տարօրինակ անհետացումը։ Շտապողի մայրը տղա չի բերի։ Նավակը քարշում են աղջիկները։ Ծանր ապրումներ։ Անհետ կորած շլյուզը կամ կախարդված գետը։ Նրաժշտություն։ Մենք փրկված ենք։

Այժմ, երբ Ջորջն արդեն մեզ հետ էր, մենք ստիպեցինք նրան աշխատել։ Ինքնին հասկանալի է, Ջորջը աշխատել չէր ուզում։ Նա պատճառաբանեց, որ չափազանց շատ է աշխատել Սիթիում։ Հարրիսը, որ բնավորությամբ շատ կըտրուկ է ու խղճմտանքից զուրկ, ասաց.

— Ահ, ոչինչ, հիմա էլ փոփոխության համար կաշխատես գետի վրա։ Փոփոխությունը օգտակար է բոլորի համար։

Եթե խղճով դատենք։ (Նույնիսկ այնպիսի խրդճով, ինչպիսին Ջորջինն է), նա չպետք է առարկեր։ Ջորջն առաջարկեց, որ թերևս ավելի լավ կլինի, ինքը մնա նավակում և թեյ պատրաստի, իսկ Հարրիսը և ես ճոպանով քարշենք նավակը, քանի որ թեյ պատրաստելը հոգնեցուցիչ գործ է, իսկ Հարրիսը և ես խիստ հոգնած տեսք ունեինք։ Պատասխանի փոխարեն մենք նրան փոխանցեցինք ճոպանը, որը նա վերցրեց ու դուրս եկավ նավակից։

Ճոպանը ինչ-որ տարօրինակ ու անբացատրելի հատկություն ունի։ Դուք փաթաթում եք այն այնպիսի զգուշությամբ ու խնամքով, կարծես նոր անդրավարտիք եք ծալում և չանցած հինգ րոպե, երբ նորից վերցնում եք, պարզվում է, որ ճոպանը վերածվել է մի սարսափելի, զայրացուցիչ ձևով խճճված կծիկի։

Թող վիրավորական չթվա, բայց ես խորապես համոզված եմ, որ եթե վերցնեք մի ամենասովորական ճոպան, ուղիղ ձգեք դաշտի կենտրոնում և երեսուն աստիճան մեջքով շրջվեք, ապա կտեսնեք, որ այդ ժամանակամիջոցում ճոպանը գալարվել է, խճճվել և ամբողջովին հանգույցներով պատվել, իսկ երկու ծայրերը չգիտես, թե ուր են կորել։

Եվ ստիպված եք կես ժամ շարունակ նստել այդտեղ, խոտերի վրա, և հայհոյելով քանդել խճճվածքը։

Այսպիսին է իմ կարծիքը ճոպանների մասին ընդհանրապես։ Իհարկե, լինում են նաև արժանի բացառություններ, ես չեմ ասում, որ այդպիսիները չկան։ Հնարավոր է, կան ճոպաններ, որոնք պատիվ են բերում իրենց կոչմանը, բարեխիղճ հարգարժան ճոպաններ, որոնք ամենևին չեն երևակայում, թե իրենք հելունագործության համար են ստեղծված, և երբ մենակ են մնում, չեն փորձում վերածվել ուռուցակար անձեռոցիկների։ Ես ասում եմ, որ կարող են լինել նման ճոպաններ, ես սրտանց հավատում եմ, որ գոյություն ունեն այդպիսիները։ Բայց ինձ բախտ չի վիճակվել հանդիպել նրանց։

Որոշեցի մինչև շշյուղին հասնելը, անձամբ զբաղվել մեր ճոպանով։ Թույլ չտվեցի Հարրիսին նույնիսկ մատով դիպչել դրան, քանի որ նա շատ ցրված է։ Ես զգուշորեն փաթաթեցի այն, կապեցի կենտրոնում, ծալեցի և տեղավորեցի նավակի խորքում։ Հարրիսը ամենայն զգուշությամբ բարձրացրեց և հանձնեց Ջորջին։ Ջորջն իր հերթին ամուր բռնեց և իրենից հեռու պահած սկսեց քանդել այնպիսի նուրբ շարժումներով, ինչպես նորածնի բարուր են քանդում։ Սակայն նա մի քանի յարդ էլ չէր քանդել, երբ ճոպանն ավելի շատ վատ գործված ուղեգորգի նմանվեց, քան որևէ այլ բանի։

Միշտ այդպես է լինում, և դա իր ետևից նույնպիսի հետևանքներ է բերում։ Գետափին կանգնած մարդը, որը փորձում է քանդել խճճվածքը, համոզված է, որ ամեն ինչում մեղավորը նա է, ով կծկել է ճոպանը, իսկ երբ մարդ գետափին մի որևէ բան է մտածում, անպայման իր մտքերը բարձրաձայն է արտահայտում։

— Ի՞նչ էիր ուզում սարքել սրանից, ուզում էիր ձկնորսական ցա՞նց հյուսել։ Լավ ես խճճել, խոսք չկա։ Մի՞թե չէիր կարող կարգին փաթաթել, հիմար։

Այդպես անդադար մոթմոթալով, նա կատաղի պայքար է մղում ճոպանի հետ, փռում է գետափին և վազվզում է շուրջը, փորձելով գտնել ծայրը։

Մյուս կողմից, նա, ով փաթաթել է ճոպանը, համոզված է, որ մեղավորը մյուսն է, որը փորձում է քանդել այն։

— Ամեն ինչ կարգին էր, երբ դու վերցրիր, — բարկացած գոռում է նա։ — Ինչու՞ ես առանց մտածելու գործ բռնում։ Քեզ մոտ ամեն ինչ այդպես է ստացվում։ Դու գերանից էլ հանգույց կկապես։

Նրանք այնքան են բորբոքվում, որ քիչ է մնում ճոպանով կախեն մեկը մյուսին։ Անցնում է տասը րոպե, գետափին կանգնած մարդը օրհասական ճիչ է արձակում և կատաղորեն սկսում է պտտվել պարանի շուրջը, փորձում է ուղղել, բռնում է ձեռքն ընկած առաջին կտորն ու քաշում։ Իհարկե, դրանից պարանն ավելի է խճճվում, քան առաջ։ Այդ ժամանակ նրա ընկերը դուրս է գալիս նավակից որպեսզի օգնի նրան, բայց նրանք միայն խանգարում են իրար։ Երկուսն էլ բռնում են պարանի նույն կտորից, սկսում են ձգել տարբեր ուղղություններով և փորձում են գտնել, թե որտեղ է հանգուցված։ Վերջապես քանդում են հանգույցները և շրջվելով դեպի գետը, տեսնում են, որ նավակը ափից հեռացել է ու լողում է ուղիղ դեպի ամբարտակը։

Մի անգամ ես ականատես եմ եղել նման մի դեպքի։ Դա տեղի ունեցավ Բովենիում մի ամպամած առավոտյան։

Մենք հոսանքով ցած էինք լողում և անցնելով փոքրիկ հրվանդանը, ափին երկու մարդ նկատեցինք։ Նրանք ապուշ կտրած միմյանց էին նայում այնպիսի անօգնական ու խղճուկ հայացքով, ինչպիսին ես ոչ մինչ այդ և ոչ էլ դրանից հետո չեմ տեսել մարդկային դեմքին։ Նրանց ձեռքին մի երկար ճոպան կար։ Պարզ էր, որ ինչ-որ բան էր պատահել։ Մենք դանդաղեցրինք ընթացքը և հարցրինք թե բանն ինչ է։

— Մեր նավակն անհետացել է, — պատասխանեցին նրանք վրդովված։ — Մենք դուրս եկանք քանդելու խճճված ճոպանը և երբ վերջացրինք, տեսանք, որ նավակը չկա։

Նրանք ակնհայտորեն վիրավորված էին իրենց նավակի սառը և անշնորհակալ վերաբերմունքից։

Մենք գտանք փախստականին, որը հոսանքով կես մղոն հեռու էր քշվել և թաղվել մնացել էր եղեգների մեջ, ու հանձնեցինք նրանց։ Գրազ կդամ, որ մի ամբողջ շաբաթ նրանք նավակին փախչելու ուրիշ հնարավորություն չտվեցին։

Ես երբեք չեմ մոռանա այդ մարդկանց տեսքը, որոնք ափով այս ու այն կողմ էին վազվզում, փնտրելով իրենց նավակը։

Գետի վրա նավաքարշի հետ կապված շատ ծիծաղաշարժ պատմությունների կարելի է ականատես լինել։ Ավելի հաճախ կարելի է տեսնել, թե ինչպես գետափով գնում են երկուսը՝ ետևից քարշելով նավակը և ինչ-որ բանի մասին աշխույժ զրուցելով։ Իսկ իրենցից հարյուր յարդ հեռավորության վրա գտնվող ուղևորը ապարդյուն բղավում է նրանց, որ կանգ առնեն և թիով խելահեղ փորձեր է անում հասկացնելու, որ աղետ է պատահել։

Գուցե ղեկն է կոտրվել կամ ձողն է տախտակամածից ցած ընկել, կամ գլխարկն է ջուրն ընկել և արագ լողում է հոսանքով վար։ Սկզբում նա համեստորեն և անչափ քաղաքավարի խնդրում է նրանց կանգ առնել։

— Էյ, մի րոպե կանգ առեք, խնդրում եմ, — ուրախ գոռում է նա,— գլխարկս ջուրն ընկավ։

— Էյ, Թոմ, Դիք, չե՞ք լսում, ի՞նչ է, — այս անգամ պակաս հարգալից տոնով։

Այնուհետև.

— Էյ դուք, գրողը ձեզ տանի, էյ, դատարկագլուխ ապուշներ։ Հեյ, կանգ առեք, ես ձեր...

Դրանից հետո նա վեր է թռչում, պտտվում է նավակում, գոռում է դեմքն ամբողջովին կարմրատակած և հայհոյում ինչպես կարող է։ Գետափին կանգնած տղաները կանգ են առնում և ծաղրում են, քարեր են նետում վրան, իսկ նա սրընթաց սլանում է ժամում չորս մղոն արագությամբ և չի կարող դուրս գալ ու մի լավ դաս տալ նրանց։

Նման թյուրիմացություններից կարելի է խուսափել, եթե նրանք, ովքեր քարշում են նավակը, միշտ հիշեն, որ իրենք նավակ են քարշում և երբեմն շուրջը նայեն՝ տեսնելու, թե ինչ վիճակում է իրենց ուղևորը։ Լավ կլինի, որ մի հոգի քարշի նավակը։ Երբ այդ գործը երկուսով են անում, սկսում են շատախոսել և մոռանում են աշխարհում ամեն բան։ Իսկ նավակը, որը քարշելիս շատ քիչ դիմադրություն է ցույց տալիս, չի կարող հիշեցնել նրանց, թե ինչ գործով են զբաղված իրենք։

Ուշ երեկոյան, երբ ընթրիքից հետո զրուցում էինք այդ թեմայի շուրջը, Ջորջը, որպես օրինակ, թե երկու նավաքարշերը որքան մոռացկոտ կարող են լինել իրենց գործն անելիս, մի հետաքրքրաշարժ դեպք պատմեց։

Մի անգամ ինքը երեք ուղեկիցների հետ, այսպես սկսեց Ջորջը, Մեյդենհեդից հոսանքով վեր թիավարում էին մի ծանր բեռնավորված նավակ։ Քուկհեմյան շլյուզից քիչ անց նրանք մի տղամարդ նկատեցին իր ընկերուհու հետ, որ քայլում էին գետափով. երկուսն էլ կլանված էին հետաքրքիր խոսակցությամբ։ Նրանք բռնել էին կարթաձողը, իսկ դրան կապված էր պարանը, որը քարշ էր գալիս նրանց ետևից՝ մի ծայրը ջրում։ Մոտերքում ոչ մի նավակ չէր երևում։ Ինչ-որ ժամանակ այդ պարանից նավակ էր կապված եղել, դա ակնհայտ էր, բայց թե ինչ էր եղել դրա հետ, ինչ սարսափելի ճակատագիր էր բաժին ընկել այդ նավակին և նրա մեջ եղած մարդկանց — առեղծված էր մնում։ Սակայն ինչպիսի դժբախտություն էլ պատահած լիներ, դա ամենևին չէր անհանգստացնում երիտասարդ զույգին, որ քարշում էր նավակը։ Նրանց մոտ էր կարթաձողն ու պարանը, և դա լիովին բավարարում էր նրանց.

Ջորջն այն է, ուզում էր ձայնել նրանց և իմաց տալ, բայց այդ պահին մի պայծառ միտք ծագեց նրա գլխում և նա լռեց։ Դրա փոխարեն կարթաձողով բռնեց և իրեն ձգեց պարանի ծայրը, հետո հանգույց արեցին և հագցրեցին իրենց կայմին։ Դրանից հետո հավաքեցին թիերը, նստեցին նավախելին և վառեցին ծխամորճերը։

Իսկ այն երիտասարդն ու իր ընկերուհին բեռնավորված նավակն ու չորս ծանրամարմին տղամարդկանց քարշեցին մինչև Մարլո։

Ջորջն ասաց, որ մինչ այդ երբեք չէր տեսել, որ մարդու դիմքը այդքան շփոթմունք ու թախիծ արտահայտի, ինչպես այն ժամանակ, երբ, հասնելով շլյուզին, երիտասարդ զույգը համոզվեց, որ վերջին երկու մղոնը քարշել են ուրիշի նավակը։ Ջորջը համոզված է, որ այդ հաճելի կնոջ ներկայությունը փրկեց իրենց, այլապես չէին աղատվի կոպիտ արտահայտություններից։ Կինն առաջինը, ի զարման իրեն, նկա-

տեղ և հուսահատորեն ձեռքերը միացնելով, գլուխը կորցրած զոչեց.

— Օ, Հենրի, որտե՞ղ է մորաքույրը։

— Նրանք գտա՞ն ձեր կնոջը, — հարցրեց Հարրիսը։

Ջորջը պատասխանեց, որ չգիտի։

Քարշողի և քարշվողի միջև փոխադարձ համակրանքի վտանգավոր բացակայության մեկ ուրիշ դեպքի մի անգամ Ջորջը և ես ականատես եղանք Ուոլթոնի մոտ։ Դա այն հատվածում էր, ուր ափաշերտը թեք իջնում է դեպի ջուրը, իսկ մենք հանդիպակաց ափին էինք և դիտում էինք գետը։ Քիչ անց մեր տեսադաշտում մի փոքրիկ նավակ երևաց, որը մեծ արագությամբ քարշում էր մի զորավոր ձի։ Հեծյալը մի փոքրիկ տղա էր։ Նավակի մեջ երազկոտ ու հարմար դիրքերով անխռով մեկնվել էին հինգ տղամարդիկ։ Հատկապես ղեկակալը շատ անխռով տեսք ուներ։

— Կուզենայի, որ նա ձգեր ոչ այն պարանը, — շշնջաց Ջորջը, մինչ նրանք անցնում էին մեր կողքով։

Եվ հենց նույն պահին ղեկակալն այդպես էլ արեց, և նավակը ափ թռավ այնպիսի աղմուկով, կարծես միաժամանակ քառասուն հազար քաթանե սավան պատռեցին։ Տղամարդկանցից երկուսը, զամբյուղը և երեք թիերը ակնթարթորեն դուրս թռան ձախ նավակողից և փռվեցին ափին. մեկուկես րոպե անց, ևս երկուսը դուրս թռան աջ նավակողից և թրմփացին գետնին՝ կարթաձողերի, առագաստների, պարկերի ու շշերի միջև։ Վերջին ուղևորը տասը յարդ առաջ անցավ և ի վերջո դուրս թռավ գլխի վրա։

Դրանից հետո նավակը թեթևացավ և ավելի հեշտ առաջ սլացավ, իսկ տղան իր ձայնի հնարավորության սահմաններում բարձր գոռալով, ստիպում էր ձիուն քառարշավ սլանալ։ Տղամարդիկ նստեցին տեղներում և այքերը հառեցին միմյանց։ Մի քանի վայրկյան անցավ, մինչև նրանք գլխի ընկան, թե ինչ է պատահել իրենց հետ ու սկսեցին զայրացած բղավել տղային, որ կանգնի։ Սակայն վերջինս շտապանց շատ էր տարված իր ձիով, որպեսզի լսեր նրանց։ Մենք հետևում էինք, թե ինչպես են նրանք սլանում տղայի ետևից, մինչև կորան մեր տեսադաշտից։

Չեմ կարող ասել, թե ցավում էի նրանց անհաջողության համար։ Իրականում ես միայն ցանկանում եմ, որ բոլոր այն դեղնակտուց դատարկագլուխները, որոնք սիրում են իրենց նավակը քարշել նման եղանակով, — իսկ այդպիսիները քիչ չեն, — նույնպիսի անհաջողությունների հանդիպեն։ Բացի նրանից, որ վտանգի են ենթարկում իրենց կյանքը, նրանք անցանկալի ու վտանգավոր են դառնում ճանապարհին հանդիպած նավակների համար։ Սլանալով այդպիսի մեծ արագությամբ, նրանք ոչ միայն անհնարին են դարձնում նավակի ղեկավարությունը, այլև թույլ չեն տալիս, որ մյուս նավակները գոնե դուրս գան ճանապարհից։ Նրանց ճոպանը դիպչում է ձեր կայմին և շրջում նավակը, կամ դիպչում է նավակում գտնվող մարդկանց և նրանց ջուրն է գցում, կամ ճանկռոտում դեմքը։ Ամենաճիշտն այն կլինի, որ ամուր կանգնեք ձեր տեղում և պատրաստ լինեք կայմի ներքևի մասով հետ տանել նրանց ձեր նավակից։

Սակայն նավաքարշի հետ կապված դեպքերից ամենատպավորիչն այն է, երբ նավակը քարշում են թույլ սեռի ներկայացուցիչները։ Դա մի ցնցող իրադարձություն է, որը ոչ մեկը չպետք է բաց թողնի։ Ավելի հաճախ երեք աղջիկներ են քարշում. երկուսը վերցնում են ուսապարանը, իսկ երրորդը պտտվում է նրանց շուրջն ու անվերջ քրքջում։ Սովորաբար ամեն ինչ սկսվում է նրանից, որ պարանը փաթաթվում է նրանց ոտքերին ու ստիպված են լինում նստել գետափին և օգնել մեկը մյուսին ազատվելու կապանքներից։ Հետո պարանը փաթաթվում է նրանց պարանոցների շուրջը և քիչ է մնում, ընչահեղձ լինեն։ Վերջիվերջո ամեն ինչ կարգավորվում է, և նրանք սկսում են վազել, իրենց ետևից քարշելով նավակը անչափ վտանգավոր արագությամբ։ Մոտ հարյուր յարդ վազելուց հետո, նրանք, բնականաբար, շնչասպառ են լինում, միանգամից կանգ են առնում և ծիծաղելով թավալվում կանաչների վրա։ Իսկ ձեր նավակը, մինչև գլխի կընկնեք, թե ինչ է կատարվում կամ կհասցնեք վերցնել թիերը, քշվում է մինչև գետի մեջտեղը և պտտվում տեղում։ Իսկ նրանք վեր են կենում ու զարմանում։

— Օ, նայեք, ասում են նրանք, — նավակը գետի մեջտեղն է հասել։

Դրանից հետո որոշ ժամանակ նրանք ինչպես հարկն է

քարշում են նավակը։ Հանկարծ նրանցից մեկի խելքին փչում է քորոցով ամրացնել շրջազգեստը և նրանք զանդաղեցնում են ընթացքը, իսկ նավակը ծանծաղուտի մեջ է խրվում։

Դուք դուրս եք գալիս նավակը հրելու և միաժամանակ բղավում եք, որ այլևս չկանգնեն։

— Ի՞նչ, ի՞նչ է պատահել, — աղաղակում են նրանք ի պատասխան։

— Մի կանգնեք, — համարյա ոռնում եք դուք։

— Ինչ չանե՞նք։

— Մի կանգնեք։ Քայլեք առաջ։ Քա՛յ-լե՛ք։

— Գնա, Էմիլի, տես, թե ինչ են ուզում, — ասում է աղջիկներից մեկը։ Եվ Էմիլին գալիս է իմանալու, թե բանն ինչ է։

— Ձեզ ի՞նչ է պետք, — հարցնում է նա։ — Որևէ բա՞ն է պատահել։

— Ոչ, — պատասխանում եք դուք, — ամեն ինչ կարգին է։ Միայն մի կանգնեք։ Շարժվեք։

— Ինչու՞։

— Երբ կանգ եք առնում, մենք չենք կարողանում ուղղությունը ճիշտ պահել։ Նավակը պետք է միշտ շարժման մեջ լինի։

— Լինի ինչի՞ մեջ։

— Շարժման մեջ։ Դուք պետք է նավակը անդադար շարժման մեջ պահեք։

— Օ՜, շատ լավ։ Ես նրանց կհայտնեմ։ Դե ինչ, լավ ի՞նք քարշում։

— Օ՜, շատ լավ, հիանալի է։ Միայն պետք չէ կանգնել։

— Դա այնքան էլ դժվար չէ։ Ես կարծում էի, թե դա այնքա՞ն ծանր գործ է։

— Օ, ոչ, բավական հեշտ է։ Միայն պետք է անընդհատ քարշել։ Այսքանը։

— Պարզ է։ Տվեք ինձ իմ կարմիր գլխաշորը։ Բարձի տակ է։

Դուք գտնում եք գլխաշորը և մեկնում նրան։ Այդ ընթացքում մյուս աղջիկը խնդրում է իրենն էլ տալ։ Բոլոր դեպքերում նրանք վերցնում են նաև Մերիի գլխաշորը, բայց պարզվում է, որ դա Մերիին պետք չէ և նրանք ետ են բերում ու փոխարինը վերցնում են սանրը։ Այս ամենը տևում է մոտ քսան րոպե։ Հետո աղջիկները նորից գործի են անցնում։ Հաջորդ ոլորանն անցնելիս, նրանք մի կով են տեսնում, և դուք ստիպված դուրս եք գալիս նավակից և ճանապարհից քշում կովին։

Երբ աղջիկներն են նավակը քարշում, ոչ մի րոպե չեք հասցնում ձանձրանալ։

Որոշ ժամանակ անց Ջորջը կարգի բերեց ճոպանը և առանց միջադեպերի մեզ հասցրեց մինչև Փենթոն-Հուք։ Այդտեղ մենք քննարկեցինք գիշերելու կարևոր հարցը։ Որոշեցինք այդ գիշերն անցկացնել նավակում. դրա համար կամ պետք է կանգ առնեինք այդտեղ, կամ էլ Սթեյնզն անցնելուց հետո։ Սակայն գիշերելու պատրաստություն տեսնել հիմա, երբ արևը դեռևս երկնակամարում է, իմաստ չուներ։ Այդ պատճառով էլ որոշեցինք թիավարել ևս երեքուկես մղոն մինչև Ռանիմիդ, որտեղ գետակը խաղաղ է ու անտառածածկ և կարելի է հարմար օթևան գտնել։

Սակայն հետո մենք զղջացինք, որ կանգ չառանք Փենթոն-Հուքի մոտ։ Հոսանքին հակառակ վաղ առավոտյան երեք-չորս մղոն անցնելը հասարակ գործ է, բայց երկար օրվա վերջում դա տանջալից աշխատանք է։ Վերջին մի քանի մղոնն անցնելիս բնապատկերներն այլևս ձեզ չեն հետաքրքրում։ Ոչ խոսելու, ոչ ծիծաղելու ցանկություն չի մնում։ Ամեն կես մղոնը ձեզ ամբողջ երկու մղոն է թվում։ Ձեզ կարողանում հավատալ, որ դեռ այդտեղ եք գտնվում և սկսում եք կասկածել, թե քարտեզն է սխալ։ Եվ երբ, ինչպես ձեզ է թվում, ամենաքիչը տասը մղոն ճանապարհ եք անցել և դեռ շլյուզը չի երևում, դուք սկսում եք լրջորեն անհանգստանալ, որ գուցե ինչ-որ մեկը գողացել է շլյուզը ու փախուստի դիմել։

Հիշում եմ, ինչպես մի անգամ գետի վրա սարսափելի ցնցում ապրեցի (փոխաբերական իմաստով, իհարկե)։ Նավակում մի ջահել օրիորդի հետ էի (մորաքրոջս աղջիկն էր)։ Մենք լողում էինք հոսանքի ուղղությամբ դեպի Գորինգ։ Բավական ուշ էր, և ուզում էինք հնարավորին չափ շուտ տեղ հասնել, համենայն դեպս նա այդպես էր ցանկանում։ Ար-

գեն վեցն անց կես էր, երբ հասանք Բենսոնյան շլյուզին։ Մթնշաղ էր իջնում, և իմ ուղեկցուհին սկսեց անհանգստության նշաններ ցույց տալ։ Նա ասաց, որ ընթրիքին պետք է անպայման տանը լինի։ Ես ասացի, դա այնպիսի իրադարձություն է, որից ինքս էլ չէի ցանկանա ուշանալ և հանեցի քարտեզը, որ մոտս էի պահում, տեսնելու, թե որքան ճանապարհ էր մնում անցնելու։ Պարզեցի, որ ընդամենը մեկուկես մղոն էր մնացել մինչև հաջորդ՝ Ուոլլինգֆորդյան շլյուզը, իսկ այնտեղից մինչև Քլիվ հինգ մղոն է։

— Ամեն ինչ կարգին է, — ասացի։ — Մինչև ժամը յոթը կլինենք հաջորդ շլյուզի մոտ, իսկ հետո կմնա ընդամենը մեկը, և վերջ։

Եվ սկսեցի ոգևորությամբ թիավարել։

Անցանք կամուրջը, և ես շուտով հարցրեցի արդյոք շլյուզը երևում է։ Նա պատասխանեց. «Ոչ, ոչ մի շլյուզ էլ չի երևում»։ Ես ասացի՝ ահ, և շարունակեցի թիավարել։ Հինգ րոպե անց, կրկին խնդրեցի նրան նայել։

— Ոչ, — ասաց նա, — շլյուզի ոչ մի նշան չեմ տեսնում։

— Դու... Դու համոզվա՞ծ ես, որ գիտես, թե ինչ բան է շլյուզը, — անվճռականորեն հարցրեցի ես, չցանկանալով վիրավորել նրան։

Սակայն նա ամենևին չվիրավորվեց, այլ առաջարկեց, որ ինքս համոզվեմ։ Ես ցած դրեցի թիերը և շուրջս նայեցի։ Մթնշաղի մեջ թաղված գետը երևում էր մեկ մղոն հեռավորության վրա, բայց շլյուզի հետքն անգամ չկար։

— Իսկ գուցե մոլորվե՞լ ենք, — հարցրեց իմ ուղեկցուհին։

Իմ կարծիքով, դա անհնար էր, թեև գուցե սխալմամբ թեքվել էինք դեպի վտակը, իսկ գուցեև մոտենում էինք ջրվեժի՞ն։

Այս միտքը նրան ամենևին չմխիթարեց, ու նա սկսեց լաց լինել։ Նա ասաց, որ մենք երկուսով էլ կխեղդվենք, որ ասված պատժել է իրեն այն բանի համար, որ եկել է ինձ հետ։

Իմ կարծիքով դա չափազանց խիստ պատիժ կլիներ, բայց իմ մորաքրոջ աղջիկը այլ կերպ էր մտածում և հույս ուներ, որ գոնե երկար չենք տանջվի։

Ես փորձեցի հանգստացնել նրան ու համոզել, որ լավատեսորեն նայի այդ ամենին։ Հավանաբար ես այնքան արագ

չէի թիավարում, որքան կարծում էի, և գուցե հիմա արդեն կհասնենք շլյուզին ու ես թիավարեցի ևս մեկ մղոն։

Հետո արդեն ինքս էլ սկսեցի նյարդայնանալ։ Քարտեզի վրա պարզ նշված էր. Ուոլլինգֆորդյան շլյուզ, դրանից մեկուկես մղոն ներքև՝ Բենսոնյան շլյուզ։ Դա լավ, հուսալի քարտեզ էր և, բացի դրանից, ես ինքս հիշում էի այդ շլյուզը։ Երկու անգամ եղել եմ այնտեղ։ Որտե՞ղ էինք մենք։ Ի՞նչ կարող էր պատահած լինել։ Նույնիսկ սկսեցի մտածել, որ գուցե այս ամենը երազ է, իրականում ես քնած եմ իմ անկողնում, ուր որ է կարթնանամ և ինձ կասեն, որ արդեն ժամը տասն անց է։

Ես հարցրեցի մորաքրոջս աղջկան՝ արդյոք նրան չի թվում, որ այս ամենը երազ է, իսկ նա պատասխանեց, որ ինքն էլ էր ուզում նույն հարցը տալ։ Հետո մենք ցանկացանք գուշակել, արդյոք երկուսս էլ քնա՞ծ ենք և, եթե այդպես է, ապա մեզնից ո՞վ էր, որ երազ էր տեսնում և ո՞վ էր երազը։ Դա անչափ հետաքրքիր էր։

Ես դեռ շարունակում էի թիավարել, սակայն շլյուզը ոչ մի տեղ չէր երևում։ Գիշերվա կուտակվող ստվերների տակ գետն ավելի ու ավելի մռայլ ու խորհրդավոր էր դառնում և շրջապատում ամեն ինչ թվում էր առեղծվածային ու արտասովոր։ Ես սկսեցի մտածել ոգիների ու մահվան հրեշտակների, խաբուսիկ կրակների և այն մեղավոր աղջիկների մասին, որոնք ողջ գիշեր նստում են ժայռերին և հմայելով մարդկանց, շիղում են ճանապարհից, գցում են ջրապտույտների մեջ ու կործանում։ Սկսեցի զղջալ, որ ավելի բարի չեմ եղել և ավելի շատ աղոթքներ չեմ սովորել։ Ու հանկարծ, այս մտորումների մեջ լսեցի «նա հագնված էր» երգի օրհնյալ հնչյունները, որ բավական անհաջող նվագում էին հարմոնի վրա, ու հասկացա, որ փրկված ենք։

Սովորաբար հարմոնի հնչյունները այնքան էլ չեն հիացնում ինձ, բայց, օ՜, որքան զեղեցիկ թվացին մեզ երաժշտության հնչյունները այն ժամանակ, շա՜տ, շատ ավելի զեղեցիկ, քան Օրֆեոսի ձայնը կամ Ապոլլոնի տավղի նվագը, կամ նման մի այլ բան։ Երկնային երաժշտությունը, այն ժամանակվա մեր նյարդերի դրության պայմաններում, միայն ավելի շատ կահարեկեր մեզ։ Սրտաշարժ, ճշտորեն կա-

տարվող երաժշտությունը մենք կընդունեինք, որպես անդրշիրիմյան աշխարհից ուղարկված նախազգուշացում և հույսներս լրիվ կկտրեինք։ Բայց «նա հագնված է» երգին նվագակցող խոպոտ հնչյունների մեջ միայն մարդուն հատուկ և հանգստացուցիչ ինչ-որ բան կար։

Քաղցրիկ հնչյունները ավելի էին մոտենում, և շուտով նավակը, որտեղից դրանք լսվում էին, մեր կողքին էր։

Նավակում գյուղական պատանիների ու աղջիկների մի խումբ էր, որոնք դուրս էին եկել զբոսնելու լուսնի լույսի ներքո (լուսին չկար, բայց դա նրանց մեղքով չէր)։ Կյանքումս երբեք չեմ հանդիպել այդքան հմայիչ ու սիրալիր մարդկանց։ Ես ձայն տվեցի նրանց և հարցրեցի, չե՞ն կարող ասել, թե ինչպես հասնենք Ուոլլինգֆորդյան շլյուզ և բացատրեցի, որ արդեն երկու ժամ է, ինչ փնտրում ենք այն։

— Ուոլլինգֆորդյան շլյու՞զ, — պատասխանեցին նրանք։— Ասածս սիրույն, սըր։ Արդեն մի տարի է, ինչ դրա հետ հաշիվները մաքրել են։ Հիմա Ուոլլինգֆորդյան շլյուզ այլևս գոյություն չունի, սըր։ Դուք Քլիվի մոտ եք։ Թող անիծվեմ ես, Բիլլ, այս ջենտլմենը Ուոլլինգֆորդյան շլյուզն է փնտրում։

Այդպիսի բան մտքովս չէր անցել։ Ես ուզում էի գրկել բոլորին ու օրհնել նրանց, բայց հոսանքը չափազանց արագ էր, որպեսզի նման բան թույլ տար, այնպես որ ես ստիպված էի բավարարվել պարզապես սառը շնորհակալական խոսքերով։

Մենք նորից ու նորից շնորհակալություն հայտնեցինք։ Ասացինք, որ հիանալի գիշեր է, նրանց հաճելի զբոսանք ցանկացանք։ Ես կարծեմ նույնիսկ նրանց բոլորին մի շաբաթով ինձ մոտ հրավիրեցի, իսկ մորաքրոջս աղջիկն ասաց, որ իր մայրը անչափ ուրախ կլինի տեսնել նրանց։ Մենք երգեցինք զինվորների քայլերգը «Ֆաուստից» և ի վերջո հաստատեցինք ընթրիքին տանը լինել։

Գլուխ տասներորդ

Մեր առաջին գիշերը։ Բրեզենտի ատկ։ Օգնության հայցում։ Ինչպես հաղթահարել թեյնիկների համառությունը։ Ընթրիք։ Ինչպես մարդ իրեն գգա բարեկործ։ Պահանջվում է հարմարավետ, լավ լորացված, անմարդաբնակ կղզի, ցանկալի է խաղաղ օվկիանոսի հարավում։ Զվարճալի պատմություն, որ պատահել է Ջորջի հոր հետ։ Անհանգիստ գիշեր։

Հարրիսն ու ես սկսեցինք մտածել, որ գուցե Բել-Ուիրյան շլյուզի հետ էլ հաշիվները մաքրել են նույն եղանակով։ Ջորջը պարանով քարշեց մեզ մինչև Սթեյնը, և այնտեղ մենք փոխարինեցինք նրան։ Թվում էր, թե հիսուն տոննա ծանրություն ենք քարշ տալիս և արդեն քառասուն մղոն ճանապարհ ենք անցել։ Ժամը յոթն անց կեսին տեղ հասանք, բոլորս տեղավորվեցինք նավակում և թիավարեցինք դեպի ձախ ափը, հարմար տեղ փնտրելով նավակը կանգնեցնելու համար։

Սկզբում որոշել էինք գիշերելու համար կանգ առնել Մեծ Խարտիա կղզու մոտ, — մի գեղեցիկ անկյուն, որտեղ գետը ոլորապտույտ հոսում է հարթ, կանաչապատ դաշտավայրով, — և գիշերել այն գեղատեսիլ, փոքրիկ գետախորշերից մեկում, որոնցից այնքան շատ կան այդ կղզյակի շուրջը։ Սակայն, չգիտես ինչու, հիմա մենք այնպես չէինք ձգտում գեղեցիկ գեղատեսիլ վայրերը, ինչպես օրվա սկզբում։ Այդ գիշեր մեզ լիուլի կբավարարեր նույնիսկ ջրի մի փոքրիկ հատվածը ածուխի բեռնանավի և գազի հանքավայրի միջև։ Բնապատկերները մեզ չէին գրավում։ Մենք միայն ուզում էինք ընթրել ու պառկել քնելու։ Սակայն, այնուամենայնիվ, թիավարեցինք մինչև փոքրիկ հրվանդանը, որը կոչվում է «Պիկնիկների հրվանդան» և մի շատ հաճելի անկյուն գտանք հսկայական ծփիի ներքո, որի տարածված արմատներից էլ կապեցինք մեր նավակը։

Այնուհետև որոշեցինք ընթրել (առանց այն էլ ժամանակը խնայելու համար չէինք թեյել), բայց Ջորջն ասաց՝ ոչ, ավելի լավ կանենք, քանի դեռ չի մթնել և կարող ենք տեսնել թե ինչ ենք անում, ամրացնենք բրեզենտը։ Հետո, ասաց նա,

երբ աշխատանքը կավարտենք, հանգիստ սրտով կնստենք ընթրելու։

Սակայն դա ավելի շատ աշխատանք էր պահանջում, քան մեզնից մեկնումեկը կարող էր պատկերացնել։ Տեսականորեն դա այնքան պարզ էր թվում։ Վերցնում ենք կրիկետի դարպասների նման երկաթե աղեղնակներ, տեղադրում ենք նավակի շուրջը, դրանց վրա ձգում ենք բրեզենտն ու ամրացնում։ Կարծում էինք, որ այդ ամենը մեզնից տասը րոպեից ավել չի խլի։

Սակայն մենք շարաչար սխալվեցինք։

Մենք վերցնում էինք աղեղնակները և տեղադրում այդ նպատակով պատրաստված փորվածքների մեջ։ Ձեք կարող պատկերացնել, թե դա որքան վտանգավոր գործ է, և հիմա, վերհիշելով այդ ամենը, զարմանում եմ, որ մենք բոլորս էլ ողջ ու առողջ ենք և դեռ կարողանում ենք պատմել այդ մասին։ Դրանք աղեղնակներ չէին, դրանք իսկական շարքեր էին։ Սկզբում ոչ մի կերպ չէին հարմարվում փորվածքներին, այնպես որ ստիպված ցատկում էինք դրանց վրա, ոտքով հարվածում կամ խփում կարթաձողով և երբ վերջապես մի կերպ ներս էինք խցկում, պարզվում էր, որ դրանք տվյալ փորվածքի համար չէին նախատեսված և ստիպված կրկին դուրս էինք քաշում։

Սակայն հիմա էլ դուրս չէին գալիս, մինչև մեզանից երկուսը հինգ րոպե շարունակ մարտի չէին բռնվում նրանց հետ։ Հետո հանկարծակի դուրս էին թռչում և փորձում էին մեզ ջուրը նետել ու խեղդել։ Այդ աղեղնակների կենտրոնում կեռեր կային, և երբ շրջվում էինք, դրանք ծակում էին մեր փափուկ տեղերը։ Ու մինչ մենք պայքար էինք մղում աղեղնակի մի մասի հետ և փորձում էինք ստիպել նրան կատարելու իր պարտականությունը, մյուս մասը դավաճանաբար թիկունքից հարձակման էր անցնում և հարված հասցնում մեր գլխին։

Վերջապես, մենք դրանք խփեցինք իրենց տեղերում և մնաց ծածկն ամրացնելը։ Ջորջը բաց արեց բրեզենտի փաթեթը և մի ծայրն ամրացրեց նավակի քթամասում։ Հարրիսը կանգնել էր նավակի միջնամասում, որպեսզի վերցներ Ջորջից փաթեթը և փոխանցեր ինձ, իսկ ես կանգնել էի նավա-

խելին՝ պատրաստ ընդունելու փաթեթը։ Բավական ժամանակ անցավ, իսկ ես դեռ չէի ստացել իմ ծայրը։ Ջորջը հաջողությամբ ամրացրեց իր ծայրը, բայց Հարրիսի համար այդ աշխատանքը նորություն էր, և նա ամեն ինչ փչացրեց։

Թե ինչպես դա նրան հաջողվեց, չգիտեմ, ասենք նա ինքն էլ չկարողացավ բացատրել։ Սակայն, ինչ-որ առեղծվածային ուժերի ներգործության տակ, տասը րոպե տևող գերմարդկային ջանքերից հետո նա հաջողացրեց իրեն ամբողջ հասակով մեկ փաթաթել բրեզենտի մեջ։ Այնպես ամուր էր փաթաթվել ու ծալվել, որ չէր կարողանում դուրս պրծնել։ Նա, իհարկե, հուսահատ ճիգեր էր անում իր ազատության համար (յուրաքանչյուր անգլիացու բնածին իրավունքը) և պայքարի ընթացքում (ես դա հետո իմացա) ցած է գցում Ջորջին, ու վերջինս, հայհոյելով Հարրիսին, սկսում է ի՛նքը պայքարել և նույնպես վերջնականապես խճճվում ու փաթաթվում է բրեզենտի մեջ։

Այն ժամանակ ես այդ մասին ոչինչ չգիտեի։ Բացարձակապես չէի հասկանում թե ինչ էր կատարվում։ Ինձ պատվիրել էին կանգնել ու սպասել, մինչև ստանամ բրեզենտը, և ես ու Մոնթմորենսին կանգնել ու խոնարհաբար սպասում էինք։ Մենք նկատում էինք, որ բրեզենտը ուժգնորեն և մեծ հաճախականությամբ ցնցվում ու շուռումուռ էր գալիս, բայց կարծում էինք, որ այդպես էլ պետք է լինի և չէինք միջամտում։ Լսում էինք նաև նրանց խուլ ձայները բրեզենտի տակից և ենթադրում էինք, որ այդ աշխատանքը առանց գլխացավանքի գլուխ չի գալիս։ Այսպիսով, որոշեցինք սպասել, մինչև նրանք կհանդարտվեն, որից հետո կմիանանք նրանց։

Սպասեցինք որոշ ժամանակ, սակայն ամեն ինչ կարծես ավելի ու ավելի էր բարդանում։ Վերջապես նավակի կողամասում պատուտակաձև շարժումով հայտնվեց Ջորջի գլուխը։

— Օգնիր մեզ, վերջապես, — խոսեց Ջորջի գլուխը։ — Մենք այստեղ շնչահեղձ ենք լինում, իսկ դու մումիայի պես ցցվել ես այդտեղ։ Տիմա՛ր։

Ես երբեք չեմ կարողացել սառնասիրտ լինել, երբ ինձնից օգնություն են հայցում։ Այնպես որ նրանց օգնեցի դուրս գալ բրեզենտի տակից և դա ճիշտ ժամանակին էր, քանի որ Հարրիսի դեմքը համարյա ամբողջովին սևացել էր։

Դրանից հետո մենք դեռ մի կես ժամի չափ չարչարվեցինք, մինչև ամեն ինչ կարգի բերեցինք և սկսեցինք ընթրիքի պատրաստություն տեսնել։ Թեյնիկը դրեցինք սպիրտայրոցի վրա, նավակի քթամասում և, ձեռացնելով իբր դա չենք նկատում, անցանք նավախել՝ ուտելիքները հանելու։

Գետի վրա, եթե ուզում եք, թեյնիկի ջուրը եռա, միակ միջոցն այն է, որ թեյնիկը չմանա, որ անհամբերությամբ սպասում եք իրեն։ Հակառակ դեպքում նա նույնիսկ չի թշշա։ Լավ կանեք հեռանաք և սկսեք ուտել, կարծես չեք էլ պատրաստվում թեյ խմել։ Կարիք չկա նույնիսկ նայել նրա կողմը։ Այդ ժամանակ կլսեք, թե ինչպես է ձայնը գլուխը գցել, կարծես աղաչելով, որ անմիջապես իրենից թեյ պատրաստեք։

Իսկ եթե շատ եք շտապում, ապա սկսեք բարձրաձայն խոսել միմյանց հետ, իբր թեյ չեք սիրում և ամենևին էլ չեք պատրաստվում թեյելու։ Դուք կանգնում եք թեյնիկի մոտ, այնպես, որ նա կարողանա լսել ձեզ և զոռում եք. «Ես թեյ չեմ ուզում, իսկ դո՞, Ջորջ։ Եվ Ջորջը նույնպես գոռալով պատասխանում է. «Օ՜, ոչ։ Ես թեյ չեմ սիրում։ Դրա փոխարեն լիմոնադ կխմենք։ Թեյը դժվարամարս է»։ Դրանից հետո թեյնիկի ջուրը այնպես է խլթխլթում, որ սպիրտայրոցի բոցը մարում է։

Մենք օգտվեցինք այս անմեղ խորամանկությունից և արդյունքն այն եղավ, որ մինչև ամեն ինչ կպատրաստեինք, թեյը մեզ էր սպասում։ Վառեցինք լապտերը և նստեցինք ընթրելու, որի կարիքը խիստ զգում էինք։

Երեսունհինգ րոպե շարունակ նավակի վրա մի ուրիշ հնչյուն չէր լսվում, բացի ամանեղենի և դանակ-պատառաքաղների չխկչխկոցից ու շորս զույգ ծնոտների չփչփոցից։ Երեսուն րոպե անց Հարրիսն ասաց՝ օֆ, հանեց իր տակից ձախ ոտքն ու փոխարենը դրեց աջը։ Հինգ րոպե անց, Մոնթմորընսին, մեր ճանապարհորդության ընթացքում առաջին անգամ, գոհունակության նշաններ ցույց տվեց. թավալվեց մի կողքի վրա և տարածեց ոտքերը։ Հետո ես ասացի՝ օֆ, և գլուխս ետ գցեցի՝ խփելով աղեղնակներից մեկին, բայց ուշադրություն չդարձրեցի։ Ես նույնիսկ չհայհոյեցի։

Որքան լավ է, երբ մարդ կուշտ է լինում։ Որքան գոհ է

լինում իրենից ու աշխարհից։ Նման փորձ ունեցողները պնդում են, որ ճիշտ է, մաքուր խիղճը մարդուն երջանիկ ու գոհ է դարձնում, բայց լիքը ստամոքսը այդ գործը նույնպես վատ չի կարգավորում, բացի դրանից ավելի էժան է նստում ու ավելի հեշտ է ձեռք բերվում։ Մարդ այնքա՞ն ներողամիտ և մեծահոգի է դառնում սննդարար և դյուրամարս ճաշից հետո, այնքա՞ն ազնվասիրտ ու բարեհոգի։

Զարմանալի է, թե մարսողական օրգանները ինչպես են իշխում մեր բանականության վրա։ Մենք չենք կարող ո՛չ աշխատել, ո՛չ մտածել, մինչև մեր ստամոքսը թույլ չտա։ Նա է թելադրում մեր զգացմունքներն ու կրքերը։ Ձվից ու կրծքամսից հետո ասում է՝ գործիր։ Բիֆշտեքսից և պորտերից հետո հրամայում է՝ քնիր։ Մի բաժակ թեյից հետո (յուրաքանչյուր բաժակին երկու լիքը գդալ և երեք բոպեից ավել լցողնել), ուղեղին ասում է՝ հիմա վեր կաց և ցույց տուր, թե ինչի ես ընդունակ. եղիր պերճախոս, խորամիտ ու նրբանկատ. բնությանն ու մարդուն նայիր պարզ աչքերով, բաց արա պրպտող մտքի ճերմակ թևերը, ինչպես աստվածանման ոգի ճախրիր աշխարհի վրա, վառվող աստղերի երկար շարքերի միջով սավառնիր դեպի հավերժության դարպասները։

Տաք, կաթնահունց բլիթներից հետո այն ասում է՝ եղիր բութ ու անհոգի, ինչպես անասունը դաշտում, մի անուղեղ, հլու-հնազանդ կենդանի, որին ոչ երևակայությունը, ոչ հույսը, ոչ վախը, ոչ կյանքը չեն կարող կենդանություն հաղորդել։ Եվ վերջապես, բավական քանակությամբ բրենդիից հետո այն ասում է՝ հիմա արի, հիմարիկ, ծիծաղիր ու թավալգոր տուր, այնպես արա, որ ընկերներդ ծիծաղեն, անհեթեթ արարքներ թույլ տուր ու անկապ հնչյուններ արձակիր, ցույց տուր, թե որքան անօգնական ու ցանցառ է դառնում խեղճ մարդ արարածը, որի միտքն ու կամքը խեղդվել են մի քանի կում ալկոհոլում։

Մենք ոչ այլ ինչ ենք, եթե ոչ մեր ստամոքսի հլու-հնազանդ ստրուկները։ Մի ձգտեք բարոյականության և արդարամտության, բարեկամներս, ուշադիր հետևեք ձեր ստամոքսին, խնամքով սնեք այն։ Միայն այն ժամանակ առատությունը և բավարարվածությունը կիշխեն ձեր սրտին,

առանց հատուկ ջանքերի, և դուք կդառնաք լավ քաղաքացի, սիրող ամուսին և քնքուշ հայր, ազնիվ ու աստվածավախ անձնավորություն։

Ընթրիքից առաջ Ջորջը, Հարրիսը և ես մարտականորեն էինք տրամադրված, դյուրաբորբոք էինք և անտրամադիր։ Ընթրիքից հետո նստել և ժպիտի ճառագայթներ էինք նվիրում միմյանց, նույնիսկ շանն էինք լայնորեն ժպտում։ Մենք սիրում էինք միմյանց, սիրում էինք բոլորին։ Հարրիսը քայլելիս տրորեց Ջորջի կոշտուկը։ Եթե դա պատահեր ընթրիքից առաջ, Ջորջը կաճապարեր իր ցանկություններն արտահայտել Հարրիսի հետագա ճակատագրի վերաբերյալ այս և հանդերձյալ աշխարհում, որից կսարսռար ամեն մի բանական մարդ։

Սակայն հիմա նա միայն ասաց՝ զգույշ, ծերուկ, կոշտուկներս ես տրորում։

Իսկ Հարրիսը, փոխանակ բարկանալու և ասելու, որ անհնար է չտրորել Ջորջի ոտքի որևէ մասը, եթե մարդ ստիպված է քայլել նրանից ընդամենը տասը յարդ հեռավորության վրա և կամ կառաջարկեր, որ Ջորջը իր այդ հսկայական ոտքերով թող երբեք սովորական չափսերի նավակ չխցկվի, կամ խորհուրդ կտար ոտքերը տախտակամածից ցած կախել, ինչպես նա կասեր ընթրիքից առաջ, հիմա ասաց՝ ներողություն եմ խնդրում, ծերուկ, հուսով եմ շատ չցավեցրի։ Իսկ Ջորջը պատասխանեց՝ ամենևին, դա իր մեղքով էր, իսկ Հարրիսն ասաց՝ ոչ, ինքն էր մեղավոր։

Այնքա՞ն հաճելի էր նրանց լսելը։

Մենք վառեցինք մեր ծխամորճերը և նստեցինք՝ դիտելով խաղաղ գիշերը։

Ջորջը ասաց, թե ինչու մենք միշտ չէ, որ կարողանում ենք այդպիսին լինել. հեռու մնալ մեղավոր ու դայթակղիչ աշխարհից, ապրել խելամիտ ու անխռով կյանքով, բարիք գործել։ Ես ասացի, որ ինքս հաճախ ձգտել եմ դրան, և սկսեցինք քննարկել, թե հնարավոր չէ՞ր արդյոք, որ շորսով հեռանայինք մի որևէ հարմարավետ, անմարդաբնակ կղզի և ապրեինք այնտեղ, բնության գրկում։

Հարրիսն ասաց, որքանով իրեն հայտնի է, անմարդաբնակ կղզիների միակ թերությունն այն է, որ այնտեղ շատ

խոնավ է. Ջորջն ասաց՝ ոչ, եթե ինչպես հարկն է շորացնեն, կարելի է։

Հետո մենք խոսեցինք շորացման մասին, և դա Ջորջին հիշեցրեց մի զվարճալի պատմություն, որ պատահել էր իր հոր հետ։ Նրա հայրը մի ուրիշ երիտասարդի հետ ճանապարհորդում էր Ուելսով ու մի անգամ գիշերելու համար կանգ են առնում մի փոքրիկ պանդոկում։ Այնտեղ մի քանի ուրիշ կենվորներ էլ են լինում, և երեկոյան անցկացնում են նրանց հետ։

Երեկոն շատ ուրախ է անցնում, ու նրանք նստում են մինչև ուշ գիշեր։ Երբ գնում են քնելու, նրանք (Ջորջի հայրը այն ժամանակ շատ ջահել էր) մի թեթև գինով են լինում։ Ջորջի հայրը և նրա ընկերը պետք է քնեին նույն սենյակում, բայց տարբեր մահճակալների վրա։ Նրանք վերցնում են մոմը և բարձրանում ննջարան։ Երբ սենյակ են մտնում, մոմը դիպչում է պատին, մարում է և ստիպված են լինում հանվել ու իրենց մահճակալները փնտրել մթության մեջ։ Այս ամենը նրանք հաջողությամբ են անում, սակայն առանձին մահճակալներում պառկելու փոխարեն, երկուսով էլ, բանից անտեղյակ պառկում են միևնույն մահճակալին. նրանցից մեկը գլուխը դնում է բարձին, մյուսը բարձրանում է մահճակալի հակառակ ծայրից և ոտքերը դնում նույն բարձին։

Մեկ րոպե տևող լռությունից հետո Ջորջի հայրն ասում է.

— Ջո։

— Ի՞նչ է պատահել, Թոմ, — հարցնում է Ջոյի ձայնը մահճակալի հակառակ ծայրից։

Իմ անկողնում մարդ կա, — ասում է Ջորջի հայրը, — ահա, նրա ոտքերը բարձի վրա են։

— Տարօրինակ է, Թոմ, — պատասխանում է մյուսը, — թող անիծվեմ, թե իմ անկողնում էլ մարդ չկա։

— Ի՞նչ ես մտադիր անել, — հարցնում է Ջորջի հայրը։

— Ես նրան հիմա ցած կգլորեմ, — պատասխանում է Ջոն։

— Ես նույնպես, — խիզախորեն վրա է բերում Ջորջի հայրը։

Կարճատև պայքարից հետո երկու ծանր մարմիններ թրմփում են հատակին, և մի աղերսալի ձայն ասում է.

— Լսիր, Թոմ։

— Հը՛։

— Ճիշտն ասած, իմ կողքինն ինձ ցած գլորեց։

— Իմը նույնպես։ Գիտե՞ս, այս պանդոկը ինձ այնքան էլ դուր չի գալիս, իսկ քե՞զ։

— Ինչպե՞ս էր կոչվում այդ պանդոկը, — հարցրեց Հարրիսը։

— «Խոզ և սուլոց», — պատասխանեց Ջորջը, — հետո՞ ինչ։

— Ոչինչ, նշանակում է դա ուրիշ է, — պատասխանեց Հարրիսը։

— Ի՞նչ ես ուզում ասել, — հետաքրքրվեց Ջորջը։

— Շատ հետաքրքիր է, — փնթփնթաց Հարրիսը, — ճիշտ նույնպիսի դեպք պատահել է իմ հոր հետ նույնպիսի գյուղական պանդոկում։ Ես հաճախ էի լսում նրանից այդ պատմությունը։ Մտածեցի, որ գուցե սա նույն պանդոկն է։

Այդ գիշեր մենք պառկեցինք քնելու ժամը տասին։ Կարծում էի, թե լավ կքնեմ քանի որ հոգնած էի, բայց սխալվում էի։ Որպես կանոն, ես հանվում եմ, գլուխս դնում եմ բարձին և հետո որևէ մեկը թակում է դուռը և ասում, որ արդեն առավոտյան ժամը ութն անց կես է, բայց այս գիշեր կարծես ամեն ինչ հակառակ էր։ Շրջապատի փոփոխությունը, նավակի կոշտությունը, անհարմար դիրքը (ես պառկած էի ոտքերս դրած մի նստարանին, իսկ գլուխս՝ մյուսին), ջրի ճողփյունը նավակի շուրջը և տերևների սոսափյունը, խռովում էին հանգիստս ու չէին թողնում քնել։

Ի վերջո մի քանի ժամ քնեցի, բայց հետո նավակի ինչ-որ մի մասը, որը կարծես աճել էր գիշերվա ընթացքում, քանի որ այն իսկապես չկար, երբ մենք ճամփա ընկանք և առավոտյան կողմ անհետացավ, անընդհատ ծակում էր մեջքս։ Մի որոշ ժամանակ քնեցի և երազումս տեսա, իբր մի սովերեն եմ կուլ տվել և ինչ-որ մարդիկ ուզում են մեջքիս գայլիկոնով անցք փորել, որպեսզի հանեն դրամը։ Ես մտածեցի, որ դա շատ անքաղաքավարի է նրանց կողմից և ասացի, որ թույլ տան պարտք մնամ այդ սովերենը և նրանց

հանձնեմ ամսվա վերջին։ Բայց նրանք ինձ չէին լսում և ասացին, որ լավ կլինի հիմա ստանալ, որովհետև հակառակ դեպքում ահագին տոկոսներ կավելանան։ Քիչ անց ես խիստ դայրացա և ասացի, թե ինչ եմ մտածում նրանց մասին, և նրանք գայլիկոնով այնպես տանջալիորեն պտտեցին, որ ցավից վեր թռա։

Նավակում տոթ էր, և գլուխս սկսեց ցավել։ Մտածեցի, գուցե քայլե՞մ գիշերային զով օդում։ Հագա, ինչ որ ձեռքս ընկավ. մի հագուստն իմն էր, մյուսը՝ Ջորջինը կամ Հարրիսինը, և բրեզենտի տակից դուրս սողացի ափ։

Հիանալի գիշեր էր։ Լուսինը մայր էր մտել և լուռ երկիրը թողել աստղերի հետ մենակ։ Թվում էր, թե լռության և կատարյալ խաղաղության մեջ, երբ մենք՝ նրա զավակները, քնած ենք, աստղերը, մարդկային ականջի համար անընկալելի ու խորունկ ձայնով, զրուցում են նրա հետ ինչ-որ զորեղ գաղտնիքների մասին։ Նրանք ահաբեկում են մեզ, այդ տարօրինակ աստղերը, այդքան սառը, այդքան ջինջ։ Մենք կարծես մանուկներ լինենք, որ ոտք ենք դրել աղոտ լուսավորված թնդաձայն արձագանքող կամարների տակ, որոնք հովանի են անում աղոտ լույսերի երկար շարքին, մեր հայացքը վեր ենք բարձրացնում հուսալով ու վախենալով այնտեղ որևէ ահաբեկող բան տեսնել։

Եվ այնուհանդերձ թվում է, գիշերը լի է ուժով և հանգստությամբ։ Մեծ գիշերվա ներկայությամբ մեր աննշան դառնությունները ամաչելով ետ են ընկրկում։ Օրն այնքան լի էր հոգսերով, մեր սրտերը լի են շարությամբ ու դառը մտքերով, իսկ աշխարհը թվում է դաժան ու անարդար։ Գիշերը անսահման սիրասուն մոր նման զգուշորեն ափը դնում է մեր այրվող ճակատին, շրջում է մեր արցունքոտված դեմքը դեպի իրեն ու ժպտում է։ Ու, թեև ոչինչ չի ասում, սակայն մենք հասկանում ենք, թե ինչ էր ուզում ասել, մեր այրվող ու շառագունած այտը սեղմում ենք նրա կրծքին ու ցավն անցնում է։

Երբեմն մեր վիշտն այնքան խորն է ու անեղծ, որ ոչ մի լեզվով հնարավոր չէ արտահայտել, և մենք լուռ կանգնում ենք նրա առջև ու հառաչում։ Գիշերվա սիրտը լի է մեր հանդեպ խղճահարությամբ, սակայն չի կարող թեթևացնել մեր

ցավը։ Նա բռնում է մեր ձեռքից, և ներքևում գտնվող փոքրիկ երկրագունդը ավելի ու ավելի է փոքրանում ու, հենվելով նրա մութ թևերին, մենք մի պահ հայտնվում ենք ավելի կատարյալի առջև, քան գիշերն է, և այդ կատարյալի զարմանահրաշ լույսի ներքո մարդկային կյանքը գրքի նման բացվում է մեր առջև, ու մենք հասկանում ենք, որ Ցավը և Տառապանքը աստծո կողմից ուղարկված հրեշտակներ են։ Միայն նրանք, ովքեր կրել են տառապանքի լուսապսակը, կարող են տեսնել այդ զարմանահրաշ լույսը։ Սակայն երկիր վերադառնալով, նրանք ի վիճակի չեն խոսելու գաղտնիքի մասին, որին իրենք հաղորդակից են եղել։

Ժամանակով, օտար երկրով մի քանի բարի ասպետներ էին անցնում։ Նրանց ճամփան անցնում էր սաղարթախիտ անտառի միջով, ուր մասրենու խիտ թփերը ծվատում էին նրանց մարմինը, ովքեր մոլորվում էին անտառում։ Իսկ ծառերի տերևները մուգ գույնի էին ու սերտաճած, այնպես որ լույսի շող անգամ չէր թափանցում ճյուղերի միջից՝ ցրելու խավարն ու թախիծը։

Եվ մինչ նրանք անցնում էին անտառով, ասպետներից մեկը կորվեց ընկերներից, մոլորվեց և այլևս չվերադարձավ նրանց մոտ։ Իսկ ընկերները, նրան մեռած համարելով, խոր կսկիծով շարունակեցին ճանապարհը։

Եվ ահա, նրանք հասան այն հրաշալի ամրոցին, դեպի ուր ձգվում էր իրենց ճամփան ու շատ ուրախ օրեր անցկացրեցին այնտեղ։ Ու մի երեկո, երբ նրանք անհոգ նստած էին հսկայական դահլիճում վառվող կրակի շուրջ և մեծ թասերով գինի էին խմում, հայտնվեց կորած ընկերն ու ողջունեց նրանց։ Նրա հագուստը ամբողջովին քրքրված էր, ինչպես աղքատինը, և մարմնի վրա խոր վերքեր կային, բայց դեմքը շողում էր երանությամբ։

Ասպետները հարցրեցին իրենց ընկերոջը, թե ինչ է անցել գլխով, ու նա պատմեց, թե ինչպես է մոլորվել մութ անտառում և շատ օրեր ու գիշերներ թափառել է, մինչև ծվատված ու արյունոտված պառկել է՝ սպասելով մահվան։

Այդ ժամանակ, երբ նա արդեն մահվան դռանն էր, անթափանց խավարի միջից մի չնաշխարհիկ կույս հայտնվեց և, բռնելով նրա ձեռքը, առաջնորդեց մարդու համար անանցանելի, մեկուսի արահետներով, մինչև անտառի խավարում մի շլացուցիչ լույս փայլատակեց, որի համեմատությամբ ցերեկվա լույսը ասես մի խղճուկ ճրագ լիներ արևի դեմ։ Եվ այդ լուսավորության մեջ նրա աչքին, ինչպես երազում, մի տեսիլք երևաց։ Այնքան հիասքանչ, այնքան դյուրթիչ թվաց այդ տեսիլքը, որ նա դադարեց այլևս մտածել իր արյունաթոր վերքերի մասին և կանգ առավ, ասես կախարդված, լցված ուրախությամբ, որը խորունկ է, ինչպես ծովը և որի խորության չափը ոչ ոքի հայտնի չէ։ Տեսիլքը աստիճանաբար ցրվեց, և ասպետը, ծնկի իջնելով, շնորհակալություն հայտնեց սուրբ կույսին, որ առաջնորդեց իրեն այդ անանցանելի անտառի միջով, և ինքը տեսավ այնտեղ թաքնված տեսիլքը։

Այդ մութ անտառի անունն էր Տառապանք, իսկ ինչ վերաբերում է տեսիլքին, որը երևացել էր բարի ասպետին, մենք ի վիճակի չենք որևէ բան ավելացնել։

Գլուխ տասնմեկերորդ

Թե ինչպես Ջորջը մի անգամ առավոտյան վաղ արթնացավ։ Ջորջին, Հարրիսին և Մոնթմորենսիին դուր չի գալիս պաղ ջուրը։ Ջեյի խիզախությունն ու վճռականությունը։ Ջորջը և իր վերնաշապիկը — պատմություն բարոյախոսական վերջաբանով։ Հարրիսը՝ խոհարար։ Պատմական վերհուշ՝ նախատեսված գպրոցականների համար։

Հաջորդ առավոտյան ես արթնացա ժամը վեցին և տեսա, որ Ջորջը նույնպես արթուն է։ Մենք երկուսս էլ շրջվեցինք մյուս կողքի վրա և փորձեցինք նորից քնել, բայց չկարողացանք։ Եթե արթուն մնալու առանձնահատուկ պատճառ լիներ և անհրաժեշտ լիներ անմիջապես վեր կենալ ու հագնվել, մենք, հավանաբար, ժամացույցներին կնայեինք ու նորից քուն կմտնեինք և կարթնանայինք միայն ժամը տասին։ Քանի որ երկու ժամից շուտ արթնանալու բացարձակապես ոչ մի անհրաժեշտություն չկար, ավելին, այդ ժամին արթնանալը լրիվ անհեթեթություն էր, այնուամենայնիվ, մենք համոզված էինք, որ ես հինգ րոպե պառկելը մեղ

համար հավասարազոր է մահվան։ Այդպիսին է մարդու բնությունը։

Ջորջն ասաց, որ նման դեպք, միայն ավելի վատ ձևով, պատահել է իր հետ մեկուկես տարի առաջ, երբ նա սենյակ էր վարձել ոմն միսիս Գիփինգսի մոտ։

Մի օր երեկոյան, — պատմեց Ջորջը, իր ժամացույցը կանգնել էր 8,15-ի վրա։ Նա չէր նկատել դա, որովհետև ինչ-ինչ պատճառներով քնելուց առաջ մոռացել էր ժամացույցը լարել (նրա համար արտառոց երևույթ) և կախել էր գլխավերևում՝ նույնիսկ չնայելով ժամացույցին։

Դա պատահել էր ձմռանը, ամենակարճ օրերից մի օր, մառախլապատ եղանակին, այնպես որ, այն փաստը, որ դեռևս շատ մութ էր, երբ Ջորջն արթնացավ, չէր կարող ժամանակի հուսալի ուղեցույց ծառայել։ Նա մեկնեց ձեռքն ու վերցրեց ժամացույցը։ Ութն անց քառորդ էր։

— Երկնային լուսատուներ, փրկեցեք ինձ, — բացականչեց Ջորջը, — չէ՞ որ ես պետք է ժամը իններին լինեմ Սիթիում։ Ինչու՞ մեկն ու մեկը ինձ չի արթնացրել։ Սա ի՞նչ խայտառակություն է։

Նա մի կողմ նետեց ժամացույցն ու դուրս թռավ անկողնուց, սառը ջրցող ընդունեց, լվացվեց, հագնվեց ու սափրվեց սառը ջրով, որովհետև տաք ջրին սպասելու ժամանակ չկար, և նորից նայեց ժամացույցին։

Գուցե ժամացույցն անկողնուն շպրտելուց հետո սկսել էր աշխատել, իսկ գուցե ուրի՞շ պատճառ կար, Ջորջը չէր կարող ասել։ Փաստն այն էր, որ ութն անց քառորդ ժամացույցն սկսեց աշխատել և այժմ ցույց էր տալիս իններից քսան պակաս։

Ջորջը ճանկեց ժամացույցն ու աստիճաններով ցած վազեց։ Ընդունարանում մութ էր ու խաղաղ։ Բուխարու կրակը չէր երևում։ Ջորջը մտածեց, որ դա խայտառակություն է միսիս Գ-ի համար և որոշեց, որ երեկոյան վերադառնալիս կասի նրան, թե ինչ կարծիքի է այդ ամենի մասին։ Հետո նետվեց վերարկուի ու գլխարկի ետևից և ճանկելով հովանոցը, սլացավ դեպի ելքը։ Դուռը կողպված էր։ Ջորջը միսիս Գ-ին ծույլ պառավ անվանեց և զարմացավ, թե ինչու մարդիկ չեն կարողանում ժամանակին արթնանալ, բացեց փականքն ու դուրս վազեց։

Ջորջը վազքով քառորդ մղոն ճանապարհ անցավ և դրանից հետո միայն նրան սկսեց տարօրինակ ու անհասկանալի թվալ, թե ինչու այդքան քիչ մարդ կար փողոցում և խանութները դեռ փակ էին։ Ինքնին հասկանալի է, շատ մութ ու մառախլապատ առավոտ էր, բայց դա դեռևս պատճառ չէր, որ մարդիկ դադարեցնեին ամեն տեսակի աշխատանքը։ Ինքը ստիպված է աշխատանքի գնալ, ինչու՞ մյուսները պետք է մնան տաքուկ անկողնում միայն նրա համար, որ մութ ու մառախուղ է դրսում։

Վերջապես հասավ Հոլբորն։ Խանութների փեղկերը փակ էին, շուրջը ոչ մի օմնիբուս չէր երևում։ Տեսադաշտում երևում էին երեք մարդ, որոնցից մեկը ոստիկան էր, կաղամբով լի մի սայլակ և մի կիսախարխուլ կառք։ Ջորջը գրպանից հանեց ժամացույցն ու նայեց թվացույցին։ Ժամը իններից հինգ էր պակաս։ Նա անշարժ կանգնեց ու սկսեց հաշվել սրտի զարկերը։ Հետո կռացավ և շոշափեց սրունքները։ Այնուհետև, ժամացույցը դեռևս ձեռքում պահած, մոտեցավ ոստիկանին և հարցրեց, թե ժամը քանիսն է։

— Ժամը քանի՞սն է, — կրկնեց ոստիկանը ակնհայտ կասկածանքով ոտքից գլուխ չափելով Ջորջին, — լսեցեք, հիմա ժամացույցի զարկերը կխփեն։

Ջորջն ականջ դրեց, և իսկապես, հարևան փողոցի ժամացույցը սպասել չտվեց։

— Բայց ընդամենը երեք զարկ հնչեց, — վիրավորված տոնով ասաց, Ջորջը, երբ զարկերը դադարեցին։

— Իսկ դուք քանի՞սն էիք ուզում, — հետաքրքրվեց ոստիկանը։

— Քանի՞սը, իհարկե ինը, — ասաց Ջորջը, ցույց տալով իր ժամացույցը։

— Կարո՞ղ եմ իմանալ, թե որտեղ եք ապրում, — խստորեն հարցրեց հասարակական կարգ ու կանոնի պահապանը։

Ջորջը մի պահ մտածեց ու տվեց իր հասցեն։

— Օ, ահա թե որտեղ եք ապրում, — պատասխանեց ոստիկանը։ — Ահա, ուրեմն, հանգիստ վերադարձեք տուն ձեր ժամացույցով հանդերձ և ավելի շրջահայաց եղեք։

Եվ Ջորջը նորից տուն վերադարձավ, մտորելով ամբողջ ճանապարհին։

Իր սենյակը մտնելով, սկզբում նա որոշեց նորից հանվել ու անկողին մտնել, բայց երբ մտածեց, որ նորից պիտի հագնվի, լվացվի ու շրջող ընդունի; վճռեց չպառկել, այլ ննջել բազկաթոռին։

Սակայն քնել չկարողացավ։ Նա իր կյանքում երբեք այդքան առույգ չէր զգացել իրեն։ Ջորջը ոտիպված վառեց լամպը, դուրս հանեց շախմատի տախտակը և մի պարտիա մենակ խաղաց։ Բայց նույնիսկ դա էլ չօգնեց։ Ժամանակն այնքան դանդաղ էր շարժվում։ Նա թողեց շախմատը և փորձեց կարդալ։ Սակայն դա նույնպես նրա ուժերից վեր էր։ Նորից հագավ վերարկուն և դուրս եկավ զբոսնելու։

Փողոցը դատարկ էր ու մռայլ։ Ոստիկանները նայում էին լքողարկված կասկածանքով, լապտերներով լուսավորում էին նրան ու հետևում։ Եվ այդ ամենն այնպիսի տպավորություն էր թողնում նրա վրա, կարծես իսկապես ինչ-որ բան էր արել։ Ամեն անգամ, երբ լսում էր մոտեցող ոստիկանների կանոնավոր քայլերը, գողեգող անցնում էր նրբանցքներով ու թաքնվում էր շենքերի մուտքի մոտ։

Ինքնին հասկանալի է, որ նման վարվելակերպը ավելի էր խորացնում կարգ պահպանողների կասկածը։ Նրանք մոտենում, գտնում էին Ջորջին և հարցնում, թե ինչ է անում այդտեղ։ Եվ երբ նա պատասխանում էր «ոչինչ», պարզապես դուրս է եկել զբոսնելու (դա եղել է առավոտյան ժամը չորսին), նրան չէին հավատում, իսկ քաղաքացիական հագուստով երկու ոստիկաններ նրան տուն ուղեկցեցին, համոզվելու՝ իրո՞ք նա ապրում է այն հասցեում, ինչ հայտնել էր իրենց։ Տեսնելով, որ նա դուռը բացում է իր բանալիով, նրանք դիրքավորվեցին տան դիմաց և սկսեցին հետևել, թե ինչ է կատարվում տանը։

Ներս մտնելով, Ջորջը որոշեց կրակ վառել և իր համար նախաճաշ պատրաստել, պարզապես ժամանակ անցկացնելու համար։ Սակայն նա կարծես ի վիճակի չէր որևէ իր վերցնել ձեռքը։ Լիներ դա ածուխի թիակ, թե թեյի գդալ, ցած էր գցում կամ ինքն էր ընկնում և այնպիսի աղմուկ էր բարձրացնում ու հետո էլ մահու չափ վախենում էր, որ

կարթնացնի միսիս Գ-ին։ Նա էլ, կարծելով, թե գողեր են ներս մտել, բաց կանի պատուհանն ու «ոստիկանություն» կկանչի, իսկ այդ երկու ոստիկանները ներս կվազեն, ձեռնակապերը կհագցնեն ու իրեն կտանեն ոստիկանություն։

Նա սարսափելի ջղային վիճակում էր և նույնիսկ պատկերացրեց իր դատավարությունը. ինքը փորձում է հանգամանքները բացատրել երդվյալ ատենակալներին, բայց ոչ ոք նրան չի հավատում։ Ի վերջո, նրան դատապարտում են քսան տարվա տաժանակրության, և մայրը վշտից մահանում է։ Այսպիսով, նա հրաժարվեց նախաճաշ պատրաստելու մտքից, փաթաթվեց վերարկուով և տեղավորվեց բազկաթոռին, մինչև ժամը 7-ն անց կեսին միսիս Գ-ն իջավ հյուրասենյակ։

Ջորջն ասաց, որ այդ օրվանից ի վեր, նա երբեք այդքան վաղ չի արթնացել։ Դա նրա համար լավ դաս էր։

Մինչ Ջորջը պատմում էր այս իրական պատմությունը, մենք երկուսով էլ ծածկոցաշալերով փաթաթված նստած էինք և երբ նա ավարտեց, ես փորձեցի թիով արթնացնել Հարրիսին։ Երրորդ փորձը հասավ իր նպատակին, նա շուռ եկավ մյուս կողքի վրա և ասաց, որ մի բոպեից ցած կիջնի և կհագնի իր քուղակապերով կոշիկները։ Սակայն կարթաձողի օգնությամբ մենք նրան շուտով հասկացրեցինք, թե որտեղ է գտնվում և նա հանկարծակի նստեց տեղում՝ նավակի հակառակ ծայրը շպրտելով Մոնթմորընսիին, որն անխռով քնած էր Հարրիսի կրծքին։

Այնուհետև բարձրացրեցինք բրեզենտը, չորսով գլուխներս կողքից դուրս հանեցինք, նայեցինք ջրին և սարսռացինք։ Նախորդ գիշեր որոշել էինք առավոտյան վաղ արթնանալ, դեն գցել վերմակները ու ծածկոցները և ուրախ բացականչություններով նետվել ջուրն ու մի լավ լող տալ։ Սակայն հիմա, երբ արդեն առավոտ էր, այդ միտքը պակաս դայթակղիչ էր թվում։ Ջուրը տամուկ ու սառն էր թվում և, բացի դրանից, ցուրտ քամի էր փչում։

— Դե, տեսնենք ո՞վ առաջինը ջուրը կմտնի, — վերջապես ասաց Հարրիսը։

Առաջնության համար առանձնապես սուր պայքար տեղի չունեցավ։ Ջորջը, քանի որ դա հենց նրա միտքն էր, նահան-

չեց նավակի խորքն ու սկսեց հագնել կիսագուլպաները, այսպիսով լուծելով հարցը։ Մոնթմորընսին ակամայից այնպես ոռնաց, կարծես լողալու մասին միտքն անգամ նրան սարսուռ էր ներշնչում։ Հարրիսն ասաց, որ շատ դժվար կլինի նավակ վերադառնալը և սկսեց հագուստների միջից փնտրել իր անդրավարտիքը։

Ես ամենևին մտադիր չէի նահանջել, թեև լողն ինձ նույնպես այլևս չէր հրապուրում։ Մտածում էի, որ ջրում կարող են ջրասույզ եղած ծառաբներ կամ ջրիմուռներ լինել։ Որոշեցի ընտրել միջինը՝ ափ իջնել և ջուր ցայտել վրաս։ Ես վերցրեցի սրբիչը, ցամաք դուրս եկա և ջրին մոտեցա ծառի ճյուղի վրայով, որն իջնում էր անմիջապես ջրի վրա։

Անասելի ցուրտ էր։ Քամին կտրում էր դանակի պես։ Մտածեցի, որ թերևս չարժե ջուր ցայտել վրաս, ավելի լավ է, նավակ վերադառնամ և արագ հագնվեմ։ Ես ետ դարձա, որպեսզի իրագործեմ մտադրությունս, բայց ճիշտ այդ պահին այդ հիմար ճյուղը կոտրվեց և ես սրբիչիս հետ միասին խլացուցիչ ճողփյունով շրմփացի ջրի մեջ։ Ու մինչ գլխի կընկնեի, թե ինչ է կատարվել, հայտնվեցի գետի կենտրոնում, փորումը մի գալլոն լիքը Թեմզայի ջուր։

— Աստված վկա, ծերուկ Ջեյք լողում է, — լսեցի Հարրիսի բացականչությունը, երբ շնչահեղձ լինելով մի կերպ դուրս լողացի ջրի երեսը։ — Մտքովս չէր անցնի, որ նա այդքան քաջն է։ Ի՞նչ կասես սրան։

— Ամեն ինչ կարգի՞ն է, — երգեցիկ ձայնով հարցրեց Ջորջը։

— Հիանալի է, — թոթովեցի ես ի պատասխան։ — Հիմարություն եք անում, որ ջուրը չեք մտնում։ Աշխարհում հանուն ոչ մի բանի չէի հրաժարվի այս հաճույքից։ Ինչու՞ դուք էլ չփորձեք։ Պարզապես մի փոքր վճռական պետք է լինել։

Բայց ինձ այդպես էլ չհաջողվեց տարհամոզել նրանց։

Այդ օրը հագնվելիս մի շատ զվարճալի դեպք պատահեց։ Երբ ես նավակը վերադարձա, շատ ցուրտ էր և շտապելով հագնել վերնաշապիկս, պատահաբար այն ջուրը գցեցի։ Դա ինձ խիստ բարկացրեց, հատկապես, երբ Ջորջն էլ սկսեց ծիծաղել։ Անձամբ ես այդտեղ ոչ մի ծիծաղելի բան չէի տես-

նում և այդպես էլ ասացի Ջորջին, բայց Ջորջն սկսեց ավելի անզուսպ ծիծաղել։ Երբևէ չեմ տեսել, որ մարդ այդքան շատ ծիծաղի։ Վերջնականապես համբերությունից դուրս եկա և ասացի Ջորջին, թե ինչպիսի մոլագար ու անխելք ապուշի մեկն է ինքը, սակայն նա սկսեց է՛լ ավելի ուժգին հռհռալ։ Եվ հանկարծ վերնաշապիկը ջրից հանելիս, նկատեցի, որ դա իմ վերնաշապիկը չէ, այլ Ջորջինը, որը ես սխալմամբ իմն էի համարել։ Այդ ժամանակ միայն իրադրության կոմիզմը հասավ ինձ և հիմա էլ ես սկսեցի ծիծաղել։ Որքան շատ էի նայում Ջորջի թաց վերնաշապիկին, կամ իրեն՝ ծիծաղից ցնցվող Ջորջին, այնքան շատ էի զվարճանում, և այնքան ծիծաղեցի, որ վերնաշապիկը նորից ջուրն ընկավ։

— Դու... չե՞ս պատրաստվում ջրից հանել վերնաշապիկը, — հռհռալով հարցրեց Ջորջը։

Ես չկարողացա նրան անմիջապես պատասխանել, այնպես էի ցնցվում ծիծաղից, բայց վերջապես, ծիծաղի պոռթկումների միջև ինձ հաջողվեց պատասխանել.

— Դա իմ վերնաշապիկը չէ...քոնն է։

Ես երբեք չեմ տեսել, որ մարդու դեմքը այդքան ակընթարթորեն ուրախ արտահայտությունը փոխի մռայլի։

— Ի՞նչ, — ճղճղաց Ջորջը, ոտքի ցատկելով, — հիմա՞։ Ինչու՞ ավելի ուշադիր չես։ Ինչու՞, գրողը տանի. չէ՞իր կարող գնալ գետափ և այնտեղ հագնվել։ Ջեզ նմաններին պետք է արգելել նավակ մտնել, այո, արգելել։ Տու՛ր այստեղ կարթաձողը։

Ես փորձեցի բացատրել նրան, թե այդ ամենը որքան ծիծաղելի է, բայց ինձ ոչինչ չհաջողվեց։ Ջորջը երբեմն այնքան բութ է լինում կատակը հասկանալու համար։

Հարրիսն առաջարկեց նախաճաշի համար կաթնաձվածեղ պատրաստել։ Խոստացավ ինքը զբաղվել դրանով։ Նրա խոսքերից երևում էր, որ կաթնաձվածեղ պատրաստելու վարպետ է։ Նա հաճախ է զբոսախնջույքների և նավակով զբոսանքների ժամանակ կաթնաձվածեղ պատրաստել։ Դա նրան մեծ հեղինակություն է բերել։ Բոլոր նրանք, ովքեր փորձել են Հարրիսի ձեռքով պատրաստված կաթնաձվածեղը, — այդպես հասկացանք մենք նրա խոսքերից,— այլևս ոչ մի ուրիշ կերա-

կրատեսակ չեն ցանկացել ուտել, և հյուծվել ու մահացել են, եթե չեն կարողացել նորից ձեռք բերել դրանից։

Նրա խոսքերից հետո մեր քերաններից ջուր էր գնում։ Մենք Հարրիսին ավեցինք սպիրտայրոցը, թավան ու այն բոլոր ձվերը, որոնք դեռ չէին կոտրվել ու խառնվել զամբյուղի պարունակությանը և աղաչեցինք անմիջապես գործի անցնել։

Նրան չհաջողվեց առանց գլխացավանքի կոտրել ձվերը։ Սակայն դժվարը ոչ այնքան ձվերը կոտրելն էր, որքան այնպես անել, որ արդեն կոտրված ձվերը թափվեն թավայի մեջ և ոչ թե շալվարին կամ վերնաշապիկի թևքերին։ Վերջիվերջո, Հարրիսին հաջողվեց մի կես դյուժին ձու լցնել թավայի մեջ, հետո պպզելով սպիրտայրոցի կողքին, սկսեց պատառաքաղով խառնել։

Որքան Ջորջն ու ես հասկացանք, դա հոգնեցուցիչ գործ էր։ Ամեն անգամ, երբ Հարրիսը մոտենում էր թավային, այրում էր մատները, որևէ բան էր ցած գցում, հետո սկսում էր գժի նման թռչկոտել սպիրտայրոցի շուրջը՝ թափահարելով մատներն ու գրողի ծոցն ուղարկելով ամեն ինչ։ Ամեն անգամ, երբ Ջորջն ու ես նայում էինք նրա կողմը, միշտ տեսնում էինք նրան այդ նույն համարը կատարելիս։ Սկզբում նույնիսկ մտածեցինք, որ դա նրա խոհարարական արվեստի բաղկացուցիչ մասն է։

Մենք գաղափար անգամ չունեինք, թե ինչ բան է կաթնաձվածեղը և պատկերացնում էինք, որ դա, հավանաբար, կարմրամորթ հնդկացիների կամ Սենդվիչյան կղզիների կերակրատեսակ է, որ ինչպես հարկն է պատրաստելու համար թռչկոտելով պարելը և նզովելը անհրաժեշտ պայման են։ Մոնթմորենսին մի անգամ մոտեցավ ու մուրթը դիպցրեց թավային, սակայն տապակվող յուղի կաթիլները թռան ու այրեցին նրա քիթը, և հետո նա նույնպես սկսեց թռչկոտել ու նզովել իր ձեռվ։ Ընդհանուր առմամբ, դա ամենահետաքրքիր և հուզիչ արարողություններից մեկն էր, որին ես երբևէ ներկա եմ եղել։ Ջորջը և ես անչափ ափսոսեցինք, երբ այդ ամենն ավարտվեց։

Արդյունքն այնքան հաջող չստացվեց ինչպես սպասում էր Հարրիսը։ Շատ քիչ բան էր մնացել թավայում։ Վեց ձու էր

եղել թավայի մեջ և դրանից մնացել էր մի թեյի գդալի չափ այրված ու անախորժելի տեսքով ինչ-որ շփոթ։

Հարրիսն ասաց, որ մեղավորը թավան է։ Ամեն ինչ հաջող կլիներ, եթե ձուկ եփելու թաս ու գազօջախ ունենայինք։ Որոշեցինք այլևս փորձեր չանել, մինչև այդ խոհարարական պարագաները չունենայինք։

Երբ ավարտեցինք նախաճաշը, արևն արդեն բավական լավ էր տաքացնում։ Քամին դադարել էր, ավելի լավ եղանակ հնարավոր չէր ցանկանալ։ Շրջապատում քիչ բան էր հիշեցնում 19-րդ դարի մասին։ Առավոտյան արևի լույսի ներքո նայելով գետին, կարելի էր համարյա պատկերացնել, որ 1215 թվականի այն հայտնի հունիսյան առավոտից[1] մեզ բաժանող դարերը մի կողմ են քաշվել և, որ մենք՝ անգլիական Ֆերմերների զավակներս, տնայնագործական հագուստներով և կաշեպոտու վրայի դաշույններով, սպասում ենք այդտեղ, ականատես լինելու, թե ինչպես է գրվում պատմության այդ նշանակալից էջը, որի նշանակությունը չորս հարյուր և ավելի տարիներ անց հասարակ ժողովրդին լուսաբանեց այն խորապես ուսումնասիրած Օլիվեր Կրոմվելը։

Հիանալի ամառային առավոտ է՝ արևոտ, մեղմ ու խաղաղ։ Բայց օդից զգացվում է վերահաս տագնապի թրթիռը։ Իոհան[2] թագավորը կանգ է առել Դանքրաֆտ-Հոլլում և ամբողջ նախորդ օրվա ընթացքում փոքրիկ Սթեյնզ քաղաքում արձագանքում են զենքերի շաչյունը, ձիերի դոփյունը սալահատակի վրա, հրամանատարների բացականչությունները, մորուքավոր նետաձիգների, սակրատեգավորների ու գեղարդավորների գոռհիկ կատակներն ու կոպիտ հիշոցները և օտար լեզվով խոսող նիզակավորների ձայները։

Քաղաք են մտնում վառ զգեստավորված, ճանապարհի փոշու մեջ կորած ասպետներ ու զրահակիրներ։ Եվ ողջ երե-

1. — 1215 թ. հունիսի 15-ին, Ռանիմիդում բարոնները Իոհան թագավորին ստիպեցին ստորագրելու «Մագնա Խարտան», որը սահմանափակում էր թագավորական իշխանությունը, գլխավորապես հօգուտ մեծ ֆեոդալ տերերի։

2. Իոհան թագավոր — Անգլիայի թագավոր։ Թագավորել է 1199 — 1216 թթ.։

կոյի ընթացքում վախվորած քաղաքացիները պետք է հապճեպ բաց անեն տան դռները՝ ներս թողնելու կոպիտ զինվորների խմբերը, որոնց պետք է տեղավորել ու կերակրել և այն էլ ամենաբնտիր կերակուրներով, ապա թե ոչ, այն ժամանակ թող ասված պահապան լինի տանը և նրա բնակիչներին, քանի որ այդ բուռն ժամանակներում սուրը դատավոր էր և դատապաշտպան, հայցվոր և դահիճ, վերցրածի համար վճարում էին նրանով, որ ողջ էին թողնում, եթե իհարկե բարեհաճում էին այդպես վարվել։

Շուկայի հրապարակում պատրաստված խարույկի շուրջը մինչև ուշ գիշեր հավաքվում են բարոնների զինվորները։ Եվ մինչ երեկոն վերածվում է գիշերվա, նրանք ուտում են, խմում, աղմկոտ երգեր են ոռնում, հարբած մոլի խաղեր են խաղում և վիճում։ Կրակը արտառոց սավերներ է գցում զենքի կույտերի ու զինվորների անճոռնի մարմինների վրա։ Քաղաքի երեխաները գողեգող մոտենում և հետաքրքրությամբ դիտում են նրանց։ Ամբակազմ գյուղացի աղջիկները նույնպես ծիծաղելով մոտենում են մի անպարկեշտ կատակ փոխանակելու և ժամադրվելու կորովատես զինվորների հետ, որոնք այնքան նման չեն իրենց գյուղական խանդավառ երկրպագուներին։ Վերջիններս արհամարհված կանգնած են նրանց ետևում՝ փորձելով քմծիծաղ տալ իրենց լայն, շփոթված դեմքերին։ Իսկ շրջապատի դաշտերից կայծկլտում են հեռավոր ճամբարների աղոտ լույսերը, այստեղ հավաքված են որևէ մեծ լորդի կողմնակիցները, այնտեղ՝ ուխտադրուժ Իոհանի ֆրանսիացի վարձկաններն են, որոնք թրև են գալիս, ինչպես որսի դուրս եկած քաղցած գայլեր։

Ամբողջ գիշերը մութ փողոցներում ժամապահներ էին կանգնած, և քաղաքը շրջապատող ամեն մի բլուրի վրա առկայծում էին պահակակետերի կրակները։ Բայց ահա գիշերն անցավ և հին Թիմզայի գեղեցիկ դաշտավայրի վրա տարածվեց հուշակավոր օրվա առավոտը, որն այնքան մեծ նշանակություն ունեցավ գալիք սերունդների ճակատագրի համար։

Երբ բացվեց մռայլ առավոտը, երկու կողմերից մոտիկում, մեր կանգնած տեղից մի քիչ վեր մեծ հոուզեռ սկսվեց. լսվում են անթիվ աշխատավորների ձայները։ Նրանք խփում են հսկայական վրանը, որն այստեղ է բերվել նախորդ երեկոյան։ Ատաղձագործները ղբաղված են նստարաններն ամրացնելով, իսկ Լոնդոնից եկած հնթավարպետները իրենց հետ բերել են բազմագույն կտորներ, մետաքս, ոսկե և արծաթե դիպակ։

Եվ ահա, Սթեյնզից գետափով ձգվող ճանապարհի վրա թավաձայն ծիծաղելով ու ղրուցելով դեպի մեզ են գալիս մոտ տասը ամբակազմ տղամարդիկ՝ սակրատեգերով։ Դրանք բարոնների մարդիկն են։ Նրանք կանգ են առնում մեզանից տասը յարդ հեռու և հենվելով իրենց զենքերին, սկսում են սպասել։

Եվ այսպես, ժամ առ ժամ ճանապարհով անցնում են զինված մարդկանց նորանոր ջոկատներ ու խմբեր, նրանց սաղավարտներն ու զրահները անդրադարձնում են առավոտյան արևի երկար ու թեք ճառագայթները, մինչև ամբողջ ճանապարհը,— որքան որ մարդու աչքը կտրում է,— լցվում է փայլուն մետաղով և վարդագույն ձիերով։ Հեծյալները քառատրոփ արշավով խմբից խումբ են անցնում և ոչ մեծ դրոշները թրթռում են առավոտյան զեփյուռից։ Ժամանակ առ ժամանակ շարժում է նկատվում, և շարքերը երկու կողմից ճամփա են բացում մեծ բարոններից որևէ մեկի համար, որը ռազմական ձիու վրա նստած, շրջապատված իր պահակախմբով, անցնում է՝ գլխավորելու իր ճորտերին ու վասալներին։

Իսկ Քուփեր-հիլլի լանջին, ճիշտ նրանց դիմաց, հավաքվել են զարմացած գյուղացիներ ու Սթեյնզից եկած հետաքրքրասեր քաղաքացիներ, և ոչ ոք հաստատ չգիտի, թե ինչի համար է այդ ամբողջ իրարանցումը, բայց յուրաքանչյուրը յուրովի է բացատրում այդ մեծ իրադարձությունը, որին եկել են ականատես լինելու։ Ոմանք ասում են, որ այդ օրվա իրադարձություններից հետո ժողովրդի վիճակը կբարելավվի, բայց ծերունիները բացասաբար շարժում են գլուխները, քանի որ նման հեքիաթներ առաջներում էլ են լսել։

Սթեյնզից ներքև, գետի վրա սփռված են նավեր, մակույկներ ու հյուսկեն նավակներ (վերջիններս օգտագործումից դուրս են եկել և դրանցից շարունակում են օգտվել միայն չրավորները)։ Գետի սահանքներում, որտեղ տարիներ անց պետք է կառուցվեր Բել-Ուիրյան շլյուզը, դրանք քարշում

կամ թիավարում են ամրակազմ թիավարները և, որքան թույլ է տալիս նրանց համարձակությունը, մոտենում են ծածկված մեծ նավերին, որոնք պատրաստ սպասում են տանելու Իհան թագավորին այնտեղ, որտեղ ճակատագրական խարտիան սպասում է նրա ստորագրությանը։

Կեսօր է։ Ողջ ժողովրդի հետ նաև մենք ժամեր շարունակ համբերությամբ սպասում ենք։ Լուրեր են պատվում, որ այս անգամ էլ խորամանկ Իհանը դուրս է պրծել բարոնների ձեռքից, իր վարձկանների հետ փախել է Դանքրաֆտ-Հոլլից և շուտով ավելի լուրջ գործերով կզբաղվի, քան իր հպատակների համար ազատությունների հրովարտակ ստորագրելն է։

Բայց ոչ։ Այս անգամ նա երկաթե ճիրանների մեջ է և իր գլուխն է պոչ խաղացնում ու փորձում խույս տալ։ Հեռվում, ճանապարհի վրա փոշու մի փոքրիկ ամպ է բարձրանում, որն աստիճանաբար մոտենում է ու մեծանում, սմբակների դոփյունը ուժգնանում է և զգաստ կանգնած զինվորների շարքերի միջով շարժվում է վառ զգեստավորված լորդերի և ասպետների փայլուն թափորը։ Առջևից, ետևից և երկու կողմերից արշավում են բարոնների հպատակները, իսկ նրանց մեջտեղում՝ Իհան թագավորը։

Նա մոտենում է այն վայրին, որտեղ մեկնելու պատրաստ սպասում են նավերը, և մեծ բարոնները շարքերից ընդառաջ են գալիս՝ ողջունելու նրան։ Նա ողջունում է ուրախ ժպիտով և հաճոյախոսություններ է անում նրանց, ասես նրան հրավիրել են իր պատվին կազմակերպված տոնակատարության։ Բայց երբ նա պատրաստվում է ձիուց ցած իջնել, մի արագ հայացք է նետում ետևի մասում շարված իր ֆրանսիական վարձկանների և բարոնների հպատակների ահեղ շարքերի վրա, որոնք օղակ են կազմել իր շուրջը։

Գուցե դեռ ուշ չէ՞։ Մի անսպասելի ուժգին հարված իր կողքի հեծյալին, մի կոչ՝ իր ֆրանսիական զորքերին, մի անսպասելի սրընթաց հարձակում՝ իր առջև ձգված անուշիմ շարքերի վրա, և այդ խռովարար բարոնները կզզջան, որ համարձակվել են խափանել իրենց թագավորի ծրագրերը։ Ավելի համարձակ ձեռքը կարող էր նույնիսկ այդպիսի իրադրության մեջ փոխել խաղի ընթացքը։ Եթե նա Ռիչարդ լիներ, ազատության գավաթը կխլեին Անգլիայի քթի տակից և դեռ

հարյուրամյակներ շարունակ Անգլիան չէր իմանա, թե ինչ համ ունի ազատությունը։

Սակայն Իհան թագավորի սիրտն ահ է ընկնում՝ նայելով անգլիացի զինվորյալների ահեղ դեմքերին, նրա ձեռքն անուժ ընկնում է սանձի վրա, ձիուց ցած է իջնում և տեղավորվում առաջին նավում։ Իսկ բարոնները հետևում են նրան, ձեռքները՝ սրերի երախակալներին, և մեկնելու հրաման է տրվում։

Դանդաղորեն, ծանր, զարդարված նավերը հեռանում են Ռանիմիդի գետափից։ Դանդաղորեն նրանք առաջ են շարժվում գետի թույլ հոսանքին հակառակ և խուլ հարվածով խփվում են փոքրիկ կղզյակի ափին, որն այդ օրվանից կոչվում է «Մեծ խարտիայի կղզի»։ Իհան թագավորը ափ է դուրս գալիս։ Մենք լուռ, շունչներս պահած սպասում ենք, մինչև մի ուժգին ձայն ճեղքում է օդը՝ հայտարարելով, որ Անգլիայի ազատության ամրոցի հիմնաքարը, ի գիտություն բոլորի, ամուր դրված է։

Գլուխ տասներկուերորդ

Հենրի Ութերորդը և Աննա Բոլեյն[1]։ Սիրահար զույգի հետ նույն տանն ապրելու անհարմարությունները։ Անգլիական ազգի համար դժվարին ժամանակներ։ Գիշերային դեպքերումներ՝ գեղեցիկի ետևից։ Անտուն ու անօթևան։ Հարրիսը մեռնելու պատրաստություն է տեսնում։ Հրեշտակ է հայտնվում։ Հանկարծակի ուրախության ազդեցությունը Հարրիսի վրա։ Թեթև ընթրիք։ Նախաճաշ։ Բարձր գին՝ մանանեխի համար։ Սարսափելի ճակատամարտ։ Մեյդենհեդ։ Առագաստները պարզած։ Երեք ձկնորս։ Մեզ հայհոյում են։

Ես նստած էի գետափին, երևակայությանս մեջ նկարելով այդ տեսարանը, երբ Ջորջն ասաց, քանի որ բավականին հանգստացել եմ, գուցե դեմ չեմ լինի ամանները լվանալ։ այսպիսով, անցյալի փառապանծ օրերից վերադառնալով պնպի գորշ, տաղտկալի ներկան՝ իր բոլոր ձախորդություններով ու մեղքերով, ես նավակ իջա և փայտի ձողիկով ու խո-

1. Աննա Բոլեյն (1507—1536) — Հենրի VIII-ի երկրորդ կինը։

տի փնջով մաքրեցի թավան, վերջնականապես փայլեցնելով Ջորջի թաց վերնաշապիկով։

Մենք ուղևորվեցինք դեպի Մեծ Խարտիայի կղզի և դիտեցինք քարը, որը դրված է մի տնակում, որի վրա, ինչպես ասում են, ստորագրվել է «Մեծ Խարտիա» անունը կրող հրովարտակը։ Թեև չեմ կարող երաշխավորել, որ իրոք դա այդտեղ է ստորագրվել, և ոչ թե, ինչպես ոմանք են պնդում, Ռաննիմիդի ափին։ Անձամբ ես հակված եմ գերադասություն տալ ավելի տարածված կղզու թեորիային։ Համենայն դեպս, եթե այն ժամանակ ես բարոններից մեկն ու մեկը լինեի, անպայման կհամոզեի իմ ընկերներին այնպիսի մի անհուսալի ուղեկցի, ինչպիսին Իոհան թագավորն էր, տանել կղզի, որտեղ նրա կողմից ամեն տեսակի անսպասելիությունների ու հնարքների համար ավելի քիչ հնարավորություն կլիներ։

Պիկնիկների հրվանդանից ոչ հեռու, Անքերվիք-Հաուզի մոտակայքում պահպանվել են մի հին վանքի ավերակները, որի մոտ, ինչպես ասում է ավանդությունը, Հենրի VIII-ը հանդիպում էր Աննա Բոլեյնի հետ։ Նրանք հանդիպում էին նաև Քենթում գտնվող Հիվեր ամրոցում։ Էլի ինչ-որ տեղ Սընթ-Օլբանսի մոտ։ Այն օրերին Անգլիայի բնակիչները երևի դժվարանում էին որևէ վայր գտնել, որտեղ այդ երկու անհոգ սիրահարներին չհանդիպեին։

Երբևէ եղե՞լ եք մի տան, որտեղ սիրահար զույգ կա։ Դա տանջալից փորձություն է։ Ասենք թե դուք ցանկանում եք հանգստանալ հյուրասենյակում և ձեր քայլերն ուղղում եք այնտեղ։ Դուռը բացելիս աղմուկ եք լսում, կարծես մեկը հանկարծ ինչ-որ անհետաձգելի գործ է հիշել և, երբ ներս եք մտնում, Էմիլին կանգնած է պատուհանի մոտ և ողջ էությամբ կլանված նայում է դիմացի մայթին, իսկ ձեր ընկերը՝ Ջոն Էդվարդը, սենյակի մյուս անկյունում տարված դիտում է ինչ-որ մեկի հարազատների լուսանկարները։

— Օ՜, — ասում եք դուք, կանգնելով դռան շեմին,—չգիտեի, որ այստեղ մարդ կա։

— Ի՞նչ եք ասում, — սառը պատասխանում է Էմիլին այնպիսի տոնով, կարծես ձեզ չի հավատում։

Քիչ անց ասում եք.

— Շատ խավար է այստեղ։ Ինչու՞ չեք վառում լամպը։

Ջոն Էդվարդն ասում է՝ օ՜, նույնիսկ չի էլ նկատել։ Իսկ Էմիլին պատասխանում է, որ իր հայրը չի սիրում, երբ օրը ցերեկով լամպը վառում են։

Դուք նրանց մեկ-երկու վերջին նորություններ եք հաղորդում և արտահայտում ձեր կարծիքը Բոլանդական հայրի վերաբերյալ, բայց դա ակնհայտորեն նրանց չի հետաքրքրում։ Նրանք միայն պատասխանում են. «Օ՜», «մի՞թե», «իսկապե՞ս», «այո՞», «Չի՜ կարող պատահել»։ Եվ տասը րոպե այդպիսի խոսակցություն վարելուց հետո, զգուշորեն մոտենում եք դռանը և դուրս եք սողոսկում ու դեռ զարմանում եք, որ դուրը, առանց ձեր մասնակցության, անմիջապես շրխկոցով փակվում է ձեր ետևից։

Նեռ ժամից որոշում եք գնալ և ծխել ամեռային այգում։ Այնտեղի միակ աթոռը զբաղեցրել է Էմիլին, իսկ Ջոն Էդվարդը, եթե կարելի է հավատալ զգեստներին, ակնհայտորեն նստած է հատակին։ Նրանք ոչինչ չեն ասում, բայց նրանց հայացքն ասում է այն ամենը, ինչ թույլ է տալիս քաղաքակիրթ հասարակությունը։ Անմիջապես ետ եք դառնում և դուռը ծածկում ձեր ետևից։

Այս ամենից հետո արդեն վախենում եք ամբողջ տան մեջ որևէ դռնից ձեր քիթը ներս խոթել և, որոշ ժամանակ աստիճաններով վեր ու վար անելուց հետո, գնում և փակվում եք ննջասենյակում։ Սակայն շուտով դա ձանձրացնում է և դնելով գլխարկը, գնում եք պարտեզ։ Քայլում եք արագհետով ու անցնելով տաղավարի մոտով ներս եք նայում և, իհարկե, այդ երկու ջահել հիմարները արդեն գրկախառնված նստած են անկյունում։ Նրանք էլ ձեզ են նկատում և մտածում են, որ հավանաբար ինչ-որ ստոր մտադրություն ունեք, որ այդպես կրնկակոխ հետևում եք իրենց։

— Ջե՞ն կարող, ինչ է, նման ժամանցի համար հատուկ սենյակ զբաղեցնել և մեզ էլ իմաց տալ, — փնթփնթում եք դուք, հապճեպորեն ձեզ դահլիճ եք գցում, վերցնում եք հովանոցն ու հեռանում։

Հավանաբար նույնն է եղել, երբ այդ թեթևամիտ Հենրի Ութերորդը սիրահետում էր իր փոքրիկ Աննային։ Բուքինգհամշիրի բնակիչները հավանաբար անսպասելիորեն հանդիպել են նրանց, երբ վերջիններս թափառում էին Վինձորի և

Բեյսրիրի շրջակայքում, և բացականչել. «Օ՜, Դուք այստե՞ղ եք»։ Հենրին, հավանաբար շառագունել է և ասել. «Այո, եկել եմ հանդիպելու մի մարդու», իսկ Աննան ասել է. «Որքան ուրախ եմ ձեզ տեսնելու։ Զվարճալի է, չէ՞։ Հենց նոր ճանապարհին հանդիպեցի միստր Հենրի Ուիթերորդին և պարզվեց, որ երկուսս էլ նույն ուղղությամբ ենք գնում»։

Եվ այդ մարդիկ հեռանում էին քթի տակ փնթփնթալով. «Ավելի լավ է հեռանանք քանի դեռ գգվում ու զունդունում են։ Գնանք Քենթ»։

Նրանք գնում են Քենթ և առաջին բանը, որ տեսնում են այնտեղ հասնելով, Հենրին ու Աննան են, որ պտտվում են Հիվեր ամրոցի շուրջը։

— Օ՜, գրողը տանի, — ասում են նրանք, — եկեք հեռանանք։ Ես այլևս չեմ կարող դիմանալ։ Գնանք Սենթ-Օլբանս, գեղեցիկ ու խաղաղ անկյուն է։

Նրանք հասնում են Սենթ-Օլբանս և իհարկե, այդ տարաբախտ զույգը նույնպես այնտեղ է՝ համբուրվելով աբբայության պատերի տակ։ Դրանից հետո, այդ մարդիկ հավանաբար հեռացել ու ծովահեն են դարձել մինչև հաշտանելական ծիսակատարության ավարտը։

Պիկնիկների հրվանդանից մինչև հին Վինձորի շլյուզը ընկած հատվածում գետը շատ գեղեցիկ է։ Մի սավերոտ ճանապարհ, որի վրա այս ու այնտեղ սփռված են գողտրիկ, փոքրիկ տնակներ, ձգվում է վեր, դեպի «Առուսլեյան զանգակներ» պանդոկը։ Դա մի գեղատեսիլ պանդոկ է, ինչպես գետափնյա շատ պանդոկներ, որտեղ կարելի է հիանալի գարեջուր խմել։ Համենայն դեպս, այդպես է ասում Հարրիսը, իսկ նման հարցերում Հարրիսի խոսքին կարելի է հավատալ։ Հին Վինձորը հայտնի է յուրովի։

Էդվարդ Խոստովանահայրը այստեղ պալատ ուներ, և հենց այստեղ էր, որ փառապանծ կոմս Գոդվինը մեղավոր է ճանաչվել այն ժամանակվա դատավորների կողմից՝ թագավորի եղբոր սպանության համար։ Կոմս Գոդվինը հացի մի պատառ է կտրել և ուտել ձեռքում։

— Եթե ես մեղավոր եմ, — ասել է կոմսը, — թող այս հացը խեղդի ինձ։

Եվ նա հացը բերանը դրեց, կուլ տվեց ու մեռավ։

Հին Վինձորն անցնելուց հետո, գետն ինչ-որ անհետաքրքիր է թվում և նորից գեղատեսիլ է դառնում Բովենիին մոտենալիս։ Ջորջը և ես քարշում էինք նավակը Հոում-պարկի մոտով, որը ձգվում է գետի աջ ափով Ալբերտի կամրջից մինչև Վիկտորիայի կամուրջը։ Երբ անցնում էինք Դատչետի մոտով, Ջորջը հարցրեց՝ թե հիշո՞ւմ եմ արդյոք գետի վրա կատարած մեր առաջին ճանապարհորդությունը, երբ գիշերելու համար ափ դուրս եկանք այդտեղ, երեկոյան ժամը տասին։

Ես պատասխանեցի, որ իհարկե, հիշում եմ։ Նման բաներն այդքան շուտ չեն մոռացվում։

Դա օգոստոսին էր, մի շաբաթ օր։ Մենք՝ այսինքն մեր եղբայրը, հոգնած ու քաղցած էինք։ Ու երբ հասանք Դատչետ, վերցրեցինք զամբյուղը, երկու պայուսակները, ծածկոցաշալերը, վերարկուները և մյուս իրերն ու ճամփա ընկանք գիշերելու տեղ որոնելու։

Հասանք մի շատ գողտրիկ փոքրիկ հյուրանոցի՝ բաղեղի թփերով և մագլցող վարդի թփերով ծածկված սանդղամուտքով։ Բայց մոտակայքում ցախկեռաս չէր երևում, իսկ չգիտես ինչու ցախկեռասը մեխվել էր ուղեղիս մեջ, և ես ասացի.

— Եկեք չմտնենք այստեղ։ Մի քիչ էլ գնանք և մեկ ուրիշը գտնենք, որտեղ ցախկեռաս լինի։

Մենք շարունակեցինք ճանապարհը և շուտով մեկ ուրիշ հյուրանոցի հասանք։ Այդ մեկը նույնպես շատ հիանալի հյուրանոց էր և կողքին էլ ցախկեռաս էր աճում, բայց այս անգամ էլ Հարրիսին դուր չեկավ մուտքի դռան մոտ կանգնած մարդու տեսքը։ Հարրիսն ասաց, որ իր կարծիքով, այդ մարդը ամենևին էլ լավը չի երևում և նրա հագին տգեղ սապոգներ են։ Այսպիսով, շարունակեցինք մեր ուղին։ Բավական ճանապարհ անցանք, սակայն այլևս ոչ մի հյուրանոցի չհանդիպեցինք։ Վերջապես, ճանապարհին մի մարդ տեսանք և խնդրեցինք խորհուրդ տալ, թե ուր գնալ։

— Բայց դուք հակառակ ուղղությամբ եք գնում, — ասաց նա։ — Շրջվեք ու ետ դարձեք և կտեսնեք «Եղնիկը»։

— Արդեն եղել ենք այնտեղ և այն մեզ դուր չի եկել, — պատասխանեցինք մենք, — ցախկեռաս չկա։

— Լավ, այդ դեպքում, — ասաց նա, — մնում է «Կալ-

վածատիրոջ տունը» ուղիղ ձեր դիմաց է։ Այնտեղ եղե՞լ եք։

Հարրիսն ասաց, որ այնտեղ նույնպես չենք ուզում գնալ։ Մեզ դուր չի եկել այնտեղ իջևանած մի մարդու տեսքը, նրա մատների գույնը, ինչպես նաև սանդոգները։

— Դե, չգիտեմ ինչ խորհուրդ տամ, — ասաց մեր զրուցակիցը, — քանի որ այստեղ ուրիշ հյուրանոց չկա։

— Ոչ մի հյուրանո՞ց, — բացականչեց Հարրիսը։

— Ոչ մի, — պատասխանեց մարդը։

— Ի՞նչ պետք է անենք, — գոչեց Հարրիսը։

Այդ ժամանակ միջամտեց Ջորջը։ Նա ասաց, որ Հարրիսը և ես, եթե ցանկանում ենք, կարող ենք մեզ համար նոր հյուրանոց կառուցել տալ և այն բնակեցնելու համար կենվորներ ընտրել։ Ինչ վերաբերում է իրեն, ապա նա վճռաբեկում է «Եղնիկ»։

Նույնիսկ հանճարները չեն կարողացել հասնել իրենց իդեալներին, և Հարրիսն ու ես խոր հոգոց հանեցինք, հասկանալով, թե որքան ունայն են երկրային իղձերը, ու հետևեցինք Ջորջին։

Մեր իրերը «Եղնիկ» տարանք և դասեցինք նախասրահում։

Մոտեցավ հյուրանոցի տերն ու ողջունեց մեզ.

— Բարի երեկո, ջենտլմեններ։

— Օ՜, բարի երեկո, — ողջունեց Ջորջը, — բարի եղեք խնդրում եմ։ Մեզ երեք մահճակալ է հարկավոր։

— Անչափ ցավում եմ, սըր,— ասաց տերը,— վախենում եմ, որ դա անհնար է։

— Դե լավ, — ասաց Ջորջը, — ոչինչ, երկուսն էլ բավական է։ Մեզանից երկուսը կարող են քնել մի անկողնում, այնպես չէ՞, — շարունակեց նա նայելով Հարրիսին ու ինձ։

Հարրիսն ասաց՝ իհարկե։ Նա էլ իր հերթին մտածում էր, որ Ջորջը և ես հեշտությամբ կտեղավորվենք միևնույն անկողնում։

— Ցավում եմ, սըր,— նորից կրկնեց հյուրանոցի տերը,— բայց ամբողջ տանը իրոք որ ոչ մի ազատ մահճակալ չունենք։ Մենք առանց այն էլ երկու կամ նույնիսկ երեք մարդ ենք տեղավորում մի մահճակալի վրա։

Դա մեզ փոքր-ինչ վհատեցրեց։ Բայց Հարրիսը, որ փորձված ճանապարհորդ է, կարծես հասկացավ և ուրախ ծիծաղելով ասաց.

— Ոչինչ, ինչ արած։ Դժվարությունները մարդկանց համար են։ Տեղավորեք մեզ բիլյարդասենյակում։

— Ցավում եմ, սըր։ Երեք ջենտլմեններ արդեն քնած են բիլյարդասեղանի վրա և երկուսն էլ՝ սրճարանում։ Ուղղակի անհնար է այս գիշեր ձեզ ընդունել։

Մենք վերցրեցինք մեր իրերը և գնացինք դեպի «Կալվածատիրոջ տուն»։ Դա մի փոքրիկ, հիանալի հյուրանոց էր։ Ես ասացի, որ դա ինձ ավելի շատ է դուր գալիս, քան մեկ ուրիշը։ Հարրիսն ասաց՝ օ, այո, ամեն ինչ հիանալի կլինի, իսկ շիկահերի վրա կարելի է և չնայել։ Բացի դրանից, խեղճն ինչ մեղավոր է, որ շիկահեր է։

Հարրիսն այնպիսի՞ բարությամբ և խելամտորեն էր դատողություններ անում այդ մասին։

«Կալվածատիրոջ տանը» մեզ նույնիսկ թույլ չտվեցին խոսել։ Տիրուհին առանցքի մոտ մեզ դիմավորեց, հայտարարելով, որ մենք տասնչորսերորդ խումբն ենք, որոնց նա ճամփա է դնում վերջին մեկուկես ժամվա ընթացքում։ Մեր երկյուղած ակնարկները՝ գիշերել ախոռում, Բիլյարդասենյակում կամ նկուղում, նա լսեց արհամարհական քմծիծաղով։ Այդ բոլոր բները վաղուց արդեն գրավել են։

Ամբողջ գյուղում նա չգիտի՞ մի որևէ տեղ, որտեղ կարելի է մի գիշեր անցկացնել։

— Լավ, եթե համաձայն եք տանել որոշ կարգի անհարմարություններ, — նկատի ունեցեք, ինքը չէր երաշխավորում, — ապա Իթոն տանող ճանապարհով կես մղոն ներքև կա մի փոքրիկ գարեջրատուն...

Մենք չսպասեցինք շարունակությունը լսելու, ճանկեցինք պամբյուղը, պայուսակները, վերարկուները, ծածկոցաշալերը, փաթեթները և սլացանք։ Տարածությունը ոչ թե կես, այլ մի ամբողջ մղոն թվաց մեզ։ Վերջապես տեղ հասանք և շնչապառ մեզ զցեցինք գարեջրատուն։

Գարեջրատան տերերը շատ կոպիտ էին։ Նրանք պարզապես ծիծաղեցին մեզ վրա։ Ամբողջ տանը ընդամենը երեք մահճակալ կար, որոնց վրա արդեն քնած էին յոթ մի-

այնակ տղամարդիկ և երեք ամուսնական զույգեր։ Մի բարեսիրտ մակույկավար, որը պատահմամբ այդտեղ էր, ասաց, որ իր կարծիքով, լավ կանենք փորձել նպարավաճառի մոտ։ Դա «Եղնիկի» կողքին էր, և մենք ետ վերադարձանք։

Նպարավաճառի մոտ նույն դրությունն էր։ Խանութում մի ծեր կնոջ հանդիպեցինք։ Նա սիրով առաջարկեց ուղեկցել մեզ իր ընկերուհու մոտ, որը երբեմն վարձով սենյակ է տրամադրում տղամարդկանց։ Այնտեղ հասնելու համար քառորդ մղոն ճանապարհ պիտի անցնեինք։

Մեր կինը շատ դանդաղ էր քայլում, և մենք քսան րոպե շարունակ քայլում էինք։ Ճանապարհին այդ կինը մեզ զբաղեցնում էր, նկարագրելով, թե ինչ ցավեր է ունենում թիկունքում։

Պարզվեց, որ նրա ընկերուհու սենյակները արդեն զբաղված են։ Այնտեղից մեզ հանձնարարեցին գնալ № 27 տունը։ № 27-ը լեփլեցուն էր և մեզ ուղարկեցին № 32։ Դա նույնպես լիփլեցուն էր։

Այդ ժամանակ մենք վերադարձանք գլխավոր ճանապարհը։ Հարրիսը նստեց գամբյուզի վրա և հայտարարեց, որ այլևս ոչ մի տեղ չի գնա։ Նա ասաց, որ այդտեղ հարմարավետ անկյուն է և ցանկանում է հենց այդտեղ էլ հոգին ավանդել։ Նա խնդրեց Ջորջին ու ինձ իր փոխարեն համբուրել մորն ու հայտնել հարազատներին, որ ինքը ներել է նրանց և մահացել երջանիկ։

Այդ պահին մի հրեշտակ հայտնվեց փոքրիկ տղայի կերպարանքով (չեմ կարող հրեշտակի համար ավելի տպավորիչ կերպարանք պատկերացնել)։ Նա մի ձեռքում գարեջրով լի ման ուներ, մյուսում՝ պարանի ծայրին ամրացված ինչ-որ իր, որով հարվածում էր ճանապարհին հանդիպած հարթ քարերին, հետո նորից վեր էր ձգում՝ առաջացնելով սրտամորմոք հնչյուններ։

Մենք հարցրեցինք այդ երկնային պատգամաբերին (որը մենք հետագայում պարզեցինք), արդյոք նա չգիտի՞ մի որևէ մենավոր տուն, որի բնակիչները սակավաթիվ են կամ նվազ (ծեր լեդիները և անդամալույծ ջենտլմենները գերադասելի են), և որոնք հեշտությամբ կահաբեկվեն ու մի գիշերով կզիջեն իրենց անկողինները երեք հուսաբեկ տղամարդկանց։

Ո՞չ։ Իսկ գուցե նա մեզ մատնացույց կանի մի որևէ դատարկ խողանոց կամ դեն գցված թրծման վառարան, կամ դրա նման մի տեղ։ Տղան ոչ մի այդպիսի տեղ չգիտեր, համենայն դեպս՝ մոտակայքում, բայց ասաց, որ, եթե դեմ չենք, կարող ենք գնալ իրենց տուն։ Իրենք մի ապատ սենյակ ունեն և կարող են տեղավորել մեզ այնտեղ։

Մենք հենց այդտեղ, լուսնի լույսի տակ նրա վզովն ընկանք և սկսեցինք օրհնել նրան։ Դա շատ գեղեցիկ պատկեր կստացվեր, սակայն ափսոս, տղան այնքան շշմեց մեր հուզմունքից, որ անկարող եղավ հավասարակշռություն պահել և գետին տապալվեց, մեզ էլ գցելով իր հետ։ Հարրիսն ուրախությունից այնպես էր իրեն կորցրել, որ ճանկեց տղայի գարեջրով լի ամանը և մինչև խելքի կգար, կիսով չափ դատարկեց այն։ Դրանից հետո սկսեց վազել և իրերը տեղափոխելը թողեց Ջորջին ու ինձ։

Տղան ապրում էր չորս սենյակից բաղկացած մի փոքրիկ քոթեջում։ Նրա մայրը, մի բարեսիրտ կին, ընթրիքին մեզ տաք ազդրամիս մատուցեց, որը մենք անմիջապես խժռեցինք (հինգ ֆունտ), իսկ դրանից հետո էլ՝ մուրաբայով կարկանդակ և երկու թեյնիկ թեյ, որից հետո գնացինք քնելու։ Սենյակում երկու մահճակալ կար. երկու ոտնաչափ և վեց դյույմ երկարության ծալովի մի մահճակալի վրա քնեցինք Ջորջը և ես, սավանով ամուր կապվելով միմյանց, որպեսզի չընկնենք, իսկ մյուսը փոքրիկ տղայի մահճակալն էր, որն ամբողջությամբ դրվեց Հարրիսի տրամադրության տակ։ Առավոտյան տեսանք, որ մահճակալի ծայրից երկու ոտնաչափ երկարությամբ դուրս են ցցվել նրա մերկ սրունքները, և Ջորջն ու ես լվացվելիս դրանք օգտագործեցինք սրբիչները կախելու համար։

Հաջորդ անգամ Դատշետում գտնվելիս մենք այնքան էլ չմահավան չէինք հյուրանոցների հարցում։

Վերադառնալով նիրկայիս ճանապարհորդությանը, առանձնապես ոչ մի հետաքրքիր դեպք չպատահեց, և մենք շարունակեցինք ջանասիրաբար քարշել նավակը։ Կապիկների կղզին անցնելուց հետո կանգ առանք ու նախաճաշեցինք։ Մենք մեջտեղ բերեցինք սառը միսը և տեսանք, որ մոռացել ենք մանանեխ վերցնել։ Չեմ հիշում, որ երբևէ կյանքումս, այդ

ներից առաջ կամ հետո, մանանեխի կարիքը այնքան խիստ զգացած լինեմ։ Ես մանանեխ չեմ սիրում, և, որպես կանոն, շատ սակավ եմ օգտագործում, բայց այն օրը ես դրա համար ողջ տիեզերքը կտայի։

Հասկանում չդիտեմ, թե տիեզերքում քանի աշխարհ կա, բայց նա, ով այդ պահին ինձ մի թեյի գդալ մանանեխ տար, կարող էր վերցնել բոլորը։ Ես այդքան անխոհեմ եմ դառնում միայն այն ժամանակ, երբ որևէ բան եմ ցանկանում և չեմ կարողանում գտնել։

Հարրիսը խոստովանեց, որ ինքը նույնպես չէր ափսոսի աշխարհի հետ փոխել մանանեխը։ Այդ պահին ով էլ որ գար մանանեխի տուփը ձեռքին, երբեք չէր զղջա։ Նա իր ողջ կյանքում ապահովված կլիներ աշխարհներով։

Սակայն պետք է խոստովանեմ, որ Հարրիսն ու ես, երկուսս էլ մանանեխը ստանալուց հետո, կփորձեինք հրաժարվել այդ գործարքից։ Նման խելացնոր գործարքներ մարդ կնքում է հուզմունքի պահերին, բայց իհարկե, երբ սկսում է ավելի սառը դատել, հասկանում է, թե ինչպիսի աղաղակող անհամամասնություն կա փոխանակվող իրերի արժեքների միջև։ Մի անգամ Շվեյցարիայում սար բարձրանալիս, լսեցի, թե ինչպես մեկն ասաց, որ ողջ տիեզերքը կփոխեր մի բաժակ գարեջրի հետ և երբ նա մի փոքրիկ խրճիթի հասավ, որտեղ գարեջուր էին վաճառում, սարատեսի աղմուկ բարձրացրեց, որովհետև իրենից հինգ ֆրանկ էին պահանջել մեկ շիշ գարեջրի համար։ Նա աղաղակում էր, որ դա խայտառակ թալան է և այդ մասին գրեց «Թայմս»-ին։

Մանանեխի բացակայությունը վշտացրեց բոլորիս։ Մենք լռության մեջ կերանք միսը։ Գոյություն պահպանելը անիմաստ ու անհետաքրքիր էր թվում։ Մտաբերեցինք մանկության անհոգ օրերն ու խոր հոգոց հանեցինք։ Սակայն անցնելով խնձորով կարկանդակներին, մեր տրամադրությունը փոքր ինչ բարձրացավ, իսկ երբ Ջորջը զամբյուղի խորքից դուրս հանեց և դեպի նավակի մեջտեղը գլորեց անանասի հյութի բանկան, զգացինք, որ ապրել, այնուամենայնիվ, կարելի է։

Երեքս էլ անանաս շատ ենք սիրում։ Նայում էինք բանկայի վրայի նկարին և մտածում հյութի մասին։ Մենք ժպիտներ փոխանակեցինք, իսկ Հարրիսը գդալը պատրաստ պահեց ձեռքում։

Այնուհետև սկսեցինք փնտրել բացիչը։ Զամբյուղում եղած ամեն ինչ տակնուվրա արեցինք, պայուսակները՝ նույնպես։ Բարձրացրեցինք և թափ տվեցինք։ Բանկայի բացիչը չգտնվեց։

Այդ ժամանակ Հարրիսը փորձեց բանկան բացել գրպանի դանակով, բայց միայն կոտրեց դանակը և շատ խոր կտրեց մատը։ Ջորջը փորձեց բացել մի հրատով, որը սակայն դուրս թռավ նրա ձեռքից և քիչ մնաց աչքը հաներ։ Մինչ նրանք զբաղված էին իրենց վերքերը կապելով, ես փորձեցի բանկայի վրա անցք բաց անել կարթաձողի սուր ծայրով, բայց դա էլ ձեռքիցս սահեց ու ես հայտնվեցի նավակի և գետափի միջև, երկու ոտնաչափ խորությամբ տիղմի մեջ, իսկ բանկան անվնաս գլորվեց և կոտրեց թեյի դավաթը։

Դա արդեն մեզ համբերությունից հանեց։ Բանկան տարանք գետափ, Հարրիսը մի մեծ, սրածայր քար գտավ, իսկ ես նավակից բերեցի կարթաձողը։ Ջորջը պահեց բանկան. Հարրիսը քարի սուր ծայրը հարմարեցրեց բանկայի վրա, ես վերցրեցի կայմաձողը, վեր բարձրացրի և ամբողջ թափով հարվածեցի...

Այդ օրը Ջորջի կյանքը փրկեց նրա ծղոտե գլխարկը։ Մինչև հիմա նա պահում է այդ գլխարկը (ավելի ճիշտ ինչ մնացել է դրանից) և ձմռան երեկոներին, երբ նրա բնակիչները հավաքվում են, վառում են ծխամորճերը և սկսում ամեն տեսակի հեքիաթներ պատմել իրենց գլխով անցած վտանգների մասին, Ջորջն իջեցնում է գլխարկը, որը ձեռքից ձեռք է անցնում, և վերսկսում է հուզիչ պատմությունը՝ ամեն անգամ համեմելով նոր շափազանցություններով։

Հարրիսն ապատվեց թեթև մարմնական վնասվածքով։

Դրանից հետո որոշեցի մենակ զբաղվել այդ բանկայով և կայմաձողով այնքան հարվածեցի, մինչև ուժասպառ եղա ու վհատվեցի։ Այդ ժամանակ Հարրիսը գործի անցավ։

Բանկան մենք տափակացրինք, հետո կլորացրինք և տվեցինք այն բոլոր ձևերը, որ հայտնի են երկրաչափությանը, բայց չկարողացանք վրան անցք բաց անել։ Դրանից հետո Ջորջը սկսեց զբաղվել դրանով։ Նրա հարվածների տակ բան-

կան այնպիսի տարօրինակ, անբնական ու անհեթեթ ձև ընդունեց, որ Ջորջը վախեցավ և մի կողմ շպրտեց կայմաձողը։ Հետո երեքով շրջան կազմած նստեցինք խոտերի վրա և հայացքներս հառեցինք բանկային։ Դրա գագաթին մի խոր փոս կար, որը կարծես ծաղրում էր մեզ։ Դա այնպիսի կատաղություն հասցրեց բոլորիս, որ Հարրիսը նետվեց դեպի բանկան, ճանկեց և նետեց մինչև գետի մեջտեղը, և մինչ բանկան սուզվում էր, մենք նզովեցինք այն, հետո նավակ նստեցինք ու առանց դադարի թիավարեցինք մինչև Մեյդենհեդ։

Հաճելի լինելու համար Մեյդենհեդը չափազանց շքեղ վայր է։ Դա գետափնյա պենամոլների և նրանց զուգված-զարդարված ուղեկցուհիների սիրված վայրն է։ Մեյդենհեդը շքեղ հյուրանոցների քաղաք է, ուր գլխավորապես հաճախում են պենամոլներն ու բալետի պարուհիները։ Դա վհուկների խոհանոց է, որտեղից դուրս են գալիս գետի շար ոգիները՝ շոգենավակները։ «Լոնդոնյան օրագրից» յուրաքանչյուր դուքս անպայման իր «փոքրիկ բույնն» ունի Մեյդենհեդում, և երեքհատորանոց վեպերի հերոսուհիները միշտ այդտեղ են ճաշում, երբ դուրս են գալիս զվարճանալու ուրիշների ամուսինների հետ։

Մենք արագորեն անցանք Մեյդենհեդի կողքով, հետո դանդաղեցրինք ընթացքն ու անշտապ լողացինք գետի անչափ հիասքանչ հատվածով, որ գտնվում է Բուլտերյան և Քուկհեմյան շլյուզների միջև։ Քլիվոնյան անտառը հագել էր իր գարնանային գողտրիկ զգեստը, որն անմիջապես գետաբերանից ձգվում էր դեպի վեր, դեղեցիկ կանաչի ներդաշնակ երանգներով։ Ոչինչ չի խախտում այդ ներդաշնակ գեղեցկությունը։ Դա, հավանաբար, գետի ամենագեղեցիկ հատվածն է, և մենք դանդաղորեն, դժկամությամբ բաժանվում էինք այդ իսորունկ լռությունից։

Նավակը թիավարեցինք մինչև Քուկհեմից ներքև ընկած գետախորշը և թեյ խմեցինք։ Իսկ երբ անցնում էինք շլյուզը, արդեն երեկո էր։ Ի զարմանս մեզ, ուժգին և համընթաց քամի էր փչում։ Որպես կանոն, գետի վրա որ կողմ էլ որ գնաք, քամին միշտ հանդիպակաց է լինում։ Այն դիմացից է փչում առավոտյան, երբ մի օրով մեկնում եք զբոսանքի և երկար թիավարում եք, մտածելով, թե որքան հեշտ կլինի ձեր դործը

վերադառնալիս, առագաստները բացած։ Բայց թեյից հետո քամին կտրուկ փոխում է ուղղությունը, և ետդարձի ճանապարհին դարձյալ ստիպված եք թիավարել քամուն ընդառաջ։

Եթե հնարավոր մոդանաք առագաստ վերցնել, ապա անդադար համընթաց քամի կփչի։ Ի՞նչ կարող ենք անել։ Կյանքը միայն փորձություն է, և մարդը ծնված է նեղություններ կրելու, ինչպես կայծերը՝ վեր բարձրանալու համար։

Այդ երեկո, ամենայն հավանականությամբ, սխալ էր տեղի ունեցել, քանի որ քամին փչում էր մեր թիկունքին և ոչ թե դեմքին։ Մենք այդ մասին բարձրաձայն ոչինչ չասացինք, այլ արագորեն բարձրացրեցինք առագաստը, քանի դեռ սխալը չէին հայտնաբերել։ Դրանից հետո մոտավոր դիրքերով մեկնեցինք տախտակամածին, իսկ առագաստը ուշից, փնթփնթոցով կայմաձողի վրա, և նավակը առաջ սլացավ։

Ես ղեկակալն էի։

Չգիտեմ, առագաստով նավարկելուց ավելի գրավիչ բան կա՞։ Դա ավելի մոտ է սավառնելուն։ Քամու սլացող թևերը կարծես ձեզ առաջ են տանում, չգիտես, թե ուր։ Դուք այլևս այն թույլ, դանդաղաշարժ, ողորմելի արարածը չեք, որ դանդաղ սողում էր գետնի վրայով։ Դուք թռչության մասնիկն եք։ Ձեր սիրտը տրոփում է նրա սրտի հետ համաչափ։ Նրա սքանչելի թևերը գրկում են ձեզ և բարձրացնում վեր։ Էությամբ դուք նույնացել եք նրա հետ, կարծես թեթևացած լինեք։ Քամին ասես ձեզ համար է երգ ասում։ Երկրագունդը թվում է հեռու ու աննշան, ձեր գլխին այնքան մոտ ամպերի հետ կարծես եղբայրներ լինեք, և դուք ձեռք եք մեկնում նրանց։

Մենք գետի միակ տեր ու տիրակալն էինք։ Միայն հեռվում, գետի մեջտեղում մի ձկնորսական նավակ էր երևում, որտեղ երեք ձկնորս էին նստած։ Մենք լուռ սահեցինք ջրերի վրայով՝ ետևում թողնելով անտառապատ ափերը։

Ես էի ղեկակալը։

Մոտենալով ձկնորսական նավակին, տեսանք, որ այդ երեք ձկնորսները տարիքն առած, լրջախոհ մարդիկ էին։ Նրանք նստած էին նավակի մեջ դրված աթոռակների վրա և անթարթ նայում էին իրենց կարթերին։ Կարմրագույն մայ-

լամուտը առեղծվածային շողեր էր սփռել ջրերի վրա, արևով վառելով հսկայական ծառերը և ոսկե լուսապսակով շրջապատելով ամպերի կույտերը։ Դա խոր դյուքանքի, բերկրալի հույսի ու կարոտի ժամ էր։ Փոքրիկ առագաստը ձգվում էր դեպի ծիրանագույն երկինքը, մայրամուտի շողերը տարածվել էին մեր շուրջը՝ աշխարհը պարուրելով ծիածանի գույներով, իսկ մեր ետևից գաղտագողի մոտենում էր գիշերը։

Թվում էր, թե մենք ասպետներ ենք մի հին լեգենդից և լողում ենք կախարդական լճով դեպի մթնշաղի անտեսանելի թագավորությունը, դեպի մայրամուտի հիասքանչ աշխարհը։

Սակայն մենք ամենևին էլ մթնշաղի աշխարհը չընկանք, այլ ամբողջ թափով խփվեցինք նավակին, որտեղ այդ երեք մարդիկ հանգիստ նստած ձուկ էին որսում։ Սկզբում գլխի չընկանք, թե ինչ կատարվեց, որովհետև առագաստը մեր տեսադաշտը փակել էր։ Սակայն մեր լսողությանը հասած արտահայտություններից, որ մեզ էր բերում երեկոյան զեփյուռը, գլխի ընկանք, որ շատ մոտ հարևանության մեջ ենք գտնվում մարդկային արարածների հետ, որոնք խիստ բարկացած են ու դժգոհ։

Հարրիսը իջեցրեց առագաստը և միայն այդ ժամանակ տեսանք, թե ինչ էր կատարվել։ Մենք աթոռներից ցած էինք ցցել այդ երեք ջենտլմեններին։ Նրանք իրար վրա ընկած էին նավակի հատակին և դանդաղորեն ու դժվարությամբ փորձում էին վեր կենալ ու իրենց վրայից թափ տալ ձուկը։ Այդ ընթացքում նրանք հայհոյում էին մեզ ոչ թե սովորական, անչար հայհոյանքներով, այլ երկար, չափած ձևած, բազմաբովանդակ հայհոյանքներով, որոնք իրենց մեջ էին ընդգրկում մեր ողջ գործունեությունը և հասնում մինչև հեռավոր ապագան, ներառնում մեր բոլոր հարազատներին և այն ամենը, ինչ կապված էր մեզ հետ։ Դրանք ընտրովի, հիմնավոր հայհոյանքներ էին։

Հարրիսն ասաց, որ ամբողջ օրը ձկնորսությամբ զբաղվելուց հետո նրանք դեռ պետք է շնորհապարտ լինեն մեզ այդ փոքրիկ զվարճության համար։ Նա նաև ավելացրեց, որ զարմացած և վշտացած է, տեսնելով, որ նրանց տարիքի մարդիկ այդպես են արտահայտում իրենց զայրույթը։

Բայց դա չօգնեց։

Ջորջն ասաց, որ հիմա էլ ինքը կվարի նավակը։ Նա ասաց, որ այնպիսի մեկին, ինչպիսին ես եմ, չի կարելի վստահել նավակի ղեկավարումը. և ավելի լավ է, քանի դեռ չենք խորտակվել, թույլ տամ, որպեսզի մի որևէ սովորական մահկանացու զբաղվի այդ գործով։ Եվ նա իմ ձեռքից վերցրեց պարաններն ու մեզ հասցրեց մինչև Մարլո։

Մարլոյում նավակը թողեցինք կամրջի մոտ, իսկ ինքներս գնացինք գիշերելու «Թագ» հյուրանոցում։

Գլուխ տասներեքերորդ

Մարլու Բիշեմյան աբբայությունը։ Մեզմենհեմյան վանականները։ Մոնթմորենսին մոտադրվում է ապանել ծեր կապվին, հետո, հավանաբար, որոշում է, որ ավելի լավ է կենդանի թողնել նրան։ Ֆոքսթերիերի ամոթալի վարքը հանրախանութում։ Մեր մեկնումը Մարլոյից։ Տգավորիչ թափոր։ Շոգեմակույկներ. օգտակար խորհուրդներ, թե ինչպես տհաճություններ պատճառել ու խանգարել նրանց։ Մենք հրաժարվում ենք խմել գետի ջուրը։ Եռաղաղաներ շուրջ։ Հարրիսի ու կարկանդակի տարօրինակ անհետացումը։

Մարլոն իմ տեսած գետափնյա ամենահաճելի քաղաքներից մեկն է։ Դա աղմկոտ, աշխույժ, փոքրիկ քաղաք է։ Ճիշտ է, ընդհանուր առմամբ այնքան գեղատեսիլ չէ, սակայն, այնուհետև շատ գրավիչ, մեկուսի անկյուններ կարող ես գտնել։ Ժամանակի կանգուն մնացած կամարի վրայով մեր երևակայությունը տեղափոխվում է դեպի անցյալի գիրկը, դեպի այն օրերը, երբ Մարլո կալվածքը պատկանում էր Էլգար Մորսոնացուն։ Այնուհետև Վիլյամ Նվաճողը զավթեց այն ու հանձնեց Մաթիլդա թագուհուն։ Դրանից հետո կալվածքն անցավ Ուորվիքյան կոմսերին և իմաստուն Լորդ Փեչթին՝ շրջս հայոցակ միապետների խորհրդականին։

Եթե նավարկությունից հետո ցանկանում եք զբոսնել, ապա Մարլոյի շրջակայքում հիանալի վայրեր կգտնեք, թեև գնալ այստեղ ամենալավն է։

Մինչև Քուկհեմ ընկած հատվածն ու Քուերիի անտառից այն կողմ, շատ գեղեցիկ է։ Սիրելի, հին Քուերիի անտառ, քո նեղլիկ, մագլցող արահետներում ու փոքրիկ, ծուռումուռ բացատներում մինչև այսօր թափառում են ամառային արևոտ օրերի մասին հիշողությունները։ Քո սավերաշատ ծառուղիները այնքա՞ն լի են ծիծաղկոտ դեմքերի ուրվականներով, քո տերևների սոսափյունի մեջ դեռ լսվում են անցյալի ձայները։

Մարլոյից Սոննինգ ընկած հատվածում գետը նույնիսկ ավելի գեղեցիկ է։ Վեհասքանչ, հնամենի Բիշեմյան աբբայությունը, — որի քարե պատերի միջև լսվել են Տաճարական ասպետների[1] կանչերը և որը տարբեր ժամանակներում օթևան է ծառայել Աննա Քլեվացու և Էլիզաբեթ թագուհու համար, — գտնվում է գետի աջ ափին, Մարլոյի կամրջից կես մղոն վեր։ Բիշեմյան աբբայությունը հարուստ է մեկուդրամատիկ ռեկվիզիտներով։ Այնտեղ գոբելենով երեսպատված մի ննջարան կա և հաստ պատի մեջ թաքցված մի գաղտնի սենյակ։ Լեդի Հոլլիի ուրվականը, որը ծեծելով սպանեց իր փոքրիկ որդուն, մինչև այժմ գիշերները թափառում է այնտեղ՝ փորձելով իր անիրական ձեռքերը լվանալ երևակայական թասի մեջ։

Այստեղ է հանգչում Ուորվիքը՝ թագավորներ օծողը, բայց հիմա այնքան անտարբեր այնպիսի չնչին գործերի հանդեպ, ինչպիսիք երկրային թագավորներն են ու թագավորությունները, և Սոլսբերին, որն ազնվորեն է ծառայել Պուատյեին։ Երբ մոտենում եք աբբայությանը, հենց գետափին կանգնած է Բիշեմյան եկեղեցին և, եթե ընդհանրապես կան դամբարաններ, որոնք արժանի են այցելության, ապա դրանք Բիշեմյան եկեղեցում գտնվող դամբարաններն ու հուշարձաններն են։ Բիշեմյան հաճարենիների տակ նավակով գլոռնելիս է, որ Շելլին, որն այն ժամանակ ապրում էր Մարլոյում (այսօր էլ կարելի է տեսնել նրա տունը Արևմտյան փողոցում), գրել է իր հայտնի «Իսլամի ընդվզումը»։ Ես միշտ այն կարծիքին եմ եղել, որ Հերլիի ամբարտակի մոտակայքում, հոսանքով փոքր-ինչ վեր, կարող էի ապրել մի ամբողջ ամիս և դարձյալ

1. Տաճարական ասպետներ։ — Միջին դարերում կրոնական ու ռազմական օրդեն, նաև՝ օրդենի անդամներ։

չհագենալ բնապատկերների գեղեցկությամբ։ Ընդամենը հինգ լոպեի ճանապարհ է շլյուզից մինչև Հերլի գյուղը, որը գետի ափին եղած հինավուրց վայրերից է և գոյություն ունի,— այն խամրած գրերի անսովոր դարձվածաբանությամբ արտահայտված,— «Թագավոր Սեբերթի և թագավոր Օֆֆայի ժամանակներից»։ Ամբարտակից այն կողմ, (հոսանքով վեր), դանիական դաշտն է, որտեղ դանիացի զավթիչները[1] ճամբար էին խփել Գլոստերշիրի վրա հարձակվելիս, իսկ դրանից փոքր-ինչ այն կողմ, գետախորշում, ծվարել են Մեդմենհեմյան աբբայության ավերակները։

Հայտնի Մեդմենհեմյան վանականները կամ «Դժոխային կրակի ակումբը», ինչպես նրանց սովորաբար անվանում էին, եղբայրություն էին կազմել, որի նշանաբանն էր՝ «Ուրա ինչ ուզում ես»։ Այդ նշանաբանը, որը փորագրված էր աբբայության խարխլված դռնախորշերին, պահպանվել է մինչև մեր օրերը։ Աբբայության հիմնադրումից շատ տարիներ առաջ (որը սրբապիղծ կատակասերների միաբանություն էր), նույն տեղում եղել է ավելի խիստ բարքերի տեր մեկ ուրիշ վանք, որի վանականները շատ բանով տարբերվում էին այդ զվարճասերներից, որ հինգ հարյուր տարի անց փոխարինելու էին իրենց։

Բենեդիկտյան օրդենին պատկանող վանականները, որոնք աբբայություն էին հիմնել այստեղ 13-րդ դարում, որպես հատուստ կոպիտ բալախոններ ու փարաջա էին հագնում և հրաժարվում էին միս, ձուկ և ձու ուտելուց։ Նրանք ծղոտի վրա էին քնում և կեսգիշերին վեր էին կենում՝ պատարագ մատուցելու։ Օրն անց էին կացնում աշխատելով, կարդալով ու աղոթելով, և նրանց կյանքն անցնում էր գերեզմանային լռության մեջ, որովհետև նրանք չէին խոսում։

Դա մռայլ եղբայրություն էր և մռայլ կյանք էր վարում այդ գեղեցիկ վայրում, որն արարիչն այնքան պայծառ էր ստեղծել։ Տարօրինակ է, որ շրջապատող բնության ձայները՝

1. Սկանդինավյան ցեղերի արշավանքները դեպի Բրիտանական կղզիներ սկսվել են 8-րդ դարում։ 9-րդ դարի վերջին նրանք զավթել էին Թեմզա գետից հյուսիս գտնվող Անգլիայի ողջ տերիտորիան և Ուեդմորյան հայտնության (878 թ.) համաձայն, այդ տերիտորիան անվանեցին «Դանիական իրավունքի մարզ»։

ջրերի մեղմ երգը, սիզախոտի շշունջը, քամու երգը, նրանց չէին սովորեցրել կյանքի նկատմամբ ավելի ճիշտ վերաբերմունք ունենալ։ Օրեր շարունակ նրանք ուղնդրում էին լռությանը, սպասելով երկնքից ուղարկված պատգամի, որը ամբողջ օրվա և հանդիսավոր գիշերվա ընթացքում հասնում էր նրանց բնության բյուրավոր ձայներով, որոնց հանդեպ սակայն նրանք խուլ էին։

Մեղմենհեմյան շլյուզից մինչև գեղեցիկ Համբլդոնյան շլյուզը ընկած հատվածում գետը լի է հանդարտ գեղեցկությամբ, բայց Գրինլանդն անցնելուց հետո, որն իմ լրագրողի անհետաքրքիր ռեղիդենցիան է (այդ հանգիստ, համեստ ծեր ջենտլմենին հաճախ կարելի է տեսնել մոտակայքում միայնակ և եռանդուն կերպով թիավարելիս կամ շլյուզն անցնելիս հին պահակներից մեկնումեկի հետ սրտաբաց զրուցելիս), և Ջենլիից այն կողմ, գետը միապաղաղ ու տաղտկալի է դառնում։

Երկուշաբթի առավոտյան Մարլոյում մենք բավական վաղ արթնացանք ու նախաճաշից առաջ գնացինք լողալու։ Վերադարձի ճանապարհին Մոնմորընսին իրեն հիմարի պես էր պահում։ Միակ բանը, որի վերաբերյալ իմ ու Մոնմորընսիի հայացքները լրջորեն տարբերվում են՝ կատուներն են։ Ես սիրում եմ կատուներին, Մոնմորընսին՝ ոչ։

Երբ ես կատու եմ տեսնում, ասում եմ՝ «խեղճ փիսիկ», կռանում և շոյում եմ գլուխը, իսկ կատուն պոչը վեր է տընկում, երկաթի պես ձիգ, մեջքը կորացնում է և դունչը քսում շալվարիս փողքին։ Ամեն ինչ հաշտ ու համերաշխ է ընթանում։ Երբ Մոնմորընսին է կատու տեսնում, ամբողջ փողոցը իմանում է այդ մասին և տասը վայրկյանում այնքան հայհոյանքներ են վատնվում, որ ցանկացած կարդին մարդուն կբավականացնեն իր ամբողջ կյանքում, եթե իհարկե խնամքով ծախսվեն։

Ես չեմ մեղադրում իմ շանը (որպես կանոն, բավարավում եմ նրանով, որ ուժեղ խփում եմ գլխին կամ քարեր եմ նետում վրան), քանի որ հասկանում եմ, որ այդպիսին է նրա բնությունը։ Ֆոքսթերիերները համարյա շորս անգամ ավելի շատ բնածին մեղր ունեն իրենց մեջ, քան մյուս շները և մեղրից՝ բրիստոնյաներից, երկար տարիների համբերատար

ջանքեր են պահանջվում, որպեսզի ինչ-որ չափով փոխենք Ֆոքսթերիերի խուլիգանական ներաշխարհը։

Հիշում եմ, մի անգամ Հեյմարքեթի ունիվերմագի նախասրահում էի, շուրջս շատ շներ կային, որոնք սպասում էին խանութում առնուտուր անող իրենց տերերին։ Այնտեղ մի մատիֆ կար, մեկ-երկու քոլլի, մի սենթ-բեռնար, մի քանի որսկան շներ և նյուֆաունդլենդներ, մի գամփռ՝ գլխի շուրջը խիտ, իսկ գագաթին տրորված մազափնջով, մի ֆրանսիական պուդել, մի բուլդոգ, առնետի մեծության մի քանի լեբետկաներ և մի զույգ յորքշիրյան բակապահ շուն։

Նրանք համբերությամբ, հանգիստ և մտածմունքի մեջ ընկղմված նստել էին։ Նախասրահում հանդիսավոր լռություն էր տիրում։ Խաղաղությամբ, հեզությամբ և լուռ տխրությամբ էր շնչում սենյակը։

Եվ ահա մի երիտասարդ կին ներս մտավ, առաջնորդելով արտաքինից համեստ մի ֆոքսթերիերի, ու շղթայով կապեց բուլդոգի և պուդելի միջև։ Ֆոքսթերիերը նստեց ու մի պահ սկսեց շուրջը դիտել։ Հետո աչքերը հառեց առաստաղին և պատելով նրա տեսքից, կարելի էր կարծել, թե հիշել էր իր ծնողին։ Քիչ անց հորանջեց և սկսեց դիտել մյուս շներին, որոնք բոլորն էլ լուռ, ծանր ու մեծ և արժանապատվությամբ լի նստած էին։

Նայեց բուլդոգին, որը հանգիստ նստած էր նրանից աջ, նայեց ձախ կողմում գտնվող գլուխը բարձր պահած դոգող պուդելին։ Հետո հանկարծ, առանց որևէ նախազգուշացման և առիթի, կծեց պուդելի իր կողմի առջևի թաթը, և օրհասական ոռնոցը լցրեց նախասրահի կիսամութ անդորրը։

Այս առաջին փորձի արդյունքը հավանաբար ահագին բավականություն պատճառեց նրան և նա որոշեց շարունակել նույն ոգով ու շուրջը բոլորին աշխուժացնել։ Պուդելի վրայից նա թռիչք կատարեց և եռանդուն հարձակում գործեց քոլլիի վրա։ Քոլլին արթնացավ և անմիջապես կատաղի ու ազմկոտ պայքար սկսեց պուդելի հետ։ Դրանից հետո մեր ֆոքսին իր տեղը վերադարձավ և բռնելով բուլդոգի ականջից, փորձեց գետին տապալել նրան։ Այդ ժամանակ բուլդոգը, մի տարտինակ անկողմնակալ կենդանի, հարձակվեց բոլորի վրա,

որոնց կարողացավ հասնել, ներառյալ և դոնապանը։ Իսկ մեր փոքրիկ ֆոքսթերիերի համար հնարավորություն ընձեռվեց իր նման պատրաստակամ բակապահ շան հետ միասին հիանալու իր իսկ ստեղծած տուրուդմփոցով։

Ամեն ոք, ով ծանոթ է շների բնավորությանը, հեշտությամբ գլխի կընկնի, որ այդ ժամանակ նախասրահում եղած բոլոր շները կռվում էին այնպիսի ոգևորությամբ, կարծես այդ մարտի ելքից էր կախված իրենց ու իրենց ցեղի բախտը։ Մեծ շները, առանց բացառության կռվում էին բոլորի հետ, փոքրերը կռվում էին իրենց նմանների հետ՝ ազատ ժամանակը լցնելով նրանով, որ կծում էին մեծ շների թաթերը։

Նախասրահը վերածվեց իսկական դժոխքի։ Սարսափելի ազմուկ-աղաղակ բարձրացավ։ Դրսում, Հեյմարքեթի հրապարակում, ամբոխ էր հավաքվել, և մարդիկ հարցնում էին, թե այդ ի՞նչ միտինգ է, կամ ո՞ւմ են սպանել և ինչու՞։ Ինչ-որ մարդիկ եկան ձողերով ու պարաններով և փորձեցին շներին բաժանել միմյանցից, նույնիսկ ոստիկանություն կանչեցին։

Տուրուդմփոցի ամենաթեժ պահին այն հաճելի արտաքինով երիտասարդ կինը վերադարձավ, գիրկն առավ իր փոքրիկ, քաղցրիկ շնիկին (որը բակապահ շանը մոտ մի ամսով շարքից հանել էր, իսկ ինքը հիմա նորածին գառնուկի տեսք ուներ), համբուրեց և հարցրեց, արդյոք նա դեռ կենդանի՞ է և ի՞նչ են արել նրան այդ դարշելի գամփռները։ Իսկ մեր հերոսը թառել էր նրա գրկին ու այնպիսի հայացքով էր նայում, կարծես ուզում էր ասել. «Որքան ուրախ եմ, որ եկել ու ինձ հեռացնում եք այս ամոթալի տեսարանից»։

Երիտասարդ կինն ասաց, որ խանութի աշխատակիցները չպետք է թույլ տան անպատիժարակ շներին պահել հարգարժան մարդկանց շների հետ մեկտեղ և որ ինքը մտադիր է ոմանց պատասխանատվության կանչել։

Այսպիսին է ֆոքսթերիերի բնությունը և այդ պատճառով ես չեմ մեղադրում Մոնթմորընսիին կատուների հետ կռվելու նրա հակման համար։ Բայց այդ առավոտ նա զղջաց, որ իրեն այլ կերպ չդրսևորեց։

Ինչպես արդեն ասացի, լողափից էինք վերադառնում և երբ բարձրանում էինք կենտրոնական փողոցով, առջևի տնե-

րից մեկից դուրս ցատկեց մի կատու և սկսեց արագ անցնել փողոցը։ Մոնթմորընսին ուրախ ճիչ արձակեց, դաժան ռազմիկի ճիչ, որը տեսնում է, որ հակառակորդն իր ձեռքում է, այնպիսի մի ճիչ, ինչպիսին Կրոմվելն է հավանաբար արտաբերել, — երբ շոտլանդացիները սարերից ցած են իջել, — ու սլացել է իր որսի ետևից[1]։

Մոնթմորընսիի զոհը մի մեծ, սև կատու էր։ Ավելի մեծ ու անվայելչատես կատու կյանքումս տեսած չկամ։ Նա կորցրել էր իր պոչի կեսը, մի ականջը և քթի մեծ մասը։ Դա երկար մարմնեղ կենդանի էր և հանգիստ ու ինքնագոհ տեսք ուներ։

Մոնթմորընսին սլացավ այդ խեղճ կենդանու ետևից ժամում քսան մղոն արագությամբ, բայց կատուն չէր շտապում, կարծես դեռ չէր գիտակցում, որ իր կյանքը վտանգի մեջ է։ Նա շարունակեց մանր քայլերով վազելով անցնել փողոցով, մինչև նրա հնարավոր դահիճը հայտնվեց մեկ յարդ հեռավորության վրա։ Այդ ժամանակ նա շրջվեց, նստեց փողոցի մեջտեղում և սիրալիր ու հարցական հայացքով նայեց Մոնթմորընսիին, կարծես ուզում էր ասել.

— Այո՞, Ձեզ ինչ-որ բա՞ն է պետք։

Ոչ, Մոնթմորընսին քաջության պակաս չի զգում, բայց այդ կատվի հայացքում մի ինչ-որ բան կար, որ կասրտեցներ ամենաքաջ շանն անգամ։ Նա կտրուկ կանգ առավ և նույնպես նայեց կատվին։

Երկուսն էլ լուռ էին, բայց կարելի էր պատկերացնել, որ այսպիսի խոսակցություն էր տեղի ունենում նրանց միջև։

Կ ա տ ո ւ — Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել։

Մ ո ն թ մ ո ր ը ն ս ի. Ոչ... ոչ, շնորհակալություն։

Կ ա տ ո ւ — Մի քաշվեք, ասացեք, եթե Ձեզ որևէ բան է պետք։

Մ ո ն թ մ ո ր ը ն ս ի — (Նահանջելով կենտրոնական փողոցով ցած), — Օ՜, ոչ։ Ի՞նչ եք ասում... Իհարկե... Մի անհանգստացեք։ Ես... վախենում եմ, որ սխալվել եմ։ Ինձ թվաց, թե ճանաչում եմ Ձեզ։ Ներեցեք անհանգստացնելու համար։

---

[1]. Հեղինակը նկատի ունի 1650 թ., երբ Դունբարի մոտ Կրոմվելը պարտության մատնեց շոտլանդացիների բանակը։

Կ ա տ ո ւ — Կարիք չկա։ Շատ հաճելի է։ Ձեզ իսկապե՞ս ոչինչ պետք չէ։

Մ ո ն թ մ ո ր ը ն ս ի — (Շարունակելով նահանջել).— Կարիք չկա, շնորհակալ եմ, ոչ։ Դուք անչափ սիրալիր եք։ Յոհաննություն։

Կ ա տ ո ւ — Յոհաննություն։

Դրանից հետո կատուն վեր կացավ և շարունակեց իր ճանապարհը, իսկ Մոնթմորընսին ոչն իրեն քաշեց, վերադարձավ մեզ մոտ ու աննկատ դիրքավորվեց մեր հետևում։

Մինչև այսօր, եթե Մոնթմորընսիի մոտ արտասանեք «կատու» բառը, նա վեր կթռչի և խղճալի հայացքով կնայի ձեզ, կարծես ասելով.

— Խնդրում եմ, պետք չէ։

Նախաճաշից հետո մենք գնումներ արեցինք և նավակը բեռնավորեցինք երեք օրվա պարենով։ Ջորջն ասաց, որ պետք է բանջարեղեն վերցնենք, բանջարեղենը անհրաժեշտ է օրգանիզմի համար։ Նա ասաց, որ դրա պատրաստելը շատ հեշտ է և ինքը դա իր վրա է վերցնում։ Եվ այսպես, մենք տասը ֆունտ կարտոֆիլ վերցրեցինք, մի բուշել[1] լիքը սիսեռ ու մի քանի գլուխ կաղամբ։ Հյուրանոցից գնեցինք մսով ու հաղարջով կարկանդակներ և ոչխարի մի ազդր։ Իսկ միրգ, խմորեղեն, հաց ու կարագ, մուրաբա, ապխտած միս, ձու և այլ սննդամթերքներ գնելու համար ստիպված էինք շրջել քաղաքում։

Մեկնումը Մարլոյից արդարև համարում եմ մեր խոշորագույն նվաճումներից մեկը։ Առանց ցուցադրական լինելու, միաժամանակ դա տպավորիչ էր և արժանապատվությամբ լի։ Բոլոր խանութներում, որոնց պատվում էինք մեր այցելությամբ, պնդում էինք, որ մեր գնումներն անհապաղ ուղարկվեն մեզ հետ։ Ոչ մի՝ «լավ, սըր։ Ես անմիջապես կուղարկեմ։ Տղան Ձեզանից շուտ տեղ կհասնի, սըր», թե չէ հետո ստիպված պետք է լինենք պատվել նավամատույցին, երկու անգամ խանութ վերադառնալ և աղմուկ բարձրացնել։ Սպասում էինք, մինչև զամբյուղի մեջ էին տեղավորում մեր գնումները և մեզ հետ էինք վերցնում առաքիչ տղային։

[1]. Բուշել=36,346 լիտր։

Բավական շատ խանութներ այցելեցինք, ամենուրեք կիրառելով նույն կանոնը և արդյունքն այն եղավ, որ երբ գնումներն ավարտեցինք, զամբյուղներով առաքիչ տղաների այնպիսի հիանալի հավաքածո էր հետևում մեզ, ինչպիսին միայն երազում կարելի է տեսնել։ Մեր եզրափակիչ երթը՝ կենտրոնական փողոցով դեպի գետը, պետք է որ այնպիսի տպավորիչ տեսարան լիներ, որին վազուց ի վեր Մարլոն ականատես չէր եղել։

Թափորը առաջ էր շարժվում հետևյալ դասավորությամբ։

Մոնթմորընսին՝ ատամներով ձեռնափայտը բռնած։

Երկու կասկածելի արտաքինով բակապան շներ՝ Մոնթմորընսիի ընկերները։

Ջորջը՝ վերարկուները և ծածկոցաշալերը ձեռքին, կարճ ծխամորճը ատամների միջև։

Հարրիսը՝ փորձելով առաջ շարժվել անբռնազբոսիկ քայլվածքով, մի ձեռքին բերնեբերան լցված կաշվե ճամպրուկը, մյուսին՝ լիմոնի հյութով լի մի շիշ։

Կանաչավաճառի ու հացավաճառի առաքիչները՝ զամբյուղներով։

Հյուրանոցի սպասավորը՝ զամբյուղը քարշ տալով։

Հրուշակագործի առաքիչը՝ զամբյուղով։

Պարենավաճառի առաքիչը՝ զամբյուղով։

Մի երկարամազ շուն։

Պանրավաճառի առաքիչը՝ զամբյուղով։

Մի պատահական անցորդ՝ քարշ տալով պայուսակը։

Պատահական անցորդի մտերիմ ընկերը՝ ձեռքերը գրպանը դրած, ծխելով ծխամորճը։

Մսավաճառի առաքիչը՝ զամբյուղով։

Ես ինքս՝ երեք գլխարկ ու մի զույգ երկարաճիտ կոշիկներ ձեռքիս, ձեացնելով, իբր ոչինչ չեմ նկատում։

Վեց մանկահասակ տղաներ և չորս անտեր շներ։

Երբ մոտեցանք նավամատույցին, մակույկավարը հարցրեց.

— Ներեցեք, սըր, ձերը շոգեմակո՞ւյկ էր, թե լողացող տուն։

Լսելով, որ մերը չորս թիանի նավակ է, մակույկավարը պարզացած տեսք ընդունեց։

Այդ առավոտ մենք շոգեմակուլկների պատճառով բավական գլխացավանքի մեջ ընկանք։ Հենլեյան[1] մրցումների նախօրյակն էր և մեծ թվով շոգեմակուլկներ էին հանդիպում, մի մասը առանձին, մյուսները իրենց հետևից քարշելով լողացող տներ։ Ես ատում եմ ամեն տեսակի շոգեմակուլկները և կարծում եմ, որ ամեն մի թիավար նույն կարծիքին է։ Ամեն անգամ, երբ շոգեմակուլկ եմ տեսնում, զգում եմ, որ մեջս անզուսպ ցանկություն է առաջանում՝ գայթակղել նրան, տանել մի որևէ խուլ անկյուն և այնտեղ, լռության ու միայնության մեջ, ջրասույզ անել։

Շոգեմակուլկների մոտ մի այնպիսի աղաղակող ինքնավստահություն կա, որն իմ մեջ արթնացնում է ամենաչարակամ բնազդները և ես ափսոսում եմ այն անցած-գնացած օրերը, երբ կարող էիք գնալ ու կացնի կամ նետ ու աղեղի միջոցով ցույց տալ մարդկանց, թե ինչ կարծիքի եք նրանց մասին։ Հենց միայն նավախելին կանգնած մարդու դեմքի արտահայտությունը՝ ձեռքերը գրպանը դրած և սիգարը ատամների միջև, բավական է, հասարակական կարգ ու կանոնը խանգարելու համար, իսկ տիրական սույլոցը, որ հրամայում է ազատել ճանապարհը, համոզված եմ, որ կապահովի բնակիչներից կազմված երդվյալների դատարանի որոշումը՝ ապանությունը արդարացի համարելու մասին։

Նրանք ստիպված էին լինում սույլել, որ իրենց ճանապարհից դուրս գային։ Չեմ ուզում պարծենկոտի համբավ ձեռք բերել, բայց կարող եմ համոզված ասել, որ մեր փոքրիկ նավակը այդ շաբաթների ընթացքում ճանապարհին հանդիպող շոգեմակուլկներին ավելի շատ տհաճություններ ու գլխացավանք պատճառեց, քան գետի վրայի բոլոր նավակները միասին վերցրած։

— Շոգեմակուլկ է մոտենում, — գոռում էր մեզանից մեկն ու մեկը՝ հեռվում նկատելով թշնամուն, և մի ակնթարթում ամեն ինչ պատրաստ էր նրան ինչպես հարկն է դիմավորելու համար։ Ես անցնում եմ ղեկի մոտ, Հարրիսն ու Ջորջը տեղավորվում են իմ կողքին, մեջքով դեպի շոգեմակուլկը, իսկ նավակը դանդաղ լողում է դեպի գետի մեջտեղը։

Շոգեմակուլկը սույլելով մոտենում է, իսկ մենք շարունակում ենք լողալ։ Մոտ հարյուր յարդ հեռավորության վրա շոգեմակուլկը սկսում է սույլել խելագարի պես, իսկ բոլոր ուղևորները տախտակամածից ցած են թեքվում և աղաղակում, բայց մենք նրանց չենք լսում։ Հարրիսը մեզ ինչ-որ զվարճալի պատմություն է պատմում իր մոր մասին, իսկ Ջորջն ու ես այնպես ենք լսում, կարծես աշխարհում ոչ մի բանի հետ նրա մի քառն անգամ չենք փոխի։

Այդ ժամանակ շոգեմակուլկը վերջին անգամ այնպիսի ականջ ծակող սույլոց է արձակում, որ քիչ է մնում կաթսան հօդս ցնդի, հետո դանդաղեցնում է ընթացքը, շրջան է գծում և ի վերջո խրվում տիղմի մեջ։ Տախտակամածի վրա գտնվողները հավաքվում են նավաթթում և ինչ-որ բան են գոռում մեզ, գետափին նույնպես մարդիկ են հավաքվում և գոռում, մյուս նավակներն էլ կանգ են առնում և միանում նրանց, մինչև որ ամբողջ գետի վրա մի քանի մղոն տարածության վրա խելահեղ իրարանցում է սկսվում։ Այդ ժամանակ Հարրիսը ամենահետաքրքիր տեղում ընդհատում է իր պատմությունը, զարմանքով շուրջն է դիտում և ասում Ջորջին.

— Ջորջ, գրողը տանի, կարծես դա շոգեմակուկ է։

Իսկ Ջորջը պատասխանում է.

— Ճիշտ որ, ես նույնպես կարծես ինչ-որ ձայներ եմ լսում։

Դրանից հետո մենք սկսում ենք ջղայնանալ և հուզվել, քանի որ չգիտենք, թե նավակը ինչպես հեռացնենք ճանապարհից։ Իսկ շոգեմակուլկի վրա խմբված մարդիկ սկսում են ցուցումներ տալ մեզ.

—Աջ կողմով թիավարեք։ Հիմարի մեկը... Ձախով հա՛, ոչ, դա չէ, մյուսը... Դե վերջապես հանգիստ թողեք ղեկը...Հիմա երկուսով միասին։ Այդպես չէ։ Էխ, դուք...

Նրանք ստիպված նավակ են իջեցնում՝ մեզ օգնելու համար և քառորդ ժամ տևող ջանքերից հետո մեզ հեռացնում են ճանապարհից, այնպես, որ շոգեմակուկը կարողանա շարունակել ճանապարհը, իսկ մենք նրանց շնորհակալություն

---

[1]. Հենլեյան մրցումներ—Սպորտային նավակների ամենամյա մրցումներ, որ անցկացվում են Թեմզայի վրա, Հենլիի մոտ։

ենք հայտնում և խնդրում ենք բուքսիրի վերցնել։ Բայց նրանք չեն համաձայնում։

Արիստոկրատ տեսքով շոգեմակուլիներին զայրացնելու մեկ այլ լավ միջոց ենք հայտնաբերել. ձեացնում ենք, իբր դրանց լողացող ռեստորանի հետ ենք շփոթել և հարցնում ենք, արդյոք նրանք պատկանում են պարոնայք Կուբիտներ՞ն, թե «Բերմոնդսյան բարի ասպետներին», և խնդրում ենք փոխաբերաբար տալ ճաշի կարգեցան։

Ամենակարևորը, որ սովոր չեն գետին, միշտ անչափ նյարդայնանում են շոգեմակուլիների պատճառով։ Հիշում եմ, մի անգամ Սթեյնզից Վինձոր էինք լողում (գետի այս հատվածը հատկապես լի է նմանօրինակ մեխանիկական հրեշներով) երեք այդպիսի լեդիների ուղեկցությամբ։ Դա շատ հուզիչ իրադարձություն էր։ Շոգեմակուլիկ երևալուն պես, նրանք պնդում էին, որ ցանկանում են ափ իջնել և նստել գետափին, մինչև շոգեմակուլիկը հեռանա իրենց տեսադաշտից։ Նրանք խնդրեցին ներողամիտ լինել իրենց նկատմամբ, քանի որ պարտավոր էին հանուն իրենց ընտանիքների վտանգի չենթարկել իրենց կյանքը։

Համբլդոնյան շլյուզի մոտ պարզեցինք, որ խմելու ջուր չունենք։ Վերցրեցինք ջրամանը և դնացինք շլյուզի պահակի տնակը՝ ջուր խնդրելու։

Բանակցություններ վարողը Ջորջն էր։ Նա շողոքորթաբար ժպտալով, ասաց.

— Ասացեք, խնդրում եմ, չե՞ք կարող մի քիչ ջուր բաժին հանել մեզ։

— Իհարկե, — պատասխանեց ծեր ջենտլմենը, — վերցրեք որքան ուզում եք և մնացածը թողեք։

— Անչափ շնորհակալ եմ, — մոթմոթաց Ջորջը, շուրջը դիտելով, — որտե՞ղ... որտե՞ղ եք պահում ջուրը։

— Միշտ միևնույն տեղում, տղաս, — պատասխանեց նա, — ճիշտ ձեր ետևում։

— Ես ոչինչ չեմ տեսնում, — ասաց Ջորջը, շրջվելով։

— Որտե՞ղ են Ձեր աչքերը, գրողը տանի, — ասաց պահակը շրջելով Ջորջին և ցույց տալով իրենց առջև տարածված գետը, — այստեղ բավականաչափ ջուր կա, մի՞թե չեք տեսնում։

— Օ՜, — բացականչեց Ջորջը, վերջապես ըմբռնելով նրա միտքը։ — Բայց մենք չենք կարող խմել գետը։

— Իհարկե ոչ, բայց մի քիչ կարող եք խմել,— առարկեց ծերուկը։ — Համենայն դեպս, ես արդեն տասնհինգ տարի է, ինչ այդ ջուրն եմ խմում։

Ջորջը նրան ասաց, որ այնուամենայնիվ նրա արտաքին ֆիրմայի համար այնքան էլ հաջող ռեկլամ չէ և որ ինքը գերադասում է ջրհորի ջուրը։

Մենք մի քիչ ջուր վերցրեցինք հոսանքով փոքրինչ վեր գտնվող քոթեջից։ Ամենայն հավանականությամբ, դա նույնպես գետի ջուր էր։ Բայց մենք ոչինչ չհարցրեցինք, և ամեն ինչ հիանալի էր։ Ինչ աչքը չի տեսնում, ստամոքսը չի բողոքում։

Մի անգամ, ավելի ուշ, այնուամենայնիվ, փորձեցինք գետի ջուրը, բայց՝ անհաջող։ Մենք հոսանքով վար էինք լողում և թեյելու համար կանգ առանք Վինձորի մոտ, գետախորշում։ Ջրամանը դատարկ էր, և մենք կամ պետք է առանց թեյի մնայինք կամ էլ գետից ջուր վերցնեինք։ Հարրիսը առաջարկեց վերջինը։ Նա ասաց, որ ամեն ինչ լավ կլինի, եթե ջուրը ինչպես հարկն է եռացնենք։ Եռացնելիս ջրի մեջ եղած բոլոր միկրոբները ոչնչանում են։ Այսպիսով, մենք թեյնիկը լցրեցինք Թեմզայի գետախորշի ջրով, դրեցինք կրակի վրա և հանգամանորեն հետևեցինք, որ ջուրը եռա։

Թեյն արդեն պատրաստ էր, և մենք հարմար տեղավորվել էինք խմելու, երբ Ջորջը, որը դավաթը համարյա մոտեցրել էր շուրթին, բացականչեց.

— Այն ի՞նչ է։

— Ի՞նչն է ինչ, — միաժամանակ հարցրեցինք Հարրիսն ու ես։

— Ահա այն, — ասաց Ջորջը նայելով դեպի արևմուտք։

Հարրիսն ու ես հետևեցինք նրա հայացքին և մի շուն տեսանք, որը, հանձնված գետի թույլ հոսանքին, լողում էր դեպի մեզ։ Դա իմ տեսած ամենահանգիստ և խաղաղասեր շներից մեկն էր։ Ես երբեք չեմ հանդիպել մի շան, որն այդքան բավարարված ու անվրդով լիներ։ Նա մեջքի վրա պառկած և շորս ոտքերը օդում ցցած երազկոտ օրորվում էր։ Դա, ինչպես ասում են, մարմնեղ շուն էր, լավ զարգացած

կրծքավանդակով։ Ահա նա մոտեցավ՝ անվրդով, արժանապատվությամբ լի և հանդարտորեն, մինչև հավասարվեց մեր նավակին և այդտեղ, եղեգների մոտ, կանգ առավ ու հարմար տեղավորվեց, ասես մտադրվեց հենց այդտեղ էլ գիշերել։

Ջորջն ասաց, որ ոչ մի թեյ էլ չի ուզում՝ և իր գավաթը դատարկեց գետի մեջ։ Հարրիսը նույնպես ծարավ չէր ղգում և հետևեց նրա օրինակին։ Ես ուրեն խմել էի իմ թեյի կեսը, բայց ամեն ինչ կտայի, որ խմած չլինեի։

Ես հարցրեցի Ջորջին, թե նրա կարծիքով կհիվանդանա՞մ տիֆով։

Նա պատասխանեց՝ օ, ոչ, ես շատ շանսեր ունեի խուսափելու դրանից։ Համենայն դեպս, երկու շաբաթից ամեն ինչ կպարզվեր։

Մենք գետախորշով լողացինք վեր, մինչև Ուորգրեյվ։ Դա կարճ ճանապարհն է, որը տանում է մինչև Մարշ շլյուզից կես մղոն վեր, և արժե նրանից օգտվել, քանի որ գետի գեղատեսիլ ու սավերաշատ հատվածներից է և, բացի դրանից, տարածությունը կրճատվում է կես մղոնով։

Իհարկե, մուտքը դեպի ջրանցքը փակված է գերաններով ու շղթաներով և, իհարկե շրջապատված նախազգուշացումներով, որոնք ամեն տեսակի տանջանքներ, բանտարկություն և մահ են սպառնում բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեն այդտեղի ջրերի մեջ մխրճել իրենց թին։ Ջարմանում եմ, որ այդ առափնյա անտաշ հողատերերը արգելք չեն դնում գետի օդի վրա և չեն սպառնում քառասուն շիլլինգ տուգանքով բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեն շնչել այն։ Բայց մի փոքր հմտություն բանեցնելու դեպքում գերաններն ու շղթաները կարելի է շրջանցել, իսկ ինչ վերաբերում է գրություններին, ապա եթե հինգ բոպե աղատ ժամանակ ունեք և շուրջը ոչ ոք չկա, կարող եք պոկել նրանցից մի երկուսը և ջուրը նետել։

Ջրանցքի կեսն անցնելուց հետո մենք ափ դուրս եկանք նախաճաշելու և այդ ժամանակ էր, որ Ջորջն ու ես բավական տանջալից հոգեկան ցնցում ապրեցինք։

Հարրիսը նույնպես քիչ ապրումներ չունեցավ, բայց դա

նրա վրա այնքան խոր ազդեցություն չթողեց, որքան Ջորջի և ինձ վրա։

Ուրեմն այսպես։ Մենք նստած էինք մարգագետնում, գետից տասի յարդ հեռու և նախաճաշելու համար հենց նոր հարմար տեղավորվել էինք խոտերի մեջ։ Հարրիսը ծնկների միջև պահել էր մսով կարկանդակը և կտրատում էր, իսկ Ջորջը և ես ափսեները պատրաստ պահած սպասում էինք։

— Գդալ կա՞, — հարցրեց Հարրիսը, — մի գդալ տվեք կերակրահյութը լցնելու համար։

Ջամբյուղը մեր ետևում էր, և Ջորջն ու ես միաժամանակ շրջվեցինք գդալը հանելու։ Գդալը հանելը հինգ վայրկյան էլ չտևեց։ Երբ մենք նորից շրջվեցինք, Հարրիսը և կարկանդակը չքվել էին։

Մենք լայնարձակ, բաց դաշտում էինք։ Հարյուրավոր յարդեր հեռավորության վրա ոչ ծառ կար, ոչ թուփ։ Նա չէր կարող ջուրն ընկնել, քանի որ մենք ջրին ավելի մոտ էինք և ջուրն ընկնելու համար Հարրիսը ստիպված պետք է լիներ անցնել մեզ վրայով։

Ջորջը և ես զննեցինք մեր չորս կողմը։ Հետո նայեցինք միմյանց։

— Գուցե նա երկի՞նք է համբառնել,— հարցրեցի ես։

— Հազիվ թե կարկանդակն էլ հետը վերցրած լիներ, — պատասխանեց Ջորջը։

Այս առարկությունը բավականաչափ հիմնավոր թվաց, և երկնային տեսությունը ժխտվեց։

— Իմ կարծիքով ավելի հավանական է, — ասաց Ջորջը, վերադառնալով տափակ և գործնական մտածողությանը, — որ երկրաշարժ է եղել։

Հետո ձայնի մեջ տխուր շեշտ դնելով, ավելացրեց.

— Միայն ափսոս, որ դա կարկանդակը կտրելու ժամանակ տեղի ունեցավ։

Խոր հոգոց հանելով, մեր աչքերն ուղղեցինք այնտեղ, որտեղ երկրի վրա վերջին անգամ տեսել էինք Հարրիսին ու կարկանդակը։ Եվ հանկարծ արյունը սառեց մեր երակներում և փշաքաղվեցինք, երբ տեսանք Հարրիսի գլուխը, ուրիշ ոչինչ, միայն գլուխը, որ դուրս էր ցցվել բարձր խոտերի միջից. գլուխը բարկությունից ամբողջապես կարմրատակած էր։

Առաջինը Ջորջը ուշքի եկավ։

— Խոսիր,— ճչաց նա,— ասա կենդանի՞ ես թե մեռած և ո՞ր է մարմինդ։

— Դե, քեզ հիմարի տեղ մի դիր, — ասաց Հարրիսի գլուխը։ — Այս ամենը դուք եք սարքել։

— Ի՞նչ ենք սարքել,— գոչեցինք Ջորջն ու ես։

— Նստեցրել եք այստեղ։ Շատ հիմար կատակ է։ Բրոնեք կարկանդակը։

Եվ ուղիղ հողագնդի կենտրոնից, ինչպես թվաց մեզ, վեր բարձրացավ կարկանդակը, խիստ տրորված ու բզկտված։ Դրանից հետո բարձրացավ Հարրիսը՝ գզգզված մազերով, ցեխոտված և ամբողջովին թաց։

Պարզվեց, որ նա, բանից անտեղյակ, նստած է եղել ջրանցքի ամենածայրին, որ բարձր խոտը ծածկում էր մեր տեսողությունից, և փոքր-ինչ ետ հենվելով, ընկել էր, կարկանդակն էլ տանելով հետը։

Նա խոստովանեց, որ կյանքում երբեք այդքան զարմացած չի եղել, որքան այն ժամանակ, երբ գլխի ընկավ, որ ընկնում է, առանց ամենափոքր դաղափար անգամ ունենալու, թե ինչ է պատահել։ Սկզբում նույնիսկ մտածել էր, որ գուցե աշխարհի վերջն է եկել։

Հարրիսը մինչև այժմ համոզված է, որ մենք նախօրոք ծրագրել էինք այդ ամենը։ Այսպես, անհիմն կասկածը հետապնդում է նույնիսկ ամենաանմեղներին, քանի որ, ինչպես բանաստեղծն է ասում. «Ո՞վ կարող է խուսափել դրպարտանքից»։

Իսկապես, ո՞վ։

Գլուխ տասնչորսերորդ

Ուորդրեյվ։ Մոմե ֆիգուրներ։ Սոնինգ։ Մեր իրլանդական ռազմն։ Մոնթմորընսին մարտականորեն է տրամադրված։ Մենամարտ Մոնթմորընսիի և թեյնիկի միջև։ Ջորջը բանջր նվագել է սովորում։ Նրան չեն քաջալերում։ Խոշընդոտներ ինքնուս երաժշտի ճանապարհին։ Պարկաղդուկ նվագելու մասին։ Ընթրիքից հետո Հարրիսը տխրում է։ Ջորջը և ես գնում ենք զրոսանքի։ Վերադառնում ենք քաղցած ու թրջված։ Հարրիսի հետ տարօրինակ բան է կատարվում։ Հարրիսը և կարպպենները՝ մի զարմանալի պատմություն։ Հարրիսը անհանգիստ գիշեր է անցկացնում։

Նախաճաշից հետո օգտվեցինք թույլ քամուց, որը մեզ դանդաղորեն տարավ Ուորդրեյվի և Շիփլեյքի մոտով։ Գետի ոլորանում թաքնված Ուորդրեյվը, ամառային կեսօրվա արևի ընկոտ ճառագայթների ներքո գեղեցիկ ու հինավուրց նկարի տպավորություն է թողնում։ Այնպիսի նկար, որ երկար է մնում հիշողության մեջ։

Ուորդրեյվի «Գեորգ և Հրեշ» պանդոկի պարծանքը նրա ցուցանակն է, որի մի կողմը նկարազարդել է թագավորական ակադեմիայի անդամ Լեսլին, մյուս կողմը՝ Հոջսոնը։ Լեսլին պատկերել է մարտը, իսկ Հոջսոնը՝ տեսարանը «Մարտից հետո», երբ Գեորգն իր դոշն անելուց հետո բավականությամբ դարեջուր է վայելում։

Ի պատիվ քաղաքի, Ուորդրեյվում է ապրել և այստեղ տպանվել Դեյը՝ «Սանֆորդ և Մերթոն»-ի հեղինակը։ Ուորդրեյվյան եկեղեցում հուշարձան է կանգնեցված ի պատիվ Սառա Հիլլի, որի կտակի համաձայն, ամեն տարի Զատկի առնին մեկ ֆունտ ստեռլինգ է բաժանվում երկու տղաների և երկու աղջիկների միջև, «որոնք երբեք անհարգալից չեն վերաբերվում իրենց ծնողներին, չեն հայհոյում, չեն ստում, չեն գողանում և պատուհաններ չեն ջարդում»։ Պատկերացրեք, մի ամբողջ տարի հրաժարվել այդ ամենից հանուն ընդամենը հինգ շիլլինգի։ Իրոք, չարժե։

Ասում են, մի անգամ, շատ տարիներ առաջ մի տղա է հայտնվել, որը իսկապես երբեք նման բաներ չէր արել, հասկանալի դեպք, ոչ ոք նրան չէր բռնել հանցանքի մեջ, իսկ դա

այն ամենն էր, ինչ պահանջվում էր, և տղան նվաճել էր փառքի պսակը։ Դրանից հետո երեք շաբաթ շարունակ նրան ցուցադրել են քաղաքապետարանում ապակե տուփի տակ, ի տես բոլորի։ Իսկ թե ինչ է եղել դրամի հետ հետո, ոչ ոք չգիտի։ Ասում են, որ դա մշտապես փոխանցում են մոտակա մոմե ֆիգուրների ցուցահանդեսին։

Շիփլեյքը գեղեցիկ գյուղակ է, բայց դեռից չի երևում, քանի որ բարձունքի վրա է։ Շիփլեյքի եկեղեցում է ամուսնացել Թեննիսոնը։

Մինչև Սոննինգ, գետը ձգվում է բազմաթիվ կղզիների միջով, շատ հանդարտ է, լուռ և անմարդաշատ։ Միայն մթընշաղին մի քանի սիրահար զույգեր են շրջում ափին։ Եվ հասարակ ժողովուրդը, և՛ վերնախավը մնացել են հետևում՝ Հենլիում, իսկ մինչև մռայլ և աղտոտված Ռեդինգ, դեռ երկար ճանապարհ կա։ Դա այնպիսի վայր է, որտեղ կարելի է երազել անցած-գնացած օրերի և անհետ կորած դեմքերի մասին, այն ամենի մասին, որ կարող էին լինել, բայց չկան, գրողը տանի։

Սոննինգում մենք թողեցինք նավակն ու գնացինք զբոսնելու գյուղում։ Դա գետափի ամենահիասքանչ անկյունն է։ Գյուղը ավելի շատ դեկորացիայի է նման, քան թե ապրելու ու կրից պատրաստված բնակավայրի։ Տները թաղված են վարդի թփերի մեջ, և հիմա, հունիսի սկզբին, ամբողջությամբ ծածկված էին շքեղ ծաղիկների փնջերով։ Եթե բախտի բերմամբ Սոննինգում գտնվեք, այցելեք եկեղեցու ետևում գտնվող «Յուլ» պանդոկը։ Դա իսկական հին գյուղական պանդոկ է՝ առջևում կանաչազարդ քառանկյուն բակով, ուր ծառերի տակ հավաքվում են գյուղի տարեց մարդիկ գարեջուր խմելու և քննարկելու գյուղական նորությունները, — ցածր, արտասովոր ձևի սենյակներով և վանդակավոր պատուհաններով, կոպիտ սարքված աստիճաններով և ոլորապտույտ միջանցքներով։

Մի ժամի չափ թափառեցինք գեղեցկատես Սոննինգի փողոցներով և հետո, քանի որ բավական ուշ էր Ռեդինգ հասնելու համար, որոշեցինք ետ դառնալ Շիփլեյքի կղզիներից մեկը և այնտեղ գիշերել։ Երբ տեղ հասանք դեռ վաղ էր, և Ջորջն ասաց, քանի որ շատ ժամանակ ունենք, ապա դա հիանալի հնարավորություն է, որ համեղ ու սննդարար ընթրիք պատրաստենք։ Նա ասաց, որ մեզ ցույց կտա, թե խոհարարական ինչ հրաշքներ կարելի է գործել գետի վրա և առաջարկեց բանջարեղենից, սառը մսից և սննդի ավելցուկներից իտալական ռադու պատրաստել։

Դա հիանալի միտք էր։ Ջորջը ցախ հավաքեց և կրակ վառեց, իսկ Հարրիսն ու ես սկսեցինք կարտոֆիլ մաքրել։ Կարծես չէի մտածի, որ կարտոֆիլ մաքրելը այդքան դժվար է։ Պարզվեց, որ դա ամենաբարդ գործն էր, որին ես երբևէ մասնակցել եմ։ Մենք ուրախ տրամադրությամբ գործի անցանք, կարելի է ասել նույնիսկ կայտառորեն, բայց առաջին կարտոֆիլը մաքրելուց հետո մեր աշխուժությունից ոչինչ չմնաց։ Որքան շատ էինք կճպում, այնքան շատ կճեպ էր մնում, և մինչև ամբողջովին կճեպահան էինք անում և հեռացնում էինք աչքերը, կարտոֆիլից ոչինչ չէր մնում, համենայն դեպս, ուշադրության արժանի ոչինչ։ Ջորջը մոտեցավ և տեսավ մեր աշխատանքի արդյունքը՝ որը մի ընկույզի չափ էր։

— Դա բանի նման չէ, — ասաց Ջորջը, — դուք վատնում եք կարտոֆիլը։ Ավելի լավ է քերեք։

Սկսեցինք քերել, բայց դա է՛լ ավելի դժվար էր, քան կըճպելը։ Այդ կարտոֆիլները այնքան արտասովոր ձև ունեն, ամբողջովին ծածկված են պալարներով, կոծոծներով և փոսիկներով։ Հարրիսն ու ես ջանասիրաբար աշխատեցինք բանհինգ բոպե և մաքրեցինք չորս կարտոֆիլ, որից հետո գործադուլ արեցինք։ Մենք հայտարարեցինք, որ ամբողջ երեկոն անհրաժեշտ կլինի, որպեսզի հիմա էլ ինքներս մաքրվենք։

Մարդ երբեք այդքան թափթփված տեսք չի ունենում, որքան կարտոֆիլ մաքրելուց հետո։ Դժվար էր հավատալ, որ այդ ամբողջ աղբը, որի մեջ թաղված էինք Հարրիսը և ես, առաջացել էր ընդամենը չորս կարտոֆիլից։ Դա ցույց է տալիս, թե ինչի կարելի է հասնել, եթե խնայողաբար և հոգատարությամբ է կատարվում աշխատանքը։

Ջորջն ասաց, որ ուղղակի անհեթեթություն է իտալական ռադուի մեջ ընդամենը չորս կարտոֆիլ գցելը, մենք կես դյուժինի չափ կարտոֆիլ լվացինք ու առանց կճպելու լցրեցինք կաթսայի մեջ։ Ավելացրեցինք նաև մի գլուխ կաղամբ, և

ուշադրությամբ սկսեցինք։ Ջորջն այդ ամենը խառնեց իրար և հետո ասաց, որ դեռ բավական ազատ տեղ կա։ Մենք սկսեցինք անտղել երկու զամբյուղները, հանեցինք սենդի մնացորդները, և էլի ինչ որ կարողացանք գտնել, ու ավելացրեցինք ռագուի վրա։ Կես կարկանդակ գտնվեց Ջոզի մասով և մի կտոր սառ միս։ Դրանք նույնպես լցրեցինք կաթսայի մեջ։ Ջորջն էլ իր հերթին կես բանկա սաղմոնի պահածո գտավ և դատարկեց կաթսայի մեջ։

Ջորջն ասաց, հենց դրանում է իռլանդական ռագուի առավելությունը, որ միանգամից ազատվում ես ամեն տեսակի ուտելիքի մնացորդներից։ Ես երկու կոտրված ձու գտա և դրանք նույնպես ավելացրեցինք կաթսայի պարունակությանը։ Ջորջն ասաց, որ դրանից կերակրահյութը կթանձրանա։

Ես մոռացել եմ, թե էլ ինչ լցրեցինք կաթսայի մեջ, բայց համոզված եմ, որ ոչինչ իզուր չկորավ։ Հիշում եմ, վերջում Մոնթմորընսին, որը մեծ հետաքրքրությամբ էր հետևում այդ ամբողջ արարողությանը, հանկարծ լուրջ ու մտածկոտ տեսքով ինչ-որ տեղ կորավ և մի քանի րոպեից վերադարձավ ատամներով բռնած բերելով մի սատկած ջրառնետ, որը նա ակնհայտորեն մտադրվել էր նվիրաբերել մեզ, որպես իր ներդրումը ճաշի պատրաստման գործում։ Արդյոք դա ծա՞զր էր, թե օգտակար լինելու սրտանց ցանկություն, չեմ կարող ասել։

Մենք սկսեցինք քննարկել՝ արժե՞ առնետը գցել կաթսայի մեջ թե ոչ։ Հարրիսն ասաց, որ իր կարծիքով ամեն ինչ հիանալի կլինի, քանի որ վերջ ի վերջո դա էլ խառնվելու է մյուս մթերքների հետ։ Բայց Ջորջը վճռականապես դեմ էր։ Նա ասաց, որ երբեք չի լսել, որ իռլանդական ռագուի մեջ առնետ գցեն, ավելի լավ է ռիսկի չդիմեն և կասկածելի փորձեր չանեն։

Հարրիսն ասաց.

— Եթե ոչ մի նոր բան չփորձենք, ինչպե՞ս կիմանանք, լա՞վ է թե՞ վատ։ Քեզ նմաններն են, որ արգելակում են մարդկության առաջընթացը։ Հիշիր այն մարդուն որն առաջինը կերավ նրբերշիկը։

Մեր իռլանդական ռագուն շատ համեղ էր ստացվել։ Չեմ հիշում, որ երբևէ ուտելիքից ավելի մեծ բավականություն

ստացած լինեմ։ Դրա մեջ ինչ-որ թարմ ու ախորժաբեր համ կա։ Մարդու ծնողը հոգնում է միշտ միևնույն ուտելիքները նամակուց։ Ահա մի նոր կերակուր, այնպիսի նոր համ ու հոտավ, ինչպիսին չունի աշխարհում ոչ մի ուրիշը։

Եվ այնքան սենդարար էր։ Ինչպես Ջորջն արտահայտվեց, համբը լավորակ էր։ Իհարկե վատ չէր լինի, որ կարտոֆիլն ու սիսեռը մի քիչ էլ եփվեին բայց մենք բոլորս էլ ատամներ ունենք, այնպես որ դա գործին չէր խանգարում։ Իսկ ինչ վերաբերում է կերակրահյութին, ապա դա մի պոեմ էր։ Գուցե փոքր-ինչ թանձր էր թույլ ստամոքսի համար, բայց դրա փոխարեն շատ սենդարար էր։

Ընթրիքն ավարտեցինք թեյով և բալով կարկանդակով։ Մինչ մենք թեյում էինք, Մոնթմորընսին մենամարտի էր բռնվել թեյնիկի հետ և մարտից դուրս եկավ պարտված։

Ամբողջ ճանապարհորդության ընթացքում նա մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում թեյնիկի նկատմամբ։ Նստում և ապշահար նայում էր, թե թեյնիկի ջուրն ինչպես է եռում և մամանակ առ ժամանակ գոմռալով փորձում էր համբերությունից հանել նրան։ Երբ թեյնիկի ջուրը եռում և գոլորշի էր արձակում, Մոնթմորընսին դա ընդունում էր որպես մարտահրավեր և պատրաստվում էր մենամարտ սկսել, միայն թե մենց այդ պահին մեզանից մեկնումեկը հասնում և տանում էր նրա զոհին՝ ժամանակ չտալով նրան որևէ բան ձեռնարկել։

Այսօր Մոնթմորընսին որոշել էր նախաձեռնությունն իր ձեռքը վերցնել։ Հազիվ էր թեյնիկը սկսել աղմկել, երբ նա գոմռալով վեր կացավ և սպառնալից տեսքով ուղղվեց դեպի թեյնիկը։ Դա ընդամենը մի փոքրիկ թեյնիկ էր, բայց լի բարությամբ և ֆշշացնում ու թքում էր նրա վրա։

— Ախ այդպես, — գոմռաց Մոնթմորընսին, ցույց տալով իր ատամները։ — Ես քեզ ցույց կտամ, ինչպես պետք է հարգել աշխատասեր, հարգարժան շանը։ Խղճուկ, երկարաբիլ։ Կեղտոտ սրիկա։ Դե, առաջ արի։

Եվ հարձակվեց խեղճ թեյնիկի վրա ու քաշեց քթից։

Դլանից հետո երեկոյան լռության մեջ ճայթեց մի սրտամորմոք վայնասուն, Մոնթմորընսին դուրս փախավ նավակից և ժամում երեսունհինգ մղոն արագությամբ երեք անգամ

պատույտ գործեց կղզու շուրջը, ժամանակ առ ժամանակ կանգ առնելով, որպեսզի քիթը խոթի սառը տիղմի մեջ։

Այդ օրվանից Մոնթմորենսին թեյնիկին վերաբերում է խոր ակնածանքով, կասկածով ու ատելությամբ։ Ամեն անգամ թեյնիկ տեսնելիս, գոմռում է, և արագորեն, պոչն իրեն բաշած ետ է սլանում։ Իսկ սկսած՝ այն պահից, երբ թեյնիկը դնում ենք սպիրտայրոցի վրա, անմիջապես դուրս է մագլցում նավակից և նստում գետափին, մինչև թեյի ավարտը։

Ընթրիքից հետո Ջորջը դուրս հանեց իր բանջոն և պատրաստվեց նվագելու, սակայն Հարրիսն ընդդիմացավ։ Նա պատճառաբանեց, որ գլխացավ ունի և իրեն բավականաչափ ուժեղ չի զգում նրա նվագին դիմանալու համար։ Ջորջի կարծիքով, երաժշտությունը պետք է որ բարերար ազդեցություն ունենար նրա վրա, քանի որ երաժշտությունը հաճախ հանգստացնում է նյարդերը և անցկացնում գլխացավը։ Եվ նա երկու-երեք նոտա վերցրեց, պարզապես ցույց տալու Հարրիսին, թե ինչի մասին է խոսքը։ Բայց Հարրիսն ասաց, որ գերադասում է գլխացավը։

Ջորջը մինչև այսօր էլ բանջո նվագել չի սովորել։ Նա իր շրջապատից ոչ մի քաջալերանք չի ստացել։ Երկու-երեք անգամ, երեկոյան, երբ մենք դեռ գետի վրա էինք, նա նվագելու փորձեր արեց, բայց նրա փորձերը երբեք հաջողությամբ չէին պսակվում։ Հենց միայն Հարրիսի արտահայտությունները բավական էին, որ մարդու հուսաթափ աներ։ Կարծես թե դա քիչ էր, Մոնթմորենսին էլ նստում էր և անդադար ոռնում հենց այն ժամանակ, երբ Ջորջը սկսում էր նվագել։ Էլ ի՞նչ սովորելու մասին էր խոսքը։

— Այդ շունն էլ, ինչու՞ է ոռնում երբ ես նվագում եմ, — բարկությամբ բացականչում էր Ջորջը, կոշիկը նետելով Մոնթմորենսիի կողմը։

— Իսկ դու ինչու՞ ես նվագում, երբ նա ոռնում է, — միջամտում էր Հարրիսը՝ որսալով կոշիկը։ — Հանգիստ թող նրան։ Նա չի կարող չոռնալ։ Նա խիստ երաժշտական լսողություն ունի։ Ուրեմն ինչպե՞ս չոռնա, լսելով քո այդ նվագը։

Ջորջը որոշեց մինչև տուն վերադառնալը հետաձգել իր փորձերը երաժշտության բնագավառում։ Բայց նույնիսկ տանը նրան նվագելու հնարավորություն չտվեցին։ Միսիս Փ-ն ներս

էր մտնում, խնդրում էր ներողամիտ լինել և ասում էր, որ անձամբ իրեն, հաճելի է լսել Ջորջի նվագը, բայց վերևի հարկի հղի տիկինը վատ է զգում, և բժիշկը վախենում է, որ դա կարող է վնասել երեխային։

Այդ ժամանակ Ջորջը որոշեց բանջոն դուրս տանել և նվագել հրապարակում։ Բայց բնակիչները բողոքեցին ոստիկանությանը, և մի գիշեր Ջորջին բռնեցին հանցանքի վայրում։ Հանցանշանները ակնհայտ էին, և նրան վեց ամսով զրկեցին բանջո նվագելուց։

Դրանից հետո Ջորջը կարծես կորցրեց հետաքրքրությունը երաժշտության հանդեպ։ Վեց ամիսն անցնելուց հետո նա մեկ-երկու հուսահատ փորձեր արեց վերսկսելու իր պարապմունքները, բայց ինչպես և առաջ, ստիպված էր հաղթահարել շրջապատի սառնությունն ու համակրանքի պակասը։ Որոշ ժամանակ անց վերջնականապես հուսահատվեց և որոշեց մեծ զեղչով վաճառել գործիքը, հայտարարության մեջ նշելով՝ «տիրոջն այլևս պետք չէ»։ Փոխարենը սկսեց խազաթիթեղով ֆոկուսներ ցույց տալ։

Պետք է որ սրտամաշ գործ լինի որևէ երաժշտական գործիքի վրա նվագել սովորելը։ Թվում է թե հասարակությունը, ի շահ իրեն, պետք է աջակցի մարդկանց՝ յուրացնելու նվագելու արվեստը։ Բայց դա այդպես չէ։

Մի երիտասարդի էի ճանաչում, որը պարկապզուկ նվագել էր սովորում և կղզմանաք, թե նա ինչպիսի դիմադրություն էր ստիպված հաղթահարել։ Նույնիսկ իր ընտանիքի անդամների կողմից չէր ստանում, այսպես ասած, ակտիվ քաջալերանք։ Նրա հայրը հենց սկզբից դեմ էր դրան և այդ հարցի մասին խիստ անողոքաբանկատորեն էր արտահայտվում։

Իմ ծանոթը առավոտյան վաղ էր արթնանում փորձեր կատարելու, սակայն քրոջ պատճառով ստիպված էր հրաժարվել իր որոշումից։ Նրա քույրը հավատացյալ էր և ասում էր, որ շատ վատ նշան է օրը նման ձևով սկսելը։

Այդ ժամանակ նա սկսեց նվագել գիշերները, երբ բոլորը պառկում էին քնելու։ Բայց ոչինչ դուրս չեկավ, քանի որ տունը մի տեսակ վատ համբավ ձեռք բերեց։ Ուշացած անցորդները կանգ էին առնում ականջ դնելու և հաջորդ առավոտյան լուրեր էին տարածում քաղաքում, թե միստր Ջեֆ-

ֆերսոնի տանը նախորդ գիշեր սարսափելի սպանություն է տեղի ունեցել։ Եվ նկարագրում էին, թե ինչպես են լսել զոհի հիշերը, մարդասպանի կոպիտ հիշոցներն ու նզովքները, որից հետո խղճմտանքի աղերսանքներ ու հոգեվարքի խռխռոց։

Այդ ժամանակ նրան թույլ տվեցին փորձեր անել կեսօրին, տան եռանի մասում գտնվող խոհանոցում՝ բոլոր դռները փակ վիճակում։ Սակայն, չնայած այս բոլոր նախազգուշական միջոցներին, ավելի հաջող պասսաժները լսվում էին հյուրասենյակում՝ արցունքով լցնելով նրա մոր աչքերը։

Նրա մայրն ասում էր, որ այդ նվագը հիշեցնում էր իր դժբախտ հորը (խեղճ մարդուն նոր Գվինեայի ափերի մոտ կուլ էր տվել շնաձուկը)։ Իսկ թե ինչու էր երաժշտությունը նրա մեջ արթնացնում հենց այդ հիշողությունը, չէր կարող բացատրել։

Վերջապես, նրա համար մի առանձին սենյակ կառուցեցին պարտեզի խորքում, տնից քառորդ մղոն հեռավորության վրա, և արդեն նա կարող էր պարկապզուկը քարշ տալ այնտեղ և երբ խելքին փչեր այն զործի դցեր։ Երբեմն նրանք հյուր էին ունենում, որը բանից անտեղյակ էր, իսկ տնեցիներն էլ մոռանում էին նախազգուշացնել այդ մասին։ Նա դուրս էր գալիս զբոսնելու պարտեզում և հանկարծ, առանց նախօրոք պատրաստվելու այդ փորձությանը և գաղափար իսկ չունենալով, թե բանն ինչ է, հայտնվում էր պարկապզուկի լսելիության սահմաններում։ Եվ վերջն այն էր լինում, որ ուժեղ կամքի տեր մարդիկ ուշագնաց էին լինում, իսկ միջին կամքի տեր անհատները սովորաբար խելագարվում էին։

Համաձայնեք, որ շատ տխուր բան է, երբ մարդ նոր է սովորում պարկապզուկ նվագել։ Ես դա զգացել եմ, երբ լսում էի իմ երիտասարդ ընկերոջը։ Պետք է բավականաչափ օդ հավաքել ամբողջ մեղեդու համար մինչև սկսելը, համենայն դեպս, այդպես հասկացա ես, երբ նայում էի Ջեֆֆերսոնին։

Նա սկսում էր մի հիանալի, մոլեգին հնչյունով, կարծես մարտահրավեր էր նետում, որից մարդու սիրտը դող էր ընկնում։ Բայց քիչ-քիչ հնչյուններն ավելի ու ավելի էին ցածրանում և սովորաբար վերջին տան կեսին նա շնչասպառ էր լինում՝ նվագը փոխելով ֆոֆոցի ու շվշվոցի։

Պարկապզուկ նվագելու համար մարդ պետք է առողջ օրգանիզմ ունենա։ Երիտասարդ Ջեֆֆերսոնը այդ պարկապզուկի վրա սովորեց նվագել ընդամենը մի մեղեդի, բայց և երբեք ոչ մի բողոք չեմ լսել նրա երգացանկի աղքատ լինելու վերաբերյալ, բացարձակապես ոչ մի բողոք։ Դա «Քեմփբելն է գալիս, ուռա, ուռա», պիեսն էր։ Համենայն դեպս, ինքն այդպես էր ասում, թեև նրա հայրը միշտ պնդում էր, որ դա «Շոտլանդական երկնագույն զանգակներն» է։ Ոչ ոք չգիտեր, թե իրականում դա ինչ մեղեդի էր, բայց բոլորն էլ համաձայնում էին, որ դրա մեջ շոտլանդական ինչ-որ բան կա։

Անծանոթ մարդկանց թույլ էր տրվում երեք անգամ զուշակել, թե դա ինչ մեղեդի է և նրանց մեծ մասը ամեն անգամ տարբեր մեղեդի էր զուշակում։

Ընթրիքից հետո Հարրիսի տրամադրությունն ընկավ։ Երևի ռագուն էր պատճառը։ Նա սովոր չէր շքեղ կյանքի։ Ջորջն ու ես նրան թողեցինք նավակում, իսկ ինքներս որոշեցինք զբոսնել Հենլիի շուրջը։ Հարրիսն ասաց, որ այդ ընթացքում ինքը վիսկի կխմի ու ծխամորճ կծխի։ Հետո գիշերելու պատրաստություններ կտեսնի։ Վերադառնալիս մենք պետք է ձայն տայինք, իսկ նա նավակը կղզուց թիավարեր դեպի ափ և մեզ վերցներ։

— Տես, շքնես, ծերուկ, — ասացինք հեռանալիս։

— Այդ ռագուն ուտողը կքնի, ո՞նց չէ, — փնթփնթաց նա, նավակը դեպի կղզի թիավարելով։

Հենլին պատրաստվում էր ռեգատի մրցումներին և նուռզեռով լի էր։ Քաղաքում ծանոթների հանդիպեցինք և նրանց հետ ժամանակն արագ անցավ։ Արդեն համարյա ժամը տասնմեկն էր, երբ ճանապարհ ընկանք դեպի տուն (արդեն այդպես էինք անվանում մեր փոքրիկ նավակը)։

Մռայլ, ցուրտ գիշեր էր, բարակ անձրև էր մաղում։ Եվ մինչ հոգնած ցածրաձայն զրուցելով մի կերպ ոտքներս քարշ էինք տալիս մութ, լուռ դաշտերի միջով, առանց իմանալու՝ ճի՞շտ ենք գնում թե ոչ, մտածում էինք հարմարավետ նավակի, ու լապտերի պայծառ լույսի մասին, — որը դուրս է հորդում ամուր ամրացված բրեզենտի տակից, — Հարրիսի, Մոնթմորընսիի, վիսկիի մասին և ուզում էինք նրանց հետ լինել։

Հոգնած ու քաղցած, մեզ պատկերացնում էինք նավակում, մառվի տեսնում էինք մթության մեջ կորած գետն ու անձև ալեները, իսկ նրանց ներքո՝ հսկայական լուսատուիկի նման մեր հարազատ նավակը, այնքան հարմար, տաքուկ և ուրախ։ Պատկերացնում էինք մեզ ընթրիքի սեղանի շուրջ. խժռում ենք սառը միսը ու միմյանց փոխանցում հացի կտորները։ Լսում էինք դանակների ուրախ ճիկլիսկոցը, մեր զվարթ ձայները, որ լցնում են գիշերային լռությունն ու տարածվում հեռուները, և շտապում էինք դա իրականություն դարձնել։

Հասանք ափաշերտին, դա մեզ անչափ ուրախացրեց, քանի որ մինչ այդ համոզված չէինք՝ մոտենո՞ւմ ենք գետին թե հեռանում։ Իսկ երբ հոգնած ես ու քնել ես ուզում, նման տարակուսանքները հանգիստ չեն տալիս։ Երբ անցանք Շիփլեյքը, ժամացույցը խփեց ժ. 12-ից քառորդ պակաս, և Ջորջը մոտակոտ հարցրեց.

— Դու իհարկե, չես հիշում, չէ՞, թե որ կողում ենք կանգ առել։

— Ոչ, — պատասխանեցի ես, նույնպես մոռածմունքի մեջ ընկնելով,— չեմ հիշում, իսկ քանի՞ կողի կա։

— Ընդամենը չորսը, — պատասխանեց Ջորջը, — ամեն ինչ լավ կլինի, եթե Հարրիսը արթուն լինի։

— Իսկ եթե ոչ՞, — անհանգստացա ես։ Սակայն նման մտքերը մեզնից հեռու վանեցինք։

Հավասարվելով առաջին կողմն, ձայն տվեցինք, բայց պատասխան չեղավ։ Այդ ժամանակ մոտեցանք երկրորդին և այնտեղ փորձեցինք։ Նույն արդյունքը։

— Ա՜խ, հիմա հիշում եմ, — ասաց Ջորջը, — մերը երրորդ կողմն էր։

Եվ հույսով վազեցինք դեպի երրորդ կողմն ու կրկին ձայնեցինք։

Դարձյալ ոչ մի պատասխան։

Դրությունը լրջանում էր։ Կեսգիշերն անց էր։ Շիփլեյքի ու Հինլիի հյուրանոցները լեփլեցուն էին։ Եվ անմիտ բան կլիներ կեսգիշերին պատվել քաղաքում՝ թակելով բնակիչների դռները՝ հարցնելու, թե վարձով սենյակ չունե՞ն։ Ջորջն առաջարկեց վերադառնալ Հենլի, հարձակվել ոստիկանի վրա և

այդպիսով գիշերն անցկացնել ոստիկանատանը։ Բայց հետո մտածեցինք՝ իսկ եթե նա, ինչպես հարկն է դնդսոի մեջ ու հրաժարվի ձերբակալել։

Հա չէ՞ինք կարող ոչ գիշերն անցկացնել ոստիկանների դեմ մարտնչելով։ Բացի այդ, վախենում էինք շատն անցկացնել ու հետո վեց ամիս անցկացնել բանտում։

Հուսահատված, մթության մեջ մոտեցանք այն վայրին, որը մեզ թվաց չորրորդ կողմն, բայց՝ անարդյունք։ Անձրևն ավելի էր ուժգնացել և, ինչպես երևում էր, մտադիր էր զեռ երկար շարունակել նույն ոգով։ Մինչև ոսկորները թրջվել էինք, դողում էինք ու շատ խղճուկ տեսք ունեինք։ Սկսեցինք մտածել, որ ոչ թե չորս, այլ ավելի շատ կողմներ կային, որ մենք ամենևին էլ կողմների մոտ չենք գտնվում, այլ դրանցից մեկ մյուսն հեռավորության վրա կամ գետի բոլորովին ուրիշ հատվածում։ Մթության մեջ ամեն ինչ այնքան արտառոց ու անծանոթ էր երևում։ Սկսեցինք պատկերացնել անտառում մոլորված երեխաների տառապանքները։

Եվ երբ հույսներս լրիվ կորցրել էինք... Այո, այո, գիտեմ, որ վեպերում ու հեքիաթներում միշտ հենց այս ժամանակ են կատարվում հրաշքները, բայց, միևնույն է, ոչինչ անել չեմ կարող։ Նախաձեռնելով այս գիրքը գրելը, ես իմ առջև խնդիր եմ դրել ամեն ինչում լինել ճշմարտացի և այդպես էլ կանեմ եթե նույնիսկ կարիք լինի դրա համար ծնծված ֆրազների օգնությանը դիմել։

Դա իսկապես տեղի ունեցավ հենց այն ժամանակ, երբ մենք կորցրել էինք ամեն հույս, և ես այդպես էլ պետք է պատմեմ։ Այսպիսով, հենց որ լրիվ հուսահատվեցինք, Հանկարծ, մեզնից փոքր-ինչ ներքև ես մի տարօրինակ ու անսովոր լույս նկատեցի, որը կայծկլտում էր գիմացի ափի ծառերի միջով։ Մի պահ մտածեցի ոգիների մասին, այնքան ադոտ, այնքան առեղծվածային էր այդ լույսը։ Հաջորդ բոպեին գլխի ընկա, որ դա մեր նավակն է և այնպես ճշացի, որ նույնիսկ գիշերն ինքը անկողնուց վեր կթռչեր։

Մի պահ շունչներս պահած սպասեցինք և հանկարծ, — ա՜, գիշերային լռության աստվածային երաժշտություն, — լսվեց Մոնթմորենսիի պատասխան հաչոցը։ Մենք նորից բարձրաձայն գոռացինք, որ բավական էր նույնիսկ չոթ քնած

բաղերին՝ արթնացնելու համար (իմիջիայլոց, գլխի չեմ ընկնում, թե յոթ քնածներին արթնացնելու համար ինչու՞ ավելի շատ ադմուկ է պետք, քան մեկին) և հինգ բոպե անց, որը մի ամբողջ հավիտենականություն թվաց, տեսանք, որ լուսավորված նավակը դանդաղ լողում է մթության մեջ և լսեցինք Հարրիսի քնկոտ ձայնը, որը հարցնում էր, թե որտեղ ենք գտնվում։

Հարրիսի հետ ինչ-որ տարօրինակ բան էր կատարվում։ Դա սովորական հոգնածություն չէր, ավելին։ Նա նավակը թիավարեց այնպիսի տեղ, որտեղից մեզ համար անհնար էր նավակ մտնել և անմիջապես քուն մտավ։ Շատ ջանքեր և գրեռում-գոչյուններ պահանջվեցին, որպեսզի կրկին արթնացնենք և ուշքի բերենք նրան։ Բայց վերջապես մեր ջանքերը հաջողությամբ պսակվեցին և մենք ողջ առողջ ոտք դրեցինք տախտակամածի վրա։

Նավակում նկատեցինք, որ Հարրիսը շատ տխուր է։ Նա այնպիսի տպավորություն էր թողնում, ասես մեծ անախորժություն էր տեղի ունեցել։ Մենք հարցրեցինք, թե ինչ է պատահել, և նա պատասխանեց մի բառով.

— Կարապները։

Պարզվեց, որ նավակը կանգնեցրել ենք կարապների բնի մոտ և երբ Ջորջն ու ես գնացել ենք, էգ կարապը վերադարձել է ու ադմուկ բարձրացրել։ Հարրիսը նրան քշել է։ Կարապը հեռացել է և վերադարձել իր արուի հետ։ Հարրիսն ասաց, որ իսկական ճակատամարտ է տեղի ունեցել իր և այդ երկու կարապների միջև։ Վերջիվերջո, քաջությունը և հմտությունը իրենց գործն են արել, և ինքը պարտության է մատնել կարապներին։

Կես ժամ անց նրանք վերադարձել են տասնութ ուրիշ կարապների հետ։ Դատելով Հարրիսի պատմածից, սարսափելի ճակատամարտ է տեղի ունեցել։ Կարապները փորձել են նրան ու Մոնթմորընսիին դուրս քշել նավակից ու ջրասույզ անել, իսկ ինքը չորս ժամ շարունակ հերոսաբար պաշտպանվել է, նրանց մեծ մասին սպանել է, իսկ մնացածները փախուստի են դիմել։

— Ասում ես, քանի՞ կարապ կար, — հարցրեց Ջորջը։

— Երեսուներկու, — քնկոտ ձայնով պատասխանեց Հարրիսը։

— Քիչ առաջ ասացիր տասնութ, — ասաց Ջորջը։

— Չի կարող պատահել, — քրթմնջաց Հարրիսը։ Ես ասացի տասներկու։ Կարծում ես հաշվել չգիտե՞մ ինչ է։

Կարապների մասին ճշմարտությունը այդպես էլ չիմացանք։ Առավոտյան այդ մասին հարցրեցինք Հարրիսին, բայց նա միայն զարմացավ և հարցրեց՝ «Ի՞նչ կարապներ»։ Նա հավանաբար կարծում էր, որ Ջորջն ու ես երազ էինք տեսել։

Մեր տարած բոլոր փորձություններից ու վախից հետո այնքան հաճելի էր ապահով զգալ նավակում։ Ջորջն ու ես կուշտ ընթրեցինք և հաճույքով գրոգ կխմեինք, եթե կարողանայինք գտնել վիսկին։ Հարցրեցինք Հարրիսին, թե ինչ է արել վիսկին, բայց նա կարծես չէր էլ հասկանում, թե մենք ինչ նկատի ունենք «վիսկի» ասելով, կամ թե ինչի մասին էինք խոսում։ Մոնթմորընսիին այնպիսի հայացքով էր նայում մեզ, ասես ինչ-որ բան դիտեր, բայց չէր ուզում ասել։

Այդ գիշեր ես լավ քնեցի, բայց ավելի լավ կքնեի, եթե Հարրիսը չիանգարեր։ Աղոտ հիշում եմ, որ այդ գիշեր մի տասն անգամ արթնացել եմ Հարրիսի պատճառով, որը լապտերը ձեռքին անցուդարձ էր անում նավակում՝ փնտրելով իր հագուստները։ Նա երևի ամբողջ գիշեր իր հագուստներն էր փնտրում։

Երկու անգամ հրեց ինձ ու Ջորջին, տեսնելու արդյոք մենք պառկած ենք իր շալվարի վրա։ Երկրորդ անգամ Ջորջը խիստ զայրացավ։

— Գրողը տանի, գիշերվա կեսին ինչի՞ դ է պետք շալվարը։ Ինչու՞ չես տեղդ վեր ընկնում ու քնում։

Հաջորդ անգամ արթնանալիս տեսա, որ Հարրիսը ուզղակի գլուխը կորցրել է, որովհետև չէր կարողանում գտնել իր կիսագուլպաները։ Աղոտ հիշում եմ, որ վերջին անգամ արթնանալիս ինձ մի կողքից մյուսն էին շրջում, և լսում էի Հարրիսի մոթմոթոցը, որը չէր կարողանում հասկանալ, թե ո՞ր կարող էր շրջվել իր հովանոցը։

---

1. Հին լեգենդը պատմում է յոթ պատանիների մասին, որոնք թաքնվելով Հռոմեական կայսեր հետապնդումներից, մի քարայրում քուն են մտել և արթնացել 200 տարի անց։

Գլուխ տասնհինգերորդ

Տնտեսական պարտականություններ։ Մեր աշխատանքի հանդեպ։ Մեր թիավարը։ Նրա խոսքն ու գործը։ Նոր սերնդի ներհավատություն։ Նավակով շրջագայելու առաջին հիշողություններս։ Լատանավելու մասին։ Ջորջի ձևավոր թիավարումը։ Մեր նավավարը և նրա մեթոդը։ Այնքան հանգիստ, այնքան համբերատար։ Ակնակալ։ Նավարկություն ձորի ստորոտում։ Տխուր պատահար։ Ընկերության հմայքները։ Առագաստանավակ. իմ առաջին փորձը։ Հնարավոր պատճառները թե ինչու մեր նավակը լիսրտակվեց։

Առավոտյան մենք բավական ուշ արթնացանք և ընդառաջելով Հարրիսի անկեղծ ցանկությանը, բավարարվեցինք պարզունակ, «առանց դիլիկատեսների» նախաճաշով։ Որից հետո լվացինք ամանեղենը և ամեն ինչ կարգի բերեցինք (այդ ամենօրյա կրկնվող աշխատանքը օգնում է վճռելու մի հարց. որը հաճախ ինձ շփոթության մեջ էր գցում. այն է. ինչպե՞ս է տնային տնտեսուհին հաջողացնում անցկացնել ժամանակը) և մոտավորապես ժամը տասին ճանապարհ ընկանք՝ մտադրվելով այդ օրվա ընթացքում որքան հնարավոր է երկար ճանապարհ անցնել։

Այդ առավոտյան մենք համաձայնության եկանք նավակը թիավարել, ճոպանով քաշելու փոխարեն։ Հարրիսն ասաց, որ աշխատանքի ամենաճիշտ բաժանումն այն կլինի, որ Ջորջը և ես թիավարենք, իսկ ինքը ղեկակալ լինի։ Ես ամենևին համաձայն չէի նրա հետ և ասացի, որ Հարրիսը ավելի շատ խելամտություն կցուցաբերեր, եթե առաջարկեր, որ ինքն ու Ջորջն աշխատեն, իսկ ինձ թողնեն, որ մի քիչ հանգստանամ։ Ինձ թվում էր, որ ես ավելի շատ եմ աշխատում, քան պետք է, և դա արդեն պղտում էր նյարդերիս վրա։

Ինձ միշտ այնպես է թվում, որ պետք եղածից ավելի եմ աշխատում։ Մի կարծեք, թե ղեմ եմ աշխատանքին, ընդհակառակը, սիրում եմ աշխատանքը։ Դա ինձ հմայում է։ Ես կարող եմ ժամերով նստել և դիտել, թե աշխատանքն ինչպես է առաջ գնում։ Շատ եմ սիրում աշխատանքին մոտ գտնվելը։ Այն միտքը, որ կարող եմ դրանից զրկվել, հուսահատության է մատնում ինձ։

Չի կարելի չափից շատ աշխատանք հանձնարարել ինձ։ Աշխատանքը կուտակելը իմ կիրքն է դարձել։ Առանձնատնտես հիմա այնքան լիքն է աշխատանքով, որ ասեղ գցելու տեղ չկա։ Շուտով ստիպված պետք է լինեմ մի նոր մասնաշենք կառուցել։

Ես նաև անչափ խնամքով եմ վերաբերվում աշխատանքին։ Ինձ մոտ եղած աշխատանքի մեծ մասը պահել-պահպանել եմ հիսուր տարիներ և վրան մի մատնահետք անգամ չկա։ Ես անչափ հպարտանում եմ իմ աշխատանքով։ Երբեմն-երբեմն ցած եմ իջեցնում դարակներից ու մաքրում փոշին։ Ոչ ոք այդքան լավ վիճակում չի կարող պահել աշխատանքը, որքան ես։

Սակայն, թեև ես ծարավի եմ աշխատանքի, այնուամենայնիվ, սիրում եմ արդարացի լինել, չեմ պահանջում ավելին, քան ինձ բաժին է հասնում։

Բայց առանց խնդրելու էլ ինձ միշտ ավելին են տալիս, ամենայն դեպս ես այդպես եմ կարծում և դա ինձ վշտացնում է։

Ջորջն ասում է, որ դրա համար անհանգստանալու ձևիք չկա։ Նրա կարծիքով իմ չափազանց նրբանկատությունն է, որ ստիպում է վախենալ, թե ավելի շատ եմ աշխատում, քան պահանջվում է։ Իրականում ինձ բաժին ընկած աշխատանքի կեսն անգամ չեմ անում։ Հավանաբար, նա ինձ հանգստացնելու համար է այդպես ասում։

Ես միշտ նկատել եմ, որ նավակի անձնակազմի յուրաքանչյուր անդամ համոզված է, որ ամեն ինչ ինքն է անում։ Հարրիսը համոզված է, որ միայն ինքն է աշխատում, իսկ Ջորջը և ես խաբում ենք իրեն։ Մյուս կողմից, Ջորջը ծաղրում էր Հարրիսին, պնդելով, որ նա ոչինչ չի անում ուտելուց ու քնելուց բացի, և խորապես համոզված էր, որ ինքն է անում այն ամբողջ աշխատանքը, որի մասին արժե խոսել։

Նա ասաց, որ երբեք չի ճանապարհորդել այնպիսի ծույլ անբոծների հետ, ինչպիսին մենք ենք։

Դա Հարրիսին զվարճացրեց։

— Պատկերացնում ես, ծերուկ Ջորջը աշխատանքի մասին է հառում, — ծիծաղեց նա։ — Ախր կես ժամ աշխատելուց հետո շունչը կփչի։ Երբեմն տեսե՞լ ես Ջորջին աշխատելիս, — դիմեց ինձ Հարրիսը։

Ես համաձայնվեցի Հարրիսի հետ, որ իրոք չեմ տեսել ավելի հիշող, ճանապարհորդությունն սկսելուց հետո ինչ-որ չեմ նկատել։

— Չեմ հասկանում, ինչպե՞ս պիտի իմանայիր, — առարկեց Ջորջը։ — Թող անիծված լինեմ, եթե ամբողջ ժամանակը քնով չես անցկացրել։ Երբևէ Հարրիսին արթուն տեսած կա՞ս։ Բացի, իհարկե՛, ճաշի ժամերից, — դիմեց Ջորջը ինձ։

Արդարությունը պահանջում էր հաստատել Ջորջի ասածը։ Հենց սկզբից էլ անիմաստ էր օգնության հարցում Հարրիսի վրա հույս դնել։

— Բայց, գլուղը տանի, ես ավելի շատ եմ աշխատում, քան մերուկ Ջեյը, — շարունակեց Հարրիսը։

— Չէիր էլ կարող ավելի քիչ աշխատել, — ավելացրեց Ջորջը։

— Ջեյը հավանաբար իրեն ուղևոր է երևակայում, — ասաց Հարրիսը։

Այս էլ շնորհակալության փոխարեն, որ իրենց և այս խարխուլ նավակը Քինգսթոնից բերել, այստեղ եմ հասցրել, ամեն ինչ կազմակերպել եմ, դեկավարել, հոգ եմ տարել նրանց մասին, ծառայել եմ նրանց։ Ոչինչ, այդպես է աշխարհի կարգը։

Տվյալ դեպքում, ծագած դժվարությունը մենք հարթեցինք, որոշելով, որ Հարրիսն ու Ջորջը կթիավարեն մինչև Ռեդինգ, իսկ դրանից հետո ես ճոպանով կքարշեմ նավակը։ Ծանր նավակը ուժեղ հոսանքին դեմ թիավարելը հիմա ինձ քիչ է գրավում։ Կար ժամանակ, շատ վաղուց, երբ ծանր աշխատանքը ձգում էր ինձ։ Հիմա ես աշխատում եմ տեղս զիջել երիտասարդներին։

Նկատել եմ, որ հին թիավարները նույնպես նահանջում են, երբ ուժ գործադրելու կարիք է զգացվում։ Հին թիավարին միշտ կարելի է ճանաչել նրանով, թե ինչպես է մեկնվել նավակի խորքում դրված բարձին և քաջալերում է թիավարներին, պատմելով, թե ինչ հրաշագործություններ է կատարել անցյալ տարի։

— Դուք էլ կարծում եք, թե դժվար գործ եք անում, — ծոր տալով խոսում է նա, ինքնագոհ տեսքով ծխամորճից ծուխը փչելով ու դիմելով հալից ընկած երկու սկսնակ թիավարներին, որոնք արդեն ժամուկես անդադար թիավարում են հոսանքին հակառակ։— Ջիմ Բիֆը, Ջեկը և ես անցյալ ամառ Մարլոյից մինչև Գորինգ հասանք մի օրում, առանց կանգառի։ Հիշու՞մ ես, Ջեկ։

Լսելով հարցը, Ջեկը, որը նավաքթում իր համար անկոկին էր պատրաստել բոլոր այն վերարկուներից ու ծածկոցներից, որ կարողացել էր գտնել, և արդեն երկու ժամ է, ինչ ընած էր, արթնանում է և սկսում է մեկ առ մեկ հիշել այդ դեպքի մանրամասները։ Նա նույնիսկ հիշում է, որ ամբողջ ժամանակ ստիպված էին թիավարել ուժեղ հոսանքին հակառակ, ինչպես նաև քամուն դեմ-հանդիման։

— Մոտ երեսունչորս մղոն ճանապարհ անցանք, — ավելացնում է առաջին պատմիչը, ես մի բարձ ավելացնելով գլխի տակ։

— Դե լավ, Թոմ, մի շափազանցրու, — կշտամբանքով մոթմոթում է Ջեկը, — ամենաշատը երեսուներեք մղոն։

Եվ Ջեկն ու Թոմը, լրիվ ուժասպառ լինելով իրենց ուժից վեր այս խոսակցությունից, նորից քուն են մտնում։ Իսկ երկու պարզամիտ թիավարները անչափ հպարտ են, որ իրենց թույլ են տվել տեղափոխել այնպիսի հիանալի թիավարների, ինչպիսին Ջեկն ու Թոմն են և սկսում են ավելի ջանասիրաբար թիավարել։

Ես ինքս, երբ ջահել էի, լսում էի մեծահասակների նմանօրինակ պատմությունները, ընդունում էի, կուլ էի տալիս, յուրացնում ամեն մի բառը և խնդրում էի էլի պատմել։ Բայց ներկայիս սերունդը կարծես զուրկ է հին օրերի միամիտ հավատից։ Մենք՝ Ջորջը, Հարրիսը և ես, մի տարի ամռանը մեզ հետ էինք վերցրել մի դեղնակտուց պատանու և ճանապարհին նրան սովորական անհավատալի բաներ էինք պատմում մեր երևակայական հրաշագործությունների մասին։

Նրան հրամայրինք բոլոր ստերը, որ արդեն քանի տարիներ կանոնավոր ծառայում են նավավարներին և ավելացրեցինք թվով յոթ բացարձակապես յուրօրինակ պատմություններ, որ ինքներս էինք հորինել։ Դրանցից մեկը իսկապես ճշմարտանման էր, ինչ-որ չափով հիմնված իրական դեպքի վրա, որը մի քիչ այլ կերպ մի քանի տարի առաջ պատահել էր մեր ընկերներից մեկի հետ։ Դա մի պատմություն էր,

որին ամեն մի երեխա կհավատար, առանց վիրավորելու իր արժանապատվությունը։

Իսկ այդ պատանին բոլոր պատմություններն ընդունում էր Դաղրուծանակով և պահանջում էր տեղն ու տեղը կրկնել մեր բոլոր հերոսությունները ու պատրաստ էր գրաղ գալ, որ չլինք կարողանա։

Այդ առավոտ սկսեցինք խոսել մեր անձնական փորձի մասին և հիշեցինք թիավարման արվեստի մեջ կատարած մեր առաջին քայլերը։

Նավակի հետ կապված իմ առաջին հիշողությունն այն է, որ հինգ տղաներով, այդ թվում նաև ես, յուրաքանչյուրս երեքական պենս էինք գոհում և Ռիչենթ-պարկի լճում մի ինչ-որ արտասովոր տեսքով նավակ էինք թիավարում, որից հետո մեր զգեստները չորացնում էինք այգու պահակի սենյակում։

Դրանից հետո ես սիրեցի ջուրը և հաճախ էի նավարկում քաղաքամերձ տարբեր լճակներում։ Դա մի զբաղմունք է, որն ավելի շատ զվարճանք ու հուզմունք է խոստանում, քան թվում է առաջին հայացքից, հատկապես, երբ դուք գտնվում եք լճակի մեջտեղում, իսկ ափին հանկարծ մի մեծ փայտ ձեռքին հայտնվում է այն տախտակների տերը, որոնցից պատրաստված է ձեր լաստանավակը։

Նկատելով այդ ջենտլմենին, այսպես թե այնպես, ձեզ մոտ այլևս ոչ ընկերակցելու, ոչ էլ խոսելու ցանկություն չի մնում, ու եթե անքաղաքավարի երևալու վախը չլինի, դուք կգերադասեիք խույս տալ նրա հետ հանդիպումից։ Եվ ձեր առջև խնդիր եք դնում. ինչ գնով էլ լինի հասնել լճակի հանդիպակաց ափը և անձայն ու արագ տուն գնալ, ձևացնելով, թե չեք նկատում նրան։ Իսկ նա, հակառակի պես, ուղղակի նվաղում է ձեր ձեռքից բռնելու և խոսելու ցանկությունից։

Պարզվում է, որ նա ճանաչում է ձեր հորն ու մոտիկից ծանոթ է նաև ձեզ հետ, բայց նույնիսկ դրանով չի կարողանում ձեզ իր կողմը գրավել։ Նա սպառնում է, որ ցույց կտա, թե ինչ է նշանակում վերցնել ուրիշի տախտակներն ու դրանից լաստ պատրաստել, բայց քանի որ դուք արդեն գիտեք, թե դա ինչպես է արվում, առաջարկությունը, թեև սրտանց է արված, ավելորդ է թվում և հետո դուք չեք ցանկանում նե-

գությունն պատճառել նրան՝ առաջարկն ընդունելով։

Բայց և այնպես, ձեզ հետ հանդիպելու նրա ցանկությունն այնքան մեծ է, որ ձեր անտարբերությունից ամենևին չի պակասում։ Եվ այն փութաջանությունը, որ նա ցույց է տալիս լճակի ափով ետուառաջ վազելով, որպեսզի ձեր ափ հասնելուն պես տեղում լինի, ինչպես հարկն է ձեզ ողջունելու համար, իրոք որ շոյում է մարդու ինքնասիրությունը։ Եթե նա գեր է և վազելիս շնչահեղձ է լինում, հեշտությամբ կարող եք խույս տալ նրա սիրալիրությունից, իսկ եթե երիտասարդ է և արագաշարժ՝ հանդիպումն անխուսափելի է։ Տեսակցությունը, սակայն, արագ է ավարտվում։ Մեծ մասամբ նա է խոսում, իսկ դուք սահմանափակվում եք միավանկ բառակապակցություններով և հենց որ նրա ձեռքից դուրս պրծնելու հնարավորություն է ստեղծվում, առանց տատանվելու ազատվում եք դրանից։

Ես մոտ երեք ամիս նվիրեցի լաստանավերով նավարկելուն և արվեստի այդ բնագավառում բավականաչափ փորձ ձեռք բերելով, որոշեցի ինչպես հարկն է զբաղվել թիավարման գործով և դարձա մի գեսի ակումբներից մեկի անդամը։

Մի գեսի վրա նավարկելիս, հատկապես շաբաթ օրերին, շատ շատով թիերի հետ վարվելու հմտություն եք ձեռք բերում և սովորում եք խուսանավել բեռնանավերի ու շոգենավակների հետ հանդիպելիս։ Դա նաև մեծ հնարավորություն է ընձեռում սովորելու, թե ինչպես ուղիղ և վայելչագեղորեն մեկնվել նավակի խորքում, որպեսզի հանդիպող նավակների հոսանները ձեզ ջուրը չգցեն։

Բայց այսպես թիավարման գործում փորձ ձեռք չեք բերի։ Ես թիավարման իմ ոճը ձեռք եմ բերել Թեմզայի վրա նավարկելով։ Իմ ոճն ամենուր ընդունում են հիացմունքով։ Բոլորը գտնում են, որ դա շատ յուրօրինակ ոճ է։

Մինչև տասնվեց տարեկան դառնալը, Ջորջը նույնիսկ չի մոտեցել ջրին։ Դրանից հետո նա և նույն տարիքի ևս ութ ընկերներ մի շաբաթ օր ճամփա ընկան դեպի Քյու, մտադրվելով այնտեղ նավակ վարձել ու թիավարել մինչև Ռիչմոնդ ու Ներ։ Նրանցից մեկը, Ջոսքինս անունով մի փոքրու երիտասարդ, որը մեկ երկու անգամ նավակ էր նստել Սերփենթայ-

նում[1], հավատացրեց նրանց, որ դա շատ զվարճալի է։ Երբ նրանք հասան նավամատույց, տեղատվության ժամ էր և հոսանքը շատ արագ էր։ Գետից սառը քամի էր փչում, բայց դա նրանց ամենևին չանհանգստացրեց, և սկսեցին իրենց համար նավակ ընտրել։

Նավամատույցում մի ութթիանի նավակ էր շորանում, որը և գրավեց նրանց ուշադրությունը։ Նրանք խնդրեցին, որ իրենց տան այդ նավակը։ Նավավարը տեղում չէր և նրան փոխարինում էր որդին։ Տղան փորձեց նրանց ուշադրությունը շեղել սպորտային նավակից և ցույց տվեց երկու-երեք հարմարավետ նավակներ, որոնք նախատեսված էին ընտանեկան զբոսանքների համար, բայց դրանք հարմար չէին։ Սպորտային նավակը միակն էր, որի մեջ նրանք տպավորիչ կերևային։

Այսպիսով, տղան նավակը ջուրն իջեցրեց, երիտասարդները հանեցին պիջակները և պատրաստվեցին գրավել իրենց տեղերը։ Տղան առաջարկեց Ջորջին, որը նույնիսկ այն ժամանակ ցանկացած խմբի ամենածանրաքաշ անդամն էր, գրավել չորրորդ տեղը։ Ջորջն ասաց, որ ուրախ է չորրորդը լինել, արագ անցավ առաջին թիավարի նստարանը և նստեց մեջքով դեպի նավախելը։ Վերջիվերջո, նրան նստեցրին ինչպես հարկն է, որից հետո մյուսները նույնպես հետևեցին նրա օրինակին։

Ղեկակալ նշանակեցին մի խիստ ջղային տղայի, որին Ջոսքինսը բացատրեց ղեկի հետ վարվելու կանոնները։ Ջոսքինսն ինքը իր վրա վերցրեց առաջին թիավարի պարտականությունները։ Նա բացատրեց մյուսներին, որ ամեն ինչ շատ հեշտ է, պարզապես պետք է հետևեն իր օրինակին։

Նրանք հայտնեցին, որ պատրաստ են, իսկ տղան վերցրեց ձողը և նավակը նավամատույցից հեռու հրեց։

Թե ինչ եղավ հետո, Ջորջը ի վիճակի չէր նկարագրել ամենայն մանրամասնությամբ։ Նա աղոտ հիշում էր, որ մեկնարկ վերցնելուց անմիջապես հետո հինգերորդ թիավարը թիով ուժգին հարված ստացավ մեջքին և միևնույն ժամանակ ղգաց, որ իր նստարանը ինչ որ հանելուկային ձևով անհետացավ, իսկ ինքը հայտնվեց նավակի հատակին։ Նա զարմանքով նկատեց, որ երկրորդ թիավարը պառկած էր հատակին ոտքերը օդում տնկած, ակներևաբար նոպայի մեջ։

Նրանք անցան Քյուի կամրջի տակով ժամում ութ մղոն արագությամբ և դա այն դեպքում, երբ միայն Ջոսքինսն էր թիավարում։ Ջորջը, նորից տեղավորվելով իր տեղում, փորձեց օգնել նրան, բայց, ի զարմանս իրեն, թին ջրի մեջ մխրճվելուն պես անհետացավ նավակի տակ և քիչ մնաց իրեն էլ հետը տաներ։

Իսկ «ղեկակալը» տախտակամածից ցած նետեց ղեկավարման պարանները և սկսեց լաց լինել։

Թե ինչպես վերադարձան, Ջորջը ի վիճակի չէր նկարագրել, բայց դա նրանցից ամբողջ քառասուն րոպե խլեց։ Քյուի կամրջից մի մեծ բազմություն հետաքրքրությամբ դիտում էր այս ներկայացումը, և ամեն մեկը տարբեր ցուցումներ էր տալիս։ Երեք անգամ նրանց հաջողվեց նավակը ետ տանել կամրջի տակից։ Երեք անգամն էլ հոսանքը նավակը բշնց նույն տեղը։ Եվ ամեն անգամ, երբ ղեկակալը վեր էր նայում և իր գլխավերևում տեսնում էր կամուրջը, վերսկսում էր լացուկոծը։

Ջորջը խոստովանեց, որ այդ օրը իր մտքով անգամ չէր անցնի, որ երբևէ իրեն այսքան դուր կգար նավակով զբոսանքը։

Հարրիսը ավելի շատ սովոր է թիավարել բաց ծովում, քան գետի վրա։ Նա ասում է, որպես մարզանք, դա իրեն ավելի է դուր գալիս։ Ես նրա հետ համաձայն չեմ։

Հիշում եմ, անցյալ ամառ Իսթբորնում մի նավակ էի վարձել։ Տարիներ առաջ ես ծովում բավական թիավարել եմ և համոզված էի, որ այս անգամ էլ ամեն ինչ կարգին կլինի, բայց պարզվեց, որ հիմնավորապես մոռացել էի թիավարման նրբությունները։ Երբ մի թին խորասուզվում էր ջրի մեջ, մյուսը անօգնական ճոճվում էր օդում։ Իսկ ջուրը երկու թիերով միաժամանակ ճեղքելու համար ստիպված էի տեղիցս վեր կենալ։ Ծովափին մեծ թվով բարձր դասի մարդիկ էին պրոմենում և ես ստիպված էի այսպիսի ծիծաղելի դիրքով անցնել նրանց մոտով։ Լողափի կեսճանապարհին կանգ առա և

1 Արհեստական լճակների շղթա Լոնդոնի Հայդ-պարկում։

նա դառնալու համար ստիպված էի դիմել մի ծեր ձկնորսի օգնությանը։

Սիրում եմ դիտել, թե ինչպես է թիավարում ծեր թիավարը, հատկապես երբ նրան ժամավարձով են վճարում։ Թիավարման նրա մեթոդի մեջ ինչ-որ դուրեկան հանգստություն ու անշտապողականություն կա։ Դա այնքան հեռու է այն տանջալից շտապողականությունից, այն գերլարվածությունից, որն օրեցօր ավելի ու ավելի է թունավորում տասնիններորդ դարի մարդկանց կյանքը։ Նա երբեք չի ձգտում առաջ անցնել մյուս նավակներից։ Եթե նրանից մեկ ուրիշ նավակ առաջ է անցնում, նա ամենևին չի բարկանում։ Ճիշտն ասած, բոլոր մյուս նավակները, եթե նույն ուղղությամբ են շարժվում, նրանից առաջ են անցնում։ Որոշ մարդկանց դա կարող է համբերությունից հանել։ Սակայն վարձու նավավարի վսեմ ինքնատիրապետումը, որն ի հայտ է գալիս դժվարին փորձության պահին, լավ դաս է դոռոզամիտների ու սնապարծների համար։

Պարզ, սովորական թիավարումը, երբ պետք է նավակը պարզապես առաջ շարժել, այնքան շատ հմտություն չի պահանջում, բայց բավական փորձ պետք է ունենաք, մինչև կարողանաք աղջիկների մոտով անցնելիս ձեզ անբռնազբոս զգալ։ Սկսնակ թիավարին համաչափ զարկն է, որ շփոթեցնում է։

— Ծիծաղելի է, — ասում է նա, արդեն քանիներորդ անգամ փորձելով իր թիերն առանձնացնել ձերից։ — Երբ մենակ եմ լինում, ամեն ինչ հիանալի է ստացվում։

Անչափ զվարճալի է տեսնել, թե ինչպես երկու սկսնակ թիավարներ փորձում են համաչափ թիավարել։ Նավախելի թիավարը գտնում է, որ անհնար է թիավարել առաջին թիավարի հետ համաչափ, քանի որ նա շատ տարօրինակ ոճ ունի։ Առաջին թիավարը խիստ բարկանում է և փորձում է բացատրել, որ վերջին տասը տարիների ընթացքում միայն նրանով է զբաղված, որ փորձում է իր ոճը հարմարեցնել նրա սահմանափակ կարողությունը։ Նավախելի թիավարն էլ իր հերթին է վիրավորվում և խնդրում է առաջին թիավարին չանհանգստանալ իր համար, այլ ողջ ուշադրությունը կենտրոնացնել թիերի վրա։

— Գուցե փոխե՞նք տեղերս, — ավելացնում է նա, — ակնհայտորեն հասկացնելով, որ դա միանգամից կփոխի դրությունը։

Աննշան հաջողությամբ նրանք շրմփացնում են թիերով ևս մի հարյուր յարդ և հանկարծ առաջին թիավարի գլխում մի պայծառ միտք է ծագում և նրա համար պարզ է դառնում իրենց անհաջողության պատճառը։

— Ահա թե ինչ, դու վերցրել ես իմ թիերը, — գոռում է նա առաջին թիավարին, ինձ փոխանցիր քոնը։

— Ահ, ես էլ զարմանում էի, թե ինչու չեմ կարողանում սրանցից գլուխ հանել, — պատասխանում է մյուս թիավարը, պայծառանալով և հաճույքով համաձայնելով թիերը փոխելու առաջարկությունը։ — Հիմա արդեն ամեն ինչ կկարգավորվի։

Բայց նույնիսկ այդ ժամանակ էլ իրերի ընթացքը չի փոխվում։ Նավախելի թիավարը թիերին հասնելու համար ստիպված է թևերը մեկնել ողջ երկարությամբ, մինչդեռ առաջին թիավարը յուրաքանչյուր զարկի ժամանակ թիերով ուժեղ հարված է հասցնում իր իսկ կրծքավանդակին։ Այնպես, որ նրանք նորից են փոխանակություն կատարում և այն եզրակացությանն են հանգում, որ նավավարը ուրիշ զույգ թիեր է տվել իրենց, ու անդադար մեղադրելով այդ մարդուն, մտերմանում են՝ ամենաջերմ ու բարեկամական զգացմունքներով լցվելով միմյանց հանդեպ։

Ջորջն ասաց, որ փոփոխության համար հաճախ է երգել լաստանավով նավարկելու մասին։ Դա այնքան էլ հեշտ չէ, որքան թվում է առաջին հայացքից։ Ինչպես և թիավարելիս, արագորեն սովորում եք ձողի օգնությամբ առաջ շարժվել և ղեկավարել լաստանավակը, բայց բավական ժամանակ է պետք, որպեսզի այս ամենը կարողանաք անել արժանապատվությամբ և առանց ոտից գլուխ թրջվելու։

Իմ երիտասարդ բարեկամներից մեկի հետ, որն առաջին անգամ էր լողում լաստանավով, մի շատ տխուր դեպք պատահեց։ Նրա մոտ ամեն ինչ այնքան հաջող էր ընթանում, որ շատ հանգուգն դարձավ և նավակի մի ծայրից մյուսն էր անցնում այնպիսի անփույթ վայելչագեղությամբ, որ դիտողին հիացմունք էր պատճառում։ Նա հասնում էր նավակի մի

ծայրը, ջրի մեջ էր մխրճում ձողը, հետո շտապում էր դեպի մյուս ծայրը, հմուտ նավավարի պես։ Օ, իրոք որ հիասքանչ տեսարան էր։

Ամեն ինչ այդպես հրաշալի էլ կընթանար, եթե նա, բնապատկերներով հիացած, թյուրիմացաբար մի քայլ ավել չաներ, քան անհրաժեշտ էր և նավակից ամբողջապես դուրս չգար։ Ձողը ամուր խրվեց տիղմի մեջ և նա մնաց այդպես ձողից կախված, իսկ լաստանավակը շարունակեց հոսանքով ցած լողալ։ Նրա դիրքը այնքան էլ հարմարավետ չէր իր համար, և գետափին մի հանդուգն տղա անմիջապես ձայն տվեց իր նեռ մնացող ընկերոջը. «Այստեղ արի, տես կենդանի կապիկ է ձողի վրա»։

Ես չէի կարող նրան օգնության հասնել, որովհետև հակառակի պես չէինք հոդացել մի ուրիշ ձող վերցնել մեզ հետ։ Ես միայն կարող էի նստել ու նայել։ Երբեք չեմ մոռանա նրա դեմքի արտահայտությունը, երբ ձողը նրա հետ միասին դանդաղ խրվում էր։ Նա այնպես մտամոլոր տեսք ուներ։

Ես հետևում էի, թե ինչպես է նա դանդաղորեն ջուրն ընկնում, տեսա, թե ինչպես ցամաք դուրս եկավ՝ ամբողջապես թրջված ու տխուր։ Նա այնքան ծիծաղելի տեսք ուներ, որ չկարաղացա ինձ զսպել ու մի կուշտ ծիծաղեցի։ Դեռ երկար այդպես շարունակում էի ծիծաղել, երբ հանկարծ գլխի ընկա, որ եթե երկար մտածեմ, ինձ համար այնքան էլ ծիծաղելի իրադրություն չի ստեղծվել։ Չէ՞ որ մենակ էի, առանց ձողի, և հոսանքի քմահաճույքին հանձնված անօգնական սլանում էի, հավանական է՝ դեպի ամբարտակը։

Ես սկսեցի խիստ զայրանալ ընկերոջս վրա, որը քայլ արեց տախտակամածից այն կողմ ու այդպես լքեց ինձ։ Սայրահեղ դեպքում նա կարող էր գոնե ձողը թողնել ինձ։

Մոտավորապես քառորդ մղոն այսպես լողացի, երբ հանկարծ գետի կենտրոնում խարիսխ ձգած մի ձկնորսական նավակ նկատեցի, որտեղ երկու ծեր ձկնորսներ էին նստած։ Նրանք տեսան, որ ուղիղ սլանում եմ իրենց վրա և ձայն տվեցին, որպեսզի մի կողմ թեքվեմ իրենց ճանապարհից։

— Չեմ կարող,— գոռացի ես ի պատասխան։

— Բայց դուք չեք էլ փորձում, — գոռացին նրանք։

Երբ ավելի մոտեցա, բացատրեցի, թե բանն ինչ է, և նրանք

հայտնվեց մի ձող փոխանցել ինձ։ Ամբարտակը այդտեղից ընդամենը հիսուն յարդի վրա էր գտնվում, և ես բախտավոր եմ, որ այդ ձկնորսները պատահաբար այդտեղ էին։

Առաջին անգամ լաստանավով զբոսանքի մեկնեցինք երեք ուրիշ երիտասարդների հետ, որոնք պետք է ինձ ցույց տային, թե ինչպես վարվեմ լաստանավի հետ։ Ինչ-ինչ պատճառներով մենք չէինք կարող միասին գնալ գետափ, և ես խոստացա, որ առաջինը կգնամ և, մինչև նրանց գալը, կվերցնեմ լաստանավակը, ջուրը կիջեցնեմ և մի քիչ կփորձեմ։

Այդ օրը ինձ չհաջողվեց լաստանավ ստանալ. դրանք բոլորն էլ արդեն զբաղված էին, այնպես, որ ինձ ոչինչ չէր մնում անելու, քան նստել գետափին, նայել գետին ու սպասել ընկերներիս։

Շուտով ուշադրություն դրավեց լաստանավի վրա կանգնած մի երիտասարդ, որը, ինչպես զարմանքով նկատեցի, հագել էր ճիշտ նույնպիսի բաճկոնակ ու գլխարկ ինչ և ես։ Երևում էր, որ նա սկսնակ էր այդ գործի մեջ և նրան հետևելը շատ հետաքրքիր էր։ Երբ նա ձողը խրում էր ջրի մեջ, հնարավոր չէր գուշակել, թե ինչ կլինի հետո, ամենայն հավանականությամբ, նա ինքն էլ չգիտեր։ Երբեմն սլանում էր հոսանքով վեր, երբեմն հոսանքով վար, երբեմն էլ պարզապես պտտվում էր ձողի շուրջը։ Եվ անկախ նրանից, թե ինչ արդյունք էր ստացվում, նա հավասարապես զարմացած ու պայծառացած էր թվում։

Գետափին հավաքված մարդիկ կլանված հետևում էին նրան և դրազ էին դալիս, թե ինչով կավարտվի նրա հաջորդ փորձը։

Այդ ընթացքում իմ ընկերները եկան դիմացի ափը, կանգ առան և նույնպես սկսեցին հետևել այդ երիտասարդին։ Վերջինս մեջքով նրանց կողմն էր, և նրանք տեսնում էին միայն նրա բաճկոնակն ու գլխարկը։ Դրանից նրանք անմիջապես եզրակացրեցին, որ դա ես եմ՝ իրենց սիրելի ընկերը, ինքս ինձ հիմարի տեղ եմ դնում, և նրանց ուրախությանը չափ ու սահման չկար։ Նրանք սկսեցին անխղճորեն ծաղրուծանակի ենթարկել այդ խեղճ երիտասարդին։

Ես անմիջապես գլխի չընկա, որ նրանք սխալվել են և մտածեցի. «Ինչ անքաղաքավարություն է նրանց կողմից՝

այդպես պահել իրենց, այն էլ անծանոթի հետ։ Բայց, մինչև կհասցնեի ձայն տալ նրանց և նախատել, ինձ համար պարզ դարձավ ամեն ինչ և ես թաքնվեցի ծառի հետևում։

Օ՜, ինչպես էին նրանք զվարճանում, ծաղրուծանակի ենթարկելով այդ խեղճ երիտասարդին։ Հինգ բոպե շարունակ նրանք կանգնել էին գետափին և զազրախոսում էին նրա հասցեին, ծաղրում էին, կապկում նրան։ Նրանք գնդակոծում էին խեղճ երիտասարդին մաշված սրամտություններով, նույնիսկ տեղնուտեղը հորինեցին մի քանի նորերը, որոնք նույնպես բաժին ընկան նրան։ Նրա վրա տեղում էին տարբեր ինտիմ կատակներ, որոնք գործածում էինք մեր ընկերական շրջապատում և որոնք հավանաբար լրիվ անհասկանալի էին նրա համար։ Վերջապես, այլևս ի վիճակի չլինելով դիմանալ նրանց կոպիտ ծաղրուծանակին, երիտասարդը շրջվեց և նրանք տեսան լաստանավորդի դեմքը։

Ուրախ էի տեսնել, որ իմ ընկերները բավականաչափ պարկեշտ դտնվեցին և ղգացին, թե ինչ հիմար դրության մեջ են ընկել։ Նրանք բացատրեցին այդ երիտասարդին, որ նրան շփոթել են իրենց ընկերոջ հետ և հույս հայտնեցին, որ նա, հավանաբար, հասկանում է, որ իրենք ընդունակ չեն իրենց ընկերներից բացի որևէ մեկ ուրիշին այդպես վիրավորել։

Իհարկե, այն հանգամանքը, որ նրան շփոթել են իրենց ընկերոջ հետ, արդարացնում էր նրանց արարքը։ Հիշում եմ, մի անգամ Հարրիսը ինձ մի դեպք պատմեց, որը կատարվել էր իր հետ Բուլոնում լողալիս։ Նա լողում էր լողափից ոչ հեռու, երբ հանկարծ դգաց, որ ինչ-որ մեկը ետևից բռնեց իր պարանոցից և ուժով սուզեց ջրի տակ։ Հարրիսը սկսեց կատաղորեն պայքարել, բայց նրա հակառակորդը կարծես իսկական Հերկուլես լիներ և Հարրիսի բոլոր ջանքերը՝ դուրս պրծնել, ապարդյուն անցան։ Ի վերջո, նա դադարեց դիմադրել և փորձեց հանդիսավոր բաների մասին մտածել, երբ անսպասելիորեն հակառակորդը ազատ արձակեց նրան։ Հարրիսը ոտքի կանգնեց և շուրջը նայեց՝ փնտրելով իր հնարավոր դահճին։ Վերջինս կանգնել էր նրա մոտ և քահ-քահ ծիծաղում էր, բայց հենց որ տեսավ Հարրիսի դեմքը, նա ընկրկեց և խիստ շփոթվեց։

— Ներեցեք, խնդրում եմ, — ձեզ ընկերոջս հետ շփոթեցի։

Հարրիսը մտածեց, որ իր բախտը բերել է, որ այդ մարդն իրեն մոտ աղգականի հետ չի շփոթել, թեև չէ ամենայն հավանականությամբ, ջրախեղդ կաներ։

Առագաստանավով նավարկելու համար նույնպես գիտելիքներ ու փորձ է պահանջվում, թեև երեխա ժամանակ այդպես չէի մտածում։ Կարծում էի, թե դա կարելի է ընթացքում սովորել, ինչպես բոնուկին կամ գնդակախաղը։ Ես մի տղայի էի ճանաչում, որը նույնպես այդ կարծիքին էր, և մի քամոտ օր որոշեցինք միասին փորձել այս մարդաձևը։ Այն ժամանակ մենք Ցարմութում էինք ապրում և որոշեցինք առագաստանավակով ուղևորություն կատարել Ցար գետով վերև։ Կամրջի մոտ գտնվող նավակայանում մի առագաստանավակ վարձեցինք ու ճամփա ընկանք։

— Անհաջող օր է, — ասաց նավավարը, երբ նավակը հեռացավ ափից։ — Երբ հասնեք ոլորանին, մերքը հավաքեք և ուշադիր եղեք խուսանավելիս։

Մենք պատասխանեցինք, որ նկատի կառնենք նրա խորհուրդը և ուրախ ցտեսություն ասելով նավավարին հեռացանք ափից, իսկ ինքներս հարց էինք տալիս մեզ, թե ինչպես են խուսանավում և որտեղից գտնենք մերքը, կամ գտնելուց հետո ի՞նչ անենք նրա հետ։

Մենք թիավարեցինք այնքան, մինչև քաղաքը կորավ տեսադաշտից և ջրային ընդարձակ տարածությունը փռվեց մեր առջև, որի վրայով փոթորկի պես փչում էր քամին, և որոշեցինք, որ ժամանակն է գործողություններն սկսելու։

Հեկտորը, կարծեմ այդպես էր ուղեկցիս անունը, շարունակեց թիավարել, իսկ ես սկսեցի բաց անել առագաստը։ Պարզվեց, որ դա հեշտ գործ չէ, բայց, վերջիվերջո գլուխ հանեցի դրանից և այդ ժամանակ հարց ծագեց, թե ո՞րն է առագաստի վերին ծայրը։

Ինչ-որ բնազդով մենք իհարկե որոշեցինք, որ ներքևը վերևն է և սկսեցինք այդպես էլ ամրացնել առագաստը։ Բայց մեզնից երկար ժամանակ պահանջվեց մինչև կարողացանք այնպես թե այնպես ամրացնել առագաստը։ Թվում էր, թե առագաստը կարծում է թաղում-թաղում էինք խաղում. ես ննջեցյալն էի, իսկ իրեն պատանք էր երևակայում։

Պարզելով, որ ինքը սխալվում է, առագաստը մի ուժգին

հարված հասցրեց գլխիս և հրաժարվեց որևէ բան անել։

— Թրջիր, — ասաց Հեկտորը, — ջրի մեջ մտցրու, թրջիր։

Նա ասաց, որ նավաստիները առագաստը միշտ թրջում են օգտագործելուց առաջ։ Այնպես որ ես թրջեցի այն, բայց դա միայն փչացրեց գործը։ Ջոր առագաստը, երբ դիպչում է մարդու ոտքերին կամ փաթաթվում գլխի շուրջը, բավական տհաճ է, իսկ երբ դրան ավելացրած նաև թաց է, դա արդեն անտանելի է դառնում։

Վերջապես, մեզ հաջողվեց միասնական ջանքերով ամրացնել առագաստը, սակայն ոչ թե գլխիվայր, այլ ավելի շուտ կողքով կայմաձողին կապեցինք ճոպանով, որն այդ նպատակով էինք կորել։

Նավակը վթարի չենթարկվեց, ես դա նշում եմ, որպես փաստ։ Իսկ թե ինչու վթարի չենթարկվեց, չեմ կարող սպառիչ բացատրություն տալ։ Դրանից հետո հաճախ եմ մտածել այդ մասին, բայց ինձ այդպես էլ չի հաջողվել ինչպես հարկն է բացատրել այդ հանելուկը։

Ամենայն հավանականությամբ, նման երևույթն այս աշխարհում իրերի բնական քմահաճության արդյունքն է։ Հավանաբար, նավակը, դատելով մեր վարքագծից, եզրակացրել էր, որ այդ առավոտյան որոշել էինք ինքնասպան լինել և այդ պատճառով էլ հաստատ որոշել էր խանգարել մեզ։ Դա միակ բացատրությունն է, որ կարող եմ տալ։

Ամուր կառչելով նավեզրի գերանից, մեզ հաջողվեց նավակից դուրս չթռչել, բայց դա տանջալից զբաղմունք էր։ Հեկտորն ասաց, որ ծովահեններն ու նավորդները ուժեղ փոթորիկների ժամանակ սովորաբար ղեկը կառաթոկով կապում են որևէ բանից և քամուն հանդիման են պահում գլխավոր հառնկյունի թեք առագաստը և առաջարկեց որ մենք էլ փորձենք նույնն անել։ Բայց ես պնդեցի, որ նավակը հանձնենք քամու քմահաճույքին։

Քանի որ իմ խորհուրդին հետևելը ավելի հեշտ էր, ի վերջո մենք այդպես էլ արեցինք, իսկ ինքներս հաջողացրեցինք գրկել եզրագերանը և թողեցինք որ նավակը ինքն իր գլխի ճարը տեսնի։

Նավակը հոսանքին հակառակ մեկ մղոն ճանապարհը անցավ այնպիսի արագությամբ, ինչպես ինձ մինչև այժմ չի

հաջողվել անցնել և չեմ էլ ցանկանում։ Ոլորանի վրա նավակը այնպես թեքվեց կողքի, որ առագաստը կիսով չափ խորասուզվեց ջրի մեջ։ Դրանից հետո ինչ-որ հրաշքով ուղղվեց և սլացավ ուղիղ դեպի լայնատարած առափնյա ծանծաղուտը։

Այդ ծանծաղուտը փրկեց մեր կյանքը։ Նավակը կիսով չափ խրվեց նրա մեջ և կանգ առավ։ Գլխի ընկնելով, որ մի անգամ ևս հնարավորություն է տրվել գործելու սեփական նախաձեռնությամբ, փոխանակ մի կողմից մյուսը գլորվելու, ինչպես սիսեռը պարկի մեջ, մենք առաջ սողացինք և կտրեցինք առագաստը։

Բավական է, որքան լողացինք առագաստների տակ։ Մտադիր չէինք շարաշահել այդ զբաղմունքը, իսկ հետո էլ՝ ձանձրանալ։ Մենք հուզիչ և հետաքրքիր նավարկություն էինք կատարել առագաստներով և հիմա ցանկանում էինք հանուն փոփոխության մի քիչ էլ թիավարել։

Ձեռքներս առանք թիերը ու փորձեցինք նավակը ետ հրել տիղմից ու կոտրեցինք թիերից մեկը։ Այս անհաջողությունից հետո սկսեցինք գործել մեծ զգուշությամբ։ Բայց այդ երկու թիերն էլ՝ ոչ մի բանի պիտանի չէին և երկրորդն ավելի հեշտությամբ կոտրվեց, քան առաջինը՝ մեզ թողնելով անօգնական վիճակում։

Մեր առջև հարյուր յարդի վրա տարածված էր տիղմոտ ափը, իսկ ետևում ջուրն էր։ Միայն մի բան էր մնում անել՝ նստել ու սպասել, մինչև մեկնումեկը անցներ մեզ մոտով։

Հակառակի պես, այնպիսի օր չէր, որ մարդիկ ձգտեին դեպի գետը, և հարկ եղավ երեք ժամ սպասել, մինչև տեսապաշտում մի կենդանի արարած հայտնվեց։ Դա մի ծեր ձկնորս էր, որն անասելի դժվարությամբ, վերջիվերջո ազատագրեց մեզ և խայտառակ ձևով քարշելով հասցրեց մինչև նավակայան։

Ձկնորսի վարձը, որը մեզ տեղ հասցրեց, շարքից դուրս եկած թիերը և չորս ու կես ժամ նավակը զբաղեցնելը մեզ վրա թանկ նստեց։ Բայց մենք փորձ ձեռք բերեցինք, իսկ հանուն դրա, ինչպես ասում են, որքան էլ վճարես, շատ չէ։

Գլուխ տասնվեցերորդ

Ռեդինգ։ Մեզ շոգենավակ է քարշում։ Խղճուկ նավակների դայրացուցիչ վարքը։ Ինչպես են նրանք խանգարում շոգենավակներին։ Ջորջը և Հարրիսը նորից հրաժարվում են աշխատանք։ Բավական ճշգրիտ պատմություն։ Սթրաթֆիլդ և Դորչեստր։

Ժամը տասնմեկին մոտ մեր տեսադաշտում երևաց Ռեդինգը։ Գեռն այստեղ աղտոտված է ու մռայլ։ Մարդ այս վայրերում երկար մնալու ցանկություն չի ունենում։ Ռեդինգը հինավուրց հայտնի քաղաք է, որը հիմնադրվել է Էթելբերդ թագավորի օրոք, երբ դանիական ռազմանավերը խարիսխ էին ձգել Քեննեթի ծովախորշում և ճամբար դնելով Ռեդինգում՝ ասպատակություններ էին կատարում ողջ Էսսեքսում։ Այստեղ Էթելբերդը իր եղբոր՝ Ալֆրեդի հետ, ճակատամարտ տվեց դանիացիներին և հաղթանակ տարավ, ընդ որում, Էթելբերդը աղոթում էր, իսկ Ալֆրեդը՝ մարտ էր մղում։

Ավելի ուշ, Ռեդինգը համարում էին հարմար վայր, որ կարելի էր փախչել, երբ Լոնդոնում դրությունն անտանելի էր դառնում։ Պառլամենտը, սովորաբար հապճեպ Ռեդինգ էր տեղափոխվում, երբ Վեսթմինսթերում ժանտախտի համաճարակ էր հայտարարվում։ 1625 թվականին Արդարադատության պալատը հետևեց նրա օրինակին, և բոլոր դատավարությունները տեղի էին ունենում Ռեդինգում։ Հավանաբար, վատ չէր լինի, եթե ժանտախտի մի թեթև համաճարակ սկսվեր Լոնդոնում, որը հնարավորություն տար միանգամից ազատվել և դատավորներից, և պառլամենտից։

Պառլամենտականների ու թագավորի միջև մղվող պայքարի[1] ընթացքում Էսսեքսի կոմսը շրջապատեց Ռեդինգը, իսկ քառասուն դար անց Օրանի արքայազնը Ռեդինգի մոտ ջախջախեց Հակոբ արքայի զորքերը։

Հենրի Առաջինը թաղված է Ռեդինգում, իր իսկ հիմնադրած Բենեդիկտյան աբբայությունում, որի ավերակները պահպանվել են մինչև մեր օրերը և այս նույն աբբայությունում

1 Հեղինակը նկատի ունի 1640—1660 թթ. անգլիական բուրժուական հեղափոխության ժամանակ թագավորի և պառլամենտականների միջև տեղի ունեցած պայքարը։

է, որ Հռչակավոր Ջոն Գոնթը պսակվել է լեդի Բլանշի հետ։

Ռեդինգյան շլյուզի մոտ հանդիպեցինք իմ ընկերների շոգենավակին և նրանք քարշեցին մեր նավակը համարյա մինչև Սթրաթֆիլդ։ Շատ հաճելի է, երբ շոգենավակ է քարշում ձեր նավակը։ Անձամբ ես, գերադասում եմ թիավարելուց։

Ուղևորությունն էլ ավելի հաճելի կլիներ, եթե չլիներն այն անթիվ-անհամար փոքրիկ, խղճուկ նավակները, որոնք ամբողջ ժամանակ խանգարում էին մեր շոգենավակին։ Դրանց խորտակվելուց փրկելու համար, մենք ստիպված էինք անընդհատ դանդաղեցնել ընթացքը կամ կանգ առնել։ Իրոք, որ, անչափ վրդովեցուցիչ է տեսնել, թե ինչպես են այդ թիավոր նավակները խանգարում շոգենավակներին։

Եվ դեռ այնքան էլ հանդուգն են իրենց պահում։ Ստիպված էինք լինում այնքան սուլել, որ քիչ էր մնում կաթսան հօդս ցնդեր, մինչև նրանք իրենց նեղություն էին տալիս շտապել։ Եթե ինձ մնար, ժամանակ առ ժամանակ նրանցից մեկ-երկուսին կխորտակեի, մյուսներին դաս տալու համար։

Ռեդինգն անցնելուց հետո գետը շատ հաճելի է դառնում։ Թայլհերսթի մոտ երկաթուղին մի քիչ փչացնում է տեսարանը, բայց Մեյփերլդերհեմից մինչև Սթրաթֆիլդ գետը ուղղակի սքանչելի է։ Մեյփերլդերհեմյան շլյուզից քիչ վեր է գտնվում Հարդվիք-հաուզը, որտեղ Կարլոս Առաջինը կեղծի էր խաղում։ Վենբորնի շրջակայքը, որտեղ գողտրիկ «Կարապ» պանդոկն է, նույնքան ծանոթ է նկարչական ցուցահանդեսների հաճախորդներին, որքան և տեղի բնակիչներին։

Մենք անցանք շոգենավակից քարանձավի մոտակայքում, և Հարրիսը փորձեց ապացուցել, որ այժմ թիավարելու իմ հերթն էր։ Դա ինձ անհիմն թվաց։ Առավոտյան որոշել էինք, որ ես պետք է նավակը հասցնեմ Ռեդինգից երեք մղոն վեր։ Իսկ հիմա Ռեդինգից տասը մղոն անցել էինք։ Իհարկե, դարձյալ նրանց հերթն էր։

Ես չկարողացա ոչ Ջորջին, ոչ Հարրիսին իրավիճակը ներկայացնել արդարության լույսի տակ և տեսնելով, որ նրանց հակառակվելն ապարդյուն է, վերցրեցի թիերը։ Բայց մեկ րոպե էլ չէի թիավարել, երբ Ջորջը ջրի վրա լողացող ինչ-որ սև բան նկատեց և մենք մոտ լողացինք։ Մոտենալով, Ջորջը

կոացավ և բռնեց այն, բայց ճչաց և գոնատված ետ ընկրկեց։

Դա կնոջ դիակ էր։ Այն հեշտորեն լողում էր ջրի վրայով, նրա դեմքը մեղմ էր ու անխռով։ Բայց դա գեղեցիկ դեմք չէր։ Գեղեցիկ լինելու համար նա ժամանակից շուտ թոշնած էր, նիհար ու տանջահար։ Բայց դա սիրալիր ու դուրեկան դեմք էր, թեև կարիքն ու աղքատությունը իրենց հետքն էին թողել նրա վրա։ Այդ կնոջ դեմքին այնպիսի անխռով հանգստություն կար, որը հայտնվում է հիվանդի դեմքին, երբ վերջապես ցավը հանդարտվում է։

Մեր բախտից (ոչ մի ցանկություն չունեինք քարշ գալ դատարաններում), ափին գտնվող ինչ-որ մարդիկ նույնպես նկատել էին մարմինը և նրա հոգսը իրենց վրա էին վերցրել։

Ավելի ուշ իմացանք այդ պատմությունը։ Իհարկե դա մի հին, հին ու ծեծված ողբերգություն էր։ Նրան սիրել էին և դավաճանել, թե՞ ինքն էր դավաճանել։ Այսպես, թե այնպես, նա մեղք էր գործել, — մեզանից շատերի հետ է պատահել,— և նրա հարազատներն ու մտերիմները, որոնք, բնականաբար, ցնցված էին ու զայրացած, իրենց դռները փակեցին նրա առջև։

Միայնակ մնալով ճակատագրի հետ դեմ-հանդիման, կրելով իր խայտառակության ծանր լուծը, նա ավելի ու ավելի էր վհատվում։ Որոշ ժամանակ երեխայի հետ յոլա էր գնում շաբաթական տասներկու շիլլինգով, որ նա ստանում էր օրական տասներկու ժամ աշխատելու դիմաց։ Վեց շիլլինգը վճարում էր երեխայի համար, իսկ մնացածով փորձում էր պահպանել հոգին անցողիկ մարմնում։

Շաբաթական վեց շիլլինգը մարմինն ու հոգին այնքան էլ ամուր կապերով չի կապում իրար։ Այդքան թույլ կապված լինելով, նրանք ձգտում են հեռանալ միմյանցից։ Եվ մի օր, հավանաբար, տառապանքներն ու ձանձրալի միապաղաղությունը նրա աչքերի առջև հառնել են սովորականից ավելի անողոքաբար, և մահացածին ուրվականը ահաբեկել է նրան։ Նա մի վերջին անգամ օգնություն է հայցել իր ընկերներից, բայց նրանք, պատապարվելով պատվախնդրության սառցե պատնեշի ետև, անուշադրության են մատնել թշվառ ու հալածված կնոջ աղերսանքը։ Դրանից հետո նա գնացել է տեսնելու իր երեխային, տրտմորեն, գրկել ու համբուրել է նրան՝ առանց մատնելու հոգու տվայտանքը, և էժանագին շոկոլադի տուփը խոթելով երեխայի ձեռքը, հեռացել է։ Իր վերջին մի քանի շիլլինգով տոմս է գնել և մեկնել Գորինգ։

Հավանաբար, նրա կյանքի ամենադառն ապրումները կապված են եղել Գորինգը շրջապատող անտառապատ ափերի ու վառ կանաչ մարգագետինների հետ։ Բայց կանայք սարսափելի կերպով ձգտում են դեպի դաշույնը, որով իրենց վերք են հասցրել։ Գուցե դառնությանը խառնվել են արևոտ հիշողությունները ամենաքաղցր ժամերի մասին սովորական առվակների եզրին, որոնց վրա այնքան ցած իրենց ճյուղերն են խոնարհել հսկայական ծառերը։

Ամբողջ օրը նա թափառել է անտառներում, որ ձգված են գետի երկարությամբ։ Ու հետո, երբ մթնշաղը իր սև զգեստն է փռել ջրերի վրա, նա իր ձեռքերը պարզել է դեպի մթին գետը, որը մասնակից է եղել իր դառնություններին և ուրախությանը, ու ծերացած գետը նրան իր գիրկն է առել, կրծքին է սեղմել հոգնած գլուխն ու ցավը հանդարտեցրել։

Այսպես մեղանչեց այդ կինը — մեղանչեց ապրելիս և մահանալիս։ Թող ողորմյա աստված նրան ու մյուս մեղավորներին։

Գորինգը գետի ձախ և Սթրիթլին աջ ափին, երկուսն էլ հմայիչ վայրեր են, կարծես ստեղծված հանգստանալու համար։ Մինչև Փենգբորն գետը կանչում է առագաստներով նավարկելու արևոտ օրերին, իսկ գիշերը՝ թիավարելու լուսնի լույսի ներքո։ Իսկ շուրջը շատ գեղատեսիլ է։ Այդ օրը որոշել էինք հասնել մինչև Ուոլլինգֆորդ, բայց գետի հմայիչ ու ծիծաղկուն դեմքը համոզեց մեզ հապաղել։ Մենք թողեցինք նավակը կամրջի մոտ, գնացինք Սթրիթլի և, ի հեռուստ Մոնթմորընսիի, նախաճաշեցինք «Ցուլ» պանդոկում։

Ասում են, որ գետի երկու կողմի լեռները այս տեղում ինչ-որ ժամանակ միաձուլվել են ու պատնեշել Թեմզայի հունը, և իրը գետը ընդհատվել է այստեղ, Գորինգի մոտ, կազմելով մի ընդարձակ լիճ։ Ես հակված չեմ ոչ ժխտելու և ոչ էլ ընդունելու այս տեսակետը։ Պարզապես ձեզ տեղեկացնում եմ այդ մասին։

Սթրիթլին պատմական քաղաք է, որի հիմնադրման տարեթիվը, ինչպես և գետափնյա քաղաքների ու գյուղերի մեծ մասինը, հասնում է մինչև բրիտոնների ու սաքսոնների ժամանակները։ Հանգստանալու համար Գորինգը այնքան հաճելի վայր չէ, որքան Սթրիթլին, եթե ընտրության հնարավորություն ունեք։ Բայց Գորինգը գեղեցիկ է յուրովի և, բացի այդ, ավելի մոտ է երկաթուղուն, այն դեպքում, եթե ցանկանում եք ծլկել հյուրանոցից, առանց հաշիվը փակելու։

Գլուխ տասնյոթերորդ

Լվացք։ Ձկներ ու ձկնորսներ։ Կարթով ձուկ որսալու արվեստի մասին։ Բարեխիղճ ձկնորսը։ Ձկնորսական պատմություն։

Սթրիթլիում մնացինք երկու օր և մաքրման հանձնեցինք մեր հագուստները։ Մենք իհարկե, փորձեցինք ինքներս լվանալ դրանք գետում Ջորջի ղլխավորությամբ, բայց մեր փորձը անհաջողությամբ պսակվեց։ Իրականում, դա ավելին էր քան անհաջողությունը, որովհետև լվացքից հետո մենք ավելի վատ տեսք ունեինք, քան առաջ։ Ճիշտ է, լվանալուց առաջ մեր հագուստները շատ, անչափ կեղտոտ էին, բայց դրանք կարելի էր մի կերպ հագնել։ Իսկ լվանալուց հետո...Մի խոսքով, դրանից հետո գետի ջուրը Ռեդինգի և Հենլիի միջև շատ ավելի մաքուր էր, քան երբևէ։ Լվացքի ժամանակ մեր հագուստները ներծծեցին այն ամբողջ կեղտը, որ պարունակվում էր գետի ջրում Ռեդինգի և Հենլիի միջև։

Սթրիթլիում, լվացարարուհին ասաց, որ իր պարտքն է համարում լվացքի համար սովորականից երեք անգամ ավելի վարձ պահանջել մեզանից։ Նա ասաց, որ դա ավելի շատ հոգափորի աշխատանք է, քան լվացարարուհու։

Մենք առանց մի բառ անգամ արտասանելու վճարեցինք։

Սթրիթլիի ու Գորինգի շրջակայքը հայտնի ձկնորսական կենտրոն է։ Այստեղ կարելի է հիանալի ձուկ որսալ։ Գետն առատ է գայլաձկով, օձաձկով, մանրածածանով, սպիտակաձկով և կարելի է ամբողջ օրը նստել ափին ու կարթով ձուկ որսալ։

Ոմանք այդպես էլ անում են։ Սակայն նրանց չի հաջողվում ձուկ բռնել։ Ես երբեք չեմ տեսել, որ մեկն ու մեկը Թեմզայի խարակաձկներից ու սառակած կատուներից բացի որևէ բան բռնի, իսկ դա էլ ի՞նչ ընդհանուր բան կարող է ունենալ ձկնորսության հետ։ Տեղական «Ձկնորսի ուղեցույցը» ոչինչ չի հաղորդում ձկան որսի մասին, այլ միայն սահմանափակվում է հայտարարելով, որ այստեղ հիանալի վայր է ձկնորսության համար։ Եվ ես էլ, իմ տեսածից ելնելով, պատրաստ եմ հաստատել դա։

Աշխարհում ուրիշ ոչ մի այլ տեղ չկա, որտեղ կարողանաք ավելի շատ հաճույք ստանալ ձկնորսությունից կամ ավելի երկար ժամանակով զբաղվեք այդ գործով։ Որոշ ձկնորսներ գալիս և որսում են մի ամբողջ օր, մյուսները՝ մի ամիս։ Եթե ցանկանում եք, կարող եք երկարացնել ժամկետը և ձուկ որսալ մի ամբողջ տարի՝ տարբերություն չկա։

«Թեմզայի ձկնորսի ուղեցույցն» ասում է՝ «այստեղ կան նաև գայլաձկներ և պերկես», բայց այստեղ ձկնորսի ուղեցույցը սխալվում է։ Գուցե կան գայլաձուկ և պերկես, այսինքն, ես իմ աչքով եմ տեսել, որ կան։ Ափի երկայնքով զբոսնելիս, կարող եք դրանց ամբողջ վտառներ տեսնել։ Նրանք մոտ են լողում և կիսով չափ ջրից դուրս գալով, բեռանները լայն բաց արած, սպասում են, որ թիավարը գցեն իրենց։ Իսկ երբ լողում եք, նրանք շրջապատում են ձեզ, խանգարում են և համբերությունից հանում։ Բայց որպեսզի բռնեք նրանց կարթի ծայրին ամրացված մի փոքրիկ որդով, կամ դրա նման մի բան, ոչ, դա երբեք չի լինի։

Ես ինքս հմուտ ձկնորս չեմ։ Մի ժամանակ բավականաչափ ուշադրություն եմ նվիրել այդ զբաղմունքին և, իմ կարծիքով, ամեն ինչ լավ էր ստացվում։ Բայց փորձված ձկնորսներն ասացին, որ ինձնից բան դուրս չի գա և խորհուրդ տվեցին չշարունակել։ Նրանք այն կարծիքին էին, որ ես մեծ խնամքով եմ կարթը գցում, հնարամիտ եմ ու բավարար չափով՝ ծույլ։ Սակայն, այնուամենայնիվ, նրանք համոզված էին, որ ինձնից ձկնորս դուրս չի գա։ Ես շատ աղքատ երևակայություն ունեմ։

Նրանք ասացին, որ բանաստեղծի, էժանագին դեդեկտիվների հեղինակի, թզթակցի կամ նման մի այլ դերի համար ես, գուցեև հարմար եմ, բայց որ Թեմզայի ձկնորս կոչվելու պատվին արժանանամ, ինձ պետք է ունենալ ավելի հարուստ երևակայություն և ավելի մեծ հնարամտություն։

Ոմանք կարծում են, որ լավ ձկնորս լինելու համար պետք է միայն կարողանալ հեշտորեն, առանց կարմրելու, ստեր ասել, բայց նրանք մոլորության մեջ են։ Միայն մերկ հորինվածքները անօգուտ են, դա ամենամի անփորձ սկսնակ էլ կարող է անել։ Հանգամանալից մանրամասներ, ճշմարտանման նկարագրություններ, նրբանկատ, համարյա մանրախնդրություն հասնող ճշմարտության պատրանք — ահա թե որտեղ է երևում իսկական ձկնորսը։

Ամեն ոք կարող է ներս մտնել և ասել. «Ուխ, երեկ երեկոյան տասնհինգ դյուժին պերկես եմ բռնել» կամ «Անցյալ կիրակի խարակաձուկ եմ բռնել, որը տասնութ ֆունտ էր կշռում և երեք ֆուտ երկարություն ուներ»։

Դրա համար ոչ արվեստ է պետք, ոչ հմտություն։ Դա միայն համարձակության մասին է վկայում և միայն այդքանը։

Ոչ, իհարկե, իսկական ձկնորսը այսպիսի ստեր չի փչի։ Նրա մեթոդը մի ամբողջ գիտություն է։

Նա անշտապ, առանց գլխարկը հանելու ներս է մտնում, ընտրում է ամենահարմար աթոռը, վառում է ծխամորճը և սկսում է լուռ ծխել։ Նա թույլ է տալիս, որ երիտասարդները պարծենան, որից հետո, օգտվելով բոպեական լռությունից, ծխամորճը հեռացնում է շրթունքներից և բուխարու ճաղերին խփելով մոխիրը թափելուց հետո, կարծես իմիջիայլոց, ասում է.

— Էհ, երեքշաբթի երեկոյան ես այնպիսի բարեհաջող որս եմ արել, որ նույնիսկ հնարավոր չէ բառերով նկարագրել։

— Դե, ինչու՞ չէ... — հարցնում են մյուսները։

— Որովհետև չեմ կարծում, որ մեկնումեկը կհավատա ինձ,— հանգիստ պատասխանում է ծերուկը ձայնի մեջ առանց դառնության նշույլի, վերստին լցնում է ծխամորճը և պանդոկապանին խնդրում է երեք բաժին սառը շոտլանդական վիսկի մատուցել։

Դրանից հետո բոլորը լուռ են, ոչ ոք իր մեջ բավական համարձակություն չի գտնում ծեր ջենտլմենին հակաճառելու համար։ Այնպես որ նա ստիպված է շարունակել, չսպասելով քաջալերման։

— Ոչ,— մտածկոտ շարունակում է նա,— ես ինքս էլ չէի հավատա, եթե ինձ այսպիսի բան պատմեին, բայց և այնպես, սա փաստ է։ Ամբողջ օրը նստած էի ափին և բառացիորեն ոչինչ չբռնեցի, մի քանի դյուժին սպիտակաձկից և մի քսան դայլաձկից բացի։ Արդեն պատրաստվում էի տուն գնալ, քանի որ դործս հաջող չէր ընթանում, երբ հանկարծ զգացի, որ կարթը ուժգին քաշում են։ Մտածեցի, որ դա էլի մի ինչ-որ մանր-մունր բան է և սկսեցի կարթը ձգել։ Աստծո անեծքն իմ գլխին, եթե հնարավոր էր գոնե կարթը տեղից շարժել։ Ամբողջ կես ժամ շարշարվեցի, կես ժամ՝ այդ ձուկը դուրս քաշելու համար և ամեն վայրկյան մտածում էի, որ կարթաթելը ուր որ է կկտրվի։ Վերջապես դուրս քաշեցի, և ի՞նչ եք կարծում։ Թառափ։ Քառասուն ֆունտանոց թառափ, այն էլ կարթով։ Դե իհարկե — կզարմանաք։ Էյ, պանդոկապան, ես երեք բաժին շոտլանդական։

Հետո նա սկսում է պատմել, թե որքան էին զարմացել բոլորը, թե ինչ ասաց կինը, երբ նա տուն հասավ, և թե ինչ կարծիքի էր այդ մասին Ջո Բագգլսը։

Մի անգամ առափնյա պանդոկներից մեկի տիրոջը հարցրեցի, արդյոք նա չի՞ ձանձրանում լսելով տեղացի ձկնորսների փչոցները, և նա պատասխանեց.

— Օ, ոչ, հիմա արդեն ոչ, սըր։ Սկզբում քիչ էր մնում խենթանայի, բայց, փառք աստծո, հիմա ես ու տիրուհիս կարող ենք թեկուզ ամբողջ օրը լսել նրանց։ Վարժվել ենք։

Մի երիտասարդի էի ճանաչում, որը շատ բարեխիղճ որսորդ էր։ Նա որոշում էր ընդունել երբեք իր որսը քսանհինգ տոկոսից ավել չչափազանցել։

— Եթե բռնեմ քառասուն ձուկ, — ասում էր նա, — կասեմ, որ բռնել եմ հիսունը և այլն։ Բայց դրանից այն կողմ չեմ չափազանցի, քանի որ ստելը մեղք է։

Սակայն քսանհինգ տոկոսի ծրագիրը այնքան էլ հարմար չէր։ Նրան այդպես էլ չհաջողվեց դա իրագործել։ Օրվա մեջ ամենաշատը նա որսում էր երեք ձուկ, իսկ երեքին քսանհինգ

տոկոս ավելացնելը այնքան էլ հեշտ գործ չէ, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է ձկներին։

Այնպես որ, նա իր տոկոսները հասցրեց մինչև 33,3-ի։ Բայց դա նույնպես հարմար չէր, երբ նրան հաջողվում էր բռնել միայն մեկը կամ երկուսը։ Վերջապես գործը հեշտացնելու համար, նա որոշեց պարզապես կրկնապատկել իր որսած ձկների քանակը։

Մի երկու ամիս նա ճշտորեն հետևում էր այս կանոնին, սակայն հետո դա էլ նրան այլևս չբավարարեց։ Ոչ ոք չէր հավատում, երբ նա ասում էր, որ միայն կրկնապատկում է, և դրանից նրա հեղինակությունը ամենևին չէր բարձրանում։ Միևնույն ժամանակ, նրա համեստությունը, մյուս ձկնորսների հետ համեմատած, նրան անբարենպաստ դրության մեջ էր դնում։ Երբ նա իրականում երեք ձկնիկ էր բռնել և ասում էր, որ վեցն է բռնել, նախանձով էր լսում այն մարդու պատմածը, որն իրականում միայն մեկ ձուկ էր բռնել, մինչդեռ պատմում էր, որ երկու դյուժին է բռնել։

Այսպիսով, դեպքերի բերմամբ, նա մի վերջնական պայման կնքեց ինքն իր հետ, որը մինչև այսօր էլ սրբորեն պահպանում է. ամեն մի որսած ձուկը հաշվում էր, որպես տասը և հաշվելիս էլ սկսում էր տասից։ Այսպես օրինակ, եթե ոչ մի ձուկ չէր բռնել, ասում է որ բռնել է տասը ձուկ։ Նրա սիստեմով տասից պակաս հնարավոր չէր բռնել։ Դա էր սիստեմի հիմքը։ Երբ նրան հաջողվում էր բռնել մի ձուկ, նրա համար դա նշանակում էր քսանը, մինչդեռ երկու ձուկը հաշվում էր երեսուն, երեքը՝ քառասուն և այսպես շարունակ։

Դա պարզ և հեշտորեն իրագործվող ծրագիր էր։ Ասում էին, որ դա ցանկանում էին տարածել ձկնորսների ընկերության անդամների միջև։ «Թեմզայի ձկնորսների ընկերության կոմիտեն», իրոք երկու տարի առաջ առաջարկեց ընդունել դա, բայց նրա մի քանի ամենահին անդամները ընդդիմացան։ Նրանք ասացին, որ կքննարկեն դա, եթե ելակետային թիվը կրկնապատկվի և եթե ամեն մի ձուկը հաշվվի, որպես քսան։

Եթե երբևէ դեռատիին գտնվեք և ազատ երեկո ունենաք, խորհուրդ կտայի մի որևէ փոքրիկ պանդոկ այցելել և նստել գարեջրասրահում։ Համոզված եմ, որ այնտեղ կհանդիպեք մի երկու հին ձկնորսների, անշտապ մի-մի բաժակ գրոգ խմելիս, և նրանք ձեզ կես ժամում ձկների մասին այնքան պատմություններ կպատմեն, որ մի ամբողջ ամիս ստամոքսի խանգարում կստանաք։

Ջորջը և ես (չգիտեմ, թե ինչ էր պատահել Հարրիսի հետ։ Օրվա սկզբում գնացել էր սափրվելու, իսկ հետո վերադարձել էր և քառասուն թոպե շարունակ կոշիկներն էր փայլեցրել։ Դրանից հետո նրան չէինք տեսել)։ Եվ այսպես, Ջորջը և ես, ինչպես նաև մեր խնամքին հանձնված շունը, երկրորդ օրը երեկոյան գնացինք Ուոլլինգֆորդ՝ զբոսնելու։ Տունդարձի հանապարհին մի առափնյա պանդոկ մտանք հանգստանալու և մի-մի բաժակ գարեջուր խմելու։

Մենք սրահ մտանք և նստեցինք։ Այնտեղ մի ծեր մարդ կար, որը երկար կավե ծխամորճ էր ծխում և մենք, բնականաբար, խոսակցության բռնվեցինք նրա հետ։

Նա ասաց, որ այսօր հիանալի եղանակ է, իսկ մենք ասացինք, որ երեկ նույնպես հիանալի եղանակ էր, հետո միաձայն հույս հայտնեցինք, որ վաղն էլ հիանալի եղանակ կլինի։ Իր հերթին Ջորջն ավելացրեց, որ այս տարի, հավանաբար, հացահատիկի առատ բերք կլինի։

Դրանից հետո, նա իմացավ, որ մենք օտարական ենք և որ հաջորդ առավոտյան մեկնում ենք։

Որոշ ժամանակ մենք լուռ էինք և այդ ընթացքում մեր աչքերը թափառում էին սենյակում։ Վերջապես, մեր հայացքը կանգ առավ բուխարու վերևում ամրացված ապակե հին, փոշոտ տուփի վրա, որի մեջ մի իշխան ձուկ էր դրված։ Այնքան ահռելի էին դրա չափերը, որ այդ ձուկը դյութել էր ինձ։ Առաջին հայացքից ես կարծեցի, թե դա ձողաձուկ է։

— Ա՜, — ասաց ծեր ջենտլմենը, հետևելով մեր հայացքին, — լավիկն է, այնպես չէ՞։

— Իրոք, որ արտասովոր է, — մոթմոթացի ես, իսկ Ջորջը հարցրեց ծերուկին, թե որքան է, նրա կարծիքով, կշռում այդ ձուկը։

— Տասնութ ֆունտ, վեց ունցիա, — պատասխանեց ծեր խոսակիցը, վեր կենալով ու հանելով պիջակը։ — Այո, — շարունակեց նա, — դա տասնվեց տարի առաջ էր։ Հաջորդ ամսվա երրորդ օրը կլրանա ուղիղ տասնվեց տարին, ինչ

բռնել եմ այդ ձուկը։ Դա բռնել եմ կամրջից փոքր-ինչ ներքև, խարտակաձկով։ Ասում էին, որ իշխան կա գետում և ես որոշեցի, որ կբռնեմ, ու բռնեցի։ Հիմա այս կողմերում այդպիսի չափերի ձուկ չեն բռնի։ Բարի գիշեր, ջենտլմեններ, բարի գիշեր։

Ու նա դուրս եկավ, թողնելով մեզ մենակ։

Մենք այլևս չէինք կարողանում աչքներս հեռացնել այդ ձկից։ Դա իսկապես հիանալի ձուկ էր։ Դեռ դիտում էինք, երբ տեղացի կառապանը, որը հենց նոր կանգ առավ պանդոկի մոտ, մի զավաթ դարեջուր ձեռքին սենյակ մտավ և նույնպես նայեց ձկանը։

— Կարգին մեծ իշխան է, այնպես չէ՞, — ասաց Ջորջը, շրջվելով նրա կողմը։

— Ա՜, կարելի է այդպես ասել, — պատասխանեց կառապանը և մի կում գարեջուր խմելով, ավելացրեց, — գուցե դուք այս կողմերում չէի՞ք, երբ բռնեցի այդ ձուկը։

— Ոչ, — ասացինք մենք, — մենք օտարական ենք։

— Ա՜, այդ դեպքում, իհարկե, որտեղի՞ց պիտի իմանայիք, — ասաց կառապանը, — Ահա արդեն հինգ տարի է, ինչ ես բռնել եմ այդ իշխանը։

— Օ՜, միթե դու՞ք եք բռնել իշխանը,— բացականչեցի ես։

— Այո, սըր, — պատասխանեց հանճարեղ ծերուկը։ — Ես դա բռնեցի մի ուրբաթ օր, շլյուզից քիչ ներքև (այն ժամանակ այստեղ շլյուզ կար) և զարմանալին այն է, որ դա բռնեցի ճանճով։ Ես դուրս էի եկել գայլաձուկ որսալու, նույնիսկ չէի մտածում իշխանի մասին և, երբ կարթաթելի ծայրին տեսա այս հսկային, աստված վկա, ուղղակի շշմեցի։ Դե գիտե՞ք, հանաք բան չէ, քսանվեց ֆունտ էր կշռում։ Բարի գիշեր, ջենտլմեններ, բարի գիշեր։

Հինգ բոպե անց, մեկ ուրիշը ներս մտավ և նկարագրեց, թե ինչպես է ԻՆՔԸ բռնել այդ ձուկը մի օր վաղ առավոտյան, թրթուրով, ու դուրս եկավ։ Նրանից հետո անխռով ու լուրջ տեսքով, միջին տարիքի մի անձնավորություն ներս մտավ և տեղավորվեց պատուհանի մոտ։

Որոշ ժամանակ մենք լուռ էինք։ Վերջապես Ջորջը շրջվեց դեպի նորեկն ու ասաց.

— Ներեցեք, խնդրում եմ... Հուսով եմ, որ կներեք այն համարձակությունը, որ մենք՝ այս կողմերում օտար մարդիկ, թույլ ենք տալիս մեզ, սակայն իմ ընկերը և ես անչափ շնորհապարտ կլինենք ձեզ, եթե պատմեք, թե ինչպես եք բռնել այս իշխանը։

— Իսկ ձեզ ո՞վ է ասել, որ ես եմ բռնել այդ ձուկը, — զարմացած հարցրեց նա։

Մենք ասացինք, որ ոչ ոք մեզ չի ասել, մենք բնազդորեն զգում ենք, որ դա իր ձեռքի գործն է։

— Զարմանալի բան է, իրոք որ զարմանալի, — ծիծաղելով պատասխանեց անվրդով ջենտլմենը, — քանի որ պատահականության բերմամբ, դուք ճիշտ եք դուշակել։ Իրոք որ ես եմ բռնել իշխանը։ Սակայն ինչպե՞ս կարողացաք գլխի ընկնել։ Ասված իմ, որքան զարմանալի է։

Եվ նա սկսեց պատմել մեզ, թե ինչպես է կես ժամ չորշարվել, մինչև ձուկը դուրս է քաշել ջրից, ինչպես է կոտրել իր կարթաձողը, հետո, տուն հասնելով, մեծ խնամքով կշռել է, և սլաքը ցույց է տվել երեսունչորս ֆունտ։

Նա նույնպես դուրս գնաց և նրանից հետո ներս մտավ պանդոկապանը։ Մենք նրան պատմեցինք այն բոլոր պատմությունները, որ լսել էինք իշխանի մասին և դա նրան անչափ զվարճացրեց։ Բոլորս միասին սրտանց ծիծաղեցինք։

— Պատկերացնում եմ, թե ինչպես են Ջիմ Բեյթսը, Ջո Բագգլսը, միստր Ջոնը և ծերուկ Բիլի Մաունդերսը պարծեցել, թե իրենք են բռնել։ Հա՜, հա՜, հա՜։ Հիանալի է, — ասաց ազնիվ ծերուկը սրտանց ծիծաղելով։ — Ինչպե՞ս չէ, նրանք այնպիսի մարդիկ են, որ եթե իրենք բռնած լինեին ձուկը, ԻՆՁ կտային ու թույլ կտային կախել ԻՄ պանդոկում։ Ինչպե՞ս չէ։ Հա՜, հա՜, հա՜։

Եվ նա պատմեց այդ իշխանի մասին ճշմարտությունը։ Պարզվեց, որ ինքն է բռնել այդ ձուկը, տարիներ առաջ, երբ շատ ջահել էր և ոչ փորձ ուներ, ոչ հմտություն։ Նրան օգնեց անբացատրելի երջանիկ պատահականությունը, որը կարծես միշտ սպասում է այն շարաճճի տղային, որը փախչում է դասերից և արևոտ կեսօրին գնում է ծառի ճյուղին կապված պարանի կտորով ձուկ որսալու։

Նա պատմեց, որ այդ իշխանը տուն բերելով, ինքը փբրկ-

վել է ծեծ ուտելուց և որ նույնիսկ իր ուսուցիչն ասել է, որ այդ ձուկն արժե թվաբանական բոլոր կանոնները միասին վերցրած։

Այդ պահին, նրան սենյակից դուրս կանչեցին, և Ջորջն ու ես նորից մեր հայացքներն ուղղեցինք իշխանի կողմը։

Դա իրոք որ ապշեցուցիչ ձուկ էր։ Որքան երկար էինք նայում, այնքան շատ էինք հիանում նրանով։

Դա այն աստիճան հետաքրքրեց Ջորջին, որ նա բարձրացավ աթոռին, որպեսզի ավելի լավ տեսնի։

Սակայն աթոռը ճռճվեց, Ջորջը ամուր կառչեց իշխանի տուփից, որպեսզի չընկնի, տուփը աղմուկով ցած գլորվեց, իսկ Ջորջն ու աթոռն ընկան դրա վրա։

— Ձուկը չի՞ վնասվել, — տագնապով գոռացի ես, նետվելով դեպի Ջորջը։

— Կարծես թե ոչ, — պատասխանեց Ջորջը, զգուշությամբ բարձրանալով ու շուրջը դիտելով։

Բայց ոչ, այդ իշխանը հազար մասի բաժանված փռված էր հատակին (ասում եմ հազար, բայց կարող է ընդամենը իններ հարյուր լիներ, ես չհասցրեցի հաշվել)։

Մեզ տարօրինակ ու անբացատրելի թվաց, որ ձկան պաճուճապատանքը կարող է այդքան մանր մասերի բաժանվել։

Դա, իրոք որ, անբացատրելի ու տարօրինակ կլիներ, եթե իշխանի իսկական պաճուճապատանք լիներ։ Բայց այդպես չէր։

Իշխանը գիպսից էր։

Գլուխ տասներորդ

Շլյուզներ։ Ջորջը և ես լուսավորում ենք։ Ուոլլինգֆորդ։ Դորչեսթեր։ Էբինգտոն։ Ընտանիքի հայրը։ Խեղդվելու համար հարմար վայր։ Գետի դժվարին հատվածը։ Գետի օդի բարոյալքող ազդեցությունը։

Հաջորդ օրը, վաղ առավոտյան դուրս եկանք Սթրիթլիից և թիավարեցինք գետով վեր, մինչև Քելհեմ, որտեղ նավակը կանգնեցրինք գետախորշում ու գիշերեցինք բրեզենտի տակ։

Սթրիթլիի և Ուոլլինգֆորդի միջև գետը առանձնապես գրավիչ չէ։ Քլիվից հետո, վեցուկես մղոնի վրա ոչ մի շլյուզ չկա։ Սա, հավանաբար, Թեդդինգտոնից վեր գտնվող գետի ամենաերկար, չընդհատվող հատվածն է, և Օքսֆորդի սպորտային ակումբը այստեղ է մարզում իր ութնյակներին։

Բայց որքան շլյուզների բացակայությունը գոհունակություն է առաջ բերում թիավարների մոտ, նույնքան դժգոհություն է առաջացնում նրանց մոտ, ովքեր գետի վրա միայն զվարճություն են փնտրում։

Անձամբ ես շլյուզներ շատ եմ սիրում։ Նրանք հաճելիորեն ընդհատում են թիավարման միօրինակությունը։ Սիրում եմ նստել նավակում և սառը խորությունից դանդաղ բարձրանալ դեպի նոր ջրեր ու նոր տեսարաններ, կամ սուզվել ցած, կարծես հեռանալով աշխարհից, և սպասել, մինչ մոայլ դարպասները կճռնչան ու նրանց միջև կեսօրվա լույսի նեղ շերտը կամաց-կամաց կլայնանա։ Եվ ահա գեղեցիկ, ժպտուն գետը փռված է ձեր առջև, ու դուք կրկին նավակը դուրն եք բերում կարճատև բանտարկությունից դեպի գրկաբաց, ջրային լայնությունները։

Ի՜նչ գեղատեսիլ վայրեր են այդ շլյուզները։ Շլյուզի գիրուկ, ծեր պահակը, նրա աշխույժ կինը, կամ գեղեցկատես դուստրը սիրալիր մարդիկ են, որոնց հետ շլյուզն անցնելիս կարելի է հաճելի զրույցի բռնվել։ Այդտեղ հանդիպում եք ուրիշ նավակների և գետային նորություններ փոխանակում։ Թեմզան այդքան հեքիաթային գեղեցիկ չէր լինի, եթե չլինեին նրա ծաղկաթմբերով բոլորապատված շլյուզները։

Խոսելով շլյուզների մասին, մի դեպք հիշեցի, որ պատահել է Ջորջի և ինձ հետ Հեմպթոն Քորթում, ամառային մի առավոտ։

Հիանալի օր էր, և շլյուզում ասեղ գցելու տեղ չկար։ Ինչպես հաճախ է պատահում գետի վրա, մի հաշվենկատ լուսանկարիչ նկարում էր բոլորիս, մինչ մենք օրորվում էինք բարձրացող ջրերի վրա։

Սկզբում չհասկացա, թե ինչ է տեղի ունենում, դրա համար էլ անչափ զարմացա նկատելով, որ Ջորջը շտապ ուղղեց շալվարը, հետո մազերը, գլխարկը լոթիաբար քաշեց ծոծրակին և դեմքին բարեհամբույր ու քիչ թախծոտ արտահայտու-

Իյուն ավելց, նստեց վայելչագեղ դիրքով՝ աշխատելով թաքցնել ոտքերը։

Սկզբում մտածեցի, որ գուցե ծանոթ աղջիկ է նկատել և շուրջս նայեցի՝ փորձելով տեսնել, թե ով է նա։ Շրջապատում բոլորը թարացել էին։ Նրանք բոլորը նստած կամ կանգնած էին ամենաատաբորինակ և հետաքրքիր դիրքերով, որ տեսել եմ միայն ճապոնական հովհարների վրա։ Բոլոր աղջիկներն անխոտիր ժպտում էին։ Օ՜, նրանք այնքան բարեհամբույր տեսք ունեին։ Իսկ տղամարդիկ կիտել էին հոնքերը և լուրջ ու ազնվաբարո տեսք ընդունել։

Վերջապես, ինձ համար ամեն ինչ պարզ դարձավ ու վախեցա, որ ժամանակին չեմ հասցնի։ Մեր նավակն առաջինն էր, և ինձ թվում էր, որ իմ կողմից անքաղաքավարություն կլիներ, եթե իմ պատճառով լուսանկարը փչանար։

Ես արագորեն շրջվեցի, դիրքավորվեցի նավաքթի մոտ և կարթաձողին հենվեցի անհոգ ու արժանապատիվ դիրքով, որը խոսում էր իմ ուժի ու ճարպկության մասին։ Շտապ կարգի բերեցի մազերս, մի խոպոպ թողնելով ճակատիս, ու դեմքիս տվեցի թախծոտ արտահայտություն՝ խառնված ցինիզմի հետ, որը, ինչպես ասում են, սազում է ինձ։

Մինչ կանգնել ու սպասում էինք հանդիսավոր պահին, հանկարծ լսեցի, ինչ-որ մեկը մեր ետևում գոռաց.

— Էյ, ուշադրություն դարձրեք ձեր քթին։

Ես չէի կարող շրջվել՝ տեսնելու, թե բանն ինչ է և այդ ո՞ւմ քթին է պետք ուշադրություն դարձնել։ Գողունի նայեցի Ջորջի քթին։ Ամեն ինչ կարգին էր, համենայն դեպս այնպիսի բան չկար, որ կարելի լիներ ուղղել։ Հայացքս ցած սահեցրի իմ սեփական քթին և համոզվեցի, որ ամեն ինչ այնպես է, ինչպես և սպասում էի։

— Նայեք քթին, հիմար ավանակ, — նորից լսվեց նույն ձայնը, այս անգամ ավելի բարձր։

Դրանից հետո մի ուրիշ ձայն բղավեց.

— Դուրս հրեք ձեր քիթը, էյ դուք, երկուսով շան հետ։

Ո՜չ Ջորջը, ո՜չ ես չհամարձակվեցինք շուռ գալ։ Լուսանկարիչի մատը օբյեկտիվի պլսաղիրի վրա էր և ամեն պահ նա կարող էր մեզ լուսանկարել։ Մի՞թե մեզ են բղավում։ Ի՞նչ

կարող է պատահած լինել մեր քթերի հետ։ Ինչու՞ պետք է դրանք դուրս հրենք։

Հիմա արդեն ամբողջ շլյուզը սկսեց աղաղակել, և մի որոտալից ձայն բղավեց.

— Նայեք ձեր նավակին, սրբ, էյ, դուք, կարմիր և սև գլխարկներով։ Եթե չշտապեք, լուսանկարի մեջ միայն ձեր դիակները կպատկերվեն։

Մենք նայեցինք և տեսանք, որ մեր նավաքիթը լռվել մնացել է շլյուզի ցցագերանների տակ, իսկ ջուրը բարձրանում է՝ իր հետ բարձրացնելով նավակը։ Եվս մի րոպե և մենք կխորտակվեինք։ Կայծակի պես արագ ամեն մեկս մի թի ճանկեցինք և մի ուժգին հարվածը շլյուզի կողմնային մասին՝ ազատեց նավակը, իսկ մենք անճոռնի դիրքերով փովեցինք մեջքի վրա։

Այդ լուսանկարում Ջորջն ու ես այնքան էլ հաշող դուրս չեկանք։ Իհարկե, ինչպես և սպասում էինք, մեր բախտը չբերեց, այդ լուսանկարիչը իր գրողի տարած ապարատը գործի դրեց հենց այն պահին, երբ երկուսով փռված էինք մեջքի վրա, վայրի և շշմած տեսքով, իսկ մեր չորս ոտքերը հուսահատորեն ճանվում էին օդում։

Անկասկած, մեր ոտքերը այդ նկարի մեխն էին։ Ճիշտն ասած, դրանցից բացի շատ քիչ բան էր երևում։ Դրանք ամբողջապես ծածկել էին առջևի պլանը, իսկ ետին պլանում երևում էին մյուս նավակների ուրվագծերը և շրջապատող ոչխարների պատառիկներ։ Բայց այդ ամենը, մեր ոտքերի հետ համեմատած, այնքան աննշան ու անկարևոր էին թվում, որ մյուսները անչափ ամոթահար էին զգում իրենց և հրաժարվեցին նկարը վերցնել։

Մի շոգենավակի տերը, որը վեց օրինակ էր պատվիրել, տեսնելով նեգատիվը, հրաժարվեց պատվերից։ Նա ասաց, որ կվեցնի նկարները, եթե որևէ մեկը նկարի վրա ցույց տա իր շոգենավակը, բայց ոչ ոք չկարողացավ։ Դա Ջորջի աջ ոտքի ետևում ինչ-որ տեղ էր։

Այդ լուսանկարի պատճառով մեծ տհաճություններ մեջ ընկանք։ Լուսանկարիչը պնդում էր, որ յուրաքանչյուրս պետք է մի-մի դյուժին օրինակ վերցնենք, ելնելով այն բանից, որ նկարի իններ տասներորդ մասը մենք էինք զբաղեցրել, սա-

կայն մենք հրաժարվեցինք, ասելով, որ դեմ չէինք լինի նկարվել ողջ հասակով մեկ և կգերադասեինք մեր պատկերն ունենալ նորմալ դիրքով։

Սրբիթլիից վեց մղոն վեր գտնվում է Ուոլլինգֆորդը, մի շատ հին քաղաք, որը քիչ դեր չի խաղացել Անգլիայի պատմության կերտման գործում։ Բրիտոնների ժամանակ, դա կոպիտ, կավե շինություններով քաղաք էր։ Սակայն հռոմեական լեգեոնները վտարեցին նրանց և կավաշեն ամրություններ փոխարեն կառուցեցին հզոր ամրություններ, որոնց հետքը չի կարողացել ջնջել նույնիսկ ժամանակը, այնքան լավ էին կարողանում կառուցել այդ հին որմնադիրները։

Բայց ժամանակը, որ կանգ էր առել հռոմեական պարիսպների տակ, շուտով իրենց՝ հռոմեացիներին, փոշի դարձրեց։ Ավելի ուշ, մինչև նորմանդացիների արշավանքը, այս հողի վրա մարտնչել են վայրի սաքսոններն ու մեծաքանակ դանիացիները։

Դա պարիսպներով ու ամրություններով շրջապատված քաղաք էր մինչև պաղամենտական պատերազմը, բայց պատերազմի ժամանակ քաղաքը տուժեց Ֆեյրֆաքսի կողմից երկար և հյուծող պաշարումից։ Քաղաքն ընկավ, և պատերը հողին հավասարվեցին։

Ուոլլինգֆորդից մինչև Դորչեսթերը դեռի շրջակայքը ավելի լեռնոտ, փոփոխուն ու գեղատեսիլ է դառնում։ Դորչեսթերը գետից կես մղոն հեռու է գտնվում։ Եթե ձեր նավակը փոքր է, կարող եք այնտեղ հասնել Թեմզայի վտակով։ Բայց ավելի լավ կանեք, որ նավակը թողնեք Դեյ շլյուզի մոտ ու ոտքով անցնեք դաշտերով։ Դորչեսթերը գեղեցիկ, հանգստավետ ու հինավուրց քաղաք է՝ անխռով նիրհած լռության ու հանգարտության մեջ։

Դորչեսթերը, ինչպես և Ուոլլինգֆորդը, հնադարյան Բրիտանական քաղաք է, որն այն ժամանակ կոչվում էր Կաեր-Դորեն (քաղաք ջրի վրա)։ Ավելի ուշ, հռոմեացիներն այստեղ ճամբար դրեցին և ամրությունները, որ մի ժամանակ շրջապատում էին ճամբարը, այժմ ցածր, հավասար բլրակներ են թվում։ Սաքսոնների ժամանակ դա էսսեքսի մայրաքաղաքն էր։ Քաղաքը շատ վաղեմի է և ժամանակին հզոր ու ամուր

է եղել։ Այժմ նա հեռու է կանգնած աղմկոտ աշխարհից, ննջում ու երազներ է տեսնում։

Քլիֆտոն Համփդեն գեղեցիկ գյուղակի շուրջը, որը հնաոճ, հանգստավետ ու երբագեղ է երևում իր ծաղկանոցներով, գետափնյա տեսարաններն ավելի հարուստ ու գեղեցիկ են դառնում, եթե ցանկանում եք գիշերել Քլիֆտոնում, ավելի լավ է կանգ առնեք «Գարու բարդոց» պանդոկում։ Կարող եմ համոզված ասել, որ դա, առանց վերապահության, առափնյա ամենայուրօրինակ, ամենահնաոճ պանդոկն է, որը գտնվում է կամրջից աջ, գյուղակից բավական հեռու։ Պանդոկի թեքված ծղոտե տանիքը և վանդակավոր պատուհանները նրան հեքիաթային տնակի տեսք են տալիս, իսկ ներսից ավելի շատ վաղեմությամբ էր բուրում։

Ժամանակակից վեպի հերոսուհու համար դա այնքան էլ հարմար տեղ չէ։ Ժամանակակից վեպի հերոսուհին սովորաբար «վեհաշուք կերպով բարձրահասակ է» և միշտ «ձգվում է ողջ հասակով մեկ»։ «Գարու բարդոցում» ամեն անգամ դա անելիս նա գլուխը կխփեր առաստաղին։

Հարբած մարդու համար դա նույնպես հարմար վայր չէ։ Այնտեղ ամեն քայլափոխին չափազանց շատ անակնկալներ են հանդիպում աստիճանների տեսքով, որոնցով մերթ պետք է բարձրանալ, մերթ իջնել՝ հարևան սենյակն ընկնելու համար, իսկ վերևի հարկի ննջարանը բարձրանալու, կամ բարձրանալուց հետո անկողինը գտնելու օպերացիաները նրա համար կատարելապես անհնարին կլինեին։

Հաջորդ օրն առավոտյան մենք վաղ արթնացանք, քանի որ ցանկանում էինք մինչև կեսօր լինել Օքսֆորդում։ Զարմանալի է, թե որքան վաղ կարելի է արթնանալ, երբ գիշերում եք բաց օդում։ Մարդու մոտ ցանկություն չի մնում «ես հինգ րոպեն» պառկել նավակի չոր տախտակների վրա, ծածկոցի մեջ փաթաթված և բարձի փոխարեն գլխի տակ կաշվե պայուսակը։ Ուրիշ է, եթե պառկած եք փետրե անկողնում։ Մենք ավարտեցինք նախաճաշը և ութն անց կեսին արդեն անցնում էինք Քլիֆտոնյան շլյուզը։

Քլիֆտոնից մինչև Քելհեմ, գետափը հարթ է, միօրինակ և անհետաքրքիր, բայց Քելհեմյան շլյուզն անցնելուց հետո,

որը գետի ամենամոր և ամենասառը շլյուզն է, բնապատկերները գունեղանում են։

Էբինգտոնում գետը հոսում է փողոցներով։ Էբինգտոնը փոքր չափերի տիպիկ գավառական քաղաք է, խաղաղ, վերին ստոիճանի պատկառելի և անհուսալիորեն տաղտկալի։ Քաղաքը հպարտանում է իր վաղեմությամբ, բայց որ այս տեսակետից ոչ մի համեմատություն չի կարող լինել Ուոլլինգֆորդի և Դորչեսթերի հետ, տարակույս չկա։ Մի ժամանակ այստեղ աբբայություն կար։ Ներկայումս նրա կանգուն մնացած որոգայթ պատերի միջև դառը էյլ են եփում։

Էբինգտոնում, Սուրբ Նիկոլասի եկեղեցում, մի հուշարձան է կանգնեցված Ջոն Բլաքուոլլի և նրա կնոջ՝ Ջեյնի հիշատակին, որոնք երջանիկ ամուսնական կյանքով ապրելուց հետո, երկուսն էլ մահացել են նույն օրը՝ 1625 թ. օգոստոսի 21-ին։ Իսկ Սուրբ Հելենի եկեղեցում գրանցում կա, որն ասում է, որ Ու. Լին, որը մահացել է 1637 թ. «իր կենդանության օրոք սերտորեն ուներ երկու հարյուրից երեք շունչ պակաս»։ Եթե մի քիչ խորհեք, կպարզեք, որ միստր Ու. Լիի ընտանիքը կազմված էր հարյուր իննսունյոթ անդամից։ Միստր Ու. Լին, որը հինգ անգամ ընտրվել է Էբինգտոնի քաղաքագլուխ, անկասկած, բարեգործ էր իր սերնդի համար, բայց, հուսով եմ, որ մեր գերբնակեցված 19-րդ դարում նման բարեգործներ այնքան էլ շատ չկան։

Էբինգտոնից մինչև Նունհեմ Քորտենի ընկած հատվածում դեղեցիկ վայրեր կան։ Նունհեմ-պարկ կալվածքը արժանի է այցելության։ Այնտեղ կարելի է այցելել երեքշաբթի և հինգշաբթի օրերին։ Տանը նկարների և հազվագյուտ իրերի հիանալի հավաքածու կա։ Կալվածքը նույնպես շատ գեղեցիկ է։

Սանդֆորդյան ամրարտակի հորձանուտը խեղդվելու համար հիանալի վայր է։ Ներքին հոսանքը չափազանց ուժեղ է, և եթե դրա մեջ ընկնեք, ուրեմն ձեր հաշիվը մաքրված է։ Կոթոջը ցույց է տալիս ճիշտ տեղը, որտեղ արդեն երկու հոգի խեղդվել են լողալիս։ Ներկայումս, երիտասարդ մարդիկ կոթոջի աստիճաններից նետվում են գետը՝ համոզվելու թե իրո՞ք այդ վայրն այդքան վտանգավոր է։

Օքսֆորդից մեկ մղոն հեռավորության վրա գտնվող Իֆլիի շլյուզը և հողմաղացը սիրած սյուժե են վրձնի եղբայրների

համար, որոնք սիրում են գետային պեյզաժներ նկարել։ Իրականում նրանք այնքան գեղատեսիլ չեն, որքան նկարներում։ Ես նկատել եմ, որ այս աշխարհում շատ քիչ իրեր են համընկնում իրենց պատկերների հետ։

Իֆլիի շլյուզն անցանք մոտավորապես տասներկուսն անց կեսին, հետո կարգի բերեցինք նավակը, ամեն ինչ պատրաստեցինք ցամաք դուրս գալու և ջանասիրությամբ սկսեցինք թիավարել վերջին մեկ մղոնն անցնելու համար։ Որքանով ինձ հայտնի է, Իֆլիի և Օքսֆորդի միջև ընկած տարածությունը գետի ամենաղժվար նավարկելի հատվածն է։ Մարդ պետք է գետի այդ մասում ծնված լինի, որպեսզի հասկանա դա։ Ես շատ անգամներ եմ անցել այդտեղով, բայց երբեք չեմ կարողացել գլուխ հանել դրանից։ Մարդը, որը կարող է ուղիղ գծով թիավարել Օքսֆորդից մինչև Իֆլի, պետք է ի վիճակի լինի միևնույն տանիքի տակ խաղաղ ապրելու իր կնոջ, զսքանչի, ավագ քրոջ և իրենց տանը ծերացած դայակի հետ։

Սկզբում հոսանքը ձեզ քշում է դեպի աջ, հետո դեպի ձախ ափը, հետո քշում է գետի մեջտեղը, երկաթ անգամ պտտում ու նորից քշում հոսանքով վեր, ամբողջ ժամանակ աշխատելով ջարդուփշուր անել ձեր նավակը՝ խփելով մի որևէ բեռնանավի։

Իհարկե, այս ամենի հետևանքով մենք խանգարեցինք շատ ուրիշ նավակների և, իհարկե, նրանք էլ մեզ խանգարեցին և դրա պատճառով շատ թունդ բառեր ասվեցին։

Զգիտեմ ինչու, բայց գետի վրա գտնվող ամեն որ ծայրահեղ դյուրազրգիռ է դառնում։ Աննշան տհաճությունները, որ ցամաքում հազիվ թե նկատեք, մոլեղնության են հասցնում ձեզ, եթե պատահում են ջրի վրա։ Երբ Հարրիսը կամ Ջորջը իրենց հիմարի պես են պահում ցամաքում, ես պարզապես ներողամտորեն ժպտում եմ, երբ նրանք իրենց հիմարի պես են պահում գետի՛ վրա, ես կոպտում եմ այնպիսի բառերով, որոնցից մարդու արյունը սառում է երակներում։ Երբ մի ուրիշ նավակ է հայտնվում իմ ճանապարհին, բիչ է մնում վերցնեմ թին ու սպանեմ նավակում նստածներին։

Հանգիստ բնավորության տեր մարդիկ նավակ նստելով,

գանում են անդուսպ ու արյունոռչան։ Մի անգամ զբոսնում էինք մի օրիորդի հետ։ Նա շատ սիրալիր ու հնչ բնավորության տեր մի անձնավորություն էր, բայց դեռի վրա ուղղակի սարսափելի էր նրան լսելը։

— Գրողի ծոցը գնա, — բացականչում էր նա, երբ որևէ անհաջողակ թիավար խանգարում էր նրան։ — Չի՞ տեսնում, ինչ է, թե ուր է քշում։

— Ահ, գրողը տանի, — բարկությամբ գոռում էր նա, երբ առագաստը ինչպես հարկն է չէր բացվում։ Ամուր կառչում էր դրանից և կոպիտ թափահարում։

Մինչդեռ, ինչպես ասացի, ցամաքում նա բավականաչափ սիրալիր էր ու բարյացակամ։

Դեռի օգը մարդու տրամադրության վրա բարոյալքող ազդեցություն է գործում, և, իմ կարծիքով, դա է պատճառը, որ նույնիսկ նավավարները երբեմն կոպտում են միմյանց և այնպիսի արտահայտություններ են թույլ տալիս, որ ավելի հանդիստ բոպեներին, անկասկած, զղջում են։

Գլուխ տասնիններորդ

Օքսֆորդ։ Դրախտի մասին Մոնթմորենսիի պատկերացումը։ Վարձու նավակ. նրա հրապույրները ու առավելությունները։ «Թեմզայի հպարտությունը»։ Եղանակը փոխվում է։ Դեռը իր տարբեր կերպարանափոխություններով։ Ոչ այնքան ուրախ երգիկ։ Չգտում դեպի անհասանելին։ Ուրախ դրույց։ Ջորջը բանջր է նվագում։ Թախծոտ մեղեդի։ Դարձյալ անձրևոտ օր։ Փախուստ։ Թեթև ընթրիք և բաժանում։

Օքսֆորդում մենք երկու հաճելի օր անցկացրինք։ Քաղաքում շատ շներ կան։ Առաջին օրը Մոնթմորենսին տասնմեկ ճակատամարտ տվեց, տասնչորսը՝ հաջորդ օրը և, ակներևաբար, մտածում էր, որ դրախտ է ընկել։

Մարդիկ, որոնք ի ծնե ծույլ են ու թուլակազմ, որպեսզի հաճույք ստանան դժվարին աշխատանքից, սովորաբար նավակ են նստում և թիավարում հոսանքով վար։ Եռանդուն մարդկանց համար, սակայն, հոսանքով վեր ճանապարհորդությունը, անկասկած, գերադասելի է։ Միշտ չէ, որ հաճելի է շարժվել հոսանքի օգնությամբ։ Ավելի հաճելի է մեջքը ծռելով պայքարել և առաջ գնալ, հաղթահարելով գետի հոսանքը, ծայրահեղ դեպքում, ինձ այդպես է թվում, երբ Հարրիսն ու Ջորջը թիավարում են, իսկ ես դեկի մոտ եմ լինում։

Նրանց, ովքեր մտադիր են մեկնակետ ընտրել Օքսֆորդը, կասեմ. վերցրեք ձեր սեփական նավակը, եթե, իհարկե, չեք կարող վճռել ուրիշինը, առանց վախենալու, որ կբռնվեք։ Նավակները, որոնք վարձով են տրվում Թեմզայի վրա, Մարլոյից վեր, որպես կանոն բարեհույս նավակներ են։ Նրանք անգրանցիկ են և, եթե նրանց հետ հոգատարությամբ վերաբերվեք, ապա հաղվադեպ են ջարդուխուրդ լինում կամ սուզվում։ Նրանց մեջ նստարաններ կան, ինչպես նաև նավակը թիավարելու և զեկավարելու համար բոլոր անհրաժեշտ, կամ համարյա բոլոր անհրաժեշտ հարմարանքները։

Բայց նրանք գեղեցիկ տեսք չունեն։ Նավակը, որ դուք վարձում եք Մարլոյից վեր, այնպիսի նավակ չէ, որի մեջ նստողը կարող է մեծամտանալ կամ փքվել։ Վարձու նավակը շատ շուտով ստիպում է իր ուղևորներին վերջ տալ նման անհեթեթություններին։ Դրանում է նրա գլխավոր, կարելի է ասել, միակ առավելությունը։

Վարձու նավակում մարդ համեստ ու ամաչկոտ է դառնում։ Նա աշխատում է պահվել ստվերում կողմում և ուղևորության մեծ մասը կատարում է վաղ առավոտյան կամ ուշ գիշերը, երբ շատ ականատեսներ չկան։ Երբ վարձու նավակում մարդ որևէ ծանոթի է նկատում, անմիջապես ափ է դուրս գալիս և թաքնվում ծառերի ետևում։

Մի անգամ, ամռանը ընկերներով նավակ էինք վարձել մի քանի օրով։ Մինչ այդ, մեղանից ոչ մեկը վարձու նավակ չէր տեսել և, երբ տեսանք, միանգամից գլխի չընկանք, թե դա ինչ բան է։

Նամակով հայտնել էինք, որ մեզ հարկավոր է քառաթի նավակ և երբ, ճամպրուկներով հանդերձ, ժամանեցինք նավամատույց և հայտնեցինք մեր անունները, նավավարն ասաց.

— Ահ, այո, ուրեմն դուք այն խումբն եք, որին քառաթի նավակ է պետք։ Ամեն ինչ կարգին է։ Ձիմ, այստեղ բեր «Թեմզայի հպարտությունը»։

Տղան դնաց և հինգ րոպե անց կրկին հայտնվեց՝ մի

կերպ քարշ տալով մի անդրջրհեղեղյան փայտե տաշտակ։ Դա այնպիսի տեսք ուներ, ասես վերջերս էին ինչ-որ տեղից պեղել հանել և այն էլ անզգուշորեն, այնպես, որ նավակը այդ օպերացիայի ժամանակ իզուր տեղը տուժել էր։

Այդ իրը տեսնելով, իմ առաջին միտքն այն էր, որ դա հռոմեական ծագում ունեցող ինչ-որ իրի, ավելի հավանական է՝ դագաղի մնացորդ է։

Թեմզայի վերին հոսանքներում տեղանքը հարուստ է հին հռոմեական մասունքներով և իմ ենթադրությունը խիստ հավանական էր թվում, բայց մեր խմբից մեկը, մի լրջախոհ երիտասարդ, որը գլուխ էր հանում երկրաբանությունից, ծաղրեց իմ հին հռոմեական մասունքի տեսությունը։ Նա ասաց, որ ամեն մի բանական մարդու համար (նա ցավում էր, որ չէր կարող ինձ դասել նրանց շարքը, պարզ է, որ տղայի հայտնաբերած իրը կետի կմախք է։ Եվ նա մեզ տարբեր նշաններ ցույց տվեց, ապացուցելու, որ դա պատկանում է մինչսառցային շրջանին։

Բանավեճին վերջ տալու համար մենք դիմեցինք տղային, խնդրելով, որ չվախենա և ասի միայն ճշմարտությունը. դա նախապատմական շրջանի կետի կմա՞խք է, թե հին հռոմեական դագաղ։

Տղան պատասխանեց, որ դա «Թեմզայի հպարտությունն» է։

Սկզբում մենք մտածեցինք, որ շատ սրամիտ տղա է, և նույնիսկ ինչ-որ մեկը նրան երկու պենսանոց տվեց՝ սրամիտ պատասխանի համար։ Բայց երբ տղան իրենը պնդեց, մտածեցինք, որ կատակը երկար ձգվեց և բարկացանք նրա վրա։

— Դե, դե, տղաս, — կտրուկ ասաց մեր նավապետը, — բավական է հիմարություններ դուրս տաս։ Մայրիկիդ տաշտակը տուն տար և այստեղ բեր մեր նավակը։

Այդ պահին մտեցավ ինքը՝ նավավարը, և գործարար մարդու պես ազնիվ խոսքով հավաստիացրեց, որ այդ իրը իսկապես նավակ է, փաստորեն այն քառաթի նավակը, որն ինքն ընտրել է մեր ուղևորության համար։

Մենք բավական երկար փնթփնթացինք, ասացինք, որ գոնե սպիտակեցներ կամ ձյութեր նավակը, կամ, վերջապես, կարող էր, չէ՞ որևէ բան անել, որ խորտակված նավի բեկո-

րից գոնե տարբերվեր։ Բայց նա «Թեմզայի հպարտության» վրա ոչ մի արատ չէր տեսնում։

Մեր նկատողությունները կարծես նույնիսկ վիրավորեցին նրան։ Նա ասաց, որ մեզ համար ընտրել է իր ամենալավ նավակը և կարծում էր, որ պետք է շնորհակալ լինենք իրեն։

Նա ասաց, որ «Թեմզայի հպարտությունը» այնպիսի տեսքով, ինչպես այժմ կանգնած է մեր առջև, արդեն քառասուն տարի ծառայում է, (ավելի շուտ նրա մասերը դեսուդեն չեն ցրվում) ու ոչ ոք մինչև հիմա չի դժգոհել և, անհասկանալի է, թե ինչու հատկապես մենք պետք է դժգոհենք։

Մենք այլևս չվիճեցինք, այլ պարանով իրար կապեցինք այսպես կոչված նավակի մասերը, պաստառի կտորով սոսնձեցինք ամենաանշուք տեղերը, աղսթեցինք աստծուն և տեղավորվեցինք նավակում։

Այդ բրածոյից վեց օր օգտվելու համար մեզնից երեսունհինգ շիլլինգ պահանջեցին, թեև մենք չորսուկես շիլլինգով այդ ամբողջ փայտը կգնեինք առափնյա ցանկացած փայտավաճառից։

Երրորդ օրը եղանակը փոխվեց (հիմա արդեն խոսում եմ ներկայիս ճանապարհորդության մասին), և մենք Օքսֆորդից տունդարձի ճանապարհը բռնեցինք անդադար մաղող անձրևի տակ։

Երբ արևի ճառագայթները խաղում են ալիքների միջև, ոսկեզօծելով գորշականաչավուն առափնյա հաճարենիները, թափառում են անտառի մութ ու խոնավ արահետներում, ստվեր են ձգում լեռնալանջերին, ջրաղացի անվից աղամանդներ են շուրջը ցրում, համբույրներ ուղարկում ջրաշուշաններին, խփվում են ամբարտակի փրփուրներին, արծաթազօծում են մամոտ ամբույններն ու կամուրջները, լուսավորում ամեն մի փոքրիկ անկյունը՝ գեղեցկացնելով արահետներն ու մարգագետինները, խճճվում են եղեգների միջև՝ ծիծաղելով, ծիկրակելով ամեն մի աննկատելի ճեղքից, լուսավորում են հեռավոր առագաստը, օդը լցնում հրճվանքով, — այս ամենը դեռը դարձնում է մի ոսկեզօծ, հիասքանչ պատկեր։

Իսկ ամպամած եղանակին, — երբ մթագնած ու ալարկոտ

ջրերի վրա անդադար անձրև է մաղում, կարծես միայնակ կին է հանձնում մութ սենյակում, իսկ խավար անտառները լուռ թաղված են խոնավ մշուշի ներսում, կարծես ափին կանգնած ոգիներ լինեն նախատալից աչքերով, չար ոգիների ու մերժված բարեկամների ոգիների պես, — դեռը կարծես ուրվականների հավաքատեղի լինի, որն անցնում է ապարդյուն զղջումների երկրով։

Արևի լույսը բնության կյանքի աղբյուրն է։ Մայր Հողը այնպիսի թախծոտ ու անկենդան հայացքով է նայում, երբ իրենից հեռանում է արևի լույսը։ Այդ ժամանակ ախուր է լինում նրա հետ, կարծես նա մեզ չի ճանաչում և չի հոգում մեր մասին։ Նա ասես մի այրի լինի, որը կորցրել է իր սիրելի ամուսնուն։ Ջավակները դիպչում են նրա թևերին ու նայում աչքերի մեջ, բայց նրանից ժպիտ կորզել չեն կարողանում։

Ամբողջ օրը թիավարեցինք անձրևի տակ, և դա շատ հոգնեցուցիչ աշխատանք էր։ Սկզբում ձևացնում էինք, իբր այդ ամենը հաճելի է։ Մենք ասացինք, որ դա նույնպես փոփոխություն է, նույնիսկ հաճելի է՝ տեսնել գետը իր տարբեր կերպարանափոխություններով։ Հնարավոր չէ, որ միշտ արևվոտ եղանակ լինի, ասենք, ցանկալի էլ չէ։ Մենք հուսադրեցինք միմյանց, ասելով որ բնությունը գեղեցիկ է նաև արցունքներով։

Իսկապես, առաջին մի քանի ժամը Հարրիսն ու ես հիացած էինք։ Մենք երգեցինք գնչուի երգը, այն մասին, թե ինչ սքանչելի կյանքով է նա ապրում. ազատ՝ փոթորիկի, այրող արևի և ամեն կողմից փչող քամիների դեմ, այն մասին, թե որքան է սիրում անձրևը ու ծիծաղում է նրանց վրա, ովքեր չեն սիրում այն։

Ջորջը այդ ամենին ավելի ողջամտորեն էր վերաբերվում և չէր բաժանվում հովանոցից։

Մենք դեռևս նախաճաշից առաջ էինք ամրացրել բրեզենտը և այդպես էլ թողեցինք ողջ օրը։ Նավաքթի մոտ միայն մի ճեղք էինք թողել, որտեղից մեզանից մեկն ու մեկը կարողանար թիավարել մի թիով և հերթապահություն աներ։ Այսպես ինը մղոն ճանապարհ անցանք և գիշերելու համար կանգ առանք Դեյի շլյուզից փոքր-ինչ ներքև։

Չեմ կարող ասել, որ ուրախ երեկո անցկացրեցինք։ Անձրևը լուռ համառությամբ ցած էր թափվում։ Նավակում եղած ամեն ինչ խոնավացել էր և մածուցիկ դարձել։ Ընթրիքն անհաջող էր։ Երբ քաղցած չեք, սառը մսակարկանդակից ուղղակի սիրտ չ խառնում։ Ես տապակած ձուկ էի ուզում ուտել և կոտլետ։ Հարրիսը բեքանից ինչ-որ բան թոցրեց տափակաձկան ու սպիտակ սոուսի մասին և իր կարկանդակի մնացորդը նետեց Մոնթմորընսիին։ Բայց Մոնթմորընսին հրաժարվեց դրանից և, ակներևաբար վիրավորվելով նման առաջարկությունից, գնաց ու միայնակ նստեց նավակի մյուս ծայրին։

Ջորջը խնդրեց չխոսել նման բաների մասին, քանի դեռ ինքը չի կկրկնել վերջացրել առանց մանանեխի սառը միսը։

Ընթրիքից հետո մի-մի պենս դնելով թուղթ խաղացինք։ Դա մոտ ժամուկես տևեց, որի ընթացքում Ջորջը չորս պենս շահեց, խաղաթղթի մեջ Ջորջի բախտը միշտ բերում է, իսկ Հարրիսն ու ես՝ յուրաքանչյուրս երկուական պենս տանուլ տվեցինք։

Մենք որոշեցինք վերջ տալ խաղին։ Հարրիսն ասաց, որ թղթախաղը անառողջ ղգայմունքներ է ծնում, եթե դրանով երկար ժամանակ են տարվում։ Ջորջն առաջարկեց շարունակել և մեզ ոևանչ առաջարկեց, բայց Հարրիսն ու ես որոշեցինք այլևս չմասնակցել ճակատագրի դեմ։

Դրանից հետո գրող պատրաստեցինք և նստելով, սկսեցինք գրուցել։ Ջորջը պատմեց իր մի ծանոթի մասին, որը երկու տարի առաջ գետով նավարկելիս քնել էր խոնավ նավակում, ճիշտ այսպիսի մի գիշեր և հիվանդացել էր ռևմատիկ տենդով։ Ոչ մի կերպ չկարողացան փրկել նրան, և տասն օր անց մահացավ սոսկալի ցավերից։ Ջորջի ասելով մահացողը շատ երիտասարդ էր, նշանված և պատրաստվում էր ամուսնանալ։ Նա ասաց, որ դա իր իմացած ամենաանուր դեպքերից մեկն է։

Դա Հարրիսին հիշեցրեց իր մի ընկերոջ մասին, որը կամավոր բանակ էր զորագրվել և Օլդերշոտում մի խոնավ գիշեր էր անցկացրել վրանում։ «Ճիշտ այսպիսի գիշեր էր»— ասաց Հարրիսը, իսկ առավոտյան արթնացել էր հաշմանդամ դարձած։ Հարրիսը խոստացավ, որ մեզ երկուսիս էլ, — երբ

քաղաք վերադառնանք, — կծանոթացնի այդ մարդու հետ։ Անչափ ցավալի է նրան տեսնելը։

Այս ամենից հետո, բնականաբար, սկսեցինք խոսել իշիասի, դողէրոցքի, մրսածության, թոքերի հիվանդությունների, ու բրոնխիտի մասին։ Հարրիսն ասաց, որ սարսափելի բան կլինի, եթե մեզանից մեկնումեկը լրջորեն հիվանդանա, չէ՞ որ բժիշկներից այնքան հեռու էինք գտնվում։

Նման խոսակցությունից հետո, մենք ուրախանալու կարիք էինք զգում և թուլության պահին ես, առաջարկեցի Ջորջին վերցնել իր բանջոն և փորձել մեզ համար մի որևէ ուրախ երգ կատարել։

Պետք է ասեմ, որ կարիք չզգացվեց խնդրել Ջորջին։ Նա անհեթեթություններ չասաց այն մասին, որ տանն է թողել իր նոտաները կամ նման մեկ այլ բան։ Անմիջապես մեջտեղ հանեց իր գործիքն ու սկսեց նվագել «Երկու սիրունիկ սև աչեր» երգը։

Մինչև այդ երեկո, «Երկու սիրունիկ սև աչեր» երգը ես չափից ավելի անճաշակ էի համարում։ Սակայն Ջորջը դրա մեջ թափծի այնպիսի նոտաներ հայտնաբերեց, որ անչափ զարմացրեց ինձ։

Մինչ շարունակվում էր այդ թախծոտ մեղեդին, իմ ու Հարրիսի մոտ ցանկություն առաջացավ միմյանց գիրկը նետվել ու լալ։ Բայց մեծ ջանքերով զսպում էինք մեր արցունքները և անձայն լսում էինք այդ սիրտ մաշող մեղեդին։

Երբ կրկներգը սկսելու ժամանակը հասավ, մենք նույնիսկ հուսահատ փորձ արեցինք ուրախ երևալ, նորից լցրեցինք բաժակները և միացանք երգին։ Հարրիսը զգացմունքներից ցնցվող ձայնով երգեց, իսկ Ջորջն ու ես մի քանի տակտ հետո կրկնում էինք նրան։

Երկու սիրունիկ, սև աչեր,
Օ, հիասքանչ աչեր,
Նախատինքով լի
Երկու...

Այստեղ մենք այլևս չդիմացանք։ Ջորջի աննկարագրելի պաթոսով լի նվագակցումը, մեր այդքան հուսալքված վիճակում, մինչև հոգու խորքը ցնցեց մեզ։ Հարրիսը մանկան

նման հեկեկում էր, և շունը այնպես ոռնաց, որ վախեցա թե սիրտը կպայթի կամ ծնոտը դուրս կընկնի։

Ջորջը ուզեց սկսել երկրորդ քառյակը։ Նա կարծում էր, որ եթե ավելի լավ յուրացնի մեղեդին և ավելի անկաշկանդ կատարի, գուցը այնքան էլ թախծոտ չի թվա։ Սակայն մեծամասնությունը դեմ էր այդ էքսպերիմենտին։

Քանի որ ուրիշ անելիք չունեինք, պառկեցինք քնելու, այսինքն հանվեցինք և երեք-չորս ժամ շարունակ շուռումուռ էինք գալիս նավակի հատակին։ Դրանից հետո մենք մի կերպ հաջողացրինք քնել անհանգիստ քնով, մինչև առավոտյան ժամը հինգը, որից հետո վեր կացանք և նախաճաշեցինք։

Հաջորդ օրը ճիշտ նախորդի նման էր։ Անձրևը շարունակում էր թափվել։ Մենք թիկնոցներով փաթաթված նստել էինք բրեզենտի տակ և դանդաղ լողում էինք հոսանքով ցած։

Մեզանից մեկը, մոռացել եմ, թե հատկապես ով, երևի հենց ես էի, թույլ փորձ արեց առավոտյան վերադառնալ Բնության զավակների ու անձրևի մասին գնչուական անհեթեթությանը, բայց դրանից ոչինչ չստացվեց։ «Չեմ վախենում անձրևից, ոչ, չեմ վախենում» բառերը այնպես չէին սազում մեր տրամադրությանը, և երգը շատ անտեղի էր հնչում։

Մի կետում մենք միաձայն համաձայնեցինք՝ որ ինչ էլ պատահի, ճանապարհորդությունը կհասցնենք մինչև վերջ։ Մենք որոշել էինք երկու ուրախ շաբաթ անցկացնել գետի վրա և մտադիր էինք այդ երկու շաբաթը լիովին օգտագործել, թեկուզ դա մեր մահվան պատճառը դառնար։ Պարզ է, դա կվշտացներ մեր ընկերներին ու հարազատներին, բայց ոչինչ չէինք կարող անել։ Մենք զգում էինք, որ Անգլիայի կլիմայի պայմաններում՝ նահանջել եղանակի առջև, կնշանակեր վատ օրինակ ծառայել սերունդների համար։

— Ընդամենը երկու օր է մնացել, — ասաց Հարրիսը, — իսկ մենք ջահել ենք ու առողջ։ Վերջիվերջո, գուցեև ամեն ինչ բարեհաջող ավարտվի։

Ժամը չորսին մոտ սկսեցինք քննարկել, թե ինչպես անցկացնենք երեկոն։ Մենք հենց նոր էինք անցել Դորինգը, որոշել էինք հասնել Փենգբորն և այնտեղ գիշերել։

— Եվս մի ուրախ երեկո, — դժգոհեց Ջորջը։

Նստեցինք ու սկսեցինք մտորել մեր անելիքների մասին։ Ժամը հինգին մոտ կլինենք Փենդբորնում, ճաշը կավարտենք, ասենք, ժամը վեցն անց կեսին։ Դրանից հետո կամ պետք է անզատարաի անձրևի տակ զբոսնենք գյուղում, մինչև քնելու ժամը, կամ պետք է նստենք աղոտ լուսավորված պանդոկում ու աչքի անցկացնենք «Ալմանախը»։

Ալհամբրայում[1] ավելի ուրախ կլինի, — ասաց Հարրիսը մի պահ գլուխը դուրս հանելով բրեզենտի տակից և հայացք գցելով երկնքին։

— Դրանից հետո կարող էինք ընթրել։ Ա-ում՝, — ավելացրեցի ես համարյա առանց գիտակցելու։

— Այո, ափսոս, որ որոշել ենք չբաժանվել նավակից, — ասաց Հարրիսը, որից հետո լռություն տիրեց։

— Եթե որոշած չլինեինք սպասել մեր ատույգ մահվանը այս խոնավ դագաղում, — ասաց Ջորջը կատաղի հայացքով չափելով նավակը, — ինձ թույլ կտայի հիշեցնել, որ ժամը հինգին Փենդբորնից գնացք է մեկնում Լոնդոն և մենք կհասցնենք նախաճաշել ու հետո գնալ քո նշած տեղը։

Ոչ ոք չպատասխանեց։ Մենք նայեցինք իրար և թվում էր, թե յուրաքանչյուրս տեսնում ենք մյուսի դեմքին արտացոլված իր իսկ սեփական փոքրոգի ու մեղավոր մտքերը։ Լռության մեջ մեջտեղ բերեցինք ու սկսեցինք մանրակրկիտ զննել մեր ճամպրուկը։ Հետո դիտեցինք գետը, տեսադաշտում ոչ մի կենդանի էակ չէր երևում։

Քսան րոպե անց երեք մարդկային կերպարանքներ, ամոթահար շան հետ, գողեգող դուրս սողոսկեցին «Կարապ» պանդոկի մոտ գտնվող նավամատույցից և ուղևորվեցին դեպի երկաթուղային կայարան։ Նրանց հանդերձանքը, որ բավական թափթփված էր ու անճաշակ, կազմված էր հետևյալից. սև, կաշվե կոշիկներ՝ կեղտոտ, ֆլանելե կոստյում՝ շատ կեղտոտ, շագանակագույն ֆետրե գլխարկ՝ ճմռթված, անձրևանոց՝ թրջված, հովանոց։

1. Ալհամբրա—թեթև ժանրի թատրոն Լոնդոնի արևմտյան մասում։

2. Հիանալի, ոչ թանկ ռեստորան Ա շրջանում, որտեղ չնչին գնով կարելի է ֆրանսիական խոհանոցի հիանալի խորտիկներ պատվիրել և որտեղ երեքուկես շիլինգով կարելի է մի շիշ գերազանց գինի ճաշակել։ Սակայն ես այնքան հիմար չեմ, որ ռեկլամեմ այն։ (Ծանոթագրություն՝ հեղինակի)։

Մենք խաբեցինք Փենդբորնի նավավարին, համարձակություն չունեցանք խոստովանելու նրան, որ փախչում ենք անձրևից։ Նրա հսկողությանը թողեցինք մեր նավակը իր պարունակությամբ հանդերձ, նախազգուշացնելով, որ նավակի նեռից կգնանք հաջորդ օրն առավոտյան ժամը իններին։ Եթե, ասացինք մենք, որևէ նախատեսված բան պատահի, որը կխանգարի մեր վերադարձին, մենք նրան տեղյակ կպահենք։

Ժամը յոթին հասանք Լոնդոնի Փենդինգտոնյան կայարան և այնտեղից մեկնեցինք ուղիղ դեպի իմ նկարագրած ռեստորանը։ Նախաճաշելով, այնտեղ թողեցինք Մոնթմորենսիին, պատվիրեցինք մեզ ընթրիք մատուցել տասն անց կեսին, իսկ ինքներս ուղևորվեցինք դեպի Լեյսթեր-սքվեր։

Ալհամբրայում բոլորի ուշադրությունը մեր կողմն էր։ Տեսնելով, որ մոտենում ենք տոմսարկղին, մեզ կոպտորեն դուրս հրավիրեցին ետնամուտքից, ասելով որ կես ժամ ուշացել ենք ներկայացումից։

Դժվարությամբ հաջողվեց համոզել ծառայողին, որ Հիմալայան լեռներից ժամանած թափառաշրջիկ լարախաղացներ չենք, և այդ ժամանակ միայն նա վերցրեց դրամը ու թույլ տվեց մեզ անցնել։

Դահլիճում էլ ավելի մեծ հաջողություն ունեցանք։ Մեր դեմքի հիանալի բրոնզագույնը և գեղատեսիլ հագուստները հիացմունքով էին ընդունվում։ Բոլորի հայացքները մեր կողմն էին ուղղված։

Դա մեզ համար պանծալի պահ էր։

Բալետային առաջին համարից հետո, դուրս եկանք և մեր բայլերը կրկին ուղղեցինք դեպի ռեստորան, որտեղ ընթրիքն արդեն մեզ էր սպասում։

Պետք է խոստովանեմ, որ այդ ընթրիքն ինձ մեծ հաճույք պատճառեց։ Վերջին տասը օրերի ընթացքում քիչ թե շատ մեր գոյությունը պաշտպանում էինք սնվելով գլխավորապես սառը մսով, կարկանդակներով և հաց ու չեմով։ Դրանք պարզ ու սննդարար ուտելիքներ են, բայց դրանցում ոգեշնչող քիչ բան կա, իսկ այստեղ բուրգունդյան գինու բուրմունքը՝ խառնված ֆրանսիական սոուսների բույրին, մաքուր անձեռոց-

ցիկների տեսքը, հացի բարակ շերտերը շատ ցանկալի հյուր էին մեր սրտի համար։

Որոշ ժամանակ մենք կլանված ուտում և խմում էինք լռության մեջ։ Վերջապես վրա հասավ այն պահը, երբ ուզիղ նստելու և դանակն ու պատառաքաղը ամուր բռնելու փոխարեն, հենվեցինք աթոռների թիկնակներին և սկսեցինք ծամել դանդաղ ու անհոգ։ Հետո մեր ոտքերը մեկնեցինք սեղանի տակ, թույլ տվեցինք, որ անձեռոցիկները աննկատ ցած ընկնեն հատակին և ժամանակ գտանք ավելի քննադատաբար զննելու սեացած առաստաղը, որը մինչ այդ ժամանակ չէինք գտել նկատելու։ Հետո մեզանից հեռու հրեցինք բաժակները և բարի, խելացի ու ներողամիտ էինք զգում մեզ։

Հարրիսը, որը պատուհանի մոտ էր նստած, մի կողմ քաշեց վարագույրը և փողոց նայեց։

Թաց սալահատակը տեղ-տեղ փայլփլում էր, լապտերների աղոտ լույսերը թարթում էին քամու ամեն մի պոռթկման ժամանակ, անձրևը առատորեն շփշփում էր ջրափոսերի մեջ և ջրհորդաններով ցած էին թափվում կեղտաջրի առվակները։ Փոքրաթիվ, մինչև ոսկորները թրջված անցորդները, շտապում էին՝ կուզ եկած իրենց հովանոցների տակ, կանայք՝ բարձրացնելով հագուստի փեշերը։

— Դե, ինչ, — ասաց Հարրիսը, ձեռքը վերցնելով բաժակը, — մենք հաճելի ճանապարհորդություն կատարեցինք և դրա համար իմ ի սրտե շնորհակալությունը հայր Թեմզային։ Սակայն, կարծում եմ, որ ճիշտ ժամանակին բաժանվեցինք նրանից։ Ուրեմն, մի նավակից բարեհաջող փրկված երեք տղամարդկանց կենացը։

Եվ Մոնթմորընսին, որ ետևի թաթերի վրա կանգնած էր պատուհանի մոտ և փողոց էր նայում, կարճ հաչեց ի նշան հավանության այդ կենացի։

Վերջ

Ջ. Ք. ՋԵՐՈՄ

Ջերոմ Ջլապկա Ջերոմը մի նովել ունի «Տխուր պատմություն» վերնագրով։ Երիտասարդ լրագրողը պատվեր է ստանում հորինելու սրատաուշ մի պատմություն ամանորյա հանդեսում զետեղելու համար։ Օրեր, շաբաթներ էին անցնում, իսկ պատմվածքի նյութը չէր գտնված։ Հուսահատ, նա դիմում է ծանոթ նշանավոր մի գրողի՝ խնդրելով հարմար թեմա հուշել։

— Կուզե՞ք ձեզ պատմեմ իրո՛ք սրտառուչ մի պատմություն, — հարցնում է գրողը։ — Երկար չէ, բայց բավականաչափ տխուր է։ Դա պատմություն է մի մարդու մասին, որ կորցրել է ինքն իրեն... Մի մարդու, որ գտնվել է սեփական մահվան սնարի մոտ և տեսել իրեն դանդաղ մահով մեռնելիս և իմացել է, որ ինքը մեռած է առհավետ...

Ո՞վ էր սեփական վախճանի վկան դարձած դժբախտը։

Դա բնությունից օժտված անհատն է, որ մանկուց արդեն զգում է՝ ինքն ի վերուստ կոչված է ստեղծագործության։ Նա հառնանում է, ձեռնարկում է իր ձիրքերի իրականացմանը։ Այն ժամանակ Դեր, չար Դեր, որ շատերին է կործանել և կործանելու է, նրան դայթակղում է։

— Ի՞նչ օգուտ քեզ, եթե մարդկանց քարոզես վեհ ճշմարտություններ, աղնիվ գաղափարներ։ Ինչո՞վ է աշխարհը քեզ վարձահատույց լինելու։ Մի՞թե երկրի մեծագույն ուսուցիչներն ու բանաստեղծները, ովքեր ի սեր մարդկության զոհել են իրենց կյանքը, ստացել են ուրիշ պարգև բացի քամահրանքից, ծաղրից ու կարիքից... Նրանց մեծարում են մահվանից հետո։ Մի՞թե նրանց վաստակը մուրացիկի գումար չէ...

Եվ լոկ ներշնչանքով ապրելու պատրաստ անհատը տեղի է տալիս...

Այս պատմվածքի մեջ, ինչպես մի կաթիլ ջրում, արտացոլված է արվեստագետի ճակատագիրը սեփականատիրական հասարակարգում։ Որքա՜ն մեծ ու փոքր տաղանդներ ապրել են՝ բզկտված իրենց ու ընտանիքի ապրուստը հոգալու և Մուսաներին ծառայելու իրարամերժ պահանջների միջև։

Ջերոմ Ջլապկա Ջերոմը դրանցից է եղել։

Ծնվել է 1859-ին, մտավորականի ընտանիքում, Լոնդոնի աղքատ մի թաղամասում։ Ծնողները դիտեին արվեստի արժեքը, իրենց զավակին պատրաստում էին այդ ոգով, բայց կարիքը երկուսին էլ անժամանակ

գերնգման իշեցրեց։ Պատանի Ջերոմն ստիպված էր դպրոցը թողնել, գիմել ամեն տեսակ աշխատանքի, գիշերել այգիներում, կամուրջների տակ։ 20-ն անց էր, երբ գեղեցիկին հաղորդակից լինելու համար թատերախումբ մտավ։ Ասում էր ինչ պատահեր, ինչ պահանջեին թատերապետերը։ Ավելի ուշ դերասան դարձավ։ Նշանակալից դերեր վստահեցին։ Հանդիսականը նրան սիրեց զավեշտական կերպարներում, իսկ ինքն անրջել էր պարզել մարդկանց վսեմ ապրումների հուզիչ պահեր։ Ինչպես աշխարհի շատ կատակերգակներ՝ անզսպելի ձգտում ուներ դեպի սղբնրգականը։ Եվ Ջերոմը վճռում է՝ եթե դերակատարումներով չի կարող մարդկանց ստիպել, որ լացվեն ու արտասվեն, նույնին հասնի գրչով։ Ինքը կգրի դերերը թե՛ իր, թե՛ ուրիշների համար։ Թողնում է կոմիկ ամպլուայում իրեն տրվող ապահով գոյությունը։ Հայտնակ դերասանը դառնում է սկսնակ դրամատուրգ։ Այդպես, 1885-ին ծնվում է նրա անդրանիկ պիեսը՝ «Բարբարան»։ Սակայն նորընծա թատերագրի ամիսների տքնանքի վարձը շա՜տ էր խղճուկ։ Օրապահիկը կարելի էր հայթայթել ամենօրյա գրական աշխատանքով միայն։

Ջ. Ջերոմը փորձում է թղթակցել պարբերականներին։ Ո՞վ բախտի քմահաճ հեգնանք. այստեղ նույնպես պահանջում են ծիծաղաշարժ պատմվածքներ՝ թեթև տոնով շարադրված։ Սրտով գյուրագրգիռ, կյանքի հարվածներից թախծոտ դարձած երիտասարդը օգտագործում է թատրոնում տեսած ու լսած զավեշտալից դեպքերը, բարձր արվեստին անհարիր այն ամենը, ինչ կարող էր ծաղրի առարկա լինել։ Իսկ 19-րդ դարավերջի անգլիական բեմարվեստը երգիծանքի այնքան նյութ էր մատակարարում, որ դրանց մի մասն անգամ գրի առնելով, կարելի էր ստվար ժողովածու ստեղծել։ Ի մի բերելով առանձին հրապարակված պատմվածքներն ու նովելները՝ 1886-ին նա լույս է ընծայում «Բեմի վրա և բեմի ետևում» գիրքը, որին հաջորդելու էր երկրորդը՝ «Բեմական աշխարհից» վերնագրով։

Այսպես, Ջ. Ջերոմը ամբողջ կյանքում միաժամանակ ծառայում է դրամականությանը, թատրոնին, ժուռնալիստիկային։

Դրամատուրգիայի ասպարեզում Ջ. Ջերոմի հաջողություններն ունեն բարոյագիտական հիմք՝ «Բարբարայից» հետո բեմադրված «Օրիորդ Հոբբսը», «Ծանանին և սպասուհիների պրոբլեմը», ինչպես հուշում են վերնագրերը, կանանց վիճակն են պատկերում, մեծարելով «թույլ սեռի» ներկայացուցիչների արժանապատվությունը։

Լավագույնը պիեսներից թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ «Ջորջորդ Հարկի կենվորը» (1908), բնութագրվում է իբրև ժամանակակից մորալիտե։ Միջնադարում տարածված այդ թատերաձևը հոգևոր-բարոյական միտում է ունեցել։ Ջերոմը նույնպես՝ մարդկանց սեր ու միություն, մխիթարանք ու բարություն պարգևող հերոս է ստեղծում, նոր ժամանակների Մեսսիա։ Պիեսի պաթոսն այնքան սրտամոտ էր առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, որ Ջ. Ֆորբս-Ռոբերտսոնը Անգլիայի այդ շրջանի լավագույն Համլետն ու Ռոմեոն, «Ջորջորդ Հարկի կենվորին» ընդունեց իր խաղացանկը։ Ոմանց կարծիքով գլխավոր դերի փայլուն մարմնավորումն էր ապահովում պիեսի բեմական երկարակեցությունը։ Մինչդեռ

սխալ չի լինի ասել, որ անվանի դերասանի ուշադրությունն ինքնին վկայում է գործի արժանիքների։

Այսուհանդերձ, Ջերոմը ավելի հայտնի է որպես հումորիստ-արձակագիր։ Եթե նրա պիեսների վրա ընկած է իր երկու փայլուն ժամանակակիցներ Շոուի և Ս. Ուայլդի թատերագրական ժառանգության ստվերը, ապա անգլիական բազմագունեղ, բազմաբանակ արձակագիրների շրջապատում անգամ նա գտնի իր հատատուն, միայն իրեն վերապահվող տիրույթը։ Հիշեցնեմ՝ 1863 և 1870 թվականներին Անգլիան կորցրեց առաջին զորավարի ռեալիզմի մեծագույն վիպասաններ Թեքերեյին և Դիքենսին, բայց 80-ական թվականներից արդեն նրանց փոխարինելու կոչված նոր սերունդ էր հրապարակ իջնում։

Ջ. Գոլսուորդին ֆորսայթների դերդաստանը պատկերող իր առաջին հատորներն էր ստեղծում, Ս. Ուայլդը վերջին վրձնահարվածներն էր հաստատում «Դորիան Գրեյի դիմանկարին», Ռ. Սթիվենսոնի էկզոտիկ, նեոռոմանտիկական պատումներին տպավորիչ հակադրություն էին կազմում Թ. Հարդիի իրական, արդիական վեպերը։ «Դետեկտիվի հայր» Ա. Քոնըն-Դոյլի և գաղտնիարար անգլիացուն դավերգող Ռ. Քիպլինգի կողքին իր հոռետես հայացքով կամենում էր ապագայի մշուշը պատռել Հ. Ուելսը։ Սրանցից յուրաքանչյուրը հայրենի գրականության մեջ գրաղեցրած ակնառու դիրքից բացի, միջազգային համբավի էր արժանանում։ Եվ եթե համաշխարհային դասական չէր բառի ընդհանրական առումով, ապա գոնե՝ որոշակի ժանրի սահմաններում։ Որքա՞ն, ուրեմն, դժվարին էր ինքնաշխատությամբ գրական-թատերական ասպարեզ թափանցած, ծայր աղքատության հետ մաքառել ստիպված լրագրողի վիճակը։

Ջերոմին համբավի արժանացրեց «Պարապ մարդու պարապ մտքերը պարապ տոն օրվա համար» գիրքը (1889)։ Ընթերցողը, կարծես, չէր կարող հեղինակից լուրջ հաջողությունների ակնկալիք ունենալ։ Նույնը և՝ դատելով դարձյալ 1889-ին լույս տեսած «Երեքը մի նավակում, չհաշված շունը» վիպակի վերնագրից։

Սովորական, «միջին անգլիացիների» ոչնչով աչքի չընկնող կենցաղավարությունը, փոխհարաբերությունները, խոսքը, կատակը՝ սրանք են ոչ միայն այդ գրքերի, այլև նրանց հաջորդողների բովանդակությունը։ Անհավակնոտ թեմաների և դրանց վերարտադրման նույնօրինակ ձևերի՝ երբեք չխախտվող ներդաշնակությունն է գրավում ընթերցողին նաև այսօր։ Մարդկանց, երևույթների այն պակասներն են նկատված ու մատուցված, որոնք հարուցում են ոչ թե գայրույթ, այլ բարեհոգի ծիծաղ։ «Անվնաս երգիծանքի» գերակշռությունը դարձավ Ջերոմի գրվածքների գլխավոր հմայքը։ Որովհետև նրա ամեն մի պատմության, իրադարձությունների մեկնաբանության հետևում դուշակվում է բարյացակամ, թախծոտ հեգնակը, որ հոգնել է տխրելուց և ուզում է փնտրում ժպտալու, ժպիտ սփռելու։

Ինչո՞ւ չէ, նման գրականության գոյության իրավունքն անվիճելի է։ Կա ընթերցող մի խավ, որ հակված չէ միտքը լարելու, պատմափիլիսոփայական լայն ասոցիացիաներ հասնելու, իսկ գեղարվեստական երկը լոկ սեփական կենսափորձով է ստուգում։ Եվ ամեն անգամ չէ, որ

ամենինտենսիվությամբ դրսևորն անդամ տրամաղիր է արվեստի խորհրդաբանությունները թափանցելու, նա էլ է ուզում պարզապես հանդիսանալ օրօրվելով դրական հոսքի ալիքների վրա։ Անցյալ դարավերջին այդ միտումները որոշակի խմբավորում էին կազմում, որ կոչվում էր իմպրեսիոնիզմ, փոխ առնելով ֆրանսիական նկարչական հայտնի ուղղության անվանումը։

Դրական իմպրեսիոնիզմի տիպական նմուշ է «Երեքը մի նավակում» Հանձնված Թեմզայի, իրենց մակույկի ու սեփական տրամադրության քմայքներին՝ երեք ընկերներ հանգստանալու նպատակով նավարկում են։ Ընտրված եղանակն ու երթուղին ոչնչի չեն պարտավորեցնում։ Կարելի է հայացքը բևեռել ուզած բնանկարին, իջեցնել ուզած բնակավայրում, երկար կանգնել որևէ շինության առջև, խոսքի բռնվել պատահած անցորդի հետ։ Նման անկաշկանդ ընթացքը դեռի կամ նույնն է թե՝ կյանքի ալիքների մղումով, կոմպոզիցիոն ազատության հետ, աննկատ պարտավորություններ է դնում հեղինակի վրա։ Ինչպե՞ս անել, որ կարդացողն անտրտունջ հպատակվի նույն երկի մեջ կուտակված գավեշտական պատահականությունների անհրաժեշտությանը։ Հեղինակը հմտորեն հաղթահարել է այդ դժվարությունները իր նույնատիպ մյուս գրվածքներում ևս՝ «Մի ուխտագնացության օրագիրը», «Երեքը հեծանիվի վրա»։

Ջերոմը ինքն էլ մոլի ճանապարհորդ է եղել։ Այցելել է երկու մայր ցամաքների բոլոր գլխավոր երկրները, հասել Սանկտ-Պետերբուրգ։ Ճամփորդական նոթերում ունի շատ սրաթափանց դիտողություններ, կոահումներ՝ իբրև հասարակագետ, հրապարակախոս, որ բացահայտում են լայն կարողություններ, ցավոք, նվազ արտահայտված գեղարվեստական երկերում։ Ըստ երևույթին, սկզբից ևեթ ընտրված թեթև երգիծանքի, թախծավալտ կատակի տոնը մեկընդմիշտ կաշկանդել էր նրան։ Ինչպես ժամանակին հանդիսականը վարժվել էր կատակերգակ-Ջերոմին, այնպես էլ ընթերցողը չուզեց գրականության մեջ նրան տեսնել ուրիշ ամպլուայում։ Իսկ Ջերոմը կամք ու հարատևություն չցուցաբերեց ժամանակակիցներին պարտադրելու իր ձիրքի առավել զորեղ, խորունկ խոցող, ծանրակշիռ կողմերը։

Առավել թանկ է հայերիս համար այն փաստը, որ Ջերոմը, ի թիվս եվրոպական մեծ գրողների՝ Զոլա, Ֆրանս, Ռոլլան, դայրուլթի խոսք նետեց թուրքական բարբարոսների և նրանց «բաղաքակիրթ» հովանավորների երեսին 1894—96 թվականների եղեռնի ժամանակ...

Բազմաթիվ երկերի հրատարակումից հետո անդամ, Ջերոմը նյութական ապահովության զգացում չուներ։ Բարեկեցիկ ապագայի որոնումների մեջ դիմեց զուտ հրապարակախոսությանը։ Նախ բանեկտեր, ապա և հրատարակիչ-խմբագիր եկավ երգիծական հանդեսների, որոնցից մեկի անունը փոխ էր առել իր գրքից՝ «Պարապ մարդու»։ Ի դեպ, այդ պարբերականն այնքան հեղինակավոր էր, որ նրան աշխատակցում էին նմանապես և ամերիկացիները, որոնց մեջ աշխարհահռչակ Մարկ Տվենը։ Լոնդոն ժամանած օտարականների համար «Պարապ մարդու» խմբագրատունը սիրելի ժամադրավայր էր, իսկ նրա ժուրֆիքսներին՝ ամեն ուրբաթ օր այնտեղ հյուրընկալվում էր անգլիական գրականության ընտրանին։ Այդ ամենը, ինչպես վկայում են շատերը, իրականացվում էր շնորհիվ Ջերոմի անձնական հմայքի, երբամիտ վարվեցողության։

Իր ապրած վաթսունյոթ տարիների համար Ջերոմի թողած ժառանգությունը շատ ստվարածավալ չէ։ Ջերոմ Ջերոմին խիստ հարմարվում է Ալֆրեդ դը Մյուսեթի մի բնութագրումը «Իմ բաժակը մեծ չէ, բայց ես իմ բաժակով եմ խմում»։

«Երեքը մի նավակում, չհաշված շունը» վիպակը իրավամբ նրա գլուխգործոցն է։ Բնական է, որ հայ ընթերցողին ներկայացվող անդրանիկ երկը ճիշտ դա լինի։

ԼՈՒԻԶԱ ՍԱՄՎԵԼՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5
Գլուխ առաջին 6
Գլուխ երկրորդ 17
Գլուխ երրորդ 24
Գլուխ չորրորդ 33
Գլուխ հինգերորդ 45
Գլուխ վեցերորդ 55
Գլուխ յոթերորդ 68
Գլուխ ութերորդ 79
Գլուխ իններորդ 93
Գլուխ տասներորդ 105
Գլուխ տասնմեկերորդ 115
Գլուխ տասներկուերորդ 127
Գլուխ տասներեքերորդ 141
Գլուխ տասնչորսերորդ 157
Գլուխ տասնհինգերորդ 170
Գլուխ տասնվեցերորդ 186
Գլուխ տասնյոթերորդ 190
Գլուխ տասնութերորդ 198
Գլուխ տասնիններորդ 206
Ջ. Ք. Ջերոմ — Լ. Սամվելյան 217

Ջերոմ Ք. Ջերոմ
ԵՐԵՔԸ ՆԱՎԱԿՈՒՄ
(չհաշված շունը)
Վիպակ

Джером К. Джером
ТРОЕ В ОДНОЙ ЛОДКЕ
(не считая собаки)
Повесть
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван — 1982

Խմբագիր՝ Ա. Ս. Հովսեփյան
Նկարիչ՝ Ա. Ի. Ցարալյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Յ. Կովկասյան
Վերստուգող սրբագրիչ՝ Կ. Ա. Շաղբաթյան

ИБ № 3414

Հանձնված է շարվածքի 14.10.81։ Ստորագրված է տպագրության 15.02.82։ Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագրական №2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրությունը՝ բարձր։ 11,76 պայմ. տպ. մամ, 10,25 հրատ. մամ.։ Տպաքանակ 20 000։ Պատվեր 1677։

Գինը 85 կ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91,

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна 91:

2002 հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի գունավոր տպագրության տպարան Երևան—82, էջմիածնի խճուղի, 48։ Типография цветной печати Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-82, Эчмиадзинское шоссе, 48.